ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՓԻԼՈՆԻ ՃԱՌՔ

Գիրք գարու Հիշատակ
99
Փ-55
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՓԻԼՈՆԻ ՀԵԲՐԱՅԵՑԻՈՅ

ՀԱԼՈՒՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ Ի ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ

ՈՐՈՑ ՀԵԼԼԵՆ ԲՆԱԳԻՐՔ ՀԱՅԻՆ ԱՌ ՄԵՋ

Ցաղագս հեստիանց, կենաց վարուց իմաստնոց, Աստուածային տ_ ուիանցն այլաբանութեան, Երկոտասան ականց, Ցաղագս քահանա_ յից, Բազմին իրաց, Ցաղագս թէ ոչ շնայցես :

30-43

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԽԻԹԱՐԵԱՆՑ
Յամի 1892 ՌՅԽԱ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

A $\frac{\text{II}}{5441}$

ՓԻԼՈՆԻ

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ԿԵՆԱՑ

ՏԵՍԱԿԱՆԻ[1]

ՀԵՍՍԵԱՑՑՆ սակս խաւսեցեալ, որք զգործական[2] նախանձն առին, և գործեցին զկենցաղըս[3] ամենայնիւ, կամ՝ զդժոխըմբերագոյնն ասել, յոլով մասամբքն, զանցուցին ասէն. և յաղագս այնոցիկ որք[4] զտեսութիւնն խնդութեամբ ընկալան, կարգաւ պատմութեան[5] զհետ անցանելով զարժանաւորսն ասացից։ Ոչինչ բնաւսա առ 'ի զարդարել, և լաւ[6] երևեցուցանել յաւելեալ, որ գործել սովորութիւն է առ նուազութեան[7] բարեաց ախորժակաց, ամենեցուն քերթողաց և բանագրաց. այլ մեծապէս զնոյն ինքն բուռն հարեալ զճշմարտութենէն, առ որ գիտեմ, թէ և զմեղակագոյն զբ ասել հրաժարեալ ի բաց փախիցէ։ Բայց սակայն աշխատութիւն առաջի դնել և հանդիսանալ և մարտընչել արժան է. քանզի ոչ է պարտ և արժան զմեծութիւն առաքինութեան արանցս՝ պատճառս անձայնութեան լինել այնոցիկ որք ոչինչ բարի[8]

1. Միւս օրինակն յաւելու գ-կնոջն է գրչէ։ ոյ։
2. Մ. 0. յաւելու ի լուսանցս. կնոջ-ի։
3. Մ. զվ-ր։
4. Մ. ի լուսանցս գ-գտ-ին։
5. Մ. փոխանակ գ-գտ-ին ունի գ-ղթոյ։
6. Մ. ի լ-։
7. Մ. ն-ա-ին։
8. Մ. գ-ի։

ռութեամբ զանց առնել իրաւացուցին։ Իսկ կամք
ախորժանաց խնամասիրաց, անդէն փաղփաղակի
երևին ի ձեռն կոչման անուանս. քանզի բուժիչք
բան երկոցուն ազգաց՝ բան արտին և բան իգին
առուգապէս կոչին։ Կամ՝ բան այնմ՝ որ զբժշկական
խոստանան լուսաղոյն ևս քան զայն որ բան քաղա-
քացն է[1]։ Քանզի սէ[2], զմարմին բժշկէ միայն. իսկ
այն և զանձինս հիանդութեամբ ըմբռնեալս զբ-
ժընդակաւք և զժուարաւք առ ի բժշկութիւն, յո-
րոց ի վերայ հասեալ անկան հեշտ ցանկութիւնք.
և ցանկութիւնք, և երկիւղ[3], և արտմութիւն և ա-
ւելաստացութիւնք, և անզգամութիւնք, և անի-
բաւութիւնք, և այլոց ևս ախտից և չարութեանց
անդրաւ և անմեծար բազմութիւն։ Կամ՝ բան այնմ՝ որ
ի բնութենէն և ի տէրունական աւրինաց խրատեալք
եղեն, բժշկել[4] զէն էապէս, որ և քան զբարին ա-
ռաւելագոյն է, և քան զմին լուսաւորագոյն է և
պարզագոյն, և քան զմիայնակն սկզբնեղագոյն.
զորս ընդ ուժ[5] ուժք բազդատել պարտ և արժան է
այնոցիկ որ խոստանան զբարեպաշտութիւնն։ Իսկ
արդ արդեւք զայնոսի՞կ որք զտարերս պատուեցին,
զերկիր, զՁուր, զաւդ, զՀուր. որոց և մականուա-
նքս եղին, այլս՝ այլք։ ԶՀուրն՝ Հեփեստոս, առ ի
լուցանելն և բորբոքել կարծեմ թէ կոչեցին։ Իսկ
Հերա՝ զաւդ, առ ի համբառնալն և վերամբար-
ձիլ առ ի բարձրութիւն իմն. և զՁուր՝ Պոսիդո-
նա[6], ինձ թուի թէ վասն ըմպելին լինելոյ. իսկ
զերկիր՝ Դեմետրա, բան որում՝ մայր ամենայնի
թուի գոլ, կենդանեաց և մեռելոց։ Այլ անուանքս
այս խնամակաց են գիւրք։ Իսկ տարերքս ան-

1. Միւսն ՀԲՀՆ, և ի տարբեր նշանակի ԹՂԹՆ. յոյն κτὰ πόλεις.
2. Մ. —։
3. Մ. Երկեղ։
4. Յոյն բն θεραπεύειν.
5. Մ. ընդ ուր՞մ։
6. Մ. Պէ-էդոն։

շանչ նիւթ է և յինքեան բնութենէ անշարժ է, անկեալ դնի ընդ արուեստագիտաւն՝ առ ամենայն բնութեանց ձեւոց և որակաց տեսակս։ Այլ գրացակատարուածն[1]. զարեգական, զլուսնի[2], կամ՝ զայլ աստեղս՝ զմնրաական և զանմնրաան. կամ՝ առ հասարակ զամենայն երկին և զաշխարհ։ Այլ և սրա ոչ յինքեանց[3] եղեն. այլ յումեմէ արարչէ ի կատարելագունէ հանճարով։ Այլ զկիսատուածսն. բան որում՝ այս և մեծին ծագու արժանի է։ Քանզի զիարդ նոյն անմահ և մահկանացու իցէ, առանց այնորիկ[4] որ և զսկիզբն[5] լինելութեան նոցա ըմբռնելի և բասելի գոլ՝ մանկաբարոյ անարգելութեամբ լի. զոր իշխեն և համարձակեալ են, ոչ արբարար յարել և ընդհարկանել ընդ երանելի և ընդ աստուածային զաւրութիւնն, եթէ ի կանայս մահկանացուս մոլեալք խառնակեցան՝ որ անկցորդք են և անընդունակ ամենայն ախտի, և երիցս երջանիկք։ Այլ զփայտեայ պատկերսն[6] և զքարեղէնս. որոց զոյացութիւն նիւթոյն, քարինք և փայտք, որ յառաջ քան զսակաւ մի կատարելապէս անկերպ[7] էին. բայց ի քարահատաց[8] և ի փայտահարաց յիւրեանց արմատոյն ի բաց կտրեալ, որոց եղբարքն մատունք և ազդակիցքն՝ լոգարանք եղեն և ոտնալուացք և այլք յանարգացն. որք առ ի խաւարին պէտան ապաս տանին առաւել քան եթէ ի լուսոյ։ Քանզի զայնցանէ որք առ եգիպտացիսն և ոչ յիշել բարւոք է, որ զանասուն կենդանիսն՝ և ոչ զբնաւանիսն միայն, այլ և զդազանացն զվայրե-

1. Յոյնն. ἀποτελέσματα. զոր այլ ուրեք Թարգմանեն հինք՝ բ-ց-կ-ա-ր-ա-ն, կ-ա-ր-ա-ն, կ-ա-ր-ա-ն։
2. Միւսն ըստ յոյն բն. ջ-ր-ի-ն, ջ-ա-ն։
3. Մ. յ-ն-ի-ն-ց։
4. Մ. -ն-ն-գ-ի։
5. Մ. -կ-ի-զ-բ-ն։
6. Մ. ջ-ի-ա-ա-ա-ա-կ-ի-ր-ն։
7. Մ. -ն-կ-ի-ր-գ-ի։
8. Մ. ի -ա-ր-ա-ա-ց։

նագոյնն ածեալ անցուցին յաստուածոց պատիս, ի մի բան միոջէ։ յիւրաքանչիւր ումեքէ յայնցանէ որք ընդ լուսնաւս են. ի ցամաքայնոց զառիւծն, և ի ջրայնոց զդաւառականն իւրեանց զկոկորդիլոս[2], և յաւդաղնացիս զցիսն, և զեղիպտացի ըզցեծն։ Եւ զայսոսիկ տեսանելով ծնեալս, և անընդեան կարաւոս, առ ի կերակուրս անյագս, և լիս յաւելորդացն, թռչնաբերս և մարդակերս, և ընդ ամենագան ախտիւք անկեալս. և ոչ միայն բնական մահու, այլ և բռնաւորագունեան բազում անգամ դէպ եղև զի ապականեալք եղեն՝ երկիրպագանեն, ընտանիքն՝ անձեռնընդելեացն վայրենեացն, և բանաւորքն անասնոցն. և որք ազդակցութիւն ունին առ աստուածայինն, այնց որք և ոչ ընդ Թերսիտայ[3] բազդատեսցին. իշխանքն և տեարքն, ընդ ծառայութեան անկելոց և ի ապաստաւորութիւն կարդելոցն բնութեամբ։

Այլ սրա վասն զի ոչ միայն զհամատոհմիկսն, այլ և զայնոսիկ որ մերձենան առ նոսա, լի առնեն ընդվայրաբանութեան շատխաւսութեամբ, անբոյժ և առանց սիրոխանաց լիցին, որք զերեսս զհարկաւորագոյն զդայութեանցն ճայրոտեալք շլացան. և ասեմ՝ ոչ զմարմնոյս, այլ զանձի՛ն, որով ճշմարիտն և սուտն գիտացեալ ճանաչի։ Իսկ տեսական[4] ազգն՝ տեսանել միշտ ուսումն ընկալեալ՝ լինն տեսման բազձացի, և ըստ իմանալի արեգակնն զանց արասցէ, և մի՛ երբեք զդասն զայն լքցէ. որ առ ի կատարելականն տանի բարեբաստութիւն։ Իսկ որք ի տեսութիւն[5] ոչ ի սովորութենէ, և ոչ ի խրատուէ ուրուք, այլ յերկնային տափանացն յափշտակեալք՝ իբրև զաստուածարեալսն և զմոլեալսն բարեաւն,

1. Միւսն՝ է դ-ջ է դ-ջ։
2. Մ. չիր-կ-դ-ի-։
3. Թոյնն θηρσί τισι, այս ինքն գ-ղ-ն-ց մ-ն-ց։
4. Մ. -ն-ճ-ի-ն. յոյնն՝ θεραπευτικον γένος.
5. Մ. -ի զ-ն-ց -ր-ց-ջ։
6. Մ. -ն-ն-ն. զ-ի- հ-ծ-ի-ջ -ղ-ջ-ց-ն-ն. -ի է։

և զկոկողացեալսն՝ սատուածարեն, և սատուածազգեսար լինին, մինչև զայն որում՝ փոփոգենն՝ տեսցեն։ և ապա վասն անմնահկանացու կենացն փոփոգանաց՝ վախճանել և կատարել ընդելանին զմահկանացու կեանսն։ բառնան, թողուն զժառանգութիւնսն՝ ազգին, կամուր բարուք յառաջագոյն ժառանգեալք։ Իսկ որոց ազգ ոչ գոյ, ընկերաց և բարեկամաց։ Քանզի պարտ և արժան է այնոցիկ՝ որք զառեսաւղսն[1] զմեծութիւն ի պատրաստէ ընկալան, զկոյրն տեղի տալ և ընձեռել այնոցիկ որք տակաւին ևս մնասաքն[2] կուրացեալ են։ Զմնաքսագորաս և զԴիմոկռիտոս ելլենացիք երգեն, զի խմաստասիրութեանն[3] բաղձանաւք բախեալք, պաճարաբաւոս թողին լինել զժառանգութիւնսն։ Հիացեալ զարմացեալ եմ՝ ընդ արսն[4] և ես, զի եղեն ի վերոյ քան զցանկութիւն ընչից. այլ ո՞րչափ լաւագոյնք են որք ոչ պաճարացն թոյլ եռուն արաւտ լինել զժառանգութիւնսն, այլ զմարդկան զազգայնոց զկարաւտութիւն կամ՝ զբարեկամաց լցուցին, և ի վարանելոց՝ ձեռնհասս և ընչեղս երևեցուցին։ Քանզի այն առանց քննութեան և ընդ միտ ածելոյ և փորձի[5] է, զի մի՝ մոլեկան ինչ ասացից ի վերայ արանցս՝ ընդ որոց զարմացաւ Ելլաս ընդ գործն[6]։ Իսկ այս ըզգաստ և խմաստուն և հանդերձ ճշմարիտ խոհականութեամբ ատուգեալ ասելեաւ[7], թշնամիքն և պատերազմուղք զինչ ինչ աւելի գործեն կամ՝ հնձեն և ծառակոտոր առնեն զթշնամեացն զերկիր, զի նուազութեամբ կարաւտութեան[8] հարկաւորացն՝ ճնշեալք և վատնեալք առաջի կացցեն։

1. Միւսն. զոյնսն։
2. Մ. յաւելու եթե։
3. Մ. զնմանութիւնսն։
4. Մ. ընդ արս։
5. Մ. ընդ փորձի է։
6. Մ. ընդ փորձսն։
7. Մ. ասելեաւ։
8. Մ. կարաւտութեամբ։

Զայս դիմակրիտեանքն ընդ յարենէան[1] մերձաւորս գործեցին. ձեռակերա[2] աղքատութիւն և կարաւտութիւն նոցա կազմեցին, թերևս ոչ առ խորել, և առ նշկահել. այլ վասն ոչն յառաջագոյն տեսանելոյ և ընդ միտ ածելոյ և հոգ տանելոյ զայսոցըն ազգաւ։ Արդ ո՞ր չափ ոտրա լուսագոյնք և սքանչելագոյնք են, վարեցեալք ոչ նուազաւք առ ի յիմաստասիրութիւնն յարձակմամբ, զմեծամտութիւն փոխանակ քամնհանաց յարգեալ. և շնորհեալ զժառանգութիւնն, այլ ոչ ապականեալ, զի և այլոց և[3] անձանց աւգուտ արասցեն. զնոսա առատ և մեծ ժառանգութեամբ առացուածոց, և զանձինս իմաստասէրն[4] լինելով։ Քանզի առացուածոցն և ընչից[5] հոգք, որք վարին նոքաւք՝ հաշեն և մաշեն. իսկ ժամանակի խնայ առնել[6] բարւոք է. վասն զի ըստ Հիպոկրատեայ, եթէ կեանք աւագ և արուեստ երկայն, զայս ինձ թուի և Հոմերոս առակէ, յԵզիպտա ի սկզբան երկրատաներորդի հագներգութեան ի ձեռն այսոց[6] տաղից ասելով. Միասցուց որ ի միմեանց վերայ կեան և մեռանին և զմիմեանասիրաց. ձիակրթաց, կառնակերաց[7], աւրապարենից, արդարոց մարդկան։ Իբրու թէ որ առ ի կեանս աշխարհիս փոյթ ունի ինչս համբարել, զանիրաւութիւն բնաւորեցաւ ծնանել վասն անզուգութեան։ Իսկ արդարութիւն և ընդդէմ՝ ախորժակաց՝ սակս զուգութեան. ըստ որում՝ բնութեանն մեծութիւն որոշեալ և սահմանեալ է, և բարեբաստիկ և[8] քան զայն որ ի մեռոի կարծիքն[9] պանծացեալ է։

1. Միւսն. -բինէն։
2. Մ. յե--կերտ։
3. Մ. ե--։
4. Մ. ի-տ-էրն։
5. Մ. ինա՛ -նել։
6. Մ. -ոց։
7. Մ. կ-ՄՌ-կերց, ըստ յունին։
8. Մ. բ-բեբ-տիկ էր ոն, ըստ յունին։
9. Մ. կ-ծիքն։

Արդ յորժամ՝ ի բաց կացցեն ի ժառանգութեանէ առացուածոցն ոչ ի միոջէ խնդրէ եւ այնուհետեւ և ոչ պարտեալք, փախչին առանց յետս դառնալոյ, լքեալ թողեալ զեղբարս, զկանայս, զորդիս, զազգըս, զբազմամարդիկ ազգակցութիւնս, զընդունելութիւնս՝ ընկերաց, զդաւառս յորում՝ ծնեալ եղեն և սնան. վասն զի սոփերականն ձգաւոր է և բռնադատու և պատրել կարողացոյն։ Գայթեալ փոխի ոչ յայլ քաղաք, իբրու զի թէ առ ի գին խընդրելով յայնցանէ՝ որ առացեալն ունին, իբրու թշուառականք, կամ՝ իբրու ծառայք, ի տերանց ի բաց փոփոխումն, ոչ ազատութիւն իւրեանց պաճարելով։ Քանզի ամենայն քաղաք, և յայնցանէ որ քաջաբինաւքն վարին, լի են խուճապիւք խառնութեանց և անբաւ արկածիւք ազեաի, որում՝ միանգամայն զի առացից, ոչ զի կարէ[3] առնել յիմաստասիրութենէ։ Այլ արտաքոյ ուրեմն քան զպարիսպն արտաքոյ՝ տոցա զշրջանսն, ի պարտէզս, և կայ մի[4] միայն և յապահով վայր զհանդարտութեան և զդադարման զհետ անցեալք, ոչ զմիայնութիւնն ախորժեցին վասն մարդատեցութեանն, այլ զայն որ յանենմանից սոփերութիւնն ընդ նոսա միաբանութեանն խառնմանն էր, անաւդուտ և վնասակար գիտացեալք։

Քանզի բազում՝ ուրեք յաշխարհի է ազգս. քանզի պարտ և արժան է կատարելագունի բարոյ հասանել էլլադայ և բարբարոսական ազգին. բայց առաւելեալ է յԵգիպտոսի ըստ իւրաքանչիւր կոչեցելոց աբիւնաց, և մանաւանդ շուրջ զԱղեքսանդրաւ։ Իսկ որք ամենայն ուսեալք առաքինիքն են, իբրև ի գաւառ բժշկաց՝ զբնակափոխութիւնն առ-

1. Միւսն ՀԱՅԵՐԷՆ, յոյնն՝ φιλικὰς։
2. Մ. ՀԻՆ։
3. Մ. ԿԱՐԵ։
4. Մ. ՄԻՐ։
5. Մ. Ի ԿԱՅ Ի ՎԱՅՆ։
6. Իսկ. ԲԱՆԿԱՆ. իսկ Մ. Ի ---- ԴԱՇՏԵՆԻՆ ԲԱՆԿԱՆ։

նեն, առ ի յաջողակապոյն իմն և ի դէպ վայր, որ է գեր ի վերոյ լճին Մարեայ։ Եւ կայ ի բարձրա-
ւանդակի վերայ յոյժ զնոտագունի, ի դէպ և ի ճահ յաղագս զգուշութեան և աւգոց քաղցրախառնու-
թեան. քանզի զգուշութիւնն շուրջքն մնասուցա-
նեն գոմք և գեաւղք։ Իսկ զառ ի յաւդն քաղցրա-
խառնութիւն որ ի լճէն բերանքն արձակին ի ծովն,
և որք ի ծովէքն մնաւոի ելոյ որ եւանեն ասէպ ըս-
տէպ աղոիք[2] աւդոյ, անաւարունք այն որ ի ծովէն,
և թանձունքն որ ի լճէն[3]. որոց խառնուածն առող-
ջագոյն հաստատութիւն կենաց գործէ։ Իսկ տունք
ի մի վայր եկեղոցն յոյժ գձուձք են, առ երկուս իրս
հարկաւորագոյնք. ձեղուն ի վերոյ ունելով, զյարե-
գականէն խարշումն և զաւդոյն ցրտութիւն։ Քան-
զի ոչ մնաւ ի մնաւ են իրրև ի քաղաքս, քանզի
խուճապաւդ է և գժուարահաճոյ այնոցիկ որ զյա-
պահով հանդարտութիւնն սիրեցին, դրակցու-
թիւնքն։ Եւ ոչ յոյժ հեռի, վասն որոյ բուռն հա-
բեալ զմիարանութենէ սիրոյ. և զի թէ աւազակաց
եղիցի յարձակումն[5] ի վերայ՝ միմեանց աւգնես-
ցեն։ Եւ ի միում միում իւրաքանչիւր ումք՝ է
տէրունական տնակ, որ կոչի պարկեշտանոց և միայ-
նարան. յորում միայնանալով նոքա՝ զպարկեշտ և
զնազելի վարուց զիսորհուրդն կատարեն։ Ոչինչ ի
ներքս տանելով, ոչ ըմպելի՝ ոչ կերակուր. և ոչինչ
մի յայնցանէ[7] որ միանգամ առ ի մարմնոյն պէտս
են հարկաւորք. այլ աւրէնս և պատգամն յաստու-
ծոյ տուեալ[8] ի ձեռն մարգարէիցն, և երգս աւր-
հնութեան. և զայլն որովք հանճար և բարեպաշ-

1. Միան. Ի գեղ վայր։
2. Մ. աղդ։
3. Մ. ի լճի ն։
4. Մ. գրանցորդութիւնն։
5. Մ. յաւելու. ասին։
6. Մ. յորոցուն։
7. Մ. Ի ոչ մինչ յայոցանէ Ի։
8. Մ. գրեալ։

տութիւն առ հասարակ աճեն և կասարին։ Քանզի միշտ անմոռաց ունին զաստուծոյ յիշատակն. մինչ զի և ի ձեռն ամենայնի ոչ այլ ինչ, այլ զգեղեցիկ զաստուածային առաքինութեանցն և զարութեանց տեսակս տեսանել. քանզի բազումք և խաւսին ընդ քուն. զանուրջն մեկնելով զաստուածայինսն ի մնասութեանն զմիշտերգելի[1] և զբանչելի աւրէնսն։ Բայց երկիցս ըստ միում միում աւուր սովորեցին յաղաւթս կալ, ընդ առաւաւոտն և ընդ երեկոյս. իբրև արև ծագէ, բարաւրութիւն խնդրելով, զէապէսն բարաւրութիւն, երկնային լուսոն զմիտսն առնուլ[2]։ Իսկ իբրու մնանէ, վասն զանձն ի զգայութեանց և ի զգալեացն խուճապէ ամենեին թեթև եղեալ՝ յիւրում՝ խորհրդարանի և բնակութեանն եղեալ՝ զճշմարտութիւնն հետախուզել։ Իսկ զյառաւաւտէ մինչև ցերեկոյ զերկայնութիւն աւրինչեանն՝ առհասարակ ամենայն է նոցա վարժանք տեսութեան։ Քանզի դիպելով աէրունեան գրոցն, իմաստասիրութեամբ գործեն. զհայրենի աւրինադրութիւնն այլաբանելով. վասն զի նշանակ զճաւին մեկնութեանս կարծեն ծածկեցելոյ[3] բընութեանն ի կարծիս ազգեցելոյ։ Բայց է սոցա և շարագրածք հին արանց, որք ազանդին առաջնորդք և սկիզբն եղեն, բազում՝ յիշատակարանս այնքր որ յայլաբանեալսն տեսակի թողին. որովք[4] ըստ կրգրնաստաւք վարելով նոքա[5], նմանութիւն բերեն զկամացն նոցա զաւրինակ։ Ապա ուրեմն ոչ տեսանեն միայն, այլ և առնեն երգս և աւրհնութիւնս յաստուած՝ ի ձեռն ամենազան չափոց և նուագաց։ Զոր նազելի և պարկեշտ յարմարմամբ հարկաւորապէս գծեն. զվեց աւուրսն իւրաքանչիւր որ[6] միայնացեալք ինքեանք առ իրեարս յա-

1. Միւսն. ՀՄԷՐ ՅԻՐԻՆՔ։
2. Մ. —ՆԼՈՒ։
3. Մ. Ծ—ԾԿԵՑԵԼՈՅ։
4. Մ. յաւելու ԷՐ—։
5. Մ. չունի Ն—։
6. Մ. չունի —։

սիրելիս[1] ի միայնանոցն խնամատարին, ըստ գա-
ւիթին[1] ոչ երանելով արտաքս, և ոչ ի բարձրաան-
դակէ ուսակ ի բաց վայր հայելով. իսկ յեմթնե-
բորդումն ի մի վայր դան իրրև ի հաստակ ժողո-
վարան, և բան հաստակի անցեալ նստին, հանդերձ
վայելչական ձեւով, ի ներքս զձեռն ունելով, զաջն
ի մէջ կրծիցն և ծնաւտին, իսկ զահեակն զրսպեալ
և ամփոփեալ առ կշտին. և ի մէջ անցեալ ծերունի
զ և որ աւրինացն հմտագոյն, խաւսի հաստատ հայե-
ցաւածք և համեստագոյն ձայնիւ խորհրդով և ի-
մաստութեամբ. ոչ դժնդակութիւն բանից, որպէս
ճարտարանքդ և այժմ խնամատակքդ[2] ի մէջ անցեալ
ցոյցս առնեն, այլ զ'ի միտն[3] քննելով և մեկնելով զրս-
տուգութիւն, որ ոչ ի վերայ ծայրից ականջացն ան-
ցեալ նստի, այլ ի ձեռն խաւորութեանն յոգիսն գայ.
և ի վերայ նորա անցանէ հաստատութեամբ և խաղա-
զութեամբ. այլքն ամենեքին նստին և լսեն, զզմու-
թիւնն ակնարկութեան ուսաւք քան զլեայ ազդելով
զայս միայն. իսկ հաստաբակ պարկեշտանոցս այս, յոր
յեմթնեբորդումն դան ժողովին, կրկին գաւթի է.
մին յառնանոցն և մին ի կանանոցն զատուցեալ և
պրուեալ[4]. Քանզի և կանայք ըստ սովորութեան լսեն
ընդ նոսա և նախանձին[5] զնոյն նախանձ, և զնոյն կամն
յինքեան բերեն. իսկ ի մէջ սանն որմ ի յատակէն
յերիս և իւրսր կանգուտս ի վերկայս զեղեցիկ չինեալ
լանջարերձ. իսկ մինչև ցձեղուն[6] վերնատուն բացար-
ձակ թողեալ յաղագս երկուց իրաց, զի զվայել-
չական պատկառանս կնոջ ընութեանն ամբողջ պա-
հեսցէ, և զի զընդունելութիւնն լսելոյ զրանան դիւ-
բաւ ունիցի առնել. Անցեալ նստեալ լինին մեաւ
յայն վայր ուր լսելն գայ, ոչ իրիք ընդ այեր որ խաւ-
սին ձայնին ընդ ոտս անկանելոյ[6]. և արդ կաւորու-

1. Միւսն. ըստ գ-ին։
2. Մ. խնամարկդ։
3. Մ. ոչ զի միտն։
4. Մ. զատուցեալ և պրուեալ։
5. Մ. նախանձիս։
6. Մ. ուղիղս։

թիւն՝ իբրև՝ հիմն իմն յառաջագոյն եղեալ յոգւոջն, զայսն ևս ի վերայ շինեն զառաքինութիւնսն։ Բայց կերակուր կամ ըմպելի ոչ զի ի սոցանէ ընկալցի յառաջ քան զմնուս արեգական. վասն զի զիմաստասիրելն արժանի լուսոյ համարին, և խաւարին՝ զմարմնոյն հարկաւորս· վասն որոյ միւսն զտիւն, իսկ հարկաւորացն՝ զդիշերոյն զդոյզն ինչ մնան եռուն։ Բայց ոմանք յերիս աւուրս յուշ արկանեն կերակուրս, յորս ուրեմն հանճարոյ փափագումն հիմնացեալ և հաստատեալ է։ Եւ ոմանք այսպէս ուրախ լինին և զուարճանան, յիմաստասիրութենէն կերակրեալք մեծապէս և առատաբար զաւրէնսն բաշխելով տալով, մինչ զի երկպատիկ ժամանակ քան զայս ժուժալ, և հազիւ հազ յետ վեց աւուր ճաշակել կերակուր հարկաւոր, ընդելեալք իբր ասեն զճաղատնցդ ազգք, աւգով կերակրիլ, երգոյն՝ որպէս կարծեմ, զկարաւտութիւնն դիւրաւ անցուցեալ[2]։ Քանզի զեւթներորդն ամենասուրբ իմն և ամենատաւն գոյ կարծեցեալք, առանձինն իմն[3] և մեկնակ և զատ պատուոյ արժանի առնեն· յորում՝ յետ անձինն խնամոյ և զարմանոյ՝ և զմարմինն պարարեն, որպէս գոյ տեսանել և ըզպատճառսդ, ի տէպ տէպ[4] վաստակոյ երկոցն թոզացուցանեն։ Եւ կերակրին՝ ոչ բազմապատիկ ինչ խահիւք, այլ հաց անպաճոյճ, և աղ խորտիկ, զորս խահամուքքն համեմեն զոպայիւ· և է ըմպելի սոցա վտակային ջուր ինքնախաղաց[5]։ Քանզի զորս բնութիւնս կացոյց ի վերայ մահկանացու ազգիս տիկնայս՝ զծարաւ և զքաղց, ազգրեն և զապարեցուցանեն, յայնցանէ որ առ ի յոգրանս ինչ է՝ մնաւցանելով և ոչինչ, այլ զնոյն ինքն զպիտանացուն· առանց որոց կեանն ոչ գոյ հնար։ Վասն այսորիկ

1. Յոյնն. Եւ- ՝-Ի-Խ---Ն--ՐԻ-Ն (εὐκράτιαν) ԻԲՐ ՀԻՄ ԻՄ։
2. Մ. ՝-Ի-Ր-Ց--Ի-Լ։
3. Մ. ՀՈՒՆԻ ԻՄ։
4. Մ. յաւելու Յ-Ն-Խ։
5. Մ. Ի-Ջ-Ի-Լ։

ուտեն զի մի քաղցիցեն, բնկեն զի մի՝ ծարաւեսցին. բայց ի լուութենէ չուայտութեան[1] երբ ի թշնամւոյ և ի խորհչ մեռաակարէ անձին և մարմնոյ խոյս տուեալ խոտորին։

Վասն զի և ծածկութի կրկին տեսակ է, հանգերձ և տուն։ Արդ յաղագս տանն ասացեալ է յառաջագոյն[2], զի է անպաճոյճ և առանց խոշելոյ, առ պիտանացուն միայն գործեցեալ. և զգեստն[3] նոյնպէս գուշնաբեալ և առանց պաճուճանաց, առ ի յապրանս ի ցրտոյ և տաւթոյ. քանզի վերարկու փոխանակ թաւ մորթոյ՝ ձմերայնի[4], և թիկնանոց ամարայնի կուսի։ Քանզի ամենայնիւ վարժին անհպարտութեամբ, գիտացեալք զի հպարտութեան՝ ստութիւն սկիզբն է[5], և անհպարտութեան՝ ճշմարտութիւն, և երկաքանչիւր զք զուրէն[6] ազբեր ունի։ Քանզի հոսին և բեռն ի ստէն՝ բազմաւորինակ չարեացն տեսակք. իսկ ի ճշմարտէն[7] չահք առացուածոց բարեաց, մարդկայնոցն և աստուածայնոցն։

Բայց կամիմ և զ'ի հասարակն[8] ժողովս միաբանութեան նոցա, և զպայծառագոյնս զուարթագոյնս ի գինարբուս զմարն ասել, հակառակ և ընդդէմ ամէն կացուցեալ զայլոցն գինարբուս։ Քանզի սոքա յորժամ՝ զանազանին յինքեանս անացեն, ոչ երբեմն զգինի արբեալ, այլ երբեմն սխալական ինն և յուզիչ[9] և զմոլեգնոտ ինչ. և թէ այլ ևս ինչ իցէ գմնդակագոյն մոլեգնութիւն, կատաղութեան[10] խորհրդոյ մոլեգնութեան բնական, խանչեն և մոլին

1. Մխան. չուայտութիւնն։
2. Մ. յառաջագոյնն։
3. Մ. զգենուն։
4. Մ. ձմերոնոյ։
5. Մ. զի հպարտութիւն սկիզբն սատանայի է։
6. Յոյնն. λόγον։
7. Մ. ի ճշմարտութենէն։
8. Մ. զնոցա։
9. Մ. սուրչ։
10. Մ. խորհրդոյ։

և կատարին զաւրէն չանց վայրենեաց և անձեռն-
ընդելից, և ի վերայ յարուցեալք խաժատեն ըզ-
միմեանս և փաղաղեն, ի բաց հատանելով զբուն-
գունս և զականջս, զմնասունս[1], զայլս ևս մասն մար-
մնոյն. մինչ զի զայն որ ի վերայ Եպիսկոպայ և Ոգե-
սեայ ընկերացն զառատապէն յայտնի ցուցանել ի նո-
ցանէ[2] ճշմարիտ, պատառս և թուռս մարդկան ուտե-
լով, որպէս ասէ քերթողն, և հմայգոյն և խակագոյն
քան թէ նաւ վասն զի նա թշնամի համարեալ ունէր-
իսկ ոչաւ՝ սովորս և ընդելս և բարեկամս. և է եր-
բեք զի և զաղգակիցս[3] առ ոչ և առ սեղան, ան-
նուէր և առանց խաղաղութեան, ի նուէր խաղա-
զութեանն գործեցին։ Եւ ոմանք իսկ և զամենայն
աւրինակն յինքեանս նմանեցուցանելով, զայնո-
ցիկ որ ի կրթական հանդէսան են, և հատանեն և
խոտան գործեն, իբրև զընտիր և զփորձ գահե-
կան զվարժս կրթութեանն, որք փոխանակ նահա-
տակաց թշուառականք, քանզի զայս ի վերայ նոցա
ասելի է։ Զի որ[4] զդատութեամբ յընթացարանն
և ի գաղանամարտս, նոքա տեսողաւք վարելով այնո-
քիւք որ առ ամենայն հեթանոսն փորձագոյնքն, ի
տուընջեան, և յաղագս յաղթութեան և պսակաց ո-
զոմպիականաց՝ և արուեստիւ[5] գործեն։ Իսկ նոքա
խոտան և արհամարհ և անարդ գործ գործելով ի
գինարբուսն, գիշերի ի խաւարի արբենալով և սխա-
լակելով և զանցանելով զգինւով առանց հանճարոյ,
և չարահնարութեամբ՝ յանարգութիւն և ի թըշ-
նամանս, և գժուարին հարուածս այնոցիկ որ կրենն
գործեն զիրան։ Այսպա թէ ոչ զի զաւրէն համոզա-
կեր թափչի ի մէջ անցեալ քակեցէ, մեծաւ և
աւելի իշխանութեամբ, յաղթեն և մարանչին և
մրցին. մեհ միանգամայն և ապանութիւն[6] գործե-

1. Միւսն. հոգոնս... հոգոնս բառ յն։
2. Մ. ի ոգոնէ։
3. Մ. զազգակիցս։
4. Փոխանակ զի որ, միւսն ունի զոր։
5. Մ. արուեստիւ։
6. Մ. յաւելու. և ոգոյնս-ընդ։

1A 11/5491
30583

լով։ Քանզի կրեն՝ ոչ գուշակեաց յայտնցանէ զոր ինչ այլոն անցուցանեն զոր ինչ ոչ գիտեն, խելագարս առնելով. որք զգինին՝ ոչ որպէս կատարկերգուն ասէ՝ առ ի չար մերձաւորացն միայն ընկեն զայն, այլ և առ իւրեանց չար ընկելով յանձն առնուն. վասն որոյ որք յաւուր սգաւոր մի ի մէջ անցեալ ի գինարբուս առողջք և բարեկամք, յետ սգաւոր մի եղանեն ի գուրս թշնամիք. և մարմնովք յաղաւեալ և հարեալք և զբմբրեալք. և ամենք ի նոցանէ սատիայ և գաստուրաց, և ամենք պատանաց և ապերանեաց և բժշկաց, և առ ի սոցանէն աւգնականութեան կարաւտեալ անբաւին. և ամենք որք ի չափաւորագունաց գոլ թուին գինարբուաց՝ իբրև զմնարագոր զանազանն ընկելով, թմրբեալք և թմշեալք և զբմբրեալք, և զահեկեալ զարմանքն ի գուրս կոր-գեալ հանեալ, և զվիզն ի վայր արկեալ ի ներքս գարձուցանելով ի բաժակն, խոր քնով ընկնեալք լինին. ոչ ինչ ոչ գիտելով և ոչ լսելով, իբրև մի միայն ունելով զգայութիւն զաղբենթարակազոյնն[2] ճաչակաւորութիւն։

Բայց գիտեմ՝ զամենս որք յորժամ սխալակեալք եղիցին, յաւուր մինչ և կատարելապէս թմրբիլ և թմալ, նաև ընկզմիլ[3], ի գինի այնր ի միւս ևս գինարբուս հրաւիրելով, հանգանակ[4] ի մէջ արկանելով յաւուրագոյն պատարաս[5]. մասն կարծելով զան ի ձեռինն ուրախութեան գոլ զայնը[6] որ յաղագս հանգերձելոյ արբեցութեանն յոյսն կայր. և զայսուրինակ կելով, անուանք և անբնակք և անգաւառք և անվայրք լինին. թշնամիք ծնողաց և կանանց և մանկանց. և թշնամիք հայրենի գա-

1. Միւսն. Էլեգեոբոբ։
2. Մ. զանիրագանոն. յոյն՝ ἀκροθώρακες.
3. Մ. Խլանալ և ընկղմիլ։
4. Ի լս. հանգ։ Մ. հանկանալ։
5. Մ. գաստրաստի։
6. Մ. զայն։

տասին, և թշնամիք և անձանց խրեանց։ Քանզի խոնարհութեամբ և անապուր և շուայտեալ կեանք կենցաղոյս, ամենեցուն դաւոդ թշնամի է։ Բայց թերևս որ ընկալեալ յարգեսցէ զայն՝ որ յաժեալ և հաչակեալ է այժմ գինաբրուացն ամենայն ուրեք գործ, բան փափաքմանն խառաղական բաղմաղան խրախճանութեանն և փափկութեան։ Ընդ որ նախանձեցան ելլենացիք և բարբարոսք, առ ի ցոյցս առաւել քան ի բարեկեցութիւն առնելոյ զպատրաստութիւնս կազմածոյն. եռակրմնպանոցսն և բազմակրմնպանոց, տաճարս ի կրայի[1] պատենից և ի փղոսկրէ կազմեալս և ի պատուականագոյն նիւթոց· որոց բազում՝ ինչ է որ յախճապակապատ է. անկողինս ծիրանի ոսկեհուռ անկեալս, և այլ ծաղկանեկս յամենապատիկ երանգոց, առ երեսացն ձգումն և կորզումն. բաժակաց և ըմպելեաց բազմութիւն, կարգեցելոց և մի ըստ միոջէ եղելոց ըստ իւրաքանչիւր տեսակի։ Ափսէք և տաշտք և ըմպիկք[2] և պատժանակք, և բազմաձև արուեստականագոյն նաւակք և ճախարակեալք[3], խնամոտն հանճարեղ արանց ճշդիւր ստուգութեամբ կազմեալ ձեռագործք, և պաշտաւնեայք ապատուորք՝ ծառայք և ազատնայք գեղեցկակերպք և յոյժ գեղազէշք՝ որպէս զի երթեալք անդ, ոչ յաղագս ապատու առաւել քան թէ երևելով զտեսողացն զերեսս ի հեշտանկութիւն ձգել։ Քանզի ի սոցանէն մանկագոյնքն որ են՝ զգինին պաշտեն, և զկուրն բերեն հաւժկուագոյնքն[4], լոգացեալք և լուացեալք և ողորկեալք զդէմն յարդարեն և նըկարագրեն, և զհեր գլխոյն գեղեցիկ իմն ուրինակաւ[5] յարմարեալ հիւսեն, և փարատակաւ յարմնեալ շղթին, քանզի թաւագէք են, որ ոչն ատ-

1. Միւսն. Ի կրայոցն։
2. Մ. ըմպելի։
3. Մ. ճախարակեալ։
4. Մ. հաւժկուագոյնքն։
5. Մ. յանկոյն։

փրին ամենեին, բայց զառաջի ճակատայն միայն զհերան[1] քաղեն, այնչափ մինչև ի հարթիկ և ի զուգել բոլորաձև գծոյ կազմեալ կերպարան։ Եւ պատմուճանս սարգանկիս[2] և սպիտակս ունին, և գաւտիածեալք ի վերկոյս զհանգերձն ժողովեալ, զառաջիկողմանէսն խնամարհագոյն քան զբարձն ի ներքոյ ծնկին։ Իսկ զվերնն ի վեր սակաւ մի ընդ քամակաւն. և երկաթանչիւր զոլորձն գանդրաձև գեղեցիկ խոշաքաղ արարեալ ի վերայ միմեանց ծալմամբ, բան նոցունց պատմուճանաց ի միասին ձգմամբ ընդ գաւտեանն հանգրիճաձև ամփոփմանէն։ և յերկոցունց կողմանց՝ խինձ[3] ի վերայ թողացուցեալ կախեն զհոխագոյնս[4] կողմանցն։ Եւ անցեալ կան առ նոսին այլք պարմանիք՝ առաջին տէգ մերուցան արձակեալ, մերուքն[5] այն ինչ զեռաղեռ ծագեալք. խաղ յառաջ սակաւ մի մանկասապայն եղեալ, ընդ վարժ կրթութեան անցեալք, յոյժ աւելագործութեան կախարդութեամբ, առ ծանրագոյն ապատաւորութիւն, ցոյցք հացուցուց բառացի մեծութեան, որպէս գիտացին որք վարին և իկիր առնան։ Բայց որպէս ունի ճըշմարտութիւնն անբարեփոխութեան, և առ այսքիւք ևս հացից և խաչից, և զանազան կազմութեանց պայծառութիւնք. յոր հացարարք և ամբարարք աշխատին[6] հոգ տանելով, ոչ զճաշակաւորութիւնն որ էր հարկաւոր՝ հեշտացուցանել միայն պայծառութեամբ, այլ և զերեսան մաքրութեամբ։ Արդ եմին և աւելիք ևս ի ներքս տարեալ լինին սեղանք, լիք ամենայնիւ որ ինչ միանգամ երկիր և ծով և գետք և ագր բերին, յամենայնէ ընտրեալ, զամենայն ինչ ազնիւ, մի մի[7] ցամաքայնոց, ջրայնոց, աւդայնոց.

1. Միւս. գ-ոյրն։
2. Մ. սարգանկոս. յոյնն՝ ἀραλνοῦφης.
3. Ի լ. ծոր։
4. Մ. գնվոսգոյն։
5. յունի մարտն։
6. Մ. աշխարին։
7. Մ. ի ցամաքայնոց։

ցաց. յորոց իւրաքանչիւր ոք որոշեալ և մեկնեալ է և կազմութեամբ պատրաստութեան, և համեմունքն ամենաւք, զի մի՝ և մի ինչ ազգ ամենեին մի՝ մնասցէ որ ինչ ի բնութեանս է։ Հուսկ յետոյ, մրգոցն ի ներքս մուծեալ՝ լինին լցեալք առանց այնր ի կաթաւանան և յերգս. և զայն որ ասին մակընթրակք, և ապա այնք արտաքս հանեալ լինին ունայն վասն կերոցացն անյագութեան. որք զաւրէն եթիոպց[1] ամենալով փաղաղեն, մինչև յոսկերացն նոցա անդամ՝ուտել. իսկ զայլն լափաւեն, և ձրձելով կիսակեր թողուն. զի յորժամ՝ կատարելապէս ի բաց հրաժարեցեն՝ զորովայնն մինչ ի պարանոցն լցեալ, և թափուր և ունայն են ցանկութեամբք, յապուշ և յետս կալով ի խահիցն կերակրոց. զվիզն այսր անդր շուրջ ածեալ[2], աչաւք և անդամքք շուրջ լապլիզեն և լակոտանեն, զոմանց ի նոցանէ[4] զանազանութիւն մնացն և ըզբաղմութիւն, և զոմանց զբուրումն զճենճերական հոտոյն. և ապա յորժամ՝ յերկոցունց՝ ի խահէն և ի հոտոյն եղիցին յագեալք, գովել հրամայեն ասկաւ մի զկազմութիւնն և զհացառուն, վասն բազմապայծառ պատրաստութեանն։ Այլ զի՝ զայսոսիկ վայելէ յերկարել, որ ի բազմաց ասա ի չափաւորացն և ի համեստաց ըստգտեալ է, պատուելով[3] և ընդարձակելով զցանկութիւնս, որոց փոքրկութիւնն և նեղութիւն աւգտակար էր. քանզի ըզձիւք զի յիրաւի արդեւք ըզձանայ զանըզձանալիսն զծարաւ և զքաղց, քան զայն որ յայսոսիկ խրախութեան առատ և անբաւ կերակրոց և ըմպելեաց մեծութիւնն եղև։

Այնոցիկ որ յԵղիպտա գինարբուք եղեն, հրա-

1. Միւսն. եթ-իոպ-ոց մոյլով. յոյնն՝ αἰθίων. ի լատին թարգմ. fulicarum.
2. Մ. -ծելով։
3. Մ. լ-ցելիքն և ալ-ոտն։
4. Մ. յոյնոնէ։
5. Մ. գոտ-ելով։

չակագոյնք և նշանաւորք, երկուք այսպիսի են, յորս գէպ եղև և Մակրատայ պատահել. մին յորժամ զկայսեաս պատկեալ, յԱստուածկա զյաղթութեան խրախութիւնն վայելէր. և մին Ազաթենա, զորս և յիշատակի արժանի արարին արք որք և բարուք և սովորութեամբք և բանիւք խնամատարք եղեն, Քսենոփոն և Պղատոն. քանզի մատեանս՝ գրեցին իբր արժանիս յիշատակի, որովք կարեցին ի կիր առնուլ ցոյցս աւրինակի դիտաւ այսոցիկին, զոյն որ ի գինարբուսն հայկերութեաց, նուազաւոր կրաւնիւք վարեցին։ Բայց սակայն և այսոքիկ բաղդատեալք ընդ մերս, որք զտեսականն խնդութեամբ ընկալան զմարս կենցաղոյս, ծաղր երևեալ գայցի։ Քանզի հեշտ ցանկութիւնսն ունի երկաքանչիւր որ. և մարդկաբէնագոյն է Քսենոփոնտայն. քանզի կանայք փոքանալք և կաքաւիչք և պանդեղագործք. և քերթողք ծաղուց՝ առ ի ծաղր ինչ կատականաց գործել և յանառակ խնդութիւն զարթուցանելով մեծամեծս փպային։ Եւ են և այլ խաղք որք պայծառագոյն յընդարձակութեան՝ կամակ անսորմութիւնք եղեն։ Իսկ պղատոնականն՝ բոլորն գրեթէ՝ է յաղագս տուփանաց. ոչ արանց ի կանայս մտեցելոց, և կամ՝ անց յարս միայն, քանզի խորհին և անդամեն և զսպեալ ամփոփին ցանկութիւնքս այսոքիկ աւրինաւք բնութեան. բայց արք յարս՝ հասակաւ միայն զանազանեալք։

Եւ քանզի որ ինչ միանգամ՝ յաղագս տուփաւորին և երկնային Աստղկանն պայծառագոյն ինչ ասել թուի յաղագս խրախութեան և զուարճութեան ամենայն առեալ եղև։ Քանզի զյաղագ՝ մասն սորա հասարակական և ընդհանուր աշխարհական տուփաւորն առեալ ընկալաւ. զզաւրութիւնն, զկենցաղագուտն առա-

1. Միւսն. է հոգեանս։
2. Մ. չէ յԷս։
3. Մ. հէշ ցանկութիւնն։
4. Մ. ընդարձակութեան։
5. Մ. յոլով։

թիւնութիւն, զբան պատերազմին և զբան խաղաղութեանն ի բաց բառնալով, բայց իգական ախտ յոգիսն գործելով և կենաւորդիս՝ կազմելով։ Որոց պարտ և արժան էր ամենեցուն առ ի զաւրութիւն կրթութեան զանձինս վարժել, ապականելով ըղձնկական հասակն ի տուփեցելոց դաս և ի կարգ ածելով, ինքս գործեաց և տուփոդացն ի հարկաւորագոյնսն, զմարմին և զանձն և զժառանգութիւն. քանզի հարկ է մանկատուփի մուացն ձգել և կորզել առ մանկականսն, և առ այսոսիկ սրատեսիլ լինելիսկ առ այլսն ամենայն առ իւրսն և առ հասարակացն կուրանալ։ Եւ մարմինքն քանցեալ[2] ի ցանկութենէն, և մանաւանդ եթէ վրիպեսցէ՝ հաշիլ և մաշիլ. և ժառանգութիւնն անհոգացեալ պղերգութեամբ գերեւանալ և նուազել յերկուց իրաց, յանփութութենէն և ի տուփելոյն ծախուց, և բուանել յայսմանէ և միւս ևս այլ մեծ ընդհանուր աշխարհական չար. անմարդութիւն և ամլութիւն քաղաքաց, և նուազութիւն առաքինի ազգին մարդկան, ամլութիւն և անպտղութիւն հնարին գտանել, որք նմանել կամին անառեղեակ և անհմուտ մշակաց, որք փոխանակ թանձրահող դաշտացն զաղատապատուկ անդատանս և գրարուտ և զապալերկ վայրն ակրմանեն[3], զայն առ որով ոչ ինչ ամենևին բնաւորեալ է բուսուցանել, և զսերմնեալն յինքն նեխէ և փտէ զսերմնեան։ Բայց լուեմ զառատապէսյացն առեղծուածս, որք և զերկմարմնեան որք ի սկզբանն խառնեալք ընդ միմեանս բնութեամբ միաւորական զաւրութեամբ, զարձեալ իրրև մասունք ի մի վայր եկեալք ի բաց անջատեցան ի յարմարութենէն յորմէ ըմբռնեալք էին ի միաբանութիւն, լուծեալք քակեցան. քանզի գիւրաւ պատրել և խաբել կարեն ամենայն զոյգքն նո-

1. Միւսն. -ոյրանդրոս. յոյնն՝ ἀνδρόγυνος, -ոյրանդրոս։
2. Մ. +-ղեալ։
3. Մ. պակասէ. -երանեն։

բազումթեամբ խորհրդոյ մեծութեամբ զանազ-
ան խանձիս սրտով. զորոց ի բազում ժամանա-
կաց Մովսեսի ազակերաքն ուսեալ յառաջին հասա-
կէն բաղձալ ցմնարտելիս[1] քամահեն և արհա-
մարհեն, անպատրելիս[2] և անխարդ անցուցանեն
զաւուրս իւրեանց։ Այլ վասն զի անուանի և նշա-
նաւոր հաչակեալ միաբանութեան գինարբու-
քն, այսպանիս լի է չատխաւսս[3] ընդվայրաբանու-
թեամբ յինքեանս ունել՝ զկշտամբանս յանդիմա-
նութեան, եթէ ոչ առ ի փառս է[4] հաչակեալ համ-
բաւն յաղագս նոցա, իբրու կարի յոյժ ուղիղ գոր-
ծոցդ որ ի[5] համբաւն կամեացի հայել, հակառակ
ընդդէմ եղեալ զգինարբուս այնոցիկ որ նուիրե-
ցին զիւրեանց զկեանսն հանճարոյ խրատու, և
տեսութեան բնութեանս իրաց, քան մարգարէին
Մովսեսի սուրբ աէրունեան պատուութեան խրա-
տուց։

Զգաս նախ առաջին ի մի վայր ժողովին յետ եւթն
եւթն չարաժուց, ոչ միայն ի պարզ բնութենէ
եւթներեկին, այլ և ի զաւրութենէ սորա պակու-
ցեալ. քանզի սուրբ և անբիծ և յաւեժակոյս զսէ
գիտեն. և է նախատաւնակ մեծի տաւնին յիսնե-
բեակն[6], սրբազգոյն և բնակատագոյն թիւ, յոգզան-
կիսնոց եռանկիսնոյն զաւրութենէ, որ է սկիզբն բոլո-
բոլն լինելութեան բազկացեալ էջ յորժամ ի մի վայր
եկեալ ժողովեցին ապիտակազգեալք, պայծառք,
և զուարթք. բուն հանդերձ[7] վերնային պարկեշ-
տութեան հաւատոյ թեամբն, և նշան արարեալ նոցա
աւրաւորակին[8], — քանզի այսպէս նոցա ա՛ուանել

1. Միւսն. ՈՒՂՂԵԼԻ։
2. Այլոցէս յօրինակին. ի միւսն շ-ԽՈ-----ՐԵՄԻ։
3. Մ. ՈՒՆԼԻ։
4. Մ. է ՀՈ--- Ա է։
5. Ի միւսն. պակասէ. որ է։
6. Մ. զրուագ չՈՒՆԷՈՒՆ քերելով ուղղէ չՈՒՆԷՐԷՆ։
7. Մ. ՀՈՒՆԴԷՆ ԲՈՒՆ։
8. Բայն ἐφημερεῦτης, յ՛ефѣмеріа բառէ որ է գ-----ԼՈՐԻ կամ գ-ԼՈՒԾԵԼՈՅ ՀՈՒՆԱՊԱՐԵՐՆ է ապ-----։

սովորութիւն է զյայսոսիկսն ապաստաւորութիւնս կարգեալս, — յառաջ քան զբազմելն յոտն կան, մի ըստ միոջէ կարգաւ յաւրինեալք, և զերեսս և զգձեռս յերկինս համբարձեալք։ Զերեսսն, վասն զի տեսլեանն[1] արժանիս տեսանել խրատեցան։ Եւ զգձեռսն, վասն զի մաքուրք յառաւածոց են, և ոչ ի միոյ իմեքէ ի պատճառէ ի շահից աւգտէ ապականեալք. յաղաւթս կան առ աստուած՝ զդիւաբրուս խրախճանութեանն իւրեանց հաճոյ և կամակ լինել և ըստ մտացն ախորժակաց[2] հանդիպել։ Իսկ յետ ազաւթիցն ծերունիքն կոդմանին մի ըստ միոջէ կարգաւ ըստ որոշմանն. և ծերունիս ոչ զբազմամեայս և զհինսն համարին, եթէ յամի՝ ուղիղ կամաց յաւժարութեան բաղձացան, այլ զյառաջնումն հասակէն զարգացեալ տեսական մասին իմաստասիրութեան. որ գեղեցիկ և գրանչելի և աստուածայինն է։ Եւ են ընդ սոսա ի հացկերութիւն և կանայք, որոց յոլովք ի նոցանէ պառաւունք կոյսք, զարբութիւն կուսութեանն ոչ ի հարկէ՝ որպէս ունէք յառ հեթանոսսն քրմացն պահեն սուաւել քան ըստ կամաւոր բարուց, վասն նախանձու և փափաքման իմաստութեան. ընդ որում՝ կեալ փոյթ յանձին կալեալք, զմարմնաւոր հեշտ ցանկութեամբքն քամահեցին. ոչ մահացու[3] ծնողաց, այլ անմահից բաղձացեալք, զորս միայն կարաւղ է ծնանել աստուածասէր անձն. սերմնեալ ի նա զճառագայթսն զմտաւորս հաւրն, որովք կարասցէ տեսանել զիմաստութեանն աւրէնս։ Եւ որոշեալ և զատուցեալ է բազմականքն, առանձինն[4] և զատ, արանցն յաչկողմն, և մեկուսի և զատ՝ կանանցն յահեակ կողմն, զոր կարծեսցէ որ անկողմնս, թէպէտ և ոչ արդեւք բազմապատիկ պայծառութիւն

1. Միւսն. զգեղեցիսն։
2. Մ. Ի ըստ սրինայն ախորժանաց։
3. Մ. մահկանացու։
4. Մ. Ի ոչ։

ունին, բայց սակայն կակղագոյնք են, իբրև ազատ մարդկան և իմաստասիրութեան նահատակաց պատրաստեալ. և պարիսիք են ի դուղնաքեայ նիւթոյ. յորոց կարի գձուձ գեղեցատոր ի գաւառին պրտուոյն, սակաւ մի վերամբարձեալս ընդ արմկամիջն զի յայն յեցցին. քանզի զդակոնական խստափարութիւնն թողացուցեալ, բայց միշտ և ամենայն ուրեք զազատ գիւրութիւնն ի կիր առնուն, մեծաւ զաւրութեամբ ի հեշտ ցանկութենէ տափանաց ի բաց հրաժարեալք։ Եւ ազատ պաշտամանն կրեն ոչ ի ծառայից և յաղախնաց, զաղդն ազատս[1], սատացուածս համարեալ ոչ ըստ բնութեան, քանզի սէ ազատս զամենեսին ծնաւ։ Իսկ ամենայն անիրաւութիւնքն և ագահութիւնք և աւելաստացութիւնք, նախանձ բերեալ ընդ սկզբնաչարին անզուգութեան, ի լուծ ծառայութեանն արկեալ ըզակարագունիցն զաւրութիւն, ընդ հզաւրագունիւքն մուծին։ Եւ ի սուրբ ի տէրունական ի գինարբուս յայս[2], ծառայ և ոչ մի ոք ոչ էր որպէս ասացի, բայց ազատք պաշտէին զարբանեկական պէտսն կատարելով՝ ոչ բռնութեամբ, և ոչ հրամանաց կայեն անսային, այլ կամաւորք[3] բարուք յառաջանայեն անցանելով ի փութոյն և յաւժարութենէն զհրամանաւն։ Քանզի և ոչ դուղնաքեայք որ ազատք կարդեալ լինին առ ազատաւորութիւն պաշտամանս այսորիկ, այլ պատանիք ի ժողովի միաբանութեան հանդերձ ամենայն խնամով ի բուն յառաքինութեան[4] ընտրեալք. զոր աւրինակ պարտ և արժան է իմաստունս և ազատս և առ վերին առաքինութեանն ծայր ճեղեալս, իբրև որդիք հարազատք պատուասիրաբար խնդութեամբ հարց և մարց պաշտաւն մատուցանեն, հատարակ ծնաւղս

1. Միւսն փոխանակ զազգն ազատս ունի զանազատս։
2. Մ. յայսմիկ։
3. Մ. կամաւորք։
4. Մ. առաքինութեան։

համարելով, և քան զայնոսիկ որ յարենէն են[1] ևս ընտանեգոյնս։

Զի եթէ արդարև քան զքաջաբարութիւն ոչ ինչ է ընտանեգոյն այնոցիկ որ զբարի խորհուրդսն առաջի արկեալ է, անիգաւոր[2] վայր թողեալ զպատմուճանսն մոտանեն պաշտեն, իբրև յոչ ինչ բնաւ ամենեին կերպարան ծառայական ձևոյ յանձինս բերելով։ Յայս ի գինարբուս գիտեմ զի ոմանք ծիծաղեսցին ասելով, բայց ծիծաղեսցին որք լալեաց և աշխարհանաց արժանի կեանս կեան։ Գինի յաւուրսն յայնոսիկ ամենեին ոչ տանին ի ներքս, այլ ջուր ականակիս. յորմէ ի նոցանէ հով, բայց ջերմ՝ ծերունեացն փափկակեցացն, և սեղան մաքուր յարիւնաւորաց, յորոյ վերայ հաց կերակուր և խորտիկ աղ, որոց էր երբեք զի և զոպա համեմով ամրեալ լինէր, վասն փափկամարացն։ Քանզի զգաստութիւն և համեստութիւն՝ որպէս քահանայիցն պատարագս մատուցանել, և սոցա վարս ունել ուղիղ բանն առթէ. քանզի զինի անզգայութեան է գեղ, և խանդ բազմապատիկ՝ պաճարոցն, զանյարգագոյնն զարթուցանեն և գրգռեն զհեշտ ցանկութիւնն։ Եւ առաջին կերակուրքն նոցա այսպիսիք են։ Իսկ յետ ընկողմանելոյ հացկերութացն, որովք ապրեցի դասուք կարգաւն, և կալ սարկաւագացն յաւրինաւոր զարդու, առ ի ապաս պաշտամանն պատրաստս։ և գահերէցն ի նոցանէ՝ իբրու հաստատակ լուութիւն եղև, և երբ ոչ՝ ոչ գոյ[4] ասել ումեք, բայց ևս առաւել քան յառաջագոյն[5], մինչ զի և ոչ անգամ՝ ումեք իշխել բարբառել և կամ՝ շունչ կլանել սաստկագոյն, խընդիր ոմանց որ ի սուրբ ի տէրունական դիրս կայ առարկելոց[6] լուծանել և մեկնել, հոգ ինչ ոչ տանե-

1. Ի միւսն չիք ԵՒ։
2. Յոյնն՝ ἄξοστοι. -Ն֊ֆ֊Ֆ։
3. Մ. յ֊ր֊ց։
4. Մ. Երբ ոչ ֆ֊ց։
5. Մ. ղ֊—֊Ջ֊ֆ֊ն։
6. Մ. —֊ր֊Ֆ֊ց։

լով, երբու թէ ցոյցս ինչ առնել։ Քանզի ոչ գժբնդակութեան ճարտարութեան բանիւք՝ բարգաւաճանաց փառասիրութեան ցանկացեալ է, տեսանել ինչ փափաղեալ առուգագոյն և ճշմարտագոյն. և տեսեալ՝ ոչ չարանել[1] և նախանձ վարկանել, զայնոսիկ որք թէպէտ ոչ նմանապէս զարտասուութիւնն ունին, այլ զի զուսանելոյն զրաղձանս ցանկութեան հաւասար և զոյգ ունին։ Եւ նա անցեալ կայ հաստատուն և հանդարտիկ ի կիր արկեալ զվարդապետութիւնն, ասելով[2] և յերկարելով, և ի վերբառին բուռն հարկանելով և բազում՝ անգամ՝ զնոյն կրկնելով, ածելով[3] յոգիսն զմիտս բանին. քանզի մեկնութեամբ արագն և կարի յոյժ տագնապաբար առանց ոգի առնելոյ յընդելուզանելոյն, լրստոյգն միաբ զհետ երթայ անկարացեալ վերջանան, և անցեալ մնան ի հասանել բմբռնման ասիցեղոցն։ Իսկ որք չահանիցեն[4] զահանիսն և զաչսն ի նմա կառուցանեն, ի միում ի նմին կայանի ձեայ կալով միաբով ունգնդրութիւն առնեն. զիմնարն և զմիտ[5] առնուլն և զհասանելն, ակնարկութեամբ և հայեցաձոլով նշանակելով։ Իսկ զգաղութիւն ասացին՝ զուարճութեամբ և գրեթէ այսր անգր տանելով բերելով զգէմն։ Իսկ զարարան և գնտրակուանան, հանդարտագոյն և հեղ չարժմամբ գլխոյ և ծայրիս մնացին ամոյ ձեռնին։ Բայց ոչ նուազ յընկոգմանելոցն՝ որք յոսն անցեալ կան մանկտին մեռ գնեն. և պատանութիւն սէրբունեան սուրբ գրոցն լինի բան մնացութեան այսարանութեամբ. քանզի ամենայն աբրնագրութիւնն համարեալ է արանցս[6] այսոցիկ նմանել կենդանւոյ,

1. Միւս. չարանիլ։
2. Մ. յասելով. զոր ի լս. ուղղէ ասելով։
3. Այսպէս ի բնագրին, ի լս. ունելով զասան կ. երբու թէ ասել՝ ածելով. զնոյն ասէ և միւս օրինակն։
4. Մ. չանիցեն։
5. Մ. Ե զ միս ասելն։
6. Մ. հարանս արանս այսոցիկ նմանել։

որ մարմին ունի զճառական հրամանան, և հոգի որ կայ ի բառն անտեսանելի միտքն, իբրև հայելեաւ զանուանեցն զգեղեցիկ և զբանչելի գեղեցկութիւն մնացն որ կայ ի ներքս տեսանելով. և զնշանան բանալով և մերկանալով, և հոգանի երևեցուցանելով, և մերկ ի լոյս ի դուրս բերեալ զմտածութիւնս խորհրդոցն, այնոցիկ՝ որք կարեն ի փոքր մի յիշեցուցանելոյ՝ զանեբևոյթն ի ձեռն երևելեացն տեսանել։ Արդ յորժամ գահերէցն բաւական և շատ խաւսել թուեցի, և բան կամեցն նոցա հանդիպել[1] ամա խաւսքն, գեղեցիկ ուշիւ նպատակի, բրոնահարութեամբք, և սոցա ունդնդրութիւնն, կայթուն յամենեցունց իբրև ի միասին խնդութեամբ հեչտութեան զգածելոց երիցս միայն եղև։ Եւ ապա աւագն յոան կացեալ՝ երգ աւրհնութեան երգէ արարեալ աստուծոյ, զոր նորոգ իւր արարեալ, և սկզբնաւն իմն հնոց քերթողացն. քանզի չափս ենուագս բազումն թողին սաղից, եռաչափաց, առճանապարհական երգոց[2], փրկաւեսաց, նուիրակաւնաց, յարարադնաց, չափականաց, կայականաց, պարաւորաց. շրջմամբ և բազմաշրջմամբք, գեղեցիկ և լաւ չափեցելոց. յետ որոյ և այլքն մի բան միոջէ, և բան հասակի վայելչական զարդու, ամենեցուն մեծաւ լուութեամբ ունդնդրութիւն արարելոց։ Բայց յորժամ զծայրայանդսն, և զ'ի վերայս աւրհնութեանն երգել պիտեսցի, քանզի յայնժամ ամենեքին հնչեն՝ արք և կանայք։

Եւ յորժամ իւրաքանչիւր որ կատարեսցէ զաւրհնութիւնն՝ մանկունքն զյառաջ սակաւ մի ինչ ասացեալ զսեղանն ի ներքս տանին, յորոց վերայ ամենասուրբ կերակուրն հաց խմորեալ, հանդերձ խահիւ ապի ընդ որ զոպա խառնեալ է, վասն պատկառանաց նուիրեցելոյ[3] ի սուրբ տաճարին ի տէրունական սեղանոյն. քանզի ի վերայ սորա են

1. Միան. հանդիպէ։
2. Յոյն προσοδίων.
3. Մ. նուիրէ։

հաց և ապ առանց ամբարանաց · սեխամոր են հացքն, և ապն սեխասան։ Քանզի վայելուչ և արժանի իսկ էր պարզագոյնքն և լուսաւորագոյնքն[2] և մեկնակքն, առաքինաց և լաւ քահանայիցն մնան բաչխիկ տալ, մնացեալն պաշտամանն մրցանակ։ Իսկ այլոցն ընդ նըմանան նախանձել, և հրաժարել ի նոցանից, զի ուներցին պատիւ. նահապետութեան վերնքն։ Եւ յետ ընթերցանն՝ զսուրբ և զքանչելին առնեն զդիւրաբաշխաւանն զայս աւրինակ · յասն կան առ հասարակ ամենքին. և ի միջոցի ընթերակերոցին, նախ զառաջինն երկուք լինին պարք, մին արանց և մին կանանց · և իշխան և առաջնորդ յերկոսին կողմանան ընտրեալ լինի ըստ երկաքանչիւրոցն պաշտաւանագոյն, և նուազաւորագոյնն։ Ապա երգեն աւարեալ աւրհնութիւնս յաստուած, բազում չափաւ և նուազաւաք · մինին առ հասարակ հնչեն ամենեքիսն, և միւսոմն զուգաձայն յարմարութեամբ ձեռս շարժելով, խնդալից զուարթանան և աստուածարեն։ Լ. երրեք զառ ի յաստուած երգն, և է երբէք զչափաւորսն, և չիցես զի պարսն[3] և անդրէն չիցես առնեն · և ապա յորժամ երկաքանչիւր ոք ի պարուցն առանձինն ինքն ըստ ինքեան յաստուկ խրախ եղեալ կերակրեսցի իբրև աստուածարութեամբ՝ յանապակէն յինքեաներս[4] կորզեալ յաստուածսիրութենէն, խառնին և լինին մի պարք յերկոցունց, նմանութիւն այնոր որ ի հինսն երբեմն եղև ի Կարմիր ծովուն, յաղագս պանչելիացն որ գործեցան անդր · քանզի ծովն հրամանաւ աստուծոյ, ամենց փրկութեան պատճառք, և ամենց համարէն աստակմանն լինի. քանզի պատատեցելոց և բռնաւոր խզմամբ այսր

1. Միւսն · լուսոյնն։
2. Մ. գ... Լ գ։
3. Մ. սիրելիսն հնչեն։
4. Իբ. ցանուցեալ առնուն. իսկ Մ. զի գոյն կոյսս առնուն։
5. Մ. գիրանս, զոր օրինակս մեր գնէ ի լս։
6. Մ. ոչ կորցեսցեն անդ։

անդր ժողովեցելոյ. և յիւրաքանչիւր կողմանց ընդ-
դէմ միմեանց զաւրէն պարսպաց կառուցեալ ե-
ղեն, ի մէջ երկոցունց վայրն յաչխարհապողոսայ
ճանապարհ և ի ցամաք ամենեցուն պատառեալ ընդ-
արձակիւր. ընդ որ ժողովուրդն հետեւակեաց
մինչև ցայնկոյս ցամաքն առ բարձաւանդակագոյնսն
յուղարկեալք։ Եւ ի վերայ յարձակեալ նոցա թշ-
նամեացն, որձանք[1] կուտակելոց հոսանացն, միոյն
ի միոջէ կողմանէ[2], և միւսոյն ի միւսմէ, ի ցամաք
մասն հոսեցելոյ, որք զհետ անցին ի թշնամեացն՝ հե-
ղեղեալք ապականին։ Զայս տեսեալ և կրեալ նոցա,
որ քան զքան և քան զմիս, և քան զյոյս ի վեր և
մեծ գործ, և աստուածաշունչ[3] եղեալ արք և կա-
նայք մի պար եղեալք՝ զդոհացողականն աւրհնու-
թիւն ի փրկիչն աստուած երգէին։ Եւ առաջնոր-
դէր արանցն Մովսէս մարգարէ, և կանանցն Մա-
րիամ մարգարէ։ Նոցա յաւէտ նմանութիւն ա-
բարեալ պաշտաւնէիցս այսոցիկ պար, նուագաւ
զուգահնչմամբք և զուգաբարբառովք, առ ծանր
հնչիւն արանցն, կանանցն սուրն խառնեալ, յար-
մարական և նուագաւոր բաղաձայնութիւն կատա-
րէր, և արդարև՝ երաժշտական. քանզի ամենաբա-
րի էին միաբ, ամենաբարի բարբառքն, և նազելի
և պարկեշտ պարաւորակքն. և կատարած մատցն
և բառիցն և պարաւորացն բարեպաշտութիւն. և
արբեցեալք մինչև ի վաղորդեայն, գեղեցիկ ար-
բեցութեամբ այսուիկ, ոչ ծանրացեալք գլխով և
ոչ թառամեալք[4], այլ զուարթ և արթուն, առաւել
քան թէ յորժամ զառաջինն եկին ի գինարբուսն,
զերեսն և զբոլոր մարմինն՝ ընդ այդն ընդ առա-
ւաւոն կացեալ. յորժամ տեսցեն զարեգակն, ըզ-
ձեռս ի վեր համբարձեալ յերկին, զճշմարիտ բար-

1. Միւսն. յոյնս։
2. Մ. կողմանէն։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։

ութութիւնն[1] և զճշմարտութիւնն ըղձիւք խընդրեն, և սրակնութիւն խորհրդոյ և մտաց. և յետ ազաւթիցն յիւրեանցն իւրաքանչիւր զի ի նազելի պարկեշտանոցն անցեալ գնան, զարձեալ զտվրական խնամատարութիւնն շահին և առանան։ Արդ յազագս պաշտաունէիցս այսքան, որք զտեսութիւն խնդութեամբ ընկալան զրնութեանս, և զայնոցիկ որ ի սմայն է[2], և հոգւով միայն տեսողացն, երկնի[3] և աշխարհի քաղաքավարաց։ Բայց հաւրն և արարչին բոլորեցուն մտերիմ հարազատութեամբ յանձնեալք յառաքինութենէ[4], որ զսէրն նոցա[5] առթեաց՝ ընտանեգոյն և առանձինն պատիւ քաջալերութեան[6] առաջի եդեալ, որ քան զամենայն լաւագոյն է բարեբաստութիւն, ինոյն ի ծայրն հասեալ քաջաբարութեանն[7]։

1. Յոյն բն. եւս բ-ջջ--ն. իսկ միւս գրչ. բ-ջեջ--ն, որպէս և մեր օրինակն ի լս։
2. Միւսն. է ամենէ։
3. Մ. երն։
4. Մ. յ----ինութենն։
5. Մ. -ց-։
6. Յոյն բն. ի-ջ-լ----ն. իսկ միւս գրչ. ի-ջ-ջեջ--ն։
7. Մ. ի-ջ-ջեջ--ն։

ՓԻԼՈՆԻ

ԿԵԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Ցէրունեան աւրինացն ի հինգ գիրս վերագրեցելոց՝ առաջինն կոչի և մակագրի Լինելութիւն, աշխարհիս՝ ի լինելութենէ առեալ զառաստութիւնն. և սակայն բազում՝ այլոցն ներկրեցելոցն իրացն՝ որ միանգամ՝ ըստ խաղաղութեանն կամ՝ ըստ պատերազմի, և կամ՝ բերոց և անբերութեանց, կամ՝ զմեծամեծաց ի վերայ երկրիս ապականութեանց ի ձեռն ջրոյ և հրոյ. կամ՝ ընդդէմ՝ լինելութիւնք և քաջանութիւնք կենդանեաց և մեկոց, ըստ աւդոյ և տարեւորականաց ժամանակաց բարեխառնութիւն, և արանց ոմանց յառաքինութեան և ոմանց ի չարութեան վարեցելոց։ Այլ վասն զի սոցա են ինչ որ աշխարհիս են մնասունք, և են ինչ որ երկինք[2], բայց կատարելագոյն և լաւագոյն՝ աշխարհ, նմա զբոլոր զիրսն[3] վերագրեալ նուիրեաց։ Քանզի զոր աւրինակ աշխարհարարութիւնն կարգեալ յաւրինեալ է, ի ձեռն առաջին շարադասութեանն՝ որպէս կար էր ճշմարտել՝ ասուցեցաք. վասն զի զաւրէնսն ըստ կարգաւորին զկնի հարկաւոր էր քննիլ և խուզիլ, այնց որք մասնաւորականքն են և իրք կերպարանք, զընկեցումն գերագրութեանն արարեալ, զընդհանրագոյնսն՝ և իրք սկզբնատիպ յառաջագոյն զննեալ որոշեցուք։ Եւ սոքա են արանց՝ որ առանց խրթիրթի և առանց եպերանաց գեղեցկապէս կեցեալք,

1. Այսպէս յօրինակին՝ քերելով զնախ գրեալ ը տառ։
2. Ցոյնն՝ παθήματα, զոր հինք մեր թարգմանեն կիրս, կրէիս, և այլն։
3. Ցոյնն՝ βιβλον.

որոց զառաքիչութիւնն ի սէրունեան գիրսն արձանակել և հռչակել դէպ եղև, ոչ առ նոցա զոմութեան է այս միայն՝ այլ և յաղագս այնոցիկ որք պատահեն՝ յորդորել և ի նմանատեսութեան։ Բանզի արքն այն հոգեորք և բանականք աւրէնք եղեն, զորս յերկուց տակս հռչակեցուցեալ պանծացոյց. մինչ՝ կամեցեալ ցուցանել զի եղեալ սահմանք[2] կարգացն՝ ոչ ինչ է բնութեան հակառակ։ Եւ երկրորդ, զի ոչ բազում ինն վաստակոյ է այնոցիկ որք կամին բան այսոցիկ որ կան աւրէնքս՝ կեալ, յորժամ և անգիր աւրինադրութեամբ յառաջ քան զսկիզբն ինչ գրել, այնոցիկ որ ի մանաւորականին էին, դիւրաւ և հեշտի ի կիր առեալ վարեցան առաջինքն։ Որպէս զի արժանապէս ումիք կարել երևեցուցանել զեղեալ աւրէնսն, ոչ այլ ինչ՝ այլ յիշատակարան գոլ կենաց վարուց հնոցն, սկզբնաբանելով զգործս և զբան որովք վարեցանէն։ Քանզի նոքա ոչ ծանութիւք և աշակերտք եղեալք ամենց, և ոչ առ վարդապետս զոր ինչ պարտ և արժան է գործել և ասել՝ ուսեալք, բայց ինքնաբուրք և ինքնուսմունք զկարգաւորութիւն բնութեան սիրեցեալք, զնոյն ինքն զրնութիւնն, ո ինչ ոք է հնմարտութեամբ, երիցագոյն և պատուական աւրէնք և գիր կարծեցեալ զոլ՝ առ ամենայն կենաւքն խաղաղ աւրինաւք վարեցան. պատճառս ոչ ինչ կամեսոք բարուց գործեցեալք, բայց յաղագս որ ի պատահիցն և ի դիպմանց ոմն ամաչեցեալ՝ հաստատեցուցանէին զպատուած, և ուրախութիւք և խնդրբուսածաւք բարեկամեցուցանէին. առ ամբողջութիւն բարբակ վիճակութեան կցորդութիւն կենաց բարեաց՝ ի ձեռն երկոցունց մեծարեցելոց գործով, այնց որ ի նախախնամութենէ ակնածութեան, և այնց որ ի կամաւոր բարուց։

1. Բոլոր ի Ներսէսեանցն նախնոյ տեղ. τῶν ὁμοίων ζήλων ἀγαγεῖν.

2. Ի բա. հրամանս։

Արդ վասն զի սկիզբն կցորդութեան բարեաց է յոյսս, և յոյս իբրև ի կուռ ճանապարհ առաքինասէրն հասանէ հոգի, փութացեալ և ճեպեալ հասանել այնց որ բաց ճշմարտութեանն է բարին. ըզյառաջինն զյոյսն տարփող ասաց՝ զմարդն, զհասարակ զմիաբանական զազգին զանունն, առանձինն մեծ ինն շնորհ պարգևել նմա։ Քանզի քաղդէացիք զմարդ Լինոմ կոչեն, իբրու միայն ճշմարտութեամբ իցէ մարդ այն՝ որ բարեաց ակն ունի, և ի վերայ բարի յուսոյն անցեալ հասատեալ նստի։ Յորմէ յայտ է զի զվատթարան, ոչ մարդ՝ այլ մարդակերպ համարի գազան, որ զբուն զընտանեգոյնն զմարդկային զոգւոյն զյոյս յինքենէ ի բաց հանեալ ընկեցեալ է։ Ուստի ամենաբարիք յիշեցուցանել կամեցեալ զքաջայոյսն, յառաջագոյն ասաց թէ «սա յուսացաւ ի բոլորեցուն ի հայր» և յաբարիչ, ասէ ի վերայ. «այս գիր լինելութեան մարդոյն»։ և ապայն հարց և հարուց՝ ահա յառաջագոյն եղելոց։ Այլ զնոսա նահապետս խառնեալ ազգին կարծեաց գոլ. իսկ զսա մաքրագունին զբաեցելոյ և պարզեցելոյ, որ էապէս է բանական։

Քանզի զոր աւրինակ քերթաւղն Հոմերոս՝ բազմաց էից քերթողաց բաց առաւելագանցութեան ասի, և սեաւդ որով գրեմքդ, և ապայն ամենայնի որ ոչ ապիտակ է սևի ելոյ։ Նոյն աւրինակ և զայն որ յուսոմն վարի՝ մարդն, բաց առաւելագանցութեան անուանեաց. զրազմութիւն այլոցն անցեալ լուռ կացեալ, իբր զի թէ չէին արժանիք նմին առաստութեան հասանել։ Բայց բարեաց և զգիր լինելութեանն առ ճշմարտութիւն մարդոյն առասաց, ոչ անդէպ և վայրապար. վասն զի գրոյ և յիշատակի արժանի է քաջայոյսն, ոչ այնր որ ի քարտէս

1. Այսպէս ի գրչագրին. յոյնն՝ հ----ց πάππων.

2. Ի յոյն բնագրին գտանեմք ասէն զհատուածդ, որ պակասէ ի հայումս. καὶ ἄρχων Ἀθήνησιν, ὁ ἐθῶνομος, ἐστὶ θῶν· ἐννέα ἀρχόντων ἄριστος, αὐτοῦ οἱ Χρόνοι, κατἀριθμῶν.

ի ցեղոյ ապականեցելոյ, այլ այնոր որ յանմահում բնութիւնն, առ որում առաքինի և փութոյ արժանի գործքն անջինջ գոյ դէպ եղեն։

Արդ եթէ թուեսցէ զի յառաջնէն և ի հոգածնէն, զայն որ ի քաղդէացւոցն Լենովս, բայց Հայերէն խառնիւք՝ մերդն կոչեցեալ, գացէ չորրորդ։ իսկ ի թիւս՝ գտանեսն գտուեալ է։ առ այլս ևս ամենայն իմաստասէրս՝ որք զանմարմնական զոյացութիւնսն և զանմարմինս սիրեցին, և մնատանդ առ Մովսեսի ամենիմաստին, որ պարկեշտ և հրաշակաւոր երևեցուցանելով զչորրորդ թիւն, ասէ զի տուրբ է և գովելի։ Բայց յոր պատճառս ասացաս ի ձեռն առաջին չարագասութեանն։ Լ։ տուրբ և գովելի է քաջայոյսն, որպէս ընդդէմ պիղծ և պարսաւելի է վատայոյսն, ահա առ ամենայն խրատուսա չարտ վարեցեալ։ Զի որպէս սեռերիկոզութիւն նշանակ է անցաւութեան, նոյնպէս և երկիւղ յաւոյ։ և մի գուցէ թէ յիրաւի, քանզի ամենպարութեան են երկրաբեան։ այլ մին բարեաց, իսկ միւսն ներագարձեալ՝ չարեացն, քանզի անհամբոյրք և անհաւաք են բնութիւնքն սոցա և անպատեհք։

Լ։ այսպան չատ և բաւական է յաղագս յաւոյ ասել։ զոր մնասս առ գոլս իբր զոնեսպան բնութիւնս գետեղեալ բամբիշն ի նեղք առաքինութեանցն, որոց ոչ գոյ հասանել և պատահել, ոչ սոքա յառաջագոյն զմիտս հաճեալ։ Արդ բազում են արքինալ իրք, և բազումք որք ամենայն ուրեք աբրենք վարին՝ յաղագս զոգիս ազատացն բարի յաւոյք լցուցանել։ իսկ որ առանց միխիթարութեան խրատուսութեան, և առանց հրաման առնոյ ելգեալ է քաջայոյս, նաև գրով[2], բայց գարձեալ ինքնուսումն աբրնաւք առաքինութեամբս այսորիկ խրատեալ է զոր բնութիւնս եղ։

1. Յոյնն՝ Ἑλλάδι καὶ διαλέκτῳ πρὸς ἀγορευόμενον ἀντρωπον.
2. Յոյնն՝ γράφῳ μετὰ νόμου.

Բայց երկրորդ եհաս գասու յետ յուսոյն, այն որ ի վերայ մեղացն է ապաշխարութիւն և կազմութիւն արութեան[1]։ Ուստի զկնի գրէ զայն որ ի վաղիար կենացն առ լուսաւորչն փոխի, և կոչի առ երրայեցիսն Էնոք, իսկ որպէս Հայք ասացեն՝ շրնորհաւորեալ[2]. յորոյ վերայ և այսոքիկ ասացեալ են, իբր թէ ապաքէն «հաճոյ եղև աստուծոյ, և ոչ գտանիւր. վասն զի փոխեաց զնա աստուած»։ Քանզի փոխադրութիւնն՝ յեղումն երևեցուցանէ և փոփոխումն. բայց առ ի լաւն է փոփոխումն. քանզի նախախնամութեամբ ակնածութեան լինի աստուծոյ։ Քանզի ամենայն ինչ աստուծով բարիքն՝ և ուղղակար է ամենայն իրաւք. վասն զի և որ առանց աստուածային ակնածութեանն է՝ անաւգուտ է։ Իսկ ասացեալն, «և ոչն գտանիւր» ի վերայ փոխադրեցելոյն, կամ՝ վասն զհինն և զբաղդատանելին ի բաց Էնոքել զկեանս վարուցն, և ոչ ևս գտանիլ, որպէս թէ և ոչ սկիզբն իսկ եղեալ իցէ. և կամ՝ վասն փոխադրեցելոյն և ի լաւագունին կարգեցելոյ գաւառն՝ գժուարագիւտ գոլ բնութեամբ. քանզի բազմարեղուն է չարութիւնն, վասն որոյ և բազմաց է ծանաւթ և գիտուն։ Եւ դուն[3] և նուազ է առաքինութիւն, մինչ զի և ոչ սակաւուց անգամ՝ հասանելի։ Եւ այլ ազգ դարձեալ. վասնարն ի վաճառս և ի հրապարակս և ի տեղարանս և յատեանս և ի խորհրդարանս և ի ժողովարանս, և յամենայն խումբս միաբանութեան և ի պարս մարդկան ընթանալ հասանել, իբրու զի չար իրազեկութեամբ է կեցեալ. և զլեզուն արձակեալ բառնալ թողու առ անչափից և անբաւից պատմութիւն, խառնակելով զամենայն ինչ և զանգանելով, ընդ ճշմարտութեան՝ զստութիւն, և ընդ ճառեալս՝ զանճառս, և ընդ ա-

1. Յոյնն՝ βελτιωσις, զոր այլուր [illegible] թարգմանեցին նախնիք մեր։
2. Ի բնագրին. [illegible]։
3. Ի բ. [illegible]։

առաքինիս՝ զծագու արժանին խառնեալ։ Վասն զի ոչ է հրահանգեալ և խրատեալ ի ժամուն իրում՝ զզեղեցիկ հանդարտութիւնն։ Քանզի զականջսն անպատկան վասն բազմախոյզ իրաց ուղիղագործութեան բարձեալ թողեալ, զյաղագս այսոցն՝ եթէ բարւոք են, և եթէ դարձեալ չարք, ցանկպ և փափաքէ ուսանել. իրրու թէ անդէն ընդ ոմանս նախանձել և չարակնել, և ընդ ոմանս հեշտանալ և բաղձանս ցանկութեան կրել. քանզի չարակնտա և բարեատեաց և չարասէր է վատթարն ընութեամբ։

Իսկ առաքինին հակառակ սորա. անխրագեկ նախանձաւոր վարուց եղեալ, խորշի և սեղմեալ և ըզմիայնութիւնն սիրէ. զանխալ լինել ի բազմից լաւ համարեալ, ոչ վասն մարդասէրութեան՝ քանզի մարդասէր է թէ և այլոք, այլ վասն առաքի անկեղց չարութեանն, զոր բազում՝ խառնիճադանն սիրէ՝ և բուռն հարկանէ խնդալով, ընդ որ հառաչին և յոգոց հանել արժան էր. և տրամելով՝ ընդ որ խնդան և զուարճանալ բարի էր։ Ցաղագս ոբոց և ի տան արդելեալ փակեալ զինքն յամախ լինի, հազիւ հազ և առ սեամն դրանցն արտաքս ելանելով։ Եւ կամ՝ վասն այնոցիկ հայրենի ուրինացն ասէ՝ որ յամախագոյնս ելանեն արտաքոյ քաղաքի՝ բերելով ի միայնանոց վայրի, առնէ իւր դեգերաներս հեշտ և կամակ կենակցաւք վարելով. այնոքիւք՝ որ ամենայն ազգի մարդկան առաքինեալք են, զորոց զմարմնոն լուծեալ քակտեաց ժամանակն. իսկ զառաքինութիւնն մեացեալ գրեանն արծարծեն, որով ոգիկն բնաւորեալ են ընտանալ։ Վասն այսորիկ ասաց թէ փոխագրեալն «ոչ գանելիս», զբժուարագիւտ և գժուարորսալի զոլով։ Արդ չբղեալ փոխեալ ի նրան յանուանութենէ, և յանզգամութենէ ի զգայութիւն, և յարութիւն յերկիւղէ, և յամենայն չարութենէ յամենայն առաքինութիւն, որոց զի՝նչ այլ ինչ իցէ մեծութիւն արժանի։ Քանզի թէ պարտ է զարժանն ասել, ոչ կարէ այլ սրատեսիլ մեծութիւն է՝ առաքինութեանցն ուսումնասիրութիւն։

Բայց չէ պարտ և արժան անտես լինել, զի զերկրորդն բերէ իշխանութիւն կատարելութեան. որպէս և ախտաժէտ մարմնոյ առողջութիւն՝ ի հիւանդութենէ փոփոխումն. քանզի հանապազորդն և մշանջենաւորն և կատարեալն յառաքինութեան, մերձաւորագոյն և հուպ յաստուածայինն անցեալ կայ զաւրութիւն։ Իսկ որ ի ժամանակէ իմեքէ լաւութիւնն, առանձինն յաստուկ քաջարոյս և մրատու ոգւոյ է. որ ոչ ի մանկականն կայ մեայ, այլ յառնագոյն և յառնագէս[1] խոհմունս, որ խընդրէ անբոյթ և ջերին և խաղաղուտ կայան հաստատութեան հոգւոյ, և յերևութանս բարեացն ընթանայ։

Ուստի յիրաւի արժանապէս վայելչաբար՝ այնմ՝ որ ապաշխարէն՝ կարգէ զկնի զաստուածասէրն և զհաճոյն, որ երբայեցւոց լեզուաւն կոչի Նոյ, իսկ հայոմ[2] հանգիստ կամ՝ արդար. ընտանեգոյնք և մերձաւորք առաքինութիւնք իմաստնոյ[3]։ Քանզի երևելագոյնս արդարն[4], զի լաւ ոչ ինչ է քան զարդարութիւնն յառաքինութեան իշխանականի, որ զաւրէն իմն ի պարու լաւագոյն գտեալ՝ զառաջին տեղի ունի զպատուոյ։ Իսկ հանգիստն[5], վասն զի զընդդէմն զայնր[6] որ արտաքոյ բնութեան շարժումն, խռովութեանց և վրդովմանց և հեռութեանց և պատերազմացն պատճառք դէպ եղև դոլ, ընդ որ անցանեն վատթարքն։ Իսկ զհանդարտն և զխաղաղումն և զդադարեալն կեանս, որք զքաջարարութիւնն պատուեցին։ Եւ զհետ անցեալ ինքն ինքեան, և զեւթներեակն՝ զոր երբայեցիքն շաբաթ կոչեն

1. Ի լ. յառնէագէս, համաձայն յունին αλλ' ἀδροτέρος καὶ ἀνδρὸς ὄντος φρονήματιν...
2. Ին. խ՝ ըստ յունին։
3. Ատի սկսանի միւս գրչագիրն, թուղթս ինչ պակաս ունելով ի սկզբան գրոցն։
4. Միւսն ի լ. ունի Ենոքն։
5. Մ. ի լ. Նոյ։
6. Մ. վասն զընդդէմն նոր։

հանգիստ անուանել, ոչ որպէս կարծեն ոմանք թէ ի ձեռն վից առուրց չարաթիոն[1] ի սովորականաց գործոցն ի բաց կայր հանգուցեալ բազմութիւն ժողովրդեանն. այլ զի արդարև՝ էապէս եւթնեբեակ թիւն և յաչխարհիս և ի սոսին իսկ ի մեզ՝ անխեռ և անխառով և անպատերազմ անհակառակագոյն և խաղաղանազգոյն ամենեցուն թուոցն է[2]։ Եւ վկայք ասացելոցս[3] որ ի մեզ են զաւրութիւնքանդի վեցքս զանգաղաբ և զտէպ ստէպ և զյաճախ և զշաբաթական պատերազմ երկրի և գծովս ասենն. իսկ հինգքս[4] զգայութիւնքս, և արտաքերական բանս, ոմանք փոփոխութիւն[5] զգայութեանց, որոց[6] ոչն հասանեն, մարանչին պատերազմ տալով՝ և միւսն՝ անասնձելի բերանով շատ ինչ յանցանէ, յորոց լուսն կալ և գաղարել արժան է, ի գուրս բերէ խաւսելով։ Իսկ եւթներորդ զաւրութիւնն՝ այն որ առ իշխանական մնացն է. յորժամ փառաւորագոյն և բարգաւաճ լիցի քան ըզվեցսն, հղաւրագոյն ուժիւ չահեալ և իշխեցեալ, անցանէ զնայ զմիայնութիւն համբուրեալ, և ինքեամբ առ ինքն միարանութիւն մերձաւորութեամբք, երբու զի անկարաւտ է այլոց իրիք և ինքնաբաւ անձին։ Յայնժամ՝ ի հոգոց և լիրաց ազատ եղեալ[7], և թափեալ յայնցանէ որ ի մնչկանացու ազգին կեանքն են, զիաղաղականն և զնիրինն և զանբուրթացեալն սիրէ։ Այնպէս պատճառի հոչակեցուցանէ զառաքինաէրն, մինչ զի և ազգարանեալով զնա՝ ոչ որպէս սովորութիւն է՝ ի վերայ այլոցն հաւուց կամ նախահաւուց կամ նա-

1. Միւսն. չ-ք-ր-ն-ց։
2. Մ. էն։
3. Մ. ՀՀ-ց ք-ն-ն-ց։
4. Մ. յաւելու. -ց-ս է Հնգքս.
5. Մ. ֆ-փ-ֆ-ր-ն-ն-ն-ք, բաս յոյն ր.։
6. Մ. -որ։
7. Մ. լինեալ։
8. Մ. -ց-ա-ն-ւ։

խաՀարց առնէ Հարիւ. Հանմարդոյ, որք միանգամ առ ի յարանց կամ առ ի կանանց են, այլ յառաքինութեանց. ոչ միայն գոչելով յայտնապէս զի և տուն և ազգատարութիւն և գաւառ և ոչ մի ինչ ոչ էր[1] ընտանի և բուն խնամանոյ, բայց առաքինութիւնք և բարառաքինութեանցն գործք։ Քանզի «այսք, ասէ, լիներեալ թիւնք Նոյի. այր արդար և կատարեալ յազգին իւրում՝ առաւծոյ Հանոյ եղև»։ Բայց ոչ զարտ և արժան է անգէտ լինել զի այժմ զմարդ՝ ոչ Հասարակաւ գաղափարաւ զրանական և զմահկանացու կենդանին կոչէ, բայց զոյն որ բարառաքինացութեանն է, որ ճշմարիտ երևեցուցանէ զանձնն. զանընտանիսն և անձեռնընդելս և կատարեալ ախտս և զդաղանային չարութիւնն զոգւոյն ի բաց Հարածեալ։ Եւ նշանակէ զի յետ մարդոյն՝ ի վերայ ասէ «արդաբ»։ իբրու թէ անիրաւի ոչ ուրաք եղելոյ մարդ[2], այլ խակագոյն և տիրագոյն ասել մարդակերպ գազանի. բայց միայնոյ այնոր՝ որ նախանձաւորն իցէ արդարութեան. և ասէ զնա և «կատարեալ» եղաւ նեղ[3]. ի ձեռն այսորիկ յանդիման կացուցանելով, որպէս զի ոչ մի առաքինութիւն, այլ զամենայն և առաւելաւ ստացաւ իւրաքանչիւր ուրաք զրատանդիցն ի կիր առեալ կատարեաց։ Եւ պարակելով զնա իբրև զմարտիկնահատակ որքամպէս յաղթեաց, ևս պայծառ քարոզութեամբ զարդարէ, ասելով թէ «առաւծոյ Հանոյ եղև». որոյ զի՝ նչ լիցի արդեաւք ի բնութեանս յաւագոյն և քաջաբարութեանն յայտնագոյն և երևելի յանդիմանութիւն։ Քանզի եթէ որք վատահանոյք եղեն առաւծոյ՝ չար արդեաւք են[4], որոց բարիհանոյն լինել դէպ եղև՝ ապաքէն[5] ամենայն

1. Միւռ. ոչ է, ըստ յոյն բնագրին։
2. Մ. մարդոյ։
3. Մ. կատարելութիւն եղանիլ։
4. Մ. չարաչար են՝ ըստ յունին κακοδαίμονες։ Մեր օրինակն ևս նախ չարաչար գրէ, և ապա ուղղէ ի չար արդեաւք։ Ի բանին թարգմանութեանն որ ի Հանդիպոյ յոյն տպագրին (1743) այսպէս ասի. Si enim qui Deo desplicent, sunt miseri.
5. Մ. չունի զբառդ ապաքէն։

իրաւք բարեբաստիկք։ Ոչ վայրապար և անդէպ այսպիսի առաքինութեամբքս գոսկայ զմարդն՝ առաց ի վերայ, զի «կատարեալ էր յաղագի իւրում»[1], զեկուցանելով թէ ոչ միանգամայն[2], այլ բան բաղդատութեան բան այնց ժամանակի բարի էր։ Քանզի ահա ոչ յերկար հեռի ուրեմն յիշատակ արարցէ խնամանոց այրոց[3] որք զառաքինութիւնն անհակառակամարտ ընկալան. ոչ ընդ չարս փոխանակ հարցեալք եղեն, և ոչ զի բաւագոյնք եղեն քան զայնս որք առ նոցա ժամանակաւն էին, ընդունելութեան և նախապատուի արժանի եղեն. այլ զի ընութեամբ քաջմանն վիճակի, ցանկ ամրոզի պահեցին զնա, անեղծամեռ և անապականելի, ոչ մատնեալք և ոչ անկեալք ի չար և ի գժնեայ ախորժանս վարուց։ և նախ առաջին բոլոր բանից և գործոց կրթեալք և վարժիչք եղեալք, զկեանս վարուցն իւրեանց զարդարեցին[4]։

Արդ պանչիլագոյն արքն այնոքիկ եղեն որք առաց յարձակմամբքն վարեցան. ոչ բան նմանութեան կամ ընդդիմութեան այլոցն, այլ զնոցն ինքն զարքին եւ զարդարեալն[5] ընկալան։ Աբանչիլի է և այն, որ բան ինքեանն ժամանակի ազգին առաւելեալ եղեալ[6], և ոչ ընդ ումեք միաբանեալ հաւանեցաւ, որոց նախանձաւորքն եղեն բազումք։ Եւ երկրորդաց սա հասցէ։ իսկ զառաջինս և զնախնիս նահատակութեանցն, նոցա մատուցէ բնութիւնս։ Բայց սակայն երկրորդքն և նոքա մեծամեծք են. բայց զի՝նչ ոչ մեծ է և մեծի ջանայ արժանի զորոյ կարկառէին[7] և պարզեալ ատուցան։ և հաւատացեալն հաւատ՝ չնորհացն առաւելութիւնքն են, որոց սայն

1. Միւսն յաւելու Ֆ։
2. Մ. ի լ. անի Ա.Բ.Ա.Մ։
3. Մ. է լ.ոբ է։
4. Մ. զ.ոբ.ոբեն։
5. Բոյնն τὸ ἐλκαιον.
6. Մ. ի լ.ն.նդ։
7. Մ. կ.ոբ.ոբ։

պատահեաց։ Վասն զի անիրաւութեանց բերս և-
բեր ժամանակն այն. և ամենայն գաւառն և ազն և
քաղաք՝ չարախորժակաւք վարուց լի լինէր. ամե-
նեցուն կամուորք և ի նախահոգութենէ իրրև ի
մորոքի՝ յաղագս մեղանչելոյ առաջին գոլ հակառա-
կէին մեծաւ փութով, իւրաքանչիւր որ քան զմեր-
ձաւորն մեծութեամբ չարեաց առաւելուլ փութա-
ցեալ։ Յորոց ի վերայ յիրաւի աստուած դժուա-
րեալ. զի եթէ որ կենդանեացն լաւագոյնն գոլ
թուիր, և աղդակցութեան արժանի եղեալ առ
Ա՛ա յաղագս բանին հաստատակութեան, իրրու զի
արժան էր զառաքինութիւն ախորժել, նախանձե-
ցաւ ընդ չարութիւն. դատաստան որոշէ զարժանա-
ւորն՝ անհետ առնել և կորուսանել զնոսա որք էին առ
ի՛ր հեղեղաւն ընդ միտ ածեալ, ոչ միայն զ՝ի դաշտի-
սըն՝ այլ զի և ի լեռնայինսն բնակեալս։ Քանզի մե-
ծըն ծով ի վեր համբարձեալ՝ ի ձեռն բերանոցն
միանդամայն յորձանաւք յայս ի մերս ի ներքս հո-
սեալ անկաւ ի մեծածովս. իսկ սա վերացեալ յա-
ւուցեալ՝ զկղզիս և զմեծացամաքս ողողեաց. և մշ-
տաբուխ աղբերց և գետոց ներածնաց և ուխտց
ի միմեանց վերաբերք հարկանէին ընդ միմեանս,
տարածեալք և սփռեալք և ի բարձր համբարձեալք
ի վերայ երանէին։ Բայց սակայն և ոչ աւդ դա-
դարեալ խաղաղանայր. քանզի զամենայն երկին
թանձր և մթին ամպ անցեալ ունէր. և հողմք
էին անհնարինք և անդադարումք, և թրմբիւնք[1] և
պայթմունք և ճայթմունք որոտմանց, և կայծակ-
մունք և ճայթումունք փայլատականց, և չանդիս
արկածք, և ի վայր հոսմունք[2] ասատկութեան ան-
դադար անձրևաց, մինչ զի կարծել զմտաւնան ա-
մենայնի[3] ի մի բնութիւնս ջրոյ վերատառացեալս
փութալ. մինչ զի այն ի վերուստ ի վայր հոսէր, և

1. Միւսն ընդլնդ։
2. Մ. հոսանք։
3. Մ. ամենայն։

այս ի սորուստ ի վեր եկանէր, ի վեր համբարձեալ բարձրացան ալիք յորձանացն. որովք ոչ միայն գաչաք հեղեղեալք ապականեցան, այլ և բարձրագոյնք լերանցն կատարք։ Քանզի ամենայն մնասունք երկրիս սուղեալ ընկղմեցան ընդ ջրովն, մինչ զի բոլորին՝ ի յափշտակութիւն կորստեան մնանել, և ամենայն աշխարհիս յապաւել և քշոիլ թռուել. քանզի և աւգս արտաքոյ սակաւ մի մնային այս որ առ լուանոմս է՝ ամենայն փոխեալ լինէր՝ յաղթահարեալ ի ջրոյն բռնութենէ, որ զաւրութեամբ շահեալ էանց զնորա վայրն կալաւ[2]։ Յայնժամ ապա վազվազակի ապականեալ լինէր որ ինչ միանգամ սերմանիք և ծառք էին։ Քանզի ապականէ՝ որպէս նուազութիւն, և բազմութիւն անչափ. և մեռանէին բազմութիւն կենդանեացն ջղիրք բնաանեաց միանգամայն և վայրենեաց։ Քանզի զէպ և արժան[3] էր լաւագունի ազգին մարդկան ապականեցելոյ[4] ոչ ինչ մնացորդ մնալ վասիարաց, վասն զի և առ նորա զէտս եղև ծառայ. աւրինակ իմն՝ ասէրունեան հրամանեաց[5] ապաս տարեալ արդ, այրքանիցն և այսչափաց[6] արկածիցն չարեաց ի վերայ արկելոց[7], զոր ժամանակն այն ազգերաբար բխեաց։ Քանզի ամենայն մնասունք աշխարհիս, բաց յայնմանէ որ յերկնին, շարժեալ վրդովեցաւ բան ոչ բնութեան, իբրու ծանր իմն և դժնեայ և մահաբեր հիւանդութիւն ախտացաւ[8]. միայն մի տուն, ճառեցելոյ առնս արդարոյ և սատուածասիրի ազգի, երկուս ընկալեալ զվերնագոյն պարգևան. մի՝ զայն որ սատցին[9],

1. Միւսն Բոլոր-Վէր։
2. Մ. ընկալաւ։
3. Մ. է գեղ էր և արժան։
4. Մ. -գոյնեցելոց։
5. Մ. -ոյնոց։
6. Մ. այսոնիցն և այսչափոց։
7. Մ. եկելոց։
8. Մ. -նեալ։
9. Մ. զոր -ցին։

ոչ ընդ ամենեսին ընդ այսոսիկ կորնչել. և միւս եան դարձեալ՝ զնա նահապետ լինել նոր մարդկան զաւակի։ Քանզի արժանի արար զնա աստուած՝ և վախճան ազգիս մերոյ և սկիզբն եղանել[1]. վախճան այնց որք յառաջ քան զՂրհեղեղն էին, իսկ որք յետ Ղրհեղեղին՝ սկիզբն։

Արդ այսպիսի է այն որ ըստ ինքեան ժամանակին էր առաքինի. այսպիսիք են և որք եղան նմա առաջի նահատակութիւնքն, որպիսիս ազդեաց տէրունական պատգամն. և ասացելոցն երից՝ եթէ արանց և եթէ ոգւոյ աւրինակաց յարմարական դաս կարգիս։ Քանզի նա կատարեալ ամբողջ է ի սկզբանէ. իսկ որ շրջեալն փոխի, կիսագործ. զառաջինն ժամանակ կենաց նուիրեալ շնորհեաց շարութեանն. իսկ զվերջինն՝ առաքինութեան, առ որ փոփոխեցաւն և զրնակութիւն արար։ Իսկ այն «որ յուսայն[2]» որպէս նոյն ինքն ազգէ անուն, պակաս է. բաղձացեալ է միշտ բարւոյն, բայց չէ ևս կարացեալ հասանել. այլ նմանեալ որ դեռ ևս ի ծոմս շրջին, որ փութան ի նաւահանգիստ՝ մնանել ոչ կարացեալք։ Քանզի առաջին երրորդութիւնն[3] այնոցիկ՝ որ առաքինութեանն փափաքեցին, ազդեալ է. բայց մեծագոյն է միւսն՝ յաղագս որոյ այժմ՝ ասելիս է[4]. քանզի նա՝ այնոցիկ որ ի հասակի մանկութեան ուսման նմանեաց, իսկ սա՝ արանց նահատակաց կրթութեան, որ ի տէրունական և ի մեծն արդարև աւծեալ եղեն ի մարտս նահատակութեան. որ զմարմնակրթութեամբն քամահեցին, զայն որ յոգւոյն է կազմեն իւրեանց զառողջութիւն, բաղձացեալք հակառակամարտից ախտիցն յաղթութեան։ Քանզի որոյք առաւելեալ եղև իւրաքանչիւր որ ի նոցանէ, ի մի և ի նոյն կատարած ճեպեալ՝ միանգամ՝ առագեն-

1. Միւսն. էջ-ին։
2. Մ. յ---ին։
3. Մ. երրորդ---թեանն։
4. Մ. --էլի է։

լի է։ Իսկ զոր արժան է յաղագս երիցն միանգամայն յառաջագոյն ասել՝ հարկաւոր է ոչ զանց առնել և լուռ լինել։ Արդ սոցա դէպ եղև միոյ սան և միոյ ազգի զոյ։ քանզի վերջինն որդի է միջնոյն, և որդւոյ որդի առաջնոյն։ և զամենեսին սիրատուածս՝ միանգամայն և աստուածասէրս, սիրելս զնչմարիտն աստուած, և անդէն սիրեցեալս ի նմանէ։ որ արժանի արար, որպէս ազգին հրամանք պատգամացն, վասն առաւելութեան առաքինութենացն որովք վարէին կենաւք՝ կցորդութիւն հաստակութեան ամենի առաստութեանն նոցա։ Քանզի առանձինն յատուկ անուն նոցայցն յարմարեալ միացոյց։ զ.երիցսն[1] զչարադրելի կոչումն հռչակեցուցեալ ի վերայ իւր։ Քանզի այս իմ՝ անուն ասէ յաւիտենական։ աստուած Աբրահամ և աստուած Յահակայ և աստուած Յակովբայ, իբրու թէ միանգամայն ասինչքն։ և մի զուցէ թէ յիրաւի։ քանզի անուան աստուած ոչ է կարաւտ, և ոչ կարաւտեալ, սակայն հնորհէր ազգի մարդկան զկոչումն զիւր, զի ունիցին ամենք ապաստանի առ ազատանս և մեղթիանս և պարտանս։ և ոչ անբաժ եղեն ի բարի յուսոյն։

Արդ այսոքիկ իբրու ի վերայ արանց արժանաւորաց և սրբոց ասացեալ թուին։ բայց զեկուցմունք իմն են անբայտ և աներևելի բնութեան, և որ կարի յոյժ բաւականն է քան զայն որ ի զգայութեան։ Քանզի յեղանակս ուրիշակս հոգւոյ երևեցաւ սէրաւնեանս զնիկ և քնեկ պատգամս[2] իմաստունս և քաղաքականս զամենեսին, զոմն ի վարդապետութենէ, և զոմն ի բնութենէ, և զոմն ի վարժից կրթութենէ ցանկացեալ բարւոյ։ քանզի առաջինն ի վերայ կոչումն ունի Աբրահամ՝ նշանակ վարդապետական առաքինութեան է։ իսկ միջինն խաչակ բնականի, և երբորդն Յակովբ վարժականին։

1. Միսն. ջրիջն։
2. Մ. պոքիմ։

բայց սակայն ոչ անդիտելի, զի զկնի են՝ և սատնալ կարեն յանձն զերեցունցն իւրաքանչիւր որ զաւրութեանցն. և անուանեցաւ յառաւելեցելոյն ըստ ասատկութեան ըմբռնեալ։ Քանզի և ոչ վարդապետութիւն առանց բնութեան և կամ՝ վարժից կատարել[2] կարէ, և ոչ բնութիւնն ի վախճան գալ բաւական է՝ առանց ուսանելոյ և վարժելոյ, և ոչ վարժք կրթութեան՝ եթէ ոչ յառաջագոյն հիմն առեալ հաստատեցի բնութեամբ և վարդապետութեամբ։ Արդ արժանապէս և զերիցունցն բանիւ զարանց՝ և գործով որպէս ասացի, զատարինութեանց զընտանեգոյնն ընդ միմեանս հարեալ միաբանեաց. բնութիւն, ուսումն, վարժս, զոր այլով անուամբ շնորհս հանդիսութիւս կոչեն մարդիկ. կամ՝ վասն շնորհելոյ աստուած մերում՝ ազգիս զերեսին զաւրութիւնն՝ առ կատարելութիւն կենցաղոյս, և կամ՝ ըստ այնմ՝ որքան նոքայն[3] շնորհեալ են հոգւոյս բանականի զինքեանս պարգև գեղեցիկ։ Զի և զյաւիտենական զանուն զազգեցեալն ի սէրունեան պատգամն, քան ի վերայ երից դիմացն առաւել ի վերայ ճառեցելոցս ասի զաւրութեանց։ Քանզի մարդկան ապականացու է բնութիւն, և անապական է առաքինութեանցն, պարտ և արժան է և ի ճահագոյն և ի դէպ, հուչակեցուցանել զմշանջենաւորն անապականացուցաց՝ յառաջ քան զմահկանացուցաց. վասն զի ազգակից է մշանջենաւորութիւն՝ անապականութեան, և թշնամի՝ մահ։ Բայց պարտ և արժան է և ոչ զայն անդիտանալ, զի զառաջին զմարդն զհողածինն՝ յայնցանէ որ մինչև ցչրհեղեղն բուսեալք եղեն՝ ածեալ ի ներքս եմոյծ. իսկ սա՝ միայն՝ յայսրան ապականութենէ մնացեալ ամենայն

1. Միան. էջ... էրէր։
2. Մ. էրրէլ։
3. Մ. -ջ-ն նոր- ջէ։
4. Իլ. նոյ։

տամբ, վասն արդարութեան՝ և այլ ևս քաջաբարութեան որ բնակեցոյց յերկրիս միանգամ զնոր ազգ մարդկան։ Իսկ զհոչակելի երրորդութիւնն և զանենալի միոյ տեսակի ի վերայ հոչակեցեալ «արքունական և քահանայական և ազնուական» տերութեան պատգամքն կոչեն[2]։ Եւ զեկուցանէ անունս զդարութիւնն իւր. քանզի անուանի երրորդեցուցն լեզուով ազգն՝ Խարայէղ, որ թարգմանեալ է տեսուղ զաստուած։ Եւ տեսութիւն է որ ի ձեռն ոգոյ յամենեսին ի զգայութիւնսն գեղեցիկ. վասն զի և ի ձեռն սորա միայնոյ հաստատին գեղեցկազգեաք էիցս՝ արեգակն և լուսին, և առ հասարակ ամենայն երկին և աշխարհ։ Իսկ միանգամ՝ ի ձեռն հոգւոյն իշխանական առաջնորդին ի գալոս բերէ զայրն՝ որք միանգամ ի նմա զարութիւնքն են. և է այս խոչանանութիւն, երեսք երով մնացութեան։ Որում[3] ոչ միայն բաւական եղև զայրն՝ որք միանգամ ի բնութեանս[4] ի ձեռն հանճարոց ուսանել[5], այլ և զհայրն և զարարիչն զամենեցուն տեսանել, ի բան ի ծայր բարեբաստութեան գիտացէ յաւաղ անցեալ։ Քանզի ոչ ինչ վերագոյն է քան զաստուած. առ որ եթէ որ զհոգւոյն ակն կարկառեալ եհաս, կայանութեան ըղձացի և հաստատութեան, պինդ և անշարժ մնայ։ Քանզի զառիվերք խոնջականք և ծանուանք և աշխատելիք. իսկ զառիվայրք քարշումն ունին աւելի՝ քան զ'ի վայրէջ, որ է գիւրին և արագ, բաղում յոյժ ի վայր կոյս բրանի քարշեալ ձգէ. որոց ոչ ինչ ուշացուն է, յորժամ զի՝ բոց զաւրութեանցն արգելեալ ախեցէ զոգին աստուած, հզաւրագոյն ձգմամբ առ ինքն կորզեսցէ։

Արդ այսպիսի հաստատի յաղագս երիցն կարգաւորացէս[6] յառաջագոյն ասացի. բայց ասելի է

1. Ms. -ցէ։
2. Ms. -ն-ն-ն։
3. Ms. Խ-գ-ս։
4. Ms. ի բն-ն-թ-ն։
5. Ms. հ-ն-ն-ն։
6. Ms. կ-ր-ա-ր-գ-ա-ր-ա-ն։

զկնի այսորիկ՝ յորս իւրաքանչիւր որ յաստուկ ա-
ռանձինն առաւելեալ գոյաւ, ի յառաջնմէն սկիզ-
բբն առեալ։ Քանզի նա բարեպաշտութեան և ա-
ռաքինութեան վերնագունին և մեծին նախանձա-
ւոր եղեալ, փութացաւ հեռեալ աստուծոյ և հաւա-
նաւոր լինել հրամանացն նորա. հրամանս կարծե-
ցեալ ոչ որք ի ձեռն ձայնի և գրոց գայնս միայն գե-
կուցեալս, այլ և զայնս որք ի ձեռն բնութեանս
հաւատարգոյն նշանաւք ազդեցեալս. զորս ճշմարտա-
գոյնն զգայութեանցն՝ յառաջ քան զլսելիս որ ան-
հաւատալի և անհաստատն[1] հատանէ։ Քանզի ան-
սեալ ամն զ'ի բնութեանս կարդ գոյաւ, և[2] որ քան
զամենայն բան յաւագոյն քաղաքավարութիւնն է
որով վարի աշխարհս, ուստի, բարբառեալ ոչ ու-
րուք, քաջաւրէն և խաղաղական կեանս անցուցեալ
ի բարեացն նմանութիւն հայելով։ Եւ յայտնագոյն
բարեպաշտութեանն ապացոյցք են, զորս պարտ-
նակենն սէրտնական[3] գիրքն. և առաջին ասելի է
որ և առաջինն գոսեալ է՝ բանի հաւանեալ յաղա-
գրս զգաւառն և զաղգակցութիւնն և զհայրենի
տունն բառնալ լքանել թողուլ՝ և անցանել գնալ,
իբրու յաւտարութենէ յիւր[4] տունն գտնեալով,
այլ ոչ յիւրմէ տանէն յաւտարութիւն հանդերձեալ
բառնալ գնալ, փութայր ճեղեալ և տաղնապեալ,
կարծեցեալ հանդիսապատիւ գոլ կատարելոյ՝ վաղ-
վաղակի զհրամայեալն վճարել։ Եւ սակայն ուժ՝ այլ
ումեք զէպ եղն այսպէս անփոփոխելի և անցեղի և
անեմաւալ լինել, մինչ զի ոչ ի բազմանաց սիրոյ
յաղթահարել և տեղի տալ ազգաց կանանց[5] և
գաւառի, որոց փոփաքումն իւրաքանչիւրումքն՝
աբինակ իմն շարաժնեալ է և շարաճեցեալ[7], և ա-

1. Միան յաւելու է։
2. Մ. Ե գոյն որ ։
3. Մ. գէրոնէն։
4. Մ. յիւր ։ Ե ։
5. Մ. գոնալ։
6. Մ. ազգակոնաց։
7. Մ. շարաժնեալ է ազգնակ ին Ե շարաճեցեալ։

ռաւել քան թէ նուազ միաւորեցելոց անդամոցն բնաւորեցաւ։ Եւ վկայք աւրէնդիրք[1], որ զերկրորդ տեղին ունի մահու պատիժ պատուհասին՝ զայնցանէ որ ի մեծամեծ յանցանս ըմբռնեալ եղեն՝ որոշեցին փախուստ. բայց ոչ ունի զերկրորդ տեղի, որպէս ինձ թուի, առ այնոսիկ որ ճշմարտութեամբ դատին զվայրդ, բայց կարի յոյժ դժնդակագոյն. զի եթէ վախճան մեծի թշուառականութեան մահ է, և սկիզբն՝ այլ ոչ վախճան փախուստ, նորոգ աղետիցն, փոխանակ միոյն որ առանց ցաւոց՝ բաղումն ի վերայ ածէ մահս որք հանդերձ ըզգայութեամբ։ Քանզի ըստ վաճառականութեան, ոմանք փափաքանաւք առացուածոց նաւելով, կամ՝ ըստ հրեշտակագնացութեան, և կամ՝ ըստ տեսլեան այնց՝ որ յաւուրաշխարհի ինչ է, կամ՝ յաղագս տափանաց խաղուց, ձգական և կորզական ունելով զաւրութիւնս արտաքսն լինելոյ, ոմանք զշահս՝ և ոմանք զքաղաքն ժամանակեան բերիւք՝ ի հարկաւորագունիցն աւգուտ առնել և վայելեցուցանել. և ոմանք զիսուրթիւն զայնոցիկ՝ որոց յաուաջագոյնքն ոչ գիտէին, զվայելն միանգամայն ընդ աւգտիւ ոգւոյն կազմեալ պատրաստեալ։ Քանզի կոյրք[2] առ սրատեսս անհերևոյթք են որ արտաքս գնացեալ են յաշխարհէ։ Բայց սակայն ճեղին զհայրենի յաուակրն տեսանել, և սովորականաց ողջոյն տալ ազգայնոց և բարեկամաց, և փափաքելի երեսաց ի վայելել. և բաղում՝ անգամ՝ դէպ է՝ զգործսն յաղագս որոց անցեալ գնացինն, իբրու տեսին յերկարեալ, բարձեալ թողին՝ տափանաւք ցանկութեան արժանաւոր ընտանեացն ձգեալ բռնի։ Հանդերձ սակաւուք սա և կամ՝ միայն՝, միանգամայն ընդ հրամանին յարուցեալ փոխեալ զինքն գնաց յաւուար աշ-

1. Միւսն. —էնդ—դէր։
2. Մ. ի սոսրեն իմիցն յաւելու. ի. կոյր է որ յոյլ տեղ չի գնացեալ։
3. Մ. չունի զբառդ դ—ն։

խարհ. և հոգւոյն՝ յառաջ քան մարմնոյն զգաղութիւն ի բացընակութեանն[1] իւրոյ առնէր, քան զայնու[2] որ ի մահկանացուն առփանք ցանկութեանն էին, առաւելեցելոյ և յաջողեցելոյ երկնային ցանկութեանն[3]։ Արդ ոչ մարմնոյ այլ իրիք հոգ տարեալ, և ոչ ազգականաց, ոչ գաւառականաց, և ոչ ամուսնոյ, և ոչ այլոց · ոչ որոց յարենէ, ոչ գաւառի, ընկերակցութեան, որոց իւրաքանչիւր զբ ածաւղ և բռնաձիգք և գժուարաձակ կորզաւղ ունելով զաւրութիւն, ազատականաւք և արձակ յարձակմամբ, արագ արագ յարուցեալ փոխէր զբնակութիւնն. նախ առաջին ի քաղդէացւոցն երկրէ ի բարեբաստիկ յաշխարհն, և ըստ այնմ ժամանակի եռացեալ զարգացեալ ի բարեկենդանութիւն, ի միջագետս, և ի սմանէ յայլ տեղի· յազգս որոյ ասացուք զբանն, ի յառաջ ասացեալսն զեկուցեալք, և ազդեալք[4] բնակափոխութիւնք գաղթից՝ ըստ ճառի գրոյս յառնէ իմաստնոյ եղեն. իսկ ըստ այլաբանութեան աւրինաց՝ յառաքինասէր ոգւոյ որ զճշմարիտն խնդրէ ասասուած։ Քանզի քաղդէացիք յայնոսիկ[5] մանաւանդ առաւել աշխատին յաստեղագիտութեան, և զամենայն ինչ շարժմանց աստեղաց եղեալ նուիրեցին, որովք կարծեցին մատակարարիլ որ ինչ յաշխարհիս է զաւրութեամբք. զտեսանելի գոյացութիւնն հաչակեցուցեալ պանծալի երևեցուցին, զանտեսանելիսն[6] և զիմանալիսն ոչ ընկալեալ մատածութիւն. այլ զ՝ի նոսայն զդատս կարգին[7] զբնելով՝ զայնս որ ըստ լուսնիս և արեգական և այլոց ևս մոլորակացն և անմոլորից շրջագայութիւնս. և զայն որ ըստ աս-

1. Մ։ ան. ի բ-ց բն-կ-ֆ-ն-ն։ յոյն՝ ἀποικία.
2. Մ։ ֆ-ն զայն ոչ։
3. Ի։ լս. գ-ֆ-ն։ Մ։ գ-ֆ-ն։
4. Մ։ -զգ-ցեալ զբն-կ-ն։
5. Մ։ յաւելու ոչ։
6. Մ։ զ-նկ-ն-ն։
7. Մ։ զգ-- կ-ֆ։

բնորականաց ժամանակաց փոփոխումն, և զայն որ ըստ երկնայնոց առ երկնայինս ազգակցութիւնք[2], ըստ նոյն ինքն զաշխարհս կարծեցին զոչ ստուգած, ոչ սրբաբար և ազգատաբար՝ զեղեալն նմանեցուցին արարչին։ Այս կարծեալք անեալ և քաղդէական ուսմամբքն վարժեալ յերկար ժամանակս, իբրու ի խոր քան քնոյ բացեալ զաչս ոգւոյն, և մեքենաբ ճանանչ լուսոյ փոխանակ խաւարին տեսանել սկսեալ՝ էանց էգնոց զհետ ճառագայթին, և ետես և էգիտաց և էհաս զոր յառաջագոյն ոչ էր տեսեալ, զաշխարհիս զայն սին կառուցաբ և մատակարար և յարմարիչ, որ ի վերայ անցեալ կայր, և փրկութեամբ ուղղէր և յարգարէր զիւր զգործն։ Արդ որդիս զի հաստատեսցէ զերեսուն ի միտսն հաստատագոյն, ասէ նմա տէրունեան պատգամն. «Զմեծամեծսն, որոյ սա[3] յառաջագոյն ազգով կերպարանաց զուշնաբեալց բաղում անգամ դէպ լինի. առ որս հայեցեալ[4] աճեցցց զերեսցին անպարծրոյր և անպարագրէն[5] մեծութեամբ։ Արդ ի բաց յուզարկեալ զայնոսիկ որ յերկինս չուրջ յաժին աստեղք, և զքաղդէական մեկացութեան հանճարն, որի փոխեա զբնակութիւն առ սակաւ մի ի մեծ քաղաքս յայսմ աշխարհէ առ զուշնաբեաց, ի ձեռն որոց կարացես առաւել հասանել ակնածութեն և ասաջին ամենեցուն»։ Զայն պարարիկ զառաջին զաղութի բնակափոխութեանն ի քաղդէացւոցն երկրէ ի խառանացւոցն ասի առնել. և խառան՝ հայերէն ծանգ ասին ըստ նշանակի մերոց զգայութեանցս վայրք. ի ձեռն որոց իբրու թէ ի ծակաց բնաւորեցաւ յառել հայել առ իւրոցն հաստատն ամենայնոցն։ այլ

1. Միան. ՝ խոխոռանք։
2. Գայնն՝ σύμπαθεια.
3. Գայնն՝ ὑψηλὰ, οἷ ---ψε, (այս է դա---)... ἐκ τῶν μέγαλα, ὦ οὗτος.
4. Մ. յաւելու ։։
5. Մ. ՝ անքարքին։

զի՞նչ այսոցիկ թերեւս, ասասցէ որ, ուղղութեամբ[1] եւ-թէ ոչ միայն անտեսանելիք զաւրէն արմատագործի ի ներքուստ հնչէ[2] յիւր զաւրութիւնս. զոր երբեմն թոյլ առեալ և յարձակս կախեալ, և երբեմն անդրէն կորզելով և յինքն ձգելով բնութեամբ[3] շարժումն նուազաւոր, և դարձեալ հեղ և խաղաղ և քաղցր մնաւուցանէ։ Արդ զայս ունելով առ քեզ յարացոյցս, դիւրաւ որում՝ յոյժն փափաքես մնակցութեան հանճարոյն հասեալ իմացիս։ Արդ ոչ այժմ ի քեզ միայն են իշխան առաջնորդ կարգեալ. որում՝ և մարմնոյս ամենայն հասարակութիւն միաբանութեանս հաւանի, և իւրաքանչիւր որ ի զգայութեանցն զհետ երթայ։ Իսկ աշխարհս՝ գեղեցիկ և կատարեալագոյն գործ[4] թագաւորի անբաժ և անմնան է յայսմանէ, որ միաբանն և ամբողջն և ի միասին պահէ զսա և յիւրաքանչիւր գաւառս պեռաբար յականէ։ Եւ եթէ անտեսանելի է թագաւորն՝ մի զարմանար. քանզի և ոչ որ ի քեզ միաքդ են տեսանելի է։ Զայսոսիկ որ ընդ միտ ածելով, և ոչ ի հեռուստ այլ ի մերուստ ուսանելով յինքենէ, և որ շուրջ զինքեամբ ինչ իցէ, դիտասցէ հաւատաւ զի աշխարհս ոչ է առաջին ստեղծած, այլ գործ առաջնոյն ստեղծոյ, և առ հասարակ ամենեցունն հաւր. որ իբրու զի անեղեալ և անտեսանելի է, զամենայն ինչ երևեցուցեալ ցուցանէ, զփոքունցն և զմեծամեծացն յայտնի ազդելով ըգրնութիւնսն։ Քանզի մարմնոյ աչաւք ոչ արժանի համարեցաւ հասանել, և ինձ թուի թէ վասն զի մարկանացուս ի մշանջենաւոր յանեղեալն հուպ լինել և հասանել ոչ էր արժան. բայց ինձ թուի թէ և վասն ակարութեան մերոյ երևոցս։ Քանզի և ոչ տարեալ իսկ լինէր սորա յէն[5] զհեղեալ և

1. Միւսն. ոչ զինչ ուղղութեամբ՝ այլ ընդդիմ ի ներս էր։
2. Մ. հնչեցեալ։
3. Մ. բնութիւնամբ։
4. Մ. չունի գործ, որ գոյ ի յոյնն՝ ἔργον.
5. Մ. էն։

զաարածեալ զնշոյլս լուսոյն, յորժամ և ոչ յարեւ-
զականէս ճառագայթից ընդդէմ հայել աչքի ինչ
և կամ յերկար կարաց է։ Եւ հաստատուն նշանակ
և յայտնագոյն՝ բնակափոխութեան, զոր յատու-
զագիտական և քաղդէացանցն կարծեաց՝ ասրիա-
նացն միաբն արարին։ Քանզի ասի անդէն միան-
գամայն ընդ բնակափոխութեան իմաստնոյն, «և
երևեցաւ աստուած Աբրահամու». և յայտ է թէ
յառաջագոյն ոչ երևեալ՝ յորժամ քաղդէական խոր-
հրդովքն ընդ ատեզացն պարս հայէր. և վասն
զի էանց էգնաց և փոխեցաւ, բան հարկաւորին
գիտաց զաչխարհս հրաւ ծառայ և հնազանդ և ընդ
իշխանութեամբ անկեալ այլոց, ոչ ինքնակալ հրա-
չակեալ է պատճառէ յարարողէն, զոր միաբն յայտ-
ժամ նախ առաջին է մեր հայեցեալ եռաս։ Քանզի
բարձեալ զսոփա յառաջագոյն շամանդաղ ի զգա-
յութեանցս հեղեալ, զոր ցերմեռանդն և արարչի-
կացեալ կամաւք աւրինաց պատուեալ և ցրուեալ
և փարատեցուցեալ, հաւիւ հաղ զարբեաց իբրև ի
ցեր վայելս մարդութեան ազգս, զայնք՝ զյառաջ
ծածկեցեալս և զանտեսանելիսն զերկոքին առնուլ։
Որ յաղագս մարդասիրութեան հաստեալ ոգւոյն
առնս[2], ոչ ի բաց դարձաւ, բայց յառաջագոյն ընդ
յառաջ պատահեալ՝ զիւր բնութիւնն որչափ էր
կարՃ տեսանել՝ եղոյց տեսողին։ Վասն որոյ ասի ոչ
զի իմաստուն էր եռաս զաստուած, այլ զի աստուած
երևեցաւ իմաստնոյն։ և քանզի էր անկար հասանել
ումեք ինքնին ճշմարիտ բարւոյն, ոչ նոքա երևե-
ցուցեալ զինքն և ցուցեալ։ Եւ վկայէ ասացելոցս և
անուանն փոփոխումն և շրջել. քանզի կոչիւր Աբ-
րամ՝ նախկին անուն, և առասացաւ. յետոյ
Աբրամ. և ձայնդ՝ իբրու թէ ասի այբին կրկնե-

1. Մխան. —ջինքն կրկին։
2. Մ. —ն—ոյ. զոր ասա ուղղելով ի լս. գրէ — նս. հա-
մանայն յոյն բնագրին։
3. Մ. —ոյ կրկին։

ցելոյ, բայց զաւրութեամբ՝ մեծի կարծեաց աւրինաց ցուցանէ զփոփոխումն։ Քանզի Աբրամ թարգմանի՝ հայր վերամբարձ, իսկ Աբրահամ՝ հայր ընտրեալ։ Հնչման առաջինն՝ երևեցուցանէ զասուղագիտականն և զվերամբարձայաժուն[1]. այսպէս քաղդէական աւրինացն խնամ՝ տարեալ, որպէս հայր ծննդոցն խնամ՝ տանիցի։ Իսկ վերջինն, զի խմնասուն[2], զի ի ձեռն հնչմանն զարտաբերական բանս առակէ, և ի ձեռն հաւրն՝ զիշխան առաջնորդ զմիտն։ Քանզի հայր՝ բնաւորեալն[3] զոչողականին[4], վասն զի զասելին սերմանէ ի սա։ Իսկ ի ձեռն ընտրելոյն, զիմնասուն, զքաղդէականն։ Քանզի ընդ վայր և խառն զանկեալ է վասիթար յեղանակէն, և ընտրելի բարին՝ ընտրեալ յամենեցունց առաքինաւոր։

Արդ այն[5] որ համբարձախաւսականն[6] է, ոչ ինչ մեծ քան զաշխարհս ամենեին գոլ թուի, որում և զվիճելոցս պատճառն[7] նուիրեալ մատուցանէ. իսկ խմնասուն՝ ստուգագոյն աչաւք տեսանելով իմն կատարելագոյն զիմանալի զիշխանն և զառաջնորդն և զնախկինն, յորմէ այլքն տիրին և վարին և նաւատին, բազում ինչ ըստգիւտ պախարակեալ զառաջին զկեանսն իւր իբրև ընդ կոյր կենցաղ անցեալ յեցեալ յուսացեալ մականաբար ի զգայութիւնսն յանհաստատ և յանկայան բնութեամբ իրս։ Եւ երկրորդ բնակափոխութիւն առնէ, բանի դարձեալ հաւանեալ՝ խմնասուն քաղդէականն. ոչ ի քաղաքէ ի քաղաք, այլ յանապատ վայր յորում թափառականն շրջէր. ոչ դժուարելով ընդ թափառանն[8] և ընդ յաժուամն և ընդ անհաստա-

1. Յոյնն՝ μετεωρολογικὸς.
2. Միւսն. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Յոյնն՝ ἐνδιαθέτος, որ է [illegible]։
5. Մ. [illegible]։
6. Ասա եւս յոյնն՝ μετεωρολογικὸς.
7. Մ. ի լա. [illegible]։
8. Մ. [illegible]։

առաքինին նորա։ Եւ սակայն ո՞ւր ոչ գժուարեալ լիցի[1] ոչ միայն լիութենէն ի բաց գնալ, այլ և յամենայն քաղաքէ վարել ի բաց կամեալ, ի գժուարակոխ և ի գժուարագնացս յանճանապարհ վայրս. և ո՞ւր չիցեալ անդ բնչ գնալ իսուն, զոյն ինչ փոքր արբեալ վասն հանդերձելոցն յուսոց[2], բայց յաստուածկայ անտեղութեան գժնդակութենէն փութացեալ ճողոպրել, չամիչս մեռաց հանարեալ փոխանակ անյայտ բարեաց՝ զնստոտմանեալս և զայսոսիկս յանձրն առնալ զչարիս. բայց սա միայն զոյս կրել ևրեւի, կեանս ցանկալիս կարծելեալ զառանց բազմացն ընդակութեան, և ընտանութեան այսպէս ունել։ Քանզի որք խնդրեն և ցանկան զաստուած գտանել՝ զսիրելի նմա զմայնութիւնն սիրեն։ բան նմին այսմիկ փութան նախ առաջին նմանել երանելոյն և բարեբաստիկ բնութեան։ Արդ զերկոսին զապատութիւնս՝ հաստուցման արարեալք զճառին իբրև ի վերայ առն, և զայն որ ի ձեռն կարծեաց՝ իբրու ի վերայ ոգւոյ, արժանաւորելի և զայրն և զմիտն երևեցուցաք։ զայրն գնաւանեան բանի, ի գժուարակոխելոցն ի բաց ձգել հանել[3]. իսկ զմիտն՝ զի ոչ մինչ խաղաս պատարեալ և խարեալ ի վերայ զգայութեան գոյացութեանն էանց եկաց, այլ ի վեր ընթացեալ ի խորհուրդս ընութեանն, այլ ինն լաւագոյն քան զտեսանելիս, խմանալի եռես, և զերկոցունց զարարիչն՝ միանգամայն և զիշխան առաջնորդն։

Այսոքիկ են աստուածասիրին առաջապատգարդ նախակատարք, զորոց գնեա երթան գործք ոչ գիւրաքաջանագրք և արհամարհելիք. և մեծութիւնն նոցա ոչ ամենայնի յայտ է, այլ միայն այնոցիկ որք ճաշակեցին յատաքինութենէ, որք զբանդա-

1. Մխան. լինի։
2. Մ. յոսոց։
3. Մ. չարքաւ և անդարձի հանարեալ։
4. Գոյնն՝ ἀπόδοξις, որ է հաստատութիւն, պարտութիւն, դարձոյն։
5. Մ. նիւթ հանելոյ։

ցեալն և զհիացեալն ի բազմաց սովորեցին ծաղր առնել յաղագս մեծութեանն յոգւոյն բարեաց։

Արդ ընկալեալ սատուծոյ զասացեալ գործոյն՝ անդէն վազվազակի փոխանակ հատուցանէ խնամանոյն պարգևս, ամուսնին[1] նորա ի վաստակ մատնեալ ի բռնաւորէ, և ի հարստէ և յանարգել գիջէ առն[2] դատանս կրել, պահեաց անպախ և անընդհարկանելի և ողջ։ Եւ պատճառք ի վերայ յարձակմանն՝ սկիզբն էառ այսպիսի. պատոյ անհերութիւնն նուազութեան՝ ստէպ ստէպ մի զմիոյ զհետ եղեալ բազում՝ ժամանակս, էր երբեմն վասն բազում՝ և անչափ թանձից անձրևաց, և էր երբեմն վասն խորշակի՝ և խառնութեան, որք յասորեստանի քաղաքաբդ յաճախ ստէպ ստէպ սովով ճնշեալք՝ թափուրք ի բնակչացն լինէին, այլոց այլ ուրեմն սփռեցելոց ի խնդիր կերակրոյ և ի պաճարանս հարկաւորաց։ Եւ լուեալ Աբրամու անհամանձ և առատ քաջաբերութիւն և բարամութիւն յԵգիպտոսի, զեւոյն[3] յորձանաւք զեղմանն ծովացուցանելոյ ի ժամանակի զդաշտան, և զսոցա զսերմն քաջահասակ բերոցաց, և անուցելոց քաջախառնութեամբ հողմոց՝ համբառնայ գնայ՝ զամենայն տունն[4] ընդ իւր խաղացուցեալ։ Եւ էր սորա կին հոգւով առաքինի և մարմնով յոյժ գեղեցիկ. զսա տեսին եգիպտացւոցն իշխանք, և հիացեալք ընդ գեղեցկութիւն կերպարանացն, քանզի ոչ ինչ է զոր ոչ գիտեն որք յատուկ իշխանութեան են, ապդեն անդէն թագաւորին։ Եւ յղեալ կոչեալ նորա զմարդն, և տեսեալ նորա զվայելուչ երեսան, փոքր ինչ փոյթ ածարեալ և հոգ տարեալ ամուսնոյ պատկառանաց և աւրինաց՝ որ ի պատիւ աստուծոյ կարգեալ էր[5],

1. Միւսն. —ՀՈՒՆ։
2. Մ. ՔԻՉ—ԸՆԵՆ —Ն, յն. Ի ՔԻՉ —ՆԻ։
3. Յոյնն.
4. Մ. Ի ՔԻԹՈՆ։
5. Մ. ՉՓՈՒՆՆ։
6. Մ. Ի—ՐՔԻ—Լ Ի։

տեղի տուեալ անարգել ցանկութեանն, ընդ միտ առէր[1] բանիւ, կին առնուլ զնա իւր, բայց ճշմարտութեամբ յանուիթ առնել։ Իսկ սա երբու յաստարէնի առ խակասիրա և անարգել բանաւորի ուղնակաւի կարաւտեալ, քանզի ոչ այրն կարէր ուգնել, յայնմանէ որ ի վերայ կախեալ կայր հզաբազուն ձեռն երկիւղ պակուցեալ, ի վերին[2] միանգամայն նոսիա փախուցեալ ապաստանի յուգնակատութիւնն ստուեցոյ. և ընկալեալ զաւտարացրն զգալի խանդաղատանաց յինքն, հայտն և բարերարն և քաւիչն և պաշտպան և ուգնականն զրկելոց, ցաւս չարչարս որ առաւել քան զհամբերութիւնն էր, և պատիժս պատուհասից ածէ ի վերայ թագաւորին, ամենազան չարեաւք լցեալ զնորա զմարմին և զոգի զժուարաբուժիւք, մինչ զի զայնասիկ որ ի հեղա ցանկութիւն ասեին տարփանքն զամենայնսն[3] ի բաց հատանիլ և հակառակացն փոխանակ ի ներքս անկանել[4] հոգոց, յաղագս թափելոյ և ապատելոյ յանվճար ասնջանացն, յորոց ասնջանս կրելով զտիս և զգիտէր որ ընդոմենէրն[5], և վայելեաց ևս և ի պատժից պատուհասէն ամենայն տուն նորա, ոչ ուրուք ի վերայ անարժանութեանն զժուարացելոյ, այլ ամենեցուն վասն կամակիցն լինելոյ և յանձն առնլոյ միայն. բայց ոչ ձեռնտուութիւն[6] և գործակիցն լինելով անիրաւութեան։ Զայս ուրինակ[7] որբութիւն կնոջն ամրողջ ապրի։ Իսկ զաւն զբաղաբարութիւնն և զբարեպաշտութիւնն ասուած արժանի արար ցուցանել, պատիւ նմա մեծ մնաուցեալ, անվնաս և անարիտ և

1. Միւսն. է վա ոնէր։
2. Մ. է վերէն։
3. Մ. զամենայն։
4. Մ. անկանիլ։
5. Մ. նաև թուի գրել՝ ընդ ոնէրն. և ապա ուզղէ զ ընդ՝ նէրն. յոյնն εξετραλιζετο.
6. Մ. յնեռնամ՝ եալ գործակցին։
7. Մ. օրինակ։

առանց թշնամանաց զչեւ եւան ի վասն զմասնեալ յապականութեան[1] ամուսնոյն, որ ոչ էր հանդերձեալ սակաւ թիւ ուստերաց և դստերաց ծնանել, այլ զոլոյն ազն, և զազանց սատուածասիրազոյնն. որ ինձ թուի զվասն ամենայնին մարդկան ազգի զքահանայութիւն և զմարգարէութիւն հասանել։ Բայց սակայն լուայ և ի բնական արանց ոչ վայրապար զտեղիդ այլաբանողաց, որք զայրն նշանակաբար ասէին զառաքինի միտս զոլ, յանուանն մեկնելոյ՝ զաւրութեանն հաստատուն նշանակ առեալ յեղանակ խմաստուն յոգւոջ։ և սորա զկինն առաքինութիւն, որոյ անուանն է քաղդեարէն Յառա, և հայերէն իշխանակին, վասն ոչ ինչ քան զառաքինութիւնն իշխանագոյնն զոլ և առաջնագոյն։ Եւ ամուսնութիւնն որ յարմարեալն պատկանի՝ հնչա ցանկութիւն մարմնոյն հասարակութիւն է. առ. իսկ զոր խմաստասիրութիւն խորհրդոյ՝ մարդութեան ցանկացեալ և կատարեալ առաքինութեանց։ Եւ ընդդիմականք են միմեանց ասացեալ ամուսնութիւնքս քանզի զբան մարմնոյն սերմանն, զի սերմանէ արուն և սերմն ընդունի էգն. իսկ բան ոգւոջն[2] ժողովմանն՝ հակառակ և ընդդէմ այսր։ Քանզի առաքինութիւնն դաս կարգի կենաց[3] ունել թուեցեալ, սերմանել բնաւորեալ է խորհուրդս բարեաց և կենցաղաւորուս խրատս աւրինաց։ իսկ խորհուրդքն յառն տեղւոջ համարեալ՝ զտէրունական յելս ընդունի սերմանս. բայց մի գուցէ[4] ասացեալն ստեցեալ է վասն մոլորութեան խաբէականաց անուանց, վասն զի միարն զարուի, իսկ առաքինութիւն՝ զիդի ընդունի զձև ի ձայնս։ Եւ եթէ զբ որ շուք ունի և սու

, զկոչումն ի բաց մերկացեալ զպատրուակն՝ մերկ զիրան կամեսցի մարքրա-

1. Միւսն. յապ-կան-ութեան։
2. Մ. յոգ-ոյ։
3. Մ. չունի կեն-ի։
4. Մ. բայց եթէ գ-ուցէ։

պէս՝ տեսանել, դիտասցէ զի արա առաքինութիւնքն է բնութեամբ, քան օրում՝ շարժէն և առնէ. և էգն խորհուրդքն՝ շարժեցեալն և ուղղա կրեալ, և միանգամայն ի կիրս կալոյ հարցմունս. և ասեսա այս սուս միայն է փրկական։ Այդ ամենեքին՝ և վատթարքն, բանիւ պատուեն և զարմացեալ են ընդ առաքինութիւնն՝ որչափ թուելն. բայց վարին սրա պատերազմաւ՝ ասամ խմասանէն միայն։ Վասն որոյ և Եղիպտոսի թագաւորն, որ է նշանակաբար միտք մարմնական, որոյ[2] կեղծաւորելով իբրև ի տեսարանի զուտակերպարանեան՝ պատկերքն՝ բերէ զհասարակութիւն յոտ կրաւեաւորութիւն ժուժկալութեան՝ անարգել վատչասն. և առ համեստութիւն պարկեշտութեան՝ անխոյզ պակշտեսցն, և առ արդարութիւն՝ անիրաւն. և կոչ զառաքինութիւն առ ինքն, յամենեցունցն գովութենէ ցանկացեալ։ Զոր տեսեալ ակնածան, քանզի միայն պարտ և արժան է ասասուծոյ՝ զոգի տեսանել, ասեալց և ի գուբս եհան ընկէց, և գմենեալ փոքանաւք պատուհասից յանդիմանեաց զբարս, զասան և զկեղծաւորն[3]։ Եւ փոքանքն ի ձեռն ոբոց գործեաց[4]. ոչ ապաքէն յառաքինութիւնն՝ մնասանց, որք ի ներքս մնեալ գմիզակապէս հարկանեն և խոցոտեն։ Քանզի ասնմանք անյագութեան՝ սակաւապատութիւն, և ասնմանք իգաստգութեան՝ արգելարարութիւն. քանզի գերա և ճնչի և մեսարած փառասիրութիւն՝ յորժամ անհարար անասնարհատանութիւն ի մէջ անեցեալ չահի և բարեբասարկ լինի, և անիրան՝ յորժամ արդարութիւնն գովանա[6] կրէ. քանզի իմ անհնար

1. Միան. կամ հարքաքս կամեալ։
2. Մ. որոց։
3. Յոյնն՝ ἀκήλαστος.
4. Մ. ոնանք զարս և արման է ասասնայ գիան։
5. Մ. գիարս ասասս և կիցասարս։
6. Մ. գոգանաց. յոյնն՝ ὀργάνων.
7. Մ. ասասնանիկան։
8. Մ. գովասանս։

է յոգի բնակեալ՝ երկուց թշնամի բնութեանց՝ չարութեան և առաքինութեան։ Վասն որոյ յորժամ ի միասին և ի մի վայր ժողովեցին՝ անբնդհարբ և անխառնք և անհամբոյրք, հեռ[2], հակառակութիւն, և մարտ և պատերազմունք լինին։ Եւ համայն առաքինութիւն խաղաղականագոյն բնութիւն ունի, բան որում՝ ասէն, հոգ գոլ և խնամ՝ յորժամ՝ ի վասիթաբ հակառակութիւն գալ հանդերձեալ է, զիւրոյ զաւրութեանն զփորձ առնուլ կամեցեալ յառաջագոյն։ Զի եթէ հզաւր իցէ և կարասցէ յաղթել՝ ընդխառնի ի մարտ. ապ, եթէ ակաբ զաւրութեամբ վարեսցի, և ոչ մնասցէ անդամ՝ ի սկիզբն մարտին համարձակեսցի։ Քանզի չարութեան՝ յաղթիլ ոչ ինչ համարեալ է ամենեքեան, որում՝ ազգակից է անբարգաւաճ անարգութիւն. իսկ առաքինութեանն նախատանք են յաղթահարութիւն, որում՝ քան զամենայն ինչ ընտանեգոյն է բարեփառութիւն, ի ձեռն որոյ բնաւորեցաւ բաւական՝ յաղթել, և կամ՝ պահել զնա առանց յաղթահարանաց։

Քանզի եպիսկոպական ազգն աստուածաբերք իգամոլք և հիւրասիրաց առացեալ են. իսկ սա որ այսպիսիս կրեաց, արժան է զարմանալ ընդ մարգասիրութիւնն. որ ի միջաբէի տեսեալ երիս իրրև արս ուղևորս, բայց նորա այլոց բնութեան էին, ընթացեալ առ նոսա ազաչէր մեծապէս մի զանց առնել զիսորանան նորա. այլ մնասցել, և որպէս վայելէ՝ զհիւրոյն ընդունել։ Եւ նորա ոչ յասիցելոցն առաւել քան ի մնացն գիտացեալք՝ թէ ճրշմարիտ հրաւիրէ, ոչ ինչ յերկուացեալք յանձն առին։ Եւ լցեալ ի հոգին խնդութեամբ, փութայր և ճեպէր առ անդրնկենելին և անյապաղելին ընդունելութեան. և կնոջն ասէ՝ փութա և արա երիս չափս նկանի. և ինքն յանդեալ ընթացաւ[3], փափուկ և

1. Միան. քն-կէլ։
2. Մ. խ-։
3. Մ. ընթ-ցի-լ։

մարմնեղ ածեալ որթ, ցծառայն տայր. և նորա զենեալ կազմէր վաղվաղակի։ Քանզի յամի և հեղգ ոչ զի է առ մարդասիրութիւն ի տան իմաստնոյն. այլ և կանայք և արք և ծառայք և աղատք՝ յաւժարագոյնք առ ի զաւառսն ընդունելոց ապաստարութիւն. և կերակրեալք ոչա ի պատրաստեցելոցն՝ ոչ ինչ առաւել քան աւտարընկալին բարուց, մնաստուցանեն զմրցանակն մեծ քան զյոյսն նմա, հարազատ՝ որդւոյն ծնունդ ի միս ևս ամ[2] խոստացելոյ միոյ յերիցն։ Քանզի ասել ի միասին միանգամայն ամենեցուն միահամուռ, էր անիմաստասիրակ. բայց միումն ասողի՝ այլոցն յանձնարարութիւն առնել վայելչական է։ Ցի՛նա և ոչ խոստացեալ նոցա յաղագս[3] իրացն անհաւատալոյ՝ հաստատուն հայէին, քանզի ահա զանցեալ էին զհասակս վասն յերկար ծերութեանն յորս հատեալ էր զմանկասերութիւնն[4]։ Արդ իբրև լուեալ ի սկզբանն կ՚ոչն՝ ասեն ծիծաղել. և յետ այսորիկ ասացին նոքա, «մի անկա՞ր է առաջի աստուծոյ բանս», զամսեմի հարեալ յուրասա լինէր զծաղրն։ Քանզի զամենայն ինչ գիտէր աստուծոյ կարաւղ, անդրատին իսկ ի խանձարրոց՝ զայս աբէնս գիտութեան յառաջագոյն ուսեալ։ Ցայնժամ՝ ինձ թուի՝ ոչ նմանապէս զտեսանելոցն առնուլ զերեսիթն, այլ նազելի պարկեշտագոյն զմարդաբէից ամենց կամ՝ ըգհրեշտակաց, փոխանցելոց ի հոգեկանն[5] և ի շնչական գոյացութենէն ի մարդակերպ տեսակ։

Արդ աւտարասիրական առնս ասացեալ եղև վարկպարապի գործ առ գործով եղեալ առաքինութեանն մեծի. իսկ առաքինութիւնն աստուածպաշտութիւն

1. Մեան. [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։
5. Մ. [illegible]։
6. Մ. [illegible]։
7. Մ. [illegible]։

էր. յաղագս որոյ և յառաջագոյնն ասացաք, որոյ ցոյց հաւատացեալն այժմուք՝ ասացեալքս եղեն, իբրև ի վերայ արանց աւտարաց։ Ի բարեբասիկ և յերանելի տուն կարծեցին զոլ ունելք, յորում զէպ եղև իշխանս առնել նոցա և շրջել ընդ իմաստնոյ, ոչ արարեալ արժանի՝ այլ և ոչ յառել անդամ միայն, եթէ ախտ ինչ անբժշկելի տեսանէին յոգիսն այնոցիկ որ ի ներքսն էին. բայց ոչ[2] զիտեմ զի ինչ առաւելութիւն քաջափառութեան և բարեբախտութեան և երանութեան զոլ ասացիս ի տանն յայն՝[3] յորում իշխանան առնուլ և զհիւրոյս կրել համբերին՝[4] հրեշտակք առ մարդիկ, տէրունական և աստուածային ընութիւնք, ապաստարք և պեղք առաջին աստուծոյն. ի ձեռն որոց իբրև նախնեաց և պատուական՝ որ ինչ միանգամ կամեցի ազգիս մերում յառաջագոյն աւրինադրել[5] պատմէ։ Բանդի զիարդ իսկ զառաջինն յանձն առին մոռանել՝ եթէ ոչ զաւրէն նաւի գեղեցիկ կազմեցելոյ[6] զնաւապս և զնաւասատս և զնաւավարս ի ներքս, զի զամենեսեան տեսանէին միումն հաւանեալք հրամանի առաջիկայի տանուտեառնն, իբրև նաւասուոյ վարչի։ Եւ զիարդ իբրու կերակուրս ուտելով և իբրև հիւրք յընդունելութիւն եկեալք կարծիս տային, եթէ ոչ զհացատուն ազգակից և համածառայ համարէին առ նոյն ապաստանեալ տէր։ Բայց սակայն կարծելի է, և ըստ մտին նոցա է՝ առաւելագոյն աճեցուցանել զամենայն զմտաւնս տանն առ ի լաւն, արդ ով՝[7] իմն կատարելագոյն առաքինութեամբ չնչեցեալ։

1. Մ. [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։
5. Մ. [illegible]։
6. Մ. ի լա. [illegible]։ Յոյնն՝ πλήρωμα, զոր լատին թարգմանն յեղու turma navalis.
7. Յոր. [illegible]. զոր ուղղէ ի լա. [illegible], որպէս ունի և միւս օրինակն. յոյնն՝ ἄυρα.

Եւ զինարբուացն՝ որպէս պարտ և տարէնն է լինել, զի զնորահաճութեան պարզութիւն ազատութեանն ցուցանել առ հացաւուն հացկերութացն, և մերկ և յայտնի բարուք՝ ողջոյն տալ և խաւսս վայելչակատս ըստ ժամանակին արարեալ։ Բայց հրաշալի է, և զոչն բնդել՝ ընդոզաց, և զոչ ուտելն՝ ուտողաց մատուցանել երեւութանս։ Բայց այսոքիկ ցայս ցայն կարգաւորք են. բայց առաջինն այն հրաշալի է, որք անմարմինքն էին՝ ի մարմնոյս յայսմանէ ի կերպարանս մարդկան կերպարանիլ առ ի հնարն խմոտանցն։ Քանզի յայսպս ոչ իրիք այսոքիկ արանելագործեալք լինէին, բայց զյայսպս մատուցանելոյն[2] զգայութիւն[3] խմոտանցն՝ ի ձեռն ճշմարիտ և հաւատացեալն երեւացն տեսեան, թէ ոչ մատացեալ և ոչ անզէտ է ի հաւրէն այսպիսին գոլով։

Արդ ճառական բացատրութեանն հատուցումն այսպէս ասասցի. բայց զայն որ ի ձեռն կարծեացցն՝ սկսանելի է։ Նշանակք են այնք ինչ որ ի ձայնէս, այնոցիկ որ ի միտս միայն հասիցելոցն է։ Արդ զան զի ոգեւ զաւրէն իրրև ի միջաբերոյ[4] ասատուծով չարչ լուսաւորեալ և փայլակեալ և բոլոր բարուքին խմոտալի լուսով աւգնեալ, զաւրնանակի[5] հեղեալ տարածեալ զոյս, երբորդ իմն երեւոյթի միոյ զենթակայի հասման առնու. միոյն իրրև զէր, իսկ երկուց այլոցն լուսաւորելոյց[6] իրրև սաւերաց, որպէս զէզ լինի և պատահէ և այնոցիկ որ ի զգայականն լուսի չբղինն։ Քանզի կամ թէ մինչդեռ կանն, և կամ շարժին՝ կրկնակ սաւերք բազում՝ անգամ զէզ է ի միասին պատահել։ Բայց սակայն մի որ

1. Մ. զոչ ընդելն՝ ընդոզաց, և զոչ ուտելն՝ ուտողաց հատուցանել երեւութանս։
2. Մ. յայսոքս հատուցանել։
3. Մ. ի մեզ։
4. Մ. լուսաւորելոյ։
5. Մ. զոյս երբոր լուսաւորելոյ ի զաւերացն։
6. Մ. ոմանք մի մինքս կան։

կարծեսցէ ի վերայ սատուծոյ զատուերս իսկապէս տիրապանիլ։ Քանզի պիտակաբար իրք են այս միայն անուան, առ ի հաւատոյ գոյն և յայտնի երևումն ազդեցելոյ գրոյն։ Բայց ճշմարտութեամբ ոչ այսպէս ունի. այլ է որպէս թէ զի մնաս կացեալ ի ճշմարտութիւնն և հպեալ, ասասցէ զՀայրն բոլորիցուն որ ի միջին ի տէրունական գիրսն իսկ անուամբ կոչի աստուած։ Իսկ աստի անտիրն պատուականքն և ատաջինք և հոգք և մերձաւորք անուանին զաւրութիւնք՝ մին արարչական և միւսն արքունական։ Եւ առաջի արարչականն՝ աստուած, քանզի սոփաւ արար և զարդարեաց զամենայն։ Իսկ արքունականն՝ տէր, քանզի պարտ և արժան իսկ է՝ տիրել և իշխել արարչին եղելոյն[1]։ Այլ պաշտաւն առնելով միջինն յերկրպանչիւրցն յաստի անտիր[2] զաւրութեանցն, մատուցանել տեսականի մրատացն. է երբեմն զի միոյ, և է երբեմն զի երից երևոյթ. միոյ՝ զի յորժամ բուն իսկ ծայրին հասցէ մաքրեալ, և ոչ միայն բան բազմութիւն թուոց, այլ և բան մերձաւոր և բան դրացի միակին՝ երկեակն գերազանցեսցէ, առ անխառն և անշարժանելին. ինքն բան ինքեան ոչ այլոյ իմիք[3] կարաւտեալ, ամենեին ի տեսական ճեղեալ փութայցէ. և երից, յորժամ չև ևս ի մեծամեծան կատարեալ և իւզագլխեալ իցէ զիւզագլխութիւնն[4], այլ տակաւին ևս ի գուզնաքեսան և ի կրտերագոյնան վարիցի խորհուրդն. և ոչ կարիցէ ինքն առանց այլոյ ուրուք՝ յանձնէն միայնոյ հասանել, այլ ի ձեռն այնց որ գործին հատուցէ և կամ իշխեսցէ։ Բայց երկրորդ՝ որպէս ասիցէ[5] զի նաւարկութիւն, այս է. և կցորդութիւն ունի՝ ոչ գուզնաքեսոյ՝ աստուածա-

1. Միւսն. [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։
5. Յոյնն՝ τελευτεῖσα τελετάς.
6. Մ. [illegible]։

տէր կարծեաց։ Իսկ առաջինն աւրինակ՝ ոչ ունի կցորդութիւն։ այլ ինքն առաւաւտուէր կարծէր։ տիեզերս առաւել՝ կարծեաց երիցագոյն և ամենայնիւ պատուականագոյնն կարծելոյ ճշմարտութեանն, և ծանուութագոյն ևս զասդեցելոյս։

Դէմ՝ յանդիման կացուցանելի է։ Երեք են մարդկային բարուց դաւք, որոց իւրաքանչիւր զի միճակեալ ունի մի մի յասիցելոց երևութիցն։ Առաջինն՝ զմիջին, զէապէան իւր։ Իսկ զկնեն այնր զրնդ աջմէն, զբարեգործակն՝ օրում՝ ասուած է անունն։ Իսկ երրորդն՝ ի միւսում կողմանն՝ զիչխանականն, օրում՝ անուն կոչի տէր։ Արդ առաքինիք բարուցն զինքն բան ինքեան զէնՙ առանց ուրուք զարտեն, ոչ յայլմէ ուսիցէ ի բաց ձգելեալք առ ի զրկիլ և ձգտիլ միակարէն առ միոյն պատիւ։ Իսկ այլոցն՝ այնք որ ի ձեռն բարեգործականեանՙ են, հաստատեալ կայ և բազկացեալ և ճանաչի զառաքեամբն հաւրն, իսկ և այնք՝ ի ձեռն արքունականեն։ Բայց զոր ասեմն այսպիսի իմն է։ Քանզի մարդիկ երբև զգացեն բան պատճառաց ընկերութեան հպեալս զոր յինքեանս յոգս ագահութեան, ընդ ակամբ հային և ի բաց դառնան, ի բարբելի ողբանացն և յընտանութենէն նոցա երկուցեալ երբև յոյժ ի գիտակարէՙ։ Իսկ ասուած երբու զի գնա ինչ ոչ կրէ, զամենեսին՝ որք բան որում՝ խիք և իցէ աւրինակի կամեցեալք պատուել զնա, խնդութեամբ առ ինքն կոչէ։ ոչ զոր խուսէի և անարգել արժանի հանարէՙ ամենեին։ բայց ոչ միայնՙ յայտնապէս այնոցիկ որ ընկիս ունեն յոգւոյնՙ աւրինագրէ։ Արդ առաքինին յայդմանակնՙ նա-

1. Միան՝ —————։
2. Մ. Բարեգործնին։
3. Մ. Ընտանեաց։
4. Մ. Խոսիս։
5. Մ. հանրել։
6. Բայն՝ ἀλλὰ μονονοὺχ.
7. Մ. չունի յաղիանին։

հատակութեանցն դիցին այնոցիկ որ զիսն պաշտեն վասն իմ՝ առանձինն։ Իսկ երկրորդքն այնոցիկ որ վասն ինքեանց կամ՝ պատահեալ՝ բարեացն յուսան, կամ՝ ի պատիժ պատուհասէ ազատութիւն գտանել ակն ունին։ Եւ քանզի թէպէտ և վարձաւոր է սոցա պաշտաւնն և ոչ անկաշառ, այլ ոչ ինչ նուազ ի ներքս անդ յաժի յատուածային ի գաւիթն, և ոչ արտաքոյ թափառի։ Իսկ նահատակութիւնն այնոցիկ որ զիսն պատուեն վասն իմ՝, եղեալ կացցէ սէր. իսկ այնոցիկ որ վասն պիտոյիցն, սէր ոչ է, բայց ոչ այլոյ համարեալ։ Քանզի ընդունիմ՝ և զբարեգործակին իմոյ զաւրութեանն որ կամին հատանել ի կցորդութիւն բարեաց, և զայն՝ որ երկիւղիւ զիշխանականն և զտէրունականն հաշտեցուցանելով զիշխանութիւնն՝ ի խոտորումն խոյս տալոյն հարուածոց պատուհասին։ Քանզի ոչ անդէտ եմ՝, զի ոչ առ ի վատթարն՝ լինել՝ և լաւագոյնք եղիցին, ատէպ ատէպ յաճախ պաշտամունքն յուսաւոր և մտերիմ՝ և մաքուր բարեպաշտութիւն ըստացեալք։ Քանզի թէպէտ և կարի յոյժ յեղանակքք զանազանեալք են յորոց առնեն, զառ ի հաճութիւնն յարձակումն ոչ ըստգտանելի է. քանզի ուշ նպատակի մի, և կատարած մի է նոցա, բժշկելն պաշտամունքն զիս։

Եւ զի երիր երևոյթն զաւրութիւն միոյ ենթակայի երևելի է, ոչ միայն յայնմանէ որ յայլաբանութեան տեսութիւնն է, այլ և ի ճառէ գրոյն որ զայսն պարունակէ։ Քանզի յորժամ իմաստունն ազաչէ զնմանեալսն ուղևորաց երից՝ ասելեանս առնուլ նմա, խաւսի ընդ նոսա ոչ իբր ընդ երիս, այլ իբր ընդ միում՝ և ասէ. «տէր՝ եթէ արդարև գտի շնորհ առ քեզ, մի՛ զանց առներ զծառայիս քով». և որքան միանգամ՝ այսպիսի ինչ է, առ մի բնաւորեցաւ՝ այլ ոչ առ բազումս ասել՝։ Իսկ յորժամ զաւ-

1. Միւսն. գ-գ-հել։
2. Մ. զէ ու է վ-գ-ր-ն լինել։
3. Մ. -ել։

տարութեանն կրեալ տոցա շնորհն առատապար, աւտարընկալին դարձեալ մին խոստանայ՝ իբրու թէ միայն իցէ անդ, հարազատ որդւոյ զաւակ ի ձեռն այսոցիկ. «ի դարձէ եկիցս առ քեզ ըստ ժամանակիս ըստ այսմիկ ի ժամն, և եղիցի որդի Սառայի կնոջ քոյ»։ Բայց երևելագոյնք զեկուցանին ի ձեռն դկնեիցս ազգեցեալն։ Սոդոմայեցւոցն երկիրն՝ մեան քանանացւոց երկրին է, զոր յետոյ փոխեալ ասորիք՝ անուանեցին Պաղեստին. բազում՝ անիրաւութեամբք ապրեալ, և մանաւանդ յայնցանէ որ յորովայնամոլութենէն և ի կնամոլութենէն. և որ ինչ միանգամ՝ այլ ևս մեծութիւն և բազմութիւն այլոց՝ հնչս ցանկութեանցն շուրջ պարապեալ բնակարար, ահա դեռ ի դատաւորէն բոլորեցուն ըստգտեալ կշռամբիւր։ Եւ պատճառք առ ի վաւաշնայն անչափ պակչառութեան եղև բնակչացն, պիտոյից մի ի միոյ վերայ առատութիւնք բերոցն. քանզի արգաւանդաւոր և շատաջուր էր գաւառն, ամենագան պտղոց քաջաբերութիւն ամ՝ ըստ ամէ որ ի պէտս վարէին։ Եւ մեծ սկիզբն չարեաց, որպէս ասաց ոմն ոչ վայրապար, յոյժ բարիք[1]. զորոց ոչ կարացեալք տանել զյագելն՝ զաւրէն պաճարաց խայտառով կայտառով ընդվզին ի բնութենէն աւրինաց, սատիկ անապակ և խորտակերութիւնս, և ի վերայ երանել միմեանց անառակարար և անարժանապէս զհետ էին։ Քանզի ոչ միայն իգամոլելով՝ զայլոց ամուսինս ապականէին, այլ և արք՝ արանց ի վերայ երանէին. զհատարակն առ կրաւղսին որ գործէին, ոչ ամաչէին ի բնութենէն. և մանկունս սերմանելով՝ յանդիմանելք լինէին անկատար սերումն սերմանելով։ Եւ յանդիմանութիւնն և առ ոչ ինչ ոչ էր աւգուտ՝ ի բռնագունէ յաղթեցելոց ցանկութենէն։ Եւ ապա առ սակաւ

1. Մենանդրոս քերթող՝ առ Պլուտարքեայ. Ἀρχὴ μεγίστη, τῶν ἐν ἀνθρώποις κακῶν τὰ λιάν ἀγαθα.

2. Միւսն. ընդվզին։

սակաւ ընդելեալք զկանանց կրել, ծնեալք՝ արքն՝ իգական ախտ կազմեցին իւրեանց չար դժուարամարտ. ոչ միայն զմարմինսն բեկումամբ և կակղութեամբ և փափկութեամբ և կրկամամբ կնացուցանէին, այլ և զհոգիսն խեղեալս և անարիս գործէին. և որ ինչ գալ էր նոցա մնան՝ առհասարակ զամենայն ազգ մարդկան խանդաբեալ ապականէին։ Եւ եթէ ելլենացւոց ևս՝ միանգամայն և բարբարոսաց միաբանեալ և նախանձեալ էր ընդ այսպիսի խառնելս ամուսնութեան, աւերեալ անապատացեալ էին մի ըստ միոջէ ամենայն քաղաքքն իբրև մահաբեր ախտիւ թափուր եղեալք։

Եւ գութ ողորմութեան ընկալեալ աստուծոյ, իբրև փրկիչ և մարդասէր, զբան բնութեանն արանց և կանանց միաբանութիւնս որ յաղագս մանկանց լինէր աճեցոյց. իսկ զազգատոհմն և զարտաւրէնս անառակութիւնս, յոյժ առեցեալ չիջոյց. զայնոսիկ որ վարարեալ էին՝ յայսոսիկ՝ պատժովք պատուհասի սատակեալ նորոգագործ՝ տանջանաւք, և ոչ այնոքիւք որ ի սովորութեան՝ կան պատիժք պատուհասի։ Քանզի հրաման տայ յանկարծաւրէն աւդոյ՝ ամպ զգենուլ, և բազում՝ անձրև ոչ ջրոյ՝ այլ հրոյ տեղալ. և միանգամայն ձիւնաբար բերելոյ անընդհատ և անդադար բերմամբ բոցոյ՝ այրեցեալ լինէին վայրք և ծաղկուտք, և խաղք և շամիք, և թաւ խարձք, և խիտ մայրիք՝ այրիւք և դաշտն, և սերմանեցելոյն պտուղք ամենայն. այրիւք և լեռնանայեցոյն՝ ծառաբերքն, արմատաբի ծառոցն ի վերուստ հրկէզ եղելոց։ Եւ գոմք և տունք և պարիսպք առ հասարակ ամենայն այրեցեալք լինէին. և ի միում աւուր բազմամարդիկ քաղաքքն՝ գե-

1. Ի լս. ՅՆԷԼ. Միւսն. ՅՆԷԼ ըստ յոյն բնագրին։
2. Յոյնն՝ ἐκφύλους.
3. Մ. ՎԱՐԵԼ ԷԻՆ։
4. Մ. ՆՈՐՈՓՈՐԹ։
5. Մ. Ի ՍՈՎՈՐՈՒԹԻՆ։
6. Մ. ԼԵՌՆԱՅՆԱՅՆ։

բեզմնեալ բնակչացն լինէին, և ի քարանցն և ի փայտից կազմեալք՝ մեզ և մեր աճիւն լինէր։ Եւ զման զի զայն որ յայտնի յերեսեալն երևան և ի վերայ երկրին էր՝ զամենայն ինչ ծախեալ ապականեալ բոցն, ահա իակ և զնոյն ինքն զհողն այրէր, և ի տարին կրցին անցեալ՝ զկենդանական զաբութիւնն ապականէր յանպղութիւն ամենեին, զի այլ մի ևս զարձեալ երբեք պատուղ բերեալ՝ կամ դարարի բուսուցանել բնաւին, և մինչև ցայժմ այրէ. քանզի չանգական հուրն ոչ իւրք ոչ կարացեալ՝ շիջանել՝ արաբի։ Եւ հաստատագոյն[2] տեսեալքն, քանզի պատահեցելոյ ախտին յիշատակ է այն որ ի վեր կանէ ծուխն, և զոր հանէնն ծբծումբ. և աչխարհին[3] բարեբաստութեանն յայտնագոյն, որ երևելի մնացեալ լինի ցոյց՝, քաղաք մի ի նմանեցն, և շուրջ երկիր. և բազմանարդ է քաղաքն, քաղախատ և քաղահանակ միանգամայն և պղտերեր է երկիրն, առ ի յանդիմանութիւն դատաստանին՝ աստուածայնին խրատու դատ տուեալ։ Քանզի ոչ եթէ յայգաս ազդելոյ զմեծագործեցեալ զաղէտս հանարակս զայսոսիկ՝ պատմութեամբ անցաք, այլ զայն կամեցեալք յանդիմանն կացուցանել, զի երիցն իրրև արանց երևեցելոցն խնամանոյն, երկուս միայնս յապականացեալ յաչխարհն պատգամն ասէ՝ երթայ ի ստակումն բնակչացն, երբորդին ոչ իրաւացուցեալ զերթայն. որ ըստ խմամ մնածութեանս էր՝ այն որ առ ճշմարտութիւնն է, յարմարական համարեալ գոյ՝ զրարին ինքն գնալով[4] ի ձեռն իւր չնորհել. իակ զընդդէմն ըստ ապատուրութեան զաբութեանցն միայն հրամանս տալ ձեռագործել։ Զի միայն բարեկամ եղէ պատճառ, բայց չարին և ոչ մեզ իրեք նահապետ.

1. Միւսն Բէրրէ։
2. Մ. հաստատագոյն։
3. Մ. աշխարհն։
4. Մ. լինի գոյգ։
5. Մ. գալով։

տաբար[1] կարծեցէ։ Զայս թուին[2] ինձ և թագաւորաց՝ որք նմանեալ[3] կամին աստուածային բնութեանն գործել, զնորին ի ձեռն ինքեանց կարկառելով, և զպատիժն ի ձեռն այլոցն հատուցելով։ Այլ վասն զի երկոցունց զաւրութեանցն՝ է որ բարեգործակն է և է որ սատակիչն, երկաբանչիւր որ ըստ վայելչականին երևի սոգումնեցուց աշխարհին։ Վասն զի և լաւացն ի նմա քաղաքացն չորքն հանդերձեալ էին հրկէզ լինել, բայց մին անախտ յամենայն չարէ մնալ. քանզի պարտ և արժան էր՝ ի ձեռն սատակչին լինել զապականութիւնն, և ապրիլ ի ձեռն բարեգործակին։ Այլ վասն զի և որ ապրիւրն[4] մնացն, ոչ ամբողջ և համարէն զամենայն ինչ ունէր զառաքինութիւնս, զաւրութեամբ էին բարեգործեալ լինէր. իսկ նահապետաբար[5] նորա երևութիւն անարժան թուեցաւ հատանել։ Արդ յայտնի և այն որ առ բազումն բացատրութիւնս հատուցմանն այս է։ Իսկ որ ի ծածուկն և առ բազումն, որք զյեղանակս հոգւոյն քննեն և ոչ զմարմնոց կերպարանս, անդրէն[6] աստուցի նշանակաբար։ Հինգ քաղաք[7] ի մեզ զգայութիւնքս են հեշտ ցանկութեանցն գործիք, ի ձեռն որոց ամենայնքն կատարեալ գործին։ Քանզի կամ տեսանելով զգունոց և զձևոց զանազան պայծառութիւնս ի շնչաւորս և յանշունչս, հեշտանամք. կամ ձայնից[8] նուագաւորաց լսելով, կամ ըստ ճաշակի՝ այնր որ ի կերակուրս և յըմպելիս, և կամ ըստ հոտոյ յանուշահոտութիւն[9] գոլոշեաց, և կամ որ կակղութեան և ջերմութեան

1. Ի յս. Նախադիրք, որպէս ունի և միւսն։
2. Միւսն. Ի։
3. Մ. Նմանել։
4. Մ. Ապրիր։
5. Մ. Նախադիրք։
6. Մ. Դրդէն։
7. Մ. Հինգ։
8. Մ. Ձայնից։
9. Մ. Անուշահոտութիւն ըստ։

և սղբկից և ս ըստ չաչափման։ Քանզի կենդանագոյնք և յայսրնեթարագոյնք[1] հնգեցն, երեք զգայութիւնք են[2]. ճաշակելիք, հոտառելիք, չաչափելիք. յորս պաճարաց և գազանաց որսալնամարդոյնքն և գիշադոյնքն յաէտացեալ են[3] և պարապեալ։ Քանզի զբոլոր աբն և զգիշերն՝ կամ անդադ կերակրովք ամենայ[4], և կամ առ ի կատարել զգիշութիւնս յարձակի։ Եւ երկուք են խնոսասէրք և իշխանական առաջնորդք. լսելիք և տեսանելիք։ Քանզի լսելիք հեղդադոյն իմն պէս և իդադոյն՝ բան զտեսանելիս, հասեալ ի տեսանելիսն ի ժուժկալութենէ, և ոչ կարացեալ մեռացեալ մինչև տեսանելիքն զնա չարժեացնն, յառաջադոյն պատահեալ և ընդ առաջ եղեալ և հակառակ չարժեալ[5] բաղձացելոյ։ Արդ լսելիք՝ վասն զի հեղդադոյն և ծանր և իդադոյն ազդակից է, յերկրորդ դասու կարգեսցի, և նախաբաշխութիւն պատուոյ եղիցի իմն[6] առաւել տեսութեան. քանզի զաս աստուած՝ բամբիշն այրոցն երևեցոյց ի վերայ եղեալ ամենեցուն, և իբրև ի վերայ զդեկի հաստատեալ, ընտանեդոյն գործեաց ոգւոյն։ Եւ հաստատուն նշանակ տացէ զբ յայնմանէ[7] որ ընդ նորա յեզանական չբՁեալ փոխի. քանզի տրամութեան յուսիկ եղելոյ՝ ապրն մոռանրհութեամբ[8] լի են և տարբանաւք. և խնդութեամբ հակառակ ընդդէմ, ժմտին[9] և զուարճանան խնդութեամբ. և երկիրդի հասելոյ կալելոյ, խռովութեամբ լի լինին և վրդովմամբ՝ չարժմունս և թ ընդ-

1. Միւսն. ԵՆԴԻՐԱՊԵՏՆԵՐ Ի. յոյնն՝ ἀνδράποδα δέσποτα. լատին թարգմանն դնէ serviles.
2. Մ. ԵՂԵՌ ԵՆ ՀՊՅՈՒՐԻՆՆ։
3. Մ. ՅԱԼԵԱ ՈՆՑԵԼ ԵՆ։
4. Մ. ՈՒՆԱՅ ՀՆԱՆ։
5. Մ. ՀՈՐԻԼ։
6. Մ. ՀՈՒՆԻ ԻՆ։
7. Մ. ՅԱՅՍՄԱՆԷ։
8. Մ. ՀԱԽԵՍՈՒԹԻՒՆԸ,
9. Մ. ԺՊՏԻՆ։

մունս և տապալմունս անկարգս ընդունելով յինքն. և եթէ բարկութիւն կալցի, խոշորագոյն իմն և զկծագոյն և շառագոյն արիւնբուշտ լինին երեսքն և ի խորհելն և ի հոգալ, հանգարտէ և դադարէ և ի բաց խոտորի գրեթէ ձգելով զինքն ընդ խորհուրդսն։ Իսկ ի հանգստեան և յապահովութեան, թուլանայ[1] և արձակի. և մերձենալով առ սիրելին՝ յառաջագոյն աւելիս տայ զմտերմութեանն զախտ, զուարճակից և խաղաղուտ հայեցածաւք. ապ, եթէ թշնամի դէպ լիցի գոլ, զդժուարահաճելի զոգւոյն զախտս յառաջագոյն զեկուցանէ, և ի յանդգնութեան յառաջագոյն վարեն և յառաջընթացեան աչքն։ Իսկ պատկառանաւք ամենեքեան՝ հեղ, հանդարտաբար զդադար առնուն. որպէս զի միանգամայն ասել՝ ոգւոյն կերպարան արարեալ է զտեսանելիս՝ ծայրագոյն և վերին արուեստիւ գեղեցիկ նմանեցուցանելով[2], յայտնի երևեցուցանելով ըզպատկեր նմանութեանն, իբրու ի ձեռն հայելւոյ զբնութիւնն տեսանելի ի նմանէ եղելոյ։ Փանդի և ոչ այսու իսկ[3] միայն քան զայլ զդայութիւնսն առաւելեալ է գեղեցկութիւն աչացս, այլ և վասն զի այլոցն յարթնութեանն զանազան է։ Փանդի զբոլոր քնոյն զանգործութիւն ոչ է ի մէջ առնլի. քանզի պակասեն ենուազեն վարքն։ Փանդի յորժամ՝ ոչ ինչ շարժեսցէ զնոսա յարտաքնոցն՝ դադարեն և խաղաղանան։ Իսկ աչացն բացարձակ և տարած են ներգործութիւնքն, շարունակք և անընդհատք են, և ոչ երբեք առլցեալք են։ Եւ այսուիկ[4] յանդիման կացուցանէ զոր ունին առ ոգի ազդակցութիւն. այլ առ մշտաշարժ և յաւէտախաղաց գոլով՝ ի տուէ և ի գիշերի արթուն կայ։ Իսկ սոցա իբրու զի մարմնոյ աւելի իմն կցորդութիւն ունին, բաւական և շատ տուաւ պարգև՝ կէս մասին ամենայնի ժամա-

1. Միւսն. թուլանայ։
2. Մ. նմանեցուցանելոյ։
3. Մ. այսուիկ։
4. Մ. այսուիկ... կցուցանի։

նակին և կենացն կատարել, ներգործելով դյաբ-
մարական ներգործութիւնն։ Իսկ որ են հարկա-
ւորագոյն յայտն ասդէ, ահա ասելի է։ Քանզի
միայն տեսլեանն զդայութեանց՝ ստուգած ծագեաց
լոյս, որ և արգարև՝ էիցն է գեղեցկագոյն։ Եւ ի
աչքուն գիրսն անուանեցաւ գեղեցիկ։ և կրկին
է լուսոյ բնութիւն. է որ ի պիսանացուէս ի հրոյ՝
յապականացուէ՝ ապականացու լոյս փայլակէ, որ
չինչումն ընդունի. և է որ անչէջ և անապականացու
է, ի վերուստ յերկնէ առ մեզ բերեալ իբրև յաւէ-
տարաղաց ազրելոց՝ խրաքանչիւր ոք զստեղա-
ցրն[2] լոյս հեղլով և տիսելով, և երկաքանչիւրն[3] ա-
մեք երեսք ընդհարվանին և միաբանին, և ի ձեռն
երկոցունց մերձենայ ի տեսանելիսն ի ճշմարտա-
գոյն ընդունելութիւն։ Եւ այլ ևս գարձեալ ձեռն
արկեսցուք զաչս բանիւք ներբողել, զճշմարիտ ըդ-
զոման սոցա արձանակեցելոց յերկինի աստեղաց։
Քանզի արեգական լոյս և լուսին, և այլոց մոլորա-
կացն և անմոլորից, յոր սակս եղեն. եթէ ոչ ա-
յլոց ներգործութեան՝ ի տեսանելոյ սպասաւորու-
թիւն, որով և ի կիր առեալ ամենեցունն բարի
պարգևաւ լուսոյ՝ տեսանեն և գիտեն զաշխարհս,
զերկիր, զտունկս, զկենդանիս, զպտուղս, զծա-
մուց տարածմունս, զգետս զինքնաժինս և զուլս,
զաղբերս զանազանութիւնս. որոց են՝ որ ցուրտ և
են որ ջերմ՝ բեռն։ Զայնոսիկ որ յաւդ բաղկա-
ցեալ են բնութիւնք, անճառելիք են տեսակքն, և
անբաղձանակք բանիւ. և առ ամենայնիս զեր-
կին, որ ճշմարտին աշխարհ յաշխարհի արարեալ
է, և որ յերկնի գեղեցկութիւնքն են և զանազանի
ձևքն են։ Արդ ո յայլոց զդայութեանցն պանծաս-
ցի անցանել երբեք այսպան. բայց թէպէ առեալ
զայն որ յերևեցեան՝ որ զբնակիցն[4] ի մեզ զպանա-

1. Միւս. —բրոյ։
2. Ի լս. յոստեղաց. Մ. զոստեղաց։
3. Մ. յերկոքանչիւրոք։
4. Մ. զբնակիցսն։

բրն պարարին[1] զցանկութիւնն։ Հարցցուք զայն որ բանիւն թուի վարիլ՝ զլսելիս, որոց արագագոյն և կատարելագոյն են ընթացքն. կայ և հասատաբ բան ուղղս որ առ երկրաւս է, յորժամ բանութիւնք հողմոց և որոտմանց ճայթմունք՝ սուղումն սատիկ և դժնեայ պայթումն հնչեսցեն։ Իսկ աչք յերկրէ ի գուն ժամու հասանեն յերկին և յոլորտս ամենայնի, յարևելս միանգամայն և յարևմուտս, և ի սայլ և ի միջաբեայ. և հասեալք առ ի տեսանելն՝ ձգեն յերևեալսն զմիտան։ Եւ սորա նման և մերձաւոր ախտն՝ ընկալեալ ոչ լռեալ դադարէ. այլ իբրու զի անբուն է, յերեսացն որ կարեն զիմանալիսն տեսանել զպատճառսն՝ առեալ ի խոյզ քննութեան եկն։ Իսկ արդ արդեւք երևեալքս այսոքիկ են անե՞ղք, եթէ լինելութեան առին սկիզբն. և՞ արդեւք անեղե՞ալք եթէ որբատացեալ[2]. և արդեւք միթէ բազումք իցեն աշխարհք. և արդեւք չորք տարգ՝ ամենեցուն են, թէ բնութիւն ինչ առանձինն առաւելագոյն երկին և որ ի նմայքն վիճակեցան պանչելագունի, և ոչ նորին եհաս այլոցն։ Եւ եթէ եղև աշխարհս, յուժէ եղև, և ո՞ է արարիչ բան գոյացութեան կամ՝ բան որակութեան. և զի՞նչ ընդ միտ ածեալ և խորհեցեալ առնէր, զի՞նչ այժմ՝ գործէ, և զի՞նչ են այժմ՝ վարքն նորա և կեանք. և որքան միանգամ՝ այլ ինչ ունի՝ որ միտք խմաստութեամբ խորհրդով կեցեալ, սովորեաց քննել և խուզել։

Այսոքիկ և այսպիսիքս նուիրեալ և եղեալ են իմաստասիրութեան. յորմէ յայտ է զի և իմաստասիրութիւն ոչ[3] ումեքէ սկիզբն էառ ի մեզոյցս[4], բայց

1. Մ. գ-ՀՐԷՆ
2. Մ. գ ---Ղ---Ն։
3. Մ. չունի Է-։
4. Մ. յաւելու. Հ-ՄԷՆ---Ի. ՄԸՆ։
5. Մ. ՈՂ Յ-ՅՂ ---ԴԷԷ։
6. Յոյնն՝ ἀπ᾽ οὐδενὸς ἑτέρος τῶν εν ἡμῖν (այն է յորոց ի մեզ)։

յիշխանական ասպետորդէ զգայութեանցն ի տեսողաց. զոր և միայնն ի մարմնական վայրէն ապրեցոյց աստուած, զչորան ապականեալ. քանզի մարմնականքն, մարմնոց[1] ախտիցն ծառայեցին։ Իսկ սա զաւրեաց[2] զմիզ ի վեր համբառնալ և ի վեր հայել. և այլ զուարճութիւնս պայծառութեան գտանել՝ որ կարի յոյժ լաւագոյն է քան զմարմնականաց հեշտ ցանկութեանցն յաշխարհիս տեսլենէ՝ և այնոցիկ որ ի սմա են[3]։ Արդ մի իրրև ի հինգ քաղաքէ՝ զգայութեանցն աչացն պարանչելի և առաւել պատուոյ հասանել յարմարական էր, և ապականեցելոց այլոցն՝ կալ ճեալ ամրողջ։ Զի ոչ առ ի մահկանացուս յածի և յողոյ միայն, որպէս նոքա. այլ ի վեր կանգնի և փոխել զբնակութիւնն առ անապականացու բնութիւնն արժանի առնէ, խնդալով ընդ տեսիլն նոցա։ Վասն որոյ և ամենաբարւոք՝ փոքր և ոչ փոքր, զքաղաքս զայս տէրունական հրամանքն հասատատեն[4] և հաշակեցուցանեն, առակելով[5] զտեսանելիս. քանզի փոքր ասէ զոր, վասն զի զոյզն մնան յայնցանէ որ ի մեզ է. և մեծ, վասն զի մեծամեծացն ցանկայ, առ հասարակ զամենայն երկին և զաշխարհ բաղձացեալ տեսանել և գիտել։

Արդ յաղագս երևելի երեսացն և պարանչելեացն և ամենաբարեաց ընծայիցն, որովք թուեցեալ ընդունել ի հայկերոյթ՝ աստարբնական ընկալեալ լինէր կերակուրս ըստ որչափ կար էր, և հասու ըստուգեալ մեր և ճշդրտեալ, զառի տեղւոյդ ազդեալ եղև։ Բայց զմեծ զգործ զարժանի խելոյ ոչ լուելի և դադարելի է. սակաւ ինչ պիտի ասել՝ թէ քան զամենայն որ միանգամ՝ աստուածասէրք են՝ առաւելեալ զանցուցանէ։ Եւ ասելի է զբունն յաղագս սորա. որդի յամուսնէ լինի իմաստնոյն, հարազատ

1. Միւսն. հրամոյ։
2. Մ. զ--ր-ցէ-լ։
3. Մ. ԵՒ այնոքիկ որ ի նմայն են։
4. Մ. հասատին։
5. Մ. --կեց--ցանելով։

սիրելի և միայն, մարմնով գեղեցիկ և հոգւով առաքինի։ Քանզի ահա կատարելագոյն քան զոհս հաճակին երևեցոյց զառաքինութիւնն, մինչ զի հաւրն ախտս գորովոյ կրել, ոչ միայն ի մտերմութենէ բնական գորովոյ՝ այլ և ի բարուց և ի կամաց. զաւրէն բարուց գառաւոր, հզաւր իմն գրթով գորովոյ վարիլ։ Եւ իբրև այսպէս որդեգրեալ էր և հաստատեալ, յանկարծաւրէն աւրինադրեալ եղև ի բանէ՝ որում՝ ոչ երբեք ակն ունէր. խողխողել զորդին ի վերայ միոյ ուրուք բարձրագունի կատարաց լերանց, հեռագոյն մեկուսի ի քաղաքէ անցեալ գնացեալ երից աւուրց ճանապարհ։ Իսկ սա զի թէպէտ և անճառելի փափաքանաւք գորովոյ զմանկանէն[2] կախեալ էր, ոչ ըզգոյն փոխեաց և ոչ յոգիսն պակուցեալ ծմրեցաւ. բայց անտեղիտալի բարուք և անմիտելի և անթաւալ եկաց մնաց անմէտ, որպէս և յառաջն էր. աստուածային տարփանաւք մղեալ՝ մեծապէս զաւրութեամբ, որ յաղթէր ամենայնի որ ինչ միանգամ՝ ազդակցութեան և ծննդոյ անուանք և սիրելութիւնք. և ոչ միում՝ ումեք այնոցիկ որ ի ներքս ի տանն էին ասացեալ ի վեր եհան զպատգամն։ Բայց ի բազմամարդ սպասաւորութենէ ծառայիցն՝ երկուս զերիցագոյնսն, որք մանաւանդ տիրասէրք էին, առեալ ընդ իւր՝ իբրու թէ յաղագս պատարագս ինչ մատուցանելոյ ի սովորականացն, չորրորդ անցեալ գնայր ի բաց հանդերձ պատանեկաւն։ Իսկ զհրամայեալ վայրն՝ իբրև ի գիտանոցէ տեսեալ ի հեռաստանէ, ծառայիցն հրամայէ ի խոնարհ անցանել մնալ։ Իսկ պատանեկին զհաւրն և զփայտն տայր բառնալ. զնոյն ինքն զպատարագն իրաւացուցեալ՝ զառ ի զենուն բեռն կրել թեթեւագոյն ծանրութիւն. քանզի և ոչ ի բարեպաշ-

1. Յորինակիս՝ որպէս և ի միւսն՝ ուղղի [illegible] բառդ ի լա. [illegible] ոչ. յայնն՝ [illegible]։

2. Միւսն. [illegible]։

տութիւն՝ տանց աշխատութեան և վշտանալոյ գնայր։ Զսան որոյ վարվարակի ոչ մարմնովք առաւել քան մնալ զկարծիկարծոյ ճանապարհն, որոյ արժանաւորութիւն և սրբութիւն է՝ կատարած, ի հրամայեալ տեղին հասանել. և ապա հայրն Ժողովէր քարինս զի չինեսցէ բագին։ Իսկ որդին զայն ամենայն տեսանելով որ ինչ միանգամ՝ առ ի պատարագատուութիւնն կազմ՝ և պատրաստ, և կենդանի ոչ մի, հայեցեալ ի հայրն ասէ. «ահա հուր և փայտ, հայր. ուր է զենլին»։ Արդ այն[2] զոր ինչ գործելն հանդերձեալ էր դիտացեալ և ի յոգւոն ծածկեալ[3], յատացելոյն զոնեա վրդովեալ լինէր և խուճապեալ, և արտասուաւք լցեալ ներբևուելմամ՝ մնայոյց եղելոյն ի խանդաղատանաց գորովոյն, և լռեալ դադարեալ։ Իսկ սա և ոչ մի ինչ ոչ ցուցեալ յեղյեղումն, ոչ բան մարմնոց, և ոչ բան մնացն. բայց հատատուն և կայուն հայեցամարքն և հատատուն և կայուն խորհրդովքն ասէ՝ առ հարցուածն պատասխանի արարեալ. ով որդեակ, ատուած տեսցէ իւր զենլի, և յոյժ ի մեծ անապատիս. վասն որոյ վհատեալ թերևս կասեսցէ՝[5] թերահաւատեալ դասցի[6]. բայց զամենայն ինչ գիտէ ատուծոյ կարս, և որքան միանգամ՝ յանհնարին և յանպատարանս իրք կան առ մարդկան։ Եւ զայսոսիկ միանգամայն ասելով՝ անդէն վարվարակի զորդին բուռն հարեալ յափշտակեաց, և գնէ ի վերայ բագնին, և կոբգեալ ամենայն զսուրն գնէր ի վերայ իրք զենլով։ Եւ ժամանեալ հասանէէր փրկիչն ատուած յատգոյ ձայնիւնդ մէջ անկեալ գործոյն, որով հրամայն տայր դադարել և արգելալ և մի՛ հպել ի մանուկն, յա-

1. Մեան. եր։
2. Մ. Ի լս. հայրն։
3. Մ. ֆ-ի՛ալ-ս։
4. Մ. ներգ-ուելմամ. և ի լս. ներ-ուելմամ. յայնն՝ ἐμφασις.
5. Մ. վհատալ կասեսցէ(Ի լս. կարձեսցէ) ընկանաւոր էր. յայնն՝ ἐυρεθήσεται.
6. Յայնն՝ ՀԼԸ։

նուանէ կոչեցեալ երկիցս՝ զՀայրն, զի յինքն դարձուցեալ և բաց կորզեալ, արդելցէ զփողոտումն. և նա ապրեալ լինի։ Զպարգևն անդրէն փոխանակ շնորհեաց աստուած. և զայն որ երեքն[2] յարս բարեպաշտին էր՝ անդրէն նոյնպէս պատուեաց։ Իսկ ամն գործն՝ թէպէտ և ոչ կատարածն, հետևեցաւ կատարելագոյն և բոլանդակ, ոչ միայն ի տէրունեան դիրսն, այլ և ի վերծանողացն միտս անչինչ արձանակեալ է։ Այլ թշնամեացն և դժկամակացն և որք զամենայն ինչն գտրոմեն և բամբասեն, որք զզարտաւանս՝ յատաջ քան զգոմութիւն պատուել և յարգել սովորեալ են, հրամայեալ գործս՝ ոչ ինչ թուեցի մեծ և պանչելի։ Քանզի զբազումն և զայլս ատացեն զկարի յոյժ յընտանեսիրացն և յորդեսիրացն՝ մատուցանել զիւրեանց որդիս, զամենս յաղագս գաւառաց խոզխոզեալս, լուծանս պատերազմաց. կամ՝ խորշակաց, կամ՝ թաւնից, կամ՝ հիւանդութեանց մահաբերաց եղելոց, և զամենս յաղագս սովորեցելոյ բարեպաշտութեան. զի թէպէտ և ոչ է ճշմարտութեամբ իսկ՝ յելլենացւոց յառաքինեացն և ի փորձից, ոչ միայն գեղջկաց, այլ և թագաւորք սակաւ ինչ հոգ տարեալ այնոցիկ զորս ծնանին, ի ձեռն ացա սպանմանն՝ զաւրութիւնս զաւրուց զմեծամեծս և զբազմամարդիկս, զայնոսիկ որ ի զաւրավիրն աւգնականութիւն նոցա եկեալ էին՝ ապրեցուցին։ Իսկ որք ի միոսին թշնամեացն՝ անդէն առնմին գոչման իրացն ապականեցին և զարբարտասական ապինս, բազում ժամանակս որդեսպանութիւն՝ իբրև արժանաւոր և սուրբ գործ և աստուածասէր ընդունել. մինչ զի և յիշել զպղծութիւնն՝ և սրբոյն Մովսէսի։ Քանզի ըստգտանելով և բարելով զնոսա վասն պղծութեանն՝ ասէ թէ «զորդիս և զդստերս այրեն աստուածոցն իւրեանց»։ Իսկ հնդկաց մերկիմատակացն՝

1. Միան. Էլ-ց Երկոս։
2. Մ. Երեքն։

մինչև ցայժմ, յորժամ ա՛յսցին հասանել երկայն և անբոյժ ախտ վասն ծերութեանն, յառաջ մինչ չի հասանասցուն հասեալ ըմբռնեալ է՝ խարոյկ կուտեալ գինքեանս այրել, իբրու զի կարեն և այլ ևս տակաւին բազմանութեան թերևս հանդուրժել։ Տի՛նա, ահա և կանայք յառաջագոյն արանց մեռելոց՝ գիմեցին ինդութեամբ առ նոյն խարոյկ, և կենդանւոյն ընդ նոցա ընդ մարմինսն համբերել գիսկումն և զայրերն կրել[1]։ Արդ ընդ այսոսիկ վայելչաբար զբարմացի ընդ համարձակութիւն, որ ի բազում ժամանակաց կենդանւոյն՝ քամահաբար արհամարհեցին զմահս, և իբրև յանմահութիւն ցանկացեալք, և սրթալով և հինեալով[2] և հոգի կլանելով ընթանան։ Իսկ և զոմ այլ ևս զարս և արժան է գովել՝ իբրև ձեռնարկել[3] ի նորոգագործ իրս, զոր և գեղջուկք և թագաւորք և ամենայն ազինք գործեն ի ժամանակս ժամանակս։ Բայց ևս առ սոցա[4] չարակենութիւն և դառնութիւն զայն ասացիս. որք զենուն զորդիս, ունկք սովորութեամբ զայս գործեն, որպէս զմանան ասացի զբարբարոսաց. և ունկք վասն ակամայց և մեծամեծ ենթադրութեանց պատերազմաց և դաւաց, այլ ոչ զուզղութիւն ընդունել կարացելոց՝ որոց ի հարկէ ունկք[5] զիւրեանցն մասուցանեն՝ ի հղաւրագունիցն բռնադատեալք։ Իսկ ունկք փառաց և պատուոյ[6] բաղձացեալք և բարգաւաճանաց առժամանակէս, և գովութեան որ յետոյ։ Արդ որք սովորութեամբ զենուն, ոչ որպէս երևեցաւ՝ մեծ ինչ գործեն։ Փանգի յամեալ բազմաժամանակեայ սովորութիւնն[7], հաւասարէ բարում՝ անգամ բնու-

1. Մ. ասն. ընդրել։
2. Մ. հինինելով. յոյնն՝ ἀπνευστὶ θέοντα.
3. Մ. յեռն արկել։
4. Մ. նոցա։
5. Մ. ամենց է հարկէ։
6. Մ. գոգոնէ։
7. Մ. սովորութեանն զոքեալ հանդուրժ։

թեան, որպէս և զդժուարաժուժալին գիրաւ թե-
թեացուցանել՝ զառաւելութիւն ահագինցն գիր-
բացուցանիլ։ Իսկ այնք որք յաղագս երկիւղի մա-
ռուցանեն, գովութիւն ինչ ոչ է[1]։ Քանզի գովու-
թիւնն՝ կամաւոր ուղղութեան գործոց համարեալ
լինի. իսկ ակամայքն՝ ի վերայ այլոց նուիրեալ[2] կան
իրաց, կամ՝ ժամանակաց, կամ՝ պատահմանց, կամ
ի մարդկանէ հարկից։ Իսկ եթէ զի փառաց ցան-
կացեալ՝ զորդի կամ՝ զդուստր տացէ ի մահ, յի-
բաւի պարտաւեցի առաւել քան թէ գովեցի,
մեհուամբ սիրելեացն գնելով իւր պատիւ. զոր եթէ
ատացեալ էր՝ պարտէր ընդ որդւոցն փրկու-
թեան ի բաց ընկենուլ։ Արդ քննելի է թէ յումե-
քէ՞ ասիցելոցն յաղթահարեալ նա, հանդերձեալ
էր զենուլ զորդին. սովորութեան, կամ՝ պատուոյ,
կամ՝ երկիւղիւ։ Քանզի սովորութիւն ի մանկա-
պատանութեան[3], Բաբելոնէն և Միջագետք և քաղդէա-
ցւոց ազգն ոչ ընդունի. յորս մեռան և եկաց զյո-
լով ժամանակն. մինչ զի շարունակութեամբ յա-
ճախութեանց[4] գործեցելոցն բթագունիւք դժնդ-
դակացն երևութիւք վարիլ թուել։ Եւ սակայն և
ոչ երկիւղ ինչ էր ի մարդկանէ. քանզի և ոչ զատ-
ուածոյ նմա միայնում՝ զբանն ատացեալ գիտէր որ,
և ոչ միաբան[5] ազէտք ունէին՝ զորոյ պարտ և արժան
էր զբժշկութիւնն ապանումն լինել՝ առաքի-
նացն և փորձի մանկանն։ Այլ որպէսզի գովութիւ-
նքն զ'ի բազմացն՝ ի գործս դիմեալ յարձակեցաւ։
Եւ զի՞նչ գովութիւն յանապատի՝ ոչ ուրուք անդ
եղեալ, որ հանդերձեալ էր գովութիւն մատուցա-
նել. այլ և երկուց ծառայիցն հեռի նմին իրի[6]
բարձելոց թողելոց, զի մի շոշափեսս առնել և ցոյ-

1. Միան. ոչ ինչ է։
2. Մ. նուիրել։
3. Մ. զի մանկապատանութեան։
4. Մ. յաճախութիւնք։
5. Մ. միաբան։
6. Մ. ի նմին իրի։

ցրս թուեցի, վկայս ընդ իւր տանելով յաղագս որոց[1] բարեպաշտն լինէր։

Արդ ի վերայ անսանձ բերանոց և չարախաւսից՝ զուրս գնելով չափաւորս, խորհեցան[2] զիւրեանց բարատեաց չարակենութիւնն. և զառաքինութիւնն ասանց որ բարի կեանս կեցին և գեղեցիկ վարքովք վարեցան[3], մի՝ ծաղր արասցեն. զորս արժան էր և բարի գովութեամբ զարգարել ընդ մեզ։ Եւ զի արդարև էապէս գովելի և արժանապատիւ է գործն ի բազմից, գիւրին է գիտել։ Նախ առաջին՝ հաւանեալ[4] խակ տատուծոյ առ ամենեսին որք բարի խորհուրդս խորհին, նազելի և հոչակաւոր գոյ համարեալ. մնենաւանդ յախորժակութենէ կանաչ՝ ոչ ուրուք երբեք ի հրամայեցեալոցն արհամարհել առանց գժուարութեան և տրխմանաց, թէպէտ ի ցաւոց և ի վշաց լի եցէ հանեալ, և զհրամայեցեալ[5] պատգամն տատուծոյ ի վերայ արդելոյն՝ քաջութեամբ և պնդութեամբ և արութեամբ տարաւ. և ապա իբր ոչ գոյր սովորութիւն ի գաւառին, որպէս թէպէտ եցէ[6] առ ոմանս, մարդազնն լինել, որ շաբաթակութեամբ ստէպ բաղէպ զդժնդակութեան զերեցեալն սովորեաց ի բաց լուծանել։ Եւ հանգերձեալ էր նախ առաջին սկսանել՝ նորոգաւորնի և պլաձեի իրաց. որ ինձ թուի, ոչ զի կարէր համբերել, թէպէտ և յերկաթոյ զոգիսն կամ՝ յանդամանդէ էր կազմեալ[7]. քանզի ընդ բնութեանն, և որպէս ասաց[8], գործ է մարտընչել։ Բայց հարազատ և սիրելի որդի տատուծոյ զամ միայն, անդէն առ նմին ունէր և զանա գորովա-

1. Ա՛ռան. որոյ։
2. Ի լա. խոսեցան։ Մ. խորհեցան։
3. Մ. վարուս վարեցան.
4. Մ. հաւանել։
5. Մ. զերհրամայեալ։
6. Մ. որպէս ի թեպէտ։
7. Մ. յանդամանդ կազմեալ։
8. Մ. ասցէ։

նացն ի վերայ նորա զմտերմութեանն՝ հարազատ, առաւելեալ զողջախոհ տափանաւքն և սիրով որք անուամբ[1] եղեն. և կայր միւս ևս այլ բռնադոյն սէր, ոչն ըստ հաճակի, այլ ի ծերութեան ծնանել զմտնուկն։ Քանզի յարածնիցն[2] մոլեալ իմն կատաղին ի վերայ ծնաւղքն, կամ՝ վասն յերկար[3] փափաքելոյ ժամանակն և ծնունդն նոցա, և կամ՝ վասն ոչ այլ ևս յուսալ[4] լինել՝ բնութեանն անցանելոյ, առատաւար զտեղի կալելոյ իբրև ի վախճանական և ի վերջին սահման որոշման։ Քանզի ի բազմամանկութենէ՝ մի մատուցանել առատոյ իբրու զխայրիս ինչ որդւոց, հրաշափառագոյն ոչ ինչ է, ունելով ի վերայ այնոցիկ, որ կենդանիքն են, հեշտութիւնս ցանկութեան, ոչ փոքր ինչ մխիթարութիւն և ըստ փոխանաք ողբանաց ի սրտմտութենէ ի վերայ այնոր որ զենեալն եղև ի պատարագ։ Իսկ որ զմիայն[5] որ ունէր սիրելի և եւ, քան զամենայն բանի[6] մեծ գործեցեալ գործ[7], ոչ ինչ ընտանութեան մերձաւորութեան շնորհեալ, այլ ամենայնիւ միտեալ առ աստուածասիրութիւն հակառեաց. բայց սակայն այն[8] առաւել և գրեթէ միայն ի նմա գործեալ եղև։ Քանզի այլքն եթէ[9] յաղագս փրկութեան հայրենի գաւառացն և զաւրուց[10] մատուցին զենուլ գիւրեանցն, կամ՝ ի տան կան մեան, և կամ՝ ի հեռաստանէ ի բաց անցեալ կան ի բաղեացն. և կամ՝ թէ անդ դիպեցին՝ զերեսան ի բաց դարձուցանեն տեսանել ոչ համբերեալք, զի թէպէտ այլք ինչն

1. Միւսն. որ ոչ անուամբ։
2. Մ. յարիւնոցն՝ ըստ յոյն բն.։
3. Մ. յերկար ժամանակ փափաքելոյ, ժամանակ։
4. Մ. յուսալ։
5. Մ. ի միայն զոր ունէր։
6. Մ. բանի։
7. Մ. գործեալ է, ոչ։
8. Մ. նմանի այն։
9. Մ. զի եթէ։
10. Մ. զաւրաց։

որ զենուցուն. իսկ սա իրրու ինքն քահանայ՝ սկսա՝
նէր զենուգործութիւն ի վերայ որդւոյն ամենայնիւն
առաքինոյ՝ գորովագոյն հայր. և հանդերձեալ էր
թերևս և աբրնաւոր ողջակիզացն յաբրնեալմ զոր-
գին անդամ՝ անդամ՝ յաչեալ այսպէս. քանզի ոչ ինչ
էր սորա մնան որ թաւալեցաւ առ մեր ուն և էր ինչ
որ առ աստուածպաշտութիւն. այլ զրոլոր հոգին ի
ձեռն բոլորեցուն ընդ արժանաւորութեամբ սրբու-
թեան կարգեաց, սակաւ ինչ հոգ տարեալք՝ ազգա-
կանք արեանն Արդ զի՝նչ յասիցելոցս առ այլն հա-
սարակ է, և զի՝նչ ոչ առաւելեալ և զատ և քան զամե-
նայն բան ի վեր. մինչ զի զայն որ ոչ բնութեամբ
չարակնեալ և չարասէր՝ հիանալ և զարմանս հա-
մարել վասն յոյժ բարեպաշտութեանն նորա. ոչ
զամենայն ինչ զոր ինչ ասացի ի մեր միայն ար-
կեալ՝ այլ և զմի ինչ յամենեցունցն։ Քանզի բաւա-
կան էր և մեզ երեկոյթքն ի զուտնաքեայ[2] ինչ գա-
զափարի. բայց ոչ ինչ զուտնաքեայ գործ խնստա-
նոյն, զմեծութիւն ոգւոյն և զբարձրութիւն երևե-
ցուցանել. այլ սակայն ոչ ի վերայ ճառիդ և երևե-
լոյ ենթադրութեանդ՝ անցեալ կայ ճառեցեալքդ։
Քանզի զրնութիւն բարձոց զանցայտագոյնսն նմա-
նեցաւ երևեցուցանել. զոր որք զիմանալին յառաջ
քան զզգալին ընդունին և տեսանել կարեն՝ զի-
տուն առնել։ Եւ է այսպիսի. որ հանդերձեալն է
խոշխոշել, կոչի քաղդէարէն իսաչակ, և հայերէն
ծաղր. և ծաղր ոչ այն որ ըստ խաղոյն լինի մար-
մնոյն այժմ առեալ լինի առատաւոր. այլ այն որ
ըստ խորհրդոց մտացն խրախութիւնն և խնդու-
թիւնն է. զսա՝ որք միանգամ խնստասն են՝ պա-
տարագ մատուցանել ասել յիրաւի աստուծոյ, ա-
ռանաւ դէմ յանդիման կացուցեալ. զի խնդալ մի-
այն աստուծոյ ընտանեցոյն է։ Քանզի և տրամա-
գին է մարդկան ազգ, և կարաւ կամ հասելոց

1. Միան. գրել։
2. Մ. Ը գուշնուեալ։

չարեաց, կամ՝ յուսացելոց, կամ՝ պատրաստիցս ակամայց տրամել, և կամ ի վերայ հանդերձելոց խոտութեան և երկիւղի վրդովել։ Զի անարատ և անելկիւղ և ամենայն ախտի անկցորդ աստուծոյ բնութիւնն է, ամենեին երանութիւն և բարեբաստութիւն կրելով։ Իսկ զճշմարիտս զայս խոստովանութեամբ խոստովանեցելում բարուց յեղանակին. իբրու զի բարեբար և մարդասէր է աստուած, զչարակնութիւնն յինքենէ ի բաց հալածեալ, յիրաւի արժանապէս[1] փոխանակ շնորհէ ըզպարգևն[2], որչափ ունի զաւրութիւն որ առնուն։ Եւ գրեթէ զայս աւրինադրէ ասելով, զի խնդութեանն ազգ և խնդալն ոչ այլոյ ուրուք է, բայց իմ հաւրս բոլորեցուն աստացուած հաւատի գիտեմ, և ստանալոցս սակայն ոչ չարակնեմ ընդ արժանիս։ Եւ արժանաւոր ո՞ր իցէ, բայց եթէ այն որ ինձ և իմոց կամացս հետևեցի։ Քանզի սուտ ոչ միով իւիք երկնչել զէպ լիցի գնացելում զայս ճանապարհ, որ ախտից և չարութեանց է անգնալի. իսկ բարեկրութեանց և առաքինութեանց ունի գնաց։

Արդ մի՝ որ կարծեսցէ զսեռն և զանապակ և զանխառն տրամութեան խնդութիւն, յերկնէ իջանել յերկիր, այլ խառնուածոյն յերկոցունց եղելոյ՝ լաւին։ Զոր աւրինակ և լոյս՝ քանզի յերկնի անապակ սեռն և անխառն խաւարի է, իսկ ընդ լուսնովրս[3] աւդով մթագունիւ խառնեալ երևի լոյսն։ Յաղագս այսորիկ զպատճառսն թուի ինձ, և նախ առաջին ծիծաղեալ առաքինութեանն մականուն Սառա, առ այն որ եհարցն ուրախ լինել ի ծաղուէն, երկուցեալ թէ մի՝ արդեւք գուցէ խնդալն ոչ ուրուք եղեալ եղելոյ, բայց միայն աստուծոյ է առանձինն իւր։ Վասն որոյ քաջալերելով զնա ասէ.

1. Միւսն. -ջ-ն-ղ-։
2. Մ. Ա ջդ-ջ-ն-։
3. Մ. -ելոյ եղելոյ։
4. Մ. ընդ լ-ն-ով-։

բունեան բանն թէ[1] մի երկնչիր՝ արդարև էապէս ծիծաղեցար, և զոյ քեզ կցորդութիւն խնդութեան։ Քանզի ոչ եթող հայրն զմարդկան ազգ տրամութեամբք և ցաւովք և ծանրութեամբք անբժշկանաւք[2] կրիլ. բայց խառնեաց և ի լաւագոյն բնութենէ, պարզ լինել երբեք և ջեր, խաղաղացուցանել զոգին իրաւացուցեալ։ Իսկ իմաստնոց և գաւելի ժամանակ կենացն խնդալ և ուրախ լինել և բերկրել յաշխարհիս տեսութեանց կամեցաւ։

Այրքան է յաղագս առնս բարեպաշտութեան. զի թէպէտև բազում այլոց իրաց զոյ ի նմա առատութիւն մեծութեան՝ աւճառի ասասցի[3]. բայց քննելի է և զառ մարդիկն[4] նորա ընդունելութիւն։ Քանզի նորին բնութեան է բարեպաշտն զոլ և մարդասէր. և առ նմին իրս երկոքին, և արժանաւորութիւն առ առատուած, և արդարութիւն առ մարդիկ տեսանի։ Արդ զամենայն զգործեցեալս շատ կարի է և երկայն բանիւք անցանել. բայց երկուց կամ երից՝ ոչ է անտեղի և վայրապար յիշատակ առնել։ Բազմարծաթ և յոքնոսկի ի մէջ շատից էր, և պատճառաց բազում խաչանց ունէր հաւատս և անդեայս. և ի մէջ գաւառականացն և ինքնագաւառեայց[5] այնոցիկ որ բաւական ստացուածս ստացեալ էին՝ առաւելեալ էր ամենայնիւ, և մեծատուն եղեալ քան ըստ նշդեհութեան. և ոչ յումեքէ ամենեին ըստգտեալ եղև յընդունողաց. այլ յամենեցունց ի փորձ եկելոց՝ գովութիւն ընկալեալ կատարեաց զվարսն։ Այլ՝ եթէ ոք, որպէս սիրէ և սովորութիւն է, բազում անգամ ի ծառայից և յարբանեկաց, և յայնցանէ որք ի միասին շրջին՝ հեռ հակառակութիւն թշնամութիւն[6] առ այլս եղև,

1. Միան. բանն է. Դ։
2. Մ. -ՆԲՃՇԿԿՆ--։
3. Մ. -- Ցասցի։ Յոյնն՝ λελέχθω.
4. Մ. Զ-- Հարցեն։
5. Մ. ԻՆԿՆ-Գ------Ց։
6. Մ. ԹՇՆ-Հ-ԹՒՆ։

զայս ջանայր լուծանել[1] և խաղաղացուցանել հանդարտիկ հեզութեամբ. զծանրագոյն բարուք զհակառակականն[2] և զխռովուս, և զսահակութիւնսն զամենայն ի դուրս հանեալ, և յոգւոյն ի բաց վարեալ հալածէր։ Եւ զբանչելի ինչ ոչ էր եթէ[3] առ աւտարսն այսպիսի էր սա, որք ծանրագոյն և հրդուրագոյն ձեռամբ միաբանեալ ի միասին առնուին արդեւք վրէժ. զի թէ նախ ձեռն[4] արարեալ էր նորա անիրաւ գործոց, յորժամ[5] առ ազգայինսն որ ընտանիքն էին, որք բարուք կամացն աւտարացան, զանազգասան և զմիայնան, և կարի յոյժ որ զնուաստագոյն և զկրսերագոյն վայրն[6] առացեալ ունէին, չափաւորս և նուազս խորհէր. խոնարհեցուցանելով զինքն կամաւք, յորս աւելի զրկել և զլանալն կարաւղ էր։

Քանզի էր որպա եղբաւրորդի ի գաւառէն յորժամ գնացեալ փոխէր[7] ընդ նմա եղեալ, անհասատատ, կեղակարծելի հակառրելով այսր և անդր, և էր երբեմն՝ ողբելով և ողորկելով սիրելի համբուրիւք ողջունի, և էր երբեք զի ընդվզէր և ըմբոստանկէր, վասն բարուց անհարթութեան և խռովութեան։ Վասն որոյ և ծառայքն նմա զժուարահաճոյք և խռովարարք էին, համեստացուցիչ և ըզդաստացուցիչ զոր ոչ ունելով. և մանաւանդ հովուականն՝ հեռի ուրեմն ի տեառնէն անջատեալք։ Եւ անազատութիւն գործելով ի կամակորութենէ ինքնահաճութեամբ, միշտ վիճէին ընդ հովուապետսն և ընդ հաւատերէցսն խաչանց իմաստնոյն, որք բազում ինչ տեղի տային վասն տեառնն քաղցրութեան և հեզութեան. յորմէ ի հպարտութիւն աճեցեալք և ի լիրբ

1. Միւսն. խ-ֆ-նել։
2. Մ. ընդ-կ-ակ-ն։
3. Մ. զէ թէ։
4. Մ. ն-խ-ն-ն։
5. Մ. յորմ-մ էր —։
6. Մ. վ-ր-ն։
7. Մ. ֆ-ն-ֆ-ն էր ընդ —։

յանդ ըղնութիւն՝ կատարելին մոլելով, ահա և զան-
հաշտականն յինքեանս արծարծելով զքէն, մինչ՝
հարկեցին զզրկեալսն ի վրէժխնդրութիւնն յարձա-
կել։ Եւ իբրև սատիկ կռիւ ի մէջ եղև, իբրև լուա-
խմնասունն զդիմադարձութիւնն, և տեսեալ զի
յաղթագոյն և ուժգնագոյն իւր կողմն էր բազմու-
թեամբ և զաւրութեամբ, զհակառակութիւնն ոչ
եւ թոյլ մինչև ի յաղթութիւն գալ, զի մի՛ արբա-
մեցուսցէ զեղբաւրորդին ի վերայ պարտութեանց
իւրոց ծառայիցն։ Այլ իբրև ի միջատահմանի էանց
եկաց, հաշտ և համբոյր բանիւ զհակառակեալսն
հաշտեցոյց ոչ առ այն ժամանակ միայն, այլ և առ
յապա ժամանակ։ Քանզի գիտաց եթէ ընդ միմեանս
բնակելով և ի միում՝ վայրի շրջելով քինալով ընդ
միմեանս գոռացին, խռովութիւնս միշտ և պատե-
բազմունս ի վերայ միմեանց յարուցանելով։ Զի
մի՛ այս լիցի, ուղղութեամբ զոլ՝ հրաժարել
ի միասին բնակութենէ, և զոնակցութիւնն ի
բաց քակել։ Եւ կոչեցեալ առ իւր զեղբաւրորդին,
յընտիր առնէ նմա ի լաւագունի գաւառին, խրն-
դութեամբ խոստովանեալ զոր ընտրեսցէ մնան՝
տեղի տալ և թողուլ նմա, զի շահեսցի մեծ աւգուտ
զխաղաղութիւն։ Եւ ասկայն՝ այլ որ տկարագունի
տեղի տացէ քան զոր ոք[2] և իցէ հզաւրագոյն. և կամ՝
ո՞ ոք յաղթել կարացեալ՝ կամեսցի ի պարտութիւն
մնանել՝ ոչ ի կիր առնելով զզաւրութիւնն, բայց մի-
այնսա։ Զառաքինութիւնն և զլաւն՝ ոչ միայն՝[3] ի զաւ-
րութեան և յաւելասացութեան եղեալ, այլ յան-
խեռ և յանհակառակ կեանս և ի խաղաղականի, ա-
ռաւել քան զամենեսին թուեցաւ զոլ արանչելագոյն։
Արդ վասն զի իբրև ի վերայ մարդոյ բանս ներբողա-
կան ասացեալ եղև, և զեկուցանեն և յեղանակք ոգ-
ւոյ, փոխել ածել ի ճառիցն յիմնաբանն, յարմարա-

1. Միան. ՄՆԼ։
2. Մ. +ՆՆ ՀՐ ՈՒ։
3. Մ. չունի զբառս ՄՆՆ։

կան է, և արժանի է զոսա քննել։ Բաղումք են ի բաղում պատճառաց բան ամենագան տեսակաց յիրերաց բակացեալս[1], բայց երկուք որ այժմ հանդերձեալ են ընտրութիւն առնուլ յեղանակք, որոց մին երիցագոյն և միւսն կրսերագոյն։ Քանզի երիցագոյն և իշխանականագոյն է խոհականութիւն և ողջախոհութիւն և արդարութիւն և արութիւն. և ամենայն որ ինչ միանգամ յառաքինութեան և բան առաքինութեան[2] գործի. և կրսերագոյն է՝ մեծութիւն և փառք և իշխանութիւն և ազատութիւն. ոչ ճշմարիտն՝ այլ այն զոր բազումքն կարծեն, և որքան միանգամ այլ ինչ յետ հոգեկանին երկրորդ՝ մարմնական դասու եհաս։

Արդ յեղանակացս այսոցիկ երկարանչիւր զ ունի իրրև հաւաս և անդեայս իմն։ Լ. ի սոցանէ որ արտաքնոցն բաղձացեալ է, արծաթ, ոսկի, հանդերձս, ամենայն ինչ որ միանգամ մեծանալոյ նիւթ է և կազմածք. և դարձեալ զէնք և մեքենայք, պատերազմիկ նաւք. ձիական և հետևակ և նաւական զաւրութիւն, զառ ի յիշխանութիւն պատճառս՝ յորոց ստացանի հաստատապէս ունել և իշխել։ Իսկ որ լաւարարութեանն է տարփաւղ, զառ ըստ իւրաքանչիւրսն առաքինութեանն կարծիս, և զբան իմաստասիրութեանն տեսութիւնս։ Լ. վերակացուք և խնամածուք սոցա երկարանչիւր ուրուք են ունակք իրր պաճարաց հոգիւք՝ արտաքնոցքն ստացուածասէրքն և փառասէրք, և որ փափաքեանն զաւրագրեալ լինել, և որք միանգամ զայն որ ի բազմութեանն զհարատութիւնն սիրեն։

Իսկ այնոցիկ որ յոգին է, որք միանգամ յարդարիչք և շարեսէրք և առաքինասէրք են՝ ոչ զաւտարտին յառաջ քան զհարազատս, այլ զհարազատսն յառաջ քան զաւտարտին բարիս կամին և ընտրեն. և լինի իրրև բնական իմն սոցա կռիւ մար-

1. Միւսն. [illegible]. որպէս ունի և յոյն բնագիրն։
2. Մ. [illegible]։

ոչ , ոչ ինչ գիտելով և ճանաչելով զնոյնս միմեանց, այլ վիճելով և հակառակելով միշտ յաղագս իրի որ ըմբռնեալ է ի կեանս աշխարհիս։ Եւ այս է գաստատան ընտրութեան առ ճշմարտութիւնն բարեաց։ Քանզի մինչդեռ պատերազմ կրէր հոգիս՝ և խռովութեամբս այսու լի էր, չէ ևս յղկեալ մաքրեալ ամենևին, այլ տակաւին ևս սխալից և հիւանդութեանց բարեբախտիկ եղելոց քան առողջական բանից. իսկ յորմէ հետէ սկսաւ հզաւրագոյն լինել և ուժիւ հարստագոյն, զհամբարտակ ընդդիմանկանաց կարծեաց քակել թեակոխեալ, և խորհրդովք սատակութեան ապլցեալ, զայն որ ընդ արտաքին նիւթոյն արմատացեալ է[2] յեղանակ՝ յինքենէ անջատեալ որոշէ և ի բաց քեցէ, և իբրև ընդ մարդոյ խաւսելով ասէ. անհնար է ի միասին բնակութիւն ունել ինձ և քեզ, և հաշտ և հաւան լինել տարփողի խմաստութեան և առաքինութեան. երթ, դնա ի բաց փոխեցիր, մեկուսի ի հեռաստան ուրեք ի բաց անջատեցիր. ոչ մի ինչ հաստատութիւն միաբանութեան ընդ իս ոչ ունելով, այլ և ոչ ունոցել[3] կարացեալ. քանզի որ միանգամ՝ կարծէ աջոյ կողմանն, զայսոսիկ կարծէ նա ահեկեայս։ և որք միանգամ՝ հակառակ և ընդդէմ՝ ձախային ինչ է, այսոքիկ նմա աջոյ կողմանն համարեալք թուին։

Արդ ոչ խաղաղական և արդարասէր միայն էր խմաստունն, այլ և արի. և ուր պարտ և արժան էր՝ պատերազմուղ. ոչ ի պատերազմ տարոյ տակս՝ քանզի ոչ դժնեայ որ հեռ[4] հակառակաւղ. այլ յաղագս հաստատուն առ հանդերձեալն խաղաղութեան, զոր հակառակորդ թշնամիքն քակել կամէին, և հաւատագոյն հաւատ[5] գործեցեալքն մա-

1. Միւսն. հոգին։
2. Մ. արմատեալ։
3. Մ. ունեցեալ. յոյնն՝ ὀχεῖν.
4. Մ. յահեկեայս։
5. Մ. ցոյնն՝ ὧν կամ ἣν, եր։
6. Մ. հաստատ։

տուցանեն։ Զատ ի յարևելս մնան աշխարհիս՝ չորք մեծամեծ թագաւորք վիճակեցան, որոց հնագանդեալ էին ազգինք արևմտեայք[1], որք արտաքոյ և որք ի ներքոյ Եւփրատեայ էին. և այլքն ամենայն կացին մնացին անխեռք և առանց խռովութեան, հաւանեալք թագաւորացն հրամանաց, և զտարեւորական զհարկս առանց բարբելոյ հարկէին։ Բայց միայն սողոմմայեցւոց գաւառն՝ յառաջ քան զրոցակէզն լինել լուծանել և քակտել սկսաւ զիսազգութիւնն, ապրստամբութիւն ի բազում ժամանակաց ընդ միտ ածեալ։ Քանզի իբրու կարի յոյժ բարեբաստիկ էր, հինգ թագաւորք ունէին և զբազաքն և զերկիրն վիճակ ժառանգութեան, որ մեծ ոչ էր, բայց քաջահասակ[2] և քաջածառ և պտղովք լի։ Քանզի զոր այլոցն մեծութիւնն զայս առաքինութիւնն արգաւանդն լինելոյ՝ սողոմմայեցւոց մատուցանէր, ուստի և բազում տափաւոր ունէր իշխանս, որք ընդ գեղեցկութիւնն սորա հիացեալք էին։ Որքա զայլ ժամանակն զհրամայեալ զհարկան հատուցանէին հարկահանացն ի սահմանածոցն, զհզաւրագոյնսն որոց էին ի վերայ իշխանք պատուէին՝ միանգամայն և երկնչէին. և իբր յագեցան առլցան ի բարեացն, և որպէս բնաւորել սովորեալ է՝ յագեցութիւն թշնամանս և անառակութիւն ծնաւ. աւելի քան զզաւրութիւնն իւրեանց խորհեալ ըմբոստացին և ընդվզին նախ առաջին, և ապա իբր չարածառայք[3]՝ տերանցն ի վերայ արձակին[4] խռովութեամբ, ստամբակութեան հաւատացեալ[5] քան զաւրութեան։ Իսկ նոցա զիւրեանց ազատութիւնն ընդ միտ ածեալ, և զինեալք և կազմեալք հրզաւր ձեռամբ, կարի մեծ քամահանաւք ի վերայ յարձակէին, նոյն ժամայն առհասարակ յաղթե-

1. Ի յա. արևելեայս, որպէս ունի և միւս օրինակն։
2. Միւսն. բարձրահասակ։
3. Մ. չար ծառայք, ըստ յունին։
4. Մ. յարձակին։
5. Ի յա. հաստատեալ։

լով ընդ առաքեալս[1] հարկանէին, և ընդ միմեանս խառնեալք, զոմանս ի փախուստս նոյն ժամայն ցրուեալ քայքայեցին։ Իսկ որք ընդդէմն[2] դարձան՝ զամենայն արբուն մանկութեանն կոտորեալ ապականեցին. և զերեսաց բազում ամբոխ առին գնացին, հանդերձ այլով աւարաւն բաժանեալ բաշխէին։ Յարան ևս ընդ այնմ և զիմնասանոյն զեղբաւրորդին, ի մի ի հընդարաղարացն[3] ոչ յառաջ բազում ժամանակաց[4] փոխեալ բնակեցեալ. այս զեկուցեալ եղև յումեմնէ՝ ի պարտութենէն ապրեցելոյ. անհնարին արտմեցոյց զնա, և ոչ ևս հանդարտել կարէր արտմութեամբն զդաժեալ. և ի վերայ կենդանւոյ թշուառացելոյ սուգ առնուլ զժուարագոյն՝ քան մեռեալն լսել. և վախճան որպէս ինքն[5] հաւատարեալ յայտնէ անուն ըստ կենաց աշխարհիս ամենեցուն, և մանաւանդ զչարեաց գիտէր զվախճան. և բազումս յակամայց ի վերայ յարձակեալ անցեալ նստին կենդանեացն, և ի հալածել և զհետ երթալ[7] պատրաստեալ առ ի փրկել զեղբաւրորդին, յանհնարս մնանէր, վասն կարաւորութեան զաւրու։ Իբրու զի աւտար էր և պանդուխտ, և ոչ ուրուք իշխեցեալ անյաղթ և անպարտելի զաւրութեանցն այսքան թագաւորացն, և արդի ևս յաղթողացն ընդդիմանալ. նորոգ իմն եղիտ զաւրավիդն աւգնականութիւն, քանզի պաճարանք և հանդամանք յանհնարից[8], արդարոց և մարդասիրաց գործոց բաղձացի զի գտանել։

Քանզի գումարեալ զընտրեցին ծառայսն, և արծաթագնացն հրամանս առեալ ի տան մնալ, քանզի

1. Մ. ընդ -ր-ը։
2. Մ. ընդդեմ։
3. Մ. ի հինգ տարացն։
4. Մ. ժամանակաց։
5. Մ. -գրելոյն։
6. Մ. ինքն ի հատուցեալ։
7. Մ. երթալ։
8. Մ. յանհնարին։

երկնչէր ի նոցանէ՝ ձեռն տալ թշնամւոյն, զընտ-
ծինեան գումարէ, և յաւրինեալ ի հարիւրապետս,
երիւր ի վերայ յարձակէր դասուր· ոչ ի սոսա յա-
սացեալ, քանզի դուշնաքեայ մնան էր ի թագաւո-
րացն, այլ ի զաւրավիգն պաշտպան աւգնականին
և յառաջամարտչի[1] արդարոյն ասասուծոյ. և ճե-
պեալ փութացեալ լինէր, ոչ ինչ յարագութենէ թո-
ղեալ, մինչ զդուշաբար ի դէպ հայեցեալ՝ գիշերի
ի վերայ անկանէր թշնամեացն, այն ինչ զրնթրա[2]
կերեալ էր, և ի քուն դարձեալ էին. և զայնոսիկ
զորս յանկողինսն եգիտ՝ փոդոտէր· իսկ զընդդէմ
դարձեալսն առ հասարակ սատակէր, և ամենեցուն
քաջապէս յաղթէր քաջասրտութեամբ և արա-
թեամբ հոգւոյն առաւել քան կազմութեամբք պա-
տրաստութեանցն. և ոչ յառաջագոյն թոյլ տայր,
մինչև զհակառակամարտս զաւրութիւնն թագաւո-
րացն զամենեսին առ հասարակ սատակեալ առա-
ջոյ բանակին պատասս արկանէր[3]· և զեղբաւրոր-
դին հանեալ ածէր պայծառ և երևելի յաղթու-
թեամբ, զձին և զայլոցն զրաղմութիւն պաճարա-
ցրն և զանթիւ զրաղմութիւն աւարին առեալ։ Զոր
տեսեալ մեծն քահանայ, մեծին ասասուծոյ, զի
դարձեալ գայր յաղթող, ամբողջ ինքն և ամբողջ
իւր զաւրութիւնն. քանզի և ոչ զմի ոք ոչ որք
էին ընդ նմա էկորոյս[4], հիացեալ ընդ մեծութիւն
գործոյն, և որպէս դէպ է՝ ընդ միտ ածեալ զի ոչ
առանց ասասուածային ակնածութեանն և աւգնա-
կանութեան վճարեցաւ, զձեռս ի վեր համբար-
ձեալ յերկինս աղաւթիւք պատուէ զնա, և զյաղ-
թութեան պատարագս ի վերայ մատուցանէ· և
զամենեսին որք աւգնական եղեն մարտին ընդ նը-
մա պայծառապէս, ընկալեալ խնդութեամբ և բեր-
կրեալ ընդ նոսա, իբրև ընդ իւր գործ խնդացեալ։

1. Մ. յառաջամարտչի։
2. Մ. ընթրի-
3. Մ. գոգոգ արկանէր, ըստ յոյն բն.։
4. Մ. ուղղէ զնախ գրեալն՝ եկորոյս ի կորոյս։

եւ էր իսկ արդարեւ իւր գործն. քանզի հասարակք և միաբանք ըստ առակեցեալումն՝ սիրելեացքն, և ես կարի առաւել՝ բարեացքն որոց հոգք խնամոց է հաճոյ լինել աստուծոյ։

Արդ զայսոսիկ ճառք գրոց ունին։ Իսկ զանմարմինն՝ որ միանգամ՝ մերկ զիրան տեսանել կարեն, հոգւով առաւել քան մարմնով կելով, ասացեն զիմաստասիրացն զչորսն՝ զոլ զ՝ի մեզս չորից ախտից զգաւրութիւնս, հեշտ ցանկութեան, և ցանկութեան, երկիւղի, տրամութեան։ Իսկ զհինգսն ըստ հանդիսական զգայութիւնս՝ զտեսաւորութիւն, զլսաւորութիւն, զճաշակելութիւն, զհոտառելութիւն, զհպելութիւն։ Քանզի աւրինակ իմն թագաւորեն և իշխեն մեզ, կախեալք և բուռն հարեալք զգաւրութենէն. այլ ոչ նմանապէս։ Քանզի հլուք և ընդ ձեռամբ անկեալք հինգքն՝ չորիցն են. և հարկս նոցա և բաժինս աղցաւորս բերեալ մատուցանեն ի բնութենէն որոշեցեալս և զատուցեալս։ Քանզի յորոց տեսցուք, կամ՝ լուիցուք, կամ՝ հոտառեցուք, կամ՝ ճաշակեցուք, կամ՝ հպեցուք, տրամութիւնք և հեշտ ցանկութիւնք և երկիւղք և ցանկութիւնք բազկանան. ոչ ուրուք ախտիցն՝ ինքն ըստ ինքեան կարացելոյ՝ զաւրել, եթէ ոչ պաշտպանութիւն աւգնականութեան ընկալեալ լինէր ի ձեռն զգայութեանցն կազմածոց։ Քանզի սոքա են նոցա զաւրութիւնք. կամ՝ ի ձեռն գունոց, կամ՝ ձեւոց, կամ՝ ձայնի որ ի ձեռն ասելոյն լինի, կամ՝ լսելոյ, կամ՝ ի ձեռն հոտոց[2], կամ՝ ի ձեռն գոլոշեաց, կամ՝ ի ձեռն կակղոյն և խստից, և խոշորչիցն[3] և ողորկից, կամ՝ ջերմից և ցրտից։ Քանզի ամենեքին այսորիկ ի ձեռն զգայութեանց իւրաքանչիւր ումեք ախտիցն մատուցեալ լինի. և ցորքան ասացեալ հարկքս[4] առեալ լինին, կայ մեայ

1. Միան. խ-ր-ջ-ա։
2. Մ. խ-մ հ-ռ-ռ-ի։
3. Մ. խ-շ-ր-ի-ն. որպէս և յոյնն բն. τραχύς. լատինն՝ asper.
4. Մ. հ-ր-ի։

թագաւորացն հաստատուն զաւրավիճն աւգնականութիւնն. իսկ յորժամ՝ ոչ ևս նմանապէս մնասուցանեն զհարկն, հեռ, հակառակութիւն անդէն վաղվաղակի և պատերազմունք լինին։ Եւ այս պատահել զէպ եղև յորժամ՝ ի վերայ հասցէ անհագին ծերութիւնն, յորժամ՝ ախտիցն ոչ ինչ է որ ակարագոյն լինի։ Բայց ինձ թուի թէ և քան զհինգ[1] զաւրութիւնն՝ զաւրեղագոյն ևս. զի ընդ ազատս երեսք՝ և ականջք զժուարալուրք, և խրատանչիւր զայլոցն ևս զգայութեանց բրթագոյն, ոչ ևս սուղել ճշմարտապէսն[2] նմանաւրէն զիւրաքանչիւրն կազմ կարացեալ ուրուք ի նոցանէն. և ոչ զոյգ և հաւասար ըստ կազմութեանն[3] կատարել։ Այլ վայելչաբար ուրեմն, և միանգամայն կատեալք և ակարացեալք ամենայն իրաւք, և խոնարհեալք և ընկողմանեալք, ինքնին ի հակառակամարտ ախտիցն գլեալք տապալին։ Բայց բնականագոյն է այն ասացեալ, զ՝ի հինգ թագաւորացն երկուք՝ ի ջրհորս անկանին, և երկքն ի փախուստ դիմեցին։ Քանզի հպելութիւն և ճաշակաւորութիւն մինչ ի խորագոյն մարմնոյ հասանին, փորոտեացն մատուցանելով զիւրն առ ի անաւրէնութիւնն. իսկ աչք և ականջք և հոտառութիւնք, է՛ զի արտաքոյ գնան շրջին ի բաց փախչելով ի ծառայութենէ մարմնոյն, որովք ամենեքումբք յոգալով իմաստունքն։ Վասն զի եռես և էգիտաց[4] զաւգնական ըգմարտակիցսն և զսիրելիս յառաջ ասակաւ մի՝ հիւանդացեալս. և պատերազմ՝ փոխանակ խաղաղութեան ինն թագաւորութեանցն եղեալ, առ հինգսն՝ չորիցն յաղագս կալուածոց իշխանութեան հակառակեցելոց, յանկարծաւրէն ապաս արարեալ անկաւ ի վերայ, առատարար շնորհելով ժողովրդա-

1. Յոյնն. հինգ։
2. Միւսն. ճշգրտագոյն։
3. Մ. ըստ բազմութեանն։
4. Մ. կիսուր։
5. Մ. գիտաց։

կալ իշխանութիւն. զաւագոյնսն քաղաքավարութեանց՝ փոխանակ գոռոզութեանց և հարատաշարութեանց յոգւոյն յարիւել, և զքաջալերութիւն և զարգարութիւնն փոխանակ տարաբերնութեան և անիրաւութեան, որք ցայժմանն անցեալ ունէին և չահէին. և է ոչ ստեղծուած առասպելի ասացեալք, այլ իրաց անսրբագոյնն, ի մեզ իսկ յանձինս տեսանելով. Քանզի բազում՝ անգամ՝ միաբանութիւն առ ասսս հատատաուն պահեն, զգայութիւն մնասուցանելով սոցա զզգալիսն. և բազում՝ անգամ՝ զէլ լինի զի խեռեն և ատամբակեն. ոչ եւ արժանիս համարին զնոյնս հարկս հարկանել. կամ՝ ոչ կարացեալք, կամ՝ վասն յարգոլոյն ողջախոհացուցիչն բանի. որ իբրև ասցէ զիւր զգաստացինութիւնն, զառաքինութիւնն, և զսոցայցն ուրեմն հատատաունս և տեսուածս, զարութիւնն անյաղթելի, ուժգին զարութեամբ բուռն հարեալ ունի զիշխանութիւն. քանզի ապականացուցց ընդ անապականի բնակել չէ աւրէն։ Արդ ինն հարբուսուիւնք՝ բան չորից ախտիցն և հնգից զդայութեանցն ապականացուք, և ապականութեան են պատճառք. իսկ սա իբրև հանգրուանս նեաւց վարելով առաքինութեամբք, սուրբ բան և էապէս աստուածային, և ի թուի գասեալ տասնեկին յամենակատարի, ի հակառակութիւն մարտի եկեալ ուժգնագոյն զարութեամբ՝ որ բան աստուծոյ է վարեցեալ, բնութեամբ յայմէ ասիցերոց հարբուսութեանցն։

Զնոսոյ ժամանակի մեռանի սորա կինն, կամակ և սրատաճաչ և ամենայնիւ առաքինի, բազում՝ ինչ ցոյցս հիւրասիրութեան յանձին բերելով. զընդառանն յամենայն յազգատոհմէն մեկուսանալ, զ'ի տանէն անկասկած և անդերկուանալի գաղտի բընակափոխութեանն, զառաքինութիւնն ստէպ ստէպ և զմիմանց վերայ թափառանս մոքրանացն, զբան սոփոյն կարատութիւնս։ Քանզի միշտ և հանապազորդ ամենայն ուրեք յար էր, ոչ մի տե-

զի կամ՝ ժամանակ ի բաց կացեալ։ Քանզի հաստատակորդ հաւատարորդ էապէս կենացն, և բան կենցաղոյս իրաց զուգապէս և հանդիսաբար եւ ենեցուցեալ[1], կցորդութիւն ունել միանգամայն բարեացն և չարեացն։ Քանզի ոչ որպէս ամենք՝ ի տառապական չարեաց թշուառութենէն խոյս տուեալ փախչէր, և զյաջողական բարեաւքն յողոյր, այլ զՅերկոսիս վիճակն՝ որպէս անկ և յարմար էր և վայել էր ամուսնի՝ ամենայն յաժարութեամբ յանձն առնոյր։ Բազում ունելով ներբողեանս զմարդոյս իրս[2] անցանել բանիւ, զանց արարեալ։ բայց միայն մեզ յիշատակ գործեցեալ ասացիս, որ եղիցի և այլոցն հաստատուն[3] հաւատ. անպտուղ և անսեր և ամուլ երով, երկուցեալ զի մի՝ գուցէ ամենեին անապատ և ամայի ի զատակէ ատուածատէր տունն մնացէ, եկեալ առ այրն ասէ զայս ինչ. Ահա բազում ժամանակս ի միասին կեաւք հաճոյ լինելով միմեանց. իսկ յաղագս որոյ և մեք ի մի վայր եկաք, և բնութիւն առն և կնոջ յարմարեաց հաստատութիւն, որդւոց ծնունդ ոչ գոյ. այլ և ոչ յեռոյ յինէն, առանցելոյ զհատակաւ ծնընդեան յուսացեալ լինի։ Արդ մի՝ և դու վայելեր յիմմէ անպտղութենէս. և մի՝ յաղագս առ իս մոներմութեան, իբրու դու կարաւղ ես զոլ հայր, արդեաւնիր։ Քանզի խանտանք[4] նախանձու ոչ եղիցի ինձ առ այլ կին[5], զոր ոչ յաղագս անասուն ցանկութեան ածես, այլ զաւրէն բնութեան ընլով հարկաւոր. յաղագս որոյ[6] ոչ ինչ յապաղեցից իբրու զհարան տալ, իբրու թէ զպակասն յիս հանդեր-

1. Միւսն. էրեցուցեալ, բան յունին։
2. Մ. զ՚ուրոյն։
3. Մ. հաստատ։
4. Մ. խանդանք։
5. Մ. եղիցի ինձ զոր այլ կին։
6. Մ. որոց։

ձեռն ինալ. և՝ զի թէ դիպեսցին յաղագս զատակի որդւոցն իդձ՝ քեզ եղիցին եղեալքն հարազատ, բայց դրութեամբ ամենայն իրաւք իմ։ Իսկ առ անկարծութիւն խնամանաց նախանձու, եթէ կամիս, զիմ գնաժիչսս տար արա[2] որ մերձեալս ազատիցէ, բայց ազատ և ազատաբարոյ է կամաւք. զորոյ ի բազում ժամանակաց գիտրձ առի և զքննութիւն՝ յաւրէ յորմէ հետէ նախ առաջին յիմ տունս մուծաւ. որ ի զատակէ եղիպացի է, բայց բարուք յաւժարութեան երբայեցի։ Զի է մեզ ստացուածք բազում և առատ մեծութիւն, ոչ իբրև պանդխատաց. քանզի ահա և զրուն գաւառականաքս, որք յոյժ պայծառ և բարեբաստիկ են, զանցուցանեմք. իսկ ժառանգաւոր ոչ զք երեւի և փոխանորդ[3]. և սակայն գոլ հնար է եթէ իմոցս հաւանեսցիս խրատուց։

Իսկ նորա զարմացեալ ընդ կնոջն ընդ այն որ ևս քան զևս առաւել միչտ նորոգէր պարսիրութիւնն. և այն որ յաղագս հանգերձելոցն հարցաքննական և նախախնամական, առնէ զ'ի ներմանէ փորձելեցան մինչ որդի առնել. մինչ զի այնք որք հաստատագոյնն[4] պատմեն, ասեն թէ մինչ ցյղի միայն լինել. և յղի եղելոյ՝ ոչ յերկար, ի բաց կալ վասն բնական արգելաւորութեան. և զպատուն զոր հատոյց անդրէն ամուսնին։ Արդ[5] լինի որդի յաղախնոյն, անդէն վազվազակի յայնժամ. և լինի և երկայն ժամանակաւք յետոյ հարազատ՝ յուսահատելոցն. զի միմեանց ծնուն, մրցանակ բարեբաստիկեան քան զամենայն յոյս կատարելագոյն պարգևասիրին առատուծոյ տուեալ։

Այսքանս չատ ցոյցս է զկնոջն ասել. բայց առ-

1. Միան. յունի է։
2. Բոյն՝ θεράπαιναν ἀγάγου.
3. Մ. է ։
4. Մ. հաստատագոյնն։
5. Մ. -նով։

լի են ներբողեանք խմաստնոյն, զոր սակաւ մի յառաջագոյն է ինչ զոր պատմեցի։ Բայց ասացից և զյաղագս վախճանի կնոջն, զոր գործ ոչ է արժան լուռ լինել։ Քանզի այսպիսի ի բաց ընկեցեալ՝ կցորդ և հաւասարորդ կենացն ամենայն՝ որպէս և եցոյց բանն. և զեկուցանեն տէրունական պատգամքն իսկ, տրամութեան։ Ծղիս ի վեր մարդեալ, և ի վերայ ոգւոցն յարձակեալ ի մարտ, զաւրութեամբ[2] ըմբշի բուռն հարեալ՝ արգել, և զաւրացոյց և քաջալերեաց. կարի քաջ յոյժ զհակառակամարտս բնութեան սխտիցն ըզխորհուրդս, որով խորհրդակցաւ ամենայն՝ կենաւքն վարեցեալ։ Յայնժամ՝ առաւել ևս արժանի համարեցաւ հաւանել՝ որ զյաւագոյնսն խրատս մատուցանէր և զաւդտակարս. և էր ընդ այս՝ ոչ կարի աւելի քան զչափն դժուարել իրրև ի վերայ նորոգաձևի[4] և անեղծում՝ ազգաի թշուառութեան. և ոչ անախտ կալ մնալ, իրրու թէ ոչ ինչ ցաւագին և տրամութեան արժանի անցք անցին. բայց զմիջինն յառաջ քան զծայրսն ընտրեալ չափակիր լի՝ ել փորձեցեալ, բնութեանն զիւր պարտիսն ի բաց առեալ ոչ յոյժ դժուարացեալ. իսկ զայն որ պատահեացն հանդարտիկ[5] հեզարար, առ սակաւ սակաւ թեթևացուցանէր։ Եւ վկայութիւնք այսոցիկ ի տէրունական գիրսն կան, որոց ոչ է արժանի սուտ վկայութիւն ըմբռնիլ. զեկուցանելով[6] զի սակաւ մի մարմնոյն արտաւոր ի վերայ թողեցուցեալ՝ արագ արագ ի վեր յարեաւ ի մեռելոյն՝ ազգն[7] և աշխարհն աւելի՝ որպէս երևեցաւն, աւտար համարեալ խմաստնոյն,

1. Միան. է գրոհ-ընդ։
2. Մ. զ-բէն, համնձայն յունին։
3. Մ. — -ոնոյն։
4. Մ. նորոգ-ի։
5. Մ. հանդ-գրիկն։
6. Մ. զեկ-ցանելն։
7. Մ. զգ-ն։

յորմէ ուսաւն՝ զմնէն համարեալ ոչ չիշնուին հոգ-
ւոյ՝ այլ քակուին և անշնաուին ի մարմնոյ, ուս-
ոլ եկն՝ անդրէն դառնալով, և եկն որպէս յաշ-
խարհարարութեանն ազդեալ է աստուծոյ։ Արդ
զոր աւրինակ ոչ զք դժուարեալ տրամեցի ի չա-
փաւորացն՝ պարտս կամ՝ աւանդս հաստուցանել որ
եան, նոյն աւրինակ և ոչ բնութեանս անդրէն
յինքն ընկալեալ զիւրն դժուարել պարտ և ար-
ժանի[1] համարեցաւ, այլ ընդ հարկաւորսն խըն-
դալ և ուրախ լինել։ Իսկ իբրև եկին որ ի բուն
յիշխանութեանն էին ի գաւառակա՛ց վայրին,
տրամակից և ցաւակից լինել, տեսանելով ոչ ինչ
յայնցանէ որ սովորութիւն էր առ նոսա եղեալ,
առ այնոսիկ որք սուգ և աշխարանս առնուն. ոչ
խաղապատանք[2], ոչ սուգ և ոչ կոծ. ոչ արանց, ոչ
կանանց, ոչ մանկանց, այլ առ հասարակ զամե-
նայն զտանն զհասատուն և զխաղաղ և զհամեստ
զդաստութեանն տրամութիւն, զարմանային ոչ չա-
փաբար, և ընդ այլ ևս կեանսն հիացեալ զար-
մանային՝ առնն։ Եւ ապա ոչ կարացեալք ժու-
ժալ յինքեանս ընդ առաքինութեանն նորա մե-
ծութիւն և ընդ գեղեցկութիւն, քանզի էր ամե-
նայն ինչ սքանչելի, մատուցեալք առ նա ասէին[3].
«Թագաւոր յաստուծոյ դու ես ի մեզ, ճշմարտա-
գոյնս ասելով»։ Քանզի այլ թագաւորութիւնք
ի մարդկանէ[4] լինին, պատերազմաց և զաւրուց,
և անբաւ չարեաց զոր հակառակ ի վերայ միմե-
անց բերեն, զմիմեանս կոտորելով, որ բռնութեան
հարստութեան են ցանկացեալք՝ հեռակ և ձիա-
կան և նաւական զաւրութիւնս կազմելով։ Իսկ զի-
մաստնոյն զթագաւորութիւնն՝ կարկառէ աստուած՝

1. Միան. արժան։
2. Մ. խաղաղատան։
3. Այսպէս և ի Մ. ուր օրինակս մեր ի լա. ընդ ասն։
4. Մ. անէն։
5. Այսպէս և ի Մ. իսկ օրինակն մեր ի լա. ոչ է հրդ-
էնէ. յոյնն՝ πρὸς ἀνθρώπων.

զոր առեալ առաքիչին՝ ոչ ուրուք պատճառք լինին չարի, բայց ամենայն հնազանդելոցն բարեաց ստացուածոյ, զխաղաղութիւն և զքաջաբէնութիւն քարոզելով։ Եւ է նորա անջինջ տէրունական պատգամն վկայեալ որ ի Մովսիսէ աւրինադրեցաւ. ի ձեռն որոյ զեկուցանի, թէ հաւատալ աստուծոյ. զորս ասել դուղնաքեայ ինն թուի, բայց գործով հաստատել մեծ է։

Քանզի ուր այլ ումեք հաւատալի է. իսկ արդեաք իշխանութեան, կամ փառաց և պատուոյ, առաւելաստացութեան, մեծութեան և ազատութեան, թէ ողջութեան և քաջազգայութեան, թէ զաւրութեան և գեղեցկութեան մարմնոյ։ Այլ իշխանութիւն ամենայն սխալ է և վրիպակ, բազումն ունելով զդարանամուտ ապատեակսն. ապ՝ եթէ երբեք ուրեք և հաստատութիւն առցէ՝ հանդերձ բազում՝ չարեաւքն զոր գործեն և կրեն, այնք որ յիշխանութեանն են հաստատեալ։ Իսկ[2] փառք և պատիւք՝ ստացուածք սխալագոյնք, յանփորձ և յանընտիր բարս և ի թեթեւարանս[3], յանխուզելեաց մարդկանէ շարժեալ և դրդուեալ։ Եւ զի եթէ կացցէ մնասցէ, բուն բարի գոլ ոչ բնաւորեցաւ։ Իսկ մեծութիւն և ազատութիւն լինի և վատթարացն. բայց եթէ և միայն առաքիչեանցն, ներբողեանն նախնեաց և պատահի այլ ոչ այնոցիկ որ ունինն են։ Այլ այնոքիկ որ վասն մարմնոյն մեծամեծս խորհին՝ արժան է, յորս այլքն կենդանի անասունքն առաւելեալ լինին։ Քանզի ո՞ղք ի մարդկանէ հզաւրագոյն կամ ուժգնագոյն է քան զզուարակ[4] յընտանիսն, և ի վայրենիս քան զառիւծ։ Եւ արագատեսագոյն քան զբազէ և զարծուի։ Եւ ո՞ բարեբաստագոյն լաբանաւք

1. Միան. չարքն։
2. Մ. է իսկ։
3. Մ. է ընդեր բանս. համաձայն յունին։
4. Մ. զոսարակ.

այնպէս իցէ՝ քան զայն որ անասնոց կենդանեաց հեղգագոյնդ է, էշ։ Իսկ ո՞ հոտոտելեալք քան ըզշուն ստուգագոյն, զորս ասեն ուրնգամիրքն և որսալ և հետամարել. և այնոցիկ որ ի հեռաստանէ գէշքն անկեալ դնին՝ գիւրաւ հասանել ի վերայ՝ ոչ յառաջագոյն տեսեալ։ Քանզի որ ինչ երեսք այլոց, այս ունգունք շանց որսականաց և հետախուզից, առաջագոյնք որպէս գոյ մանաւանդ աւելի ցուցանել բազումք յանասուն[1] կենդանեացն են։ Իսկ յաղագս գլուս գեղեցկութեան հանդիսի, և յանշնչիցն ոմանք ինձ թուին յաղթել կարել զարանց միանգամայն և զկանանց զգեղեցկակերպութիւնս՝ պատկերք և նկարագիրք, և միանգամայն ասեն՝ որ ինչ միանգամ՝ գրական գործք և ստեղծականք, յերկաքանչիւր արուեստի կազմեալք. յոր իրս փութով ըզհետ են ելլենացիք միանգամայն և խուժ[2], առ ի զարդ քաղաքացն յերևելի տեղիսն վերամբարձ դնելով։ Արդ միայն անասուն և ճշմարիտ բարի է՝ հաստատուն[3] առ ի յաստուածն հաւատ, մըխիթարութիւն կենաց, լրութիւն բարի յուսոց, անբերութիւնք[4] չարեաց, և բարեաց բերք՝ չարադիւութեան յուսահատութիւն, և բարեպաշտութեան ժառանգութիւն, բարեբաստութիւն հոգւոյ, յամենայնի լաւութիւն հաստատելոյ և հիմնելոյ յամենեցունն պատճառէ[5], որ կարէն զամենայն և կամի զլաւն։ Քանզի որպէս այնք որք ընդ լպրծուտ ճանապարհդ գնան՝ գայթագղին և անկանին. իսկ որք ընդ ցամաք և ընդ աշխարհապողոտայն՝ անգայթ գնացիւք վարին, այսպէս այնոքիկ որ ի ձեռն մարմնականացն, և այնոցիկ որ արտաքոյ՝ զոգիսն վարեն, ոչ այլ ինչ,

1. Միան. յանասնոց։
2. Մ. խուժ. օրինակս մեր ի լս. խուժաքուժ. յոյնն՝ βάρβαροι
3. Մ. հաստատուն բարի է։
4. Մ. անբերութիւն։
5. Մ. պատճառէ։

այլ զարկանել և անկանել զնա սովորեցուցանեն։ Քանզի լպրծուա և սոնեաս են այաղիկ, և քան զամենայն ինչ անհաստատագոյնք. զի ի ձեռն ըստ առաքինութեանն տեսութեանց յաստուած փութալով հաստատուն և անդեղև ճանապարհ ուղիղ վարեն. մինչ զի անսքատագոյնս ասել, զի այն որ նոցայն հաւատայ, անհաւատ է աստուծոյ, իսկ որ անհաւատէն, հաւատայ[1]։ Այլ ոչ միայն առ էնն[2] հաւատ՝ վկայեն նմա տէրունեան պատգամքն, զրամբիչն առաքինութանցն, այլ և առաջին զնա հռչակեցուցանեն, երիցագոյն քան զայլս որ յառաջ քան զնայն երեքպատիկ և բազմապատիկ ամն կեցելոցն. զորոց ոչ զոք պարտեցաք՝ արժանի համարեալ այսր առաստութեան։ Եւ մի՛ գուցէ թէ յիրաւի՝ ճշմարտութիւնն[3] երիցագոյն է, ոչ յերկար ժամանակաւ՝ այլ գովելեաւ և կատարելագունիւ վարուք տեսանիլ։ Քանզի զայնոսիկ որոց բազում՝ յաւիտեան վարեցեալս հանդերձ մարմնովն կեանս՝ առանց քաջալաւութեան՝ բազմաժամանակեայ մանկունս ասելի է, ուստի ալեաց արժանիս[4], ոչ երբեք ուրեք խրատեալս։ Իսկ[5] զայն որ զդաստութեան, խոհականութեան և իմաստութեան, և ի յաստուածն հաւատոյ բաղձացեալն է, ասասցէ զք յիրաւի արդարապէս զոլ երիցագոյն, յարանմարումն ունելով[7] ընդ առաջնումն։ Քանզի է[8] իմաստունն՝ առաջին մարդկան ազգի՝ իբրև նաւատի ի նաւի, և իշխան ի քաղաքի, զաւրավար ի պատերազմի, և հոգի ի մար-

1. Մ. Իսան է յեն ---ինրեն։
2. Մ. Իսկ որ անհատ են հատոց ,յոյնն՝ Իսկ որ անհատոն նոցա՝ հատոց սոցոնց։
3. Մ. ոչ գոյն զա են հատ։
4. Մ Յոյնն՝ ճշմարտրեն։
5. Յոյնն՝ μαθήματα πολιᾶς ἄξια.
6. Մ. չունի Իսկ։
7. Մ. յարանան ելով, ըստ յունին։
8. Մ. էն։

մընի, և միտք յուշ. և գարձեալ երկին յաշխարհի, և աստուած յերկնի։ իսկ նա վասն զառ ի յինքն հաստոց արմատացեալ՝ ընդ առնն հաւատ, փոխանակ տայ նմա զայն որ ի ձեռն երդմանն հաստատուն էր, զոր[1] խոստացաւ զպարգևաց զտուրս. ոչ ևս միայն իբրև մարդոյ աստուած, այլ իբրև սիրելի ծանաւթի խառնելով։ Քանզի ասէ. «Յանձն իմ երդուայ», առ որում բան՝ երդումն է. վասն մնացն անչարժ և անթմաւալ, և առաւել քան զյառաջագոյնն հաստատուն լինել։ Արդ երիցագոյն և առաջին ասացի խմաստունն. և մանկագոյն և վերջին ամենայն անզգամն, զկրսերարարան. և որ զկնի այնր որ ի վայր, և ի վերջին տեղոյ կարգեալ լինի, զհետ երթալով։

Այդ այսպիկ ցայսպան ասացին։ Իսկ բազմութեան և մեծութեան գովութեանցս ի վերայ եդեալ, իբրև գլուխ[2] իմն խմաստնոյն ասեմ, զի զաստուածային աւրէնն և զաստուածային հրամանն զամենայն ինչ արար այրս այս, ոչ զրովք ուսեալ, այլ անդիր բնութեամբ ճեպեալ, առողջական և անվերանալի յարձակմամբք[4] զհետ երթեալ։ Իսկ յայսպս որոց ասաւածն խոստովանէ, զի՞նչ պարտ և արժան էր մարդկան, բայց հաստատագոյն հաւատալ։ Այսպիսի վարք առաջնոյն և նահապետին ազգին է, որպէս ունէք ասացեն[5], աւրինաւոր. իսկ որպէս առ յինէն բանս եցոյց, աւրէն[6] ինքն ելով և անդիր գիրք։

Փիլոնի կեանք վարուց ըստ վարդապետութեանն կատարեցելոյ, կամ անդիր աւրինաց։

1. Միւս. -զրոցեալ։
2. Մ. -զրոց։
3. Մ. -զիս-ի։
4. Մ. -զյ-կմամբ։
5. Մ. -ասացին։
6. Մ. -աբրնոյ։

(ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻՆ)

Զատացաւդ տատիս գրարեպաշտ Թագաւորն Հայոց Հեթում յիշեսցիք յաղաւթս իմաստախոհ վերծանաւդք արժանանալ ո-զորմութեանն աստուծոյ, զի և դուք յիշեսցիք ի տեառնէ աստուծոյ մերոյ. և զանյարմար գրիչս Վասիլ՝ ազաչեմ արժանի առնել յիշման, որ ի բազում հոգք և ի ծուփ տարաբերիմ սակս անբաւ յանցանաց իմոց։ Գրեցաւ ի ԹուՀ ՁԽԵ։

ՓԻԼՈՆԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՒՐԻՆԱՅՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Եւ կատարեցան վիսանգամայն երկին և երկիր, և ամենայն զարդ իւրեանց։

Մտաց և զգայութեանց զեղանութիւնն ասելով յառաջ, այժմ զերկոցունց զկատարելութիւնն հաստատեալ բաղկացուցանէ։ Քանզի ոչ զմիոսն զանհատ, և ոչ զգայութիւնն զ'ի մասին զյանգումն առնուլ ասէ, այլ տեսակս՝ է որ ըզմտաց, և է որ զզգայութեան։ Քանզի նշանակաբար զմիոս երկնի՝ վասն զի իմանալիք բնութիւնքն յերկնի, և զզգայութիւն։ կոչէ երկիր, զի բաղկացութիւն մարմնաձև հողեղենագոյն եհաս զգայութիւն։ Իսկ աշխարհ՝ մտաց, անմարմինքն և իմանալիքն. իսկ զգայութեանն մարմինքն։

Եւ կատարեաց աստուած յաւուր վեցերորդում զգործս իւր զոր արար։

Շամբշագոյն և յոյժ խաւլ է, կարծելն ի վեց աւուրսն, կամ բնաւին ի ժամանակի իմիք եղա-

1. Միան. ՀԷ-ԺԷ-ԸԼ-Դ։

նել զաչխարհս առնէր[1]։ Վասն էր։ Զի ամենայն ժամանակ աւուրց և գիշերաց է բաղկացութիւն. և այսպիկ արեգական շարժմամբ՝ ընդ երկրաս, և կամ՝ գեր ի վերոյ երկրի գնալով ի հարիւ կաստարի։ Իսկ արեգակն մնան երկնի եղև. իսկ ասա ուրեմն ասացի ուղղապէս, եթէ ոչ ի ժամանակի եղև աշխարհ, այլ ի ձեռն աշխարհի բաղկացաւ ժամանակ, քանզի երկնի շարժումն՝ զի մնալի զնութիւնն եցոյց։ Արդ յորժամ ասաց[2] եթէ կատարեաց ի վեցերորդումն[3] զգործսն, խմնալի է, զի ոչ զբազմութիւն աւուրց առնու ի մէջ, այլ զկատարեալն զմիւն զվեցն, զնան առաջին[4] զոյգն իւրովք մասամբքն, երկրորդիւն, և երրորդիւ, և վեցերորդիւ։ Եւ յայլ երկարէն բաղկացեալ է՝ յերկիցս երեք։ Քանզի երկակն և եռակ աճեցեալ, զրստ միոյն անմարմնութիւն։ Քանզի սա նիւթ է կերպարան բաժանելով և հատանելով։ Զոր ուրեմնակ այն իսկ երբեակն՝ հաստատուն մարմնոյ, զի եռակի հաստատունն բաժանելի է, բայց սակայն և ազգակից է գործական կենդանեացն շարժմանց։ Քանզի վեցկին[5] գործական մարմինն բնաւորեցաւ շարժիլ, յառաջ և ի վերջ, ի վեր և ի վայր, յաջ, յահեակ։ Արդ կամի զմահկանացու սեռան, և ըստ նոսա գարձեալ անապականս բան իւրեանցն[6] ցուցանել թիւս բաղկացեալս, զմահկանացուսն որպէս ասացի յարաւափեալով վեցեկին։ Իսկ վերջանիկսն և զբարերաստիկսն եւթներեկին առաջնում։ Եւ յեւթներորդումն աւուրս գադարեցուցեալ զմահկանացուացն զրազիացութիւն, սկիզբն առնէ այլոց աստուածազանազոյնց տպաւորու-

1. Միւսն. որպէս և յոյն բն. չունի —ՆԷՐ։
2. Մ. —ՆԷ։
3. Մ. յաւելու —ՈՐ, որպէս և ի յոյնն։
4. Մ. Վ—Ն ԶՆ ԻՒՐ —ՔՆ։
5. Մ. Վեցեկի։
6. Մ. ԸՍ Ի—ԻՐԵՆՆ Ց—ՑՈՒՆԼ։

թեանց, քանզի հանդչի և ոչ երբեք առնելով աստուած։ Այլ զոր աւրինակ ուրոյն է այրելն հրոյ, և ձեան ցրտացուցանելն, այսպէս և աստուծոյ առնելն։ Եւ ևս կարի առաւել. որքան և այլոցն ամենեցուն սկիզբն գործելոյն է։ Բայց սակայն բարւոք է և ասելն դադարեցոյց, ոչ դադարեաց։ Քանզի դադարեցուցանէ զկարծեցեալսն առնել՝ ոչ զներգործաւղսն։ Եւ ոչ դադարէ ինքն առնելով, վասն որոյ ի վերայ բերէ դադարեցոյց, յորոց սկսաւն։ Քանզի որք ինչ միանգամ մերով[2] աբուեստիւքն գործին, կատարեալք՝ կայանան, և զտեղի առնուն և մնան։ Իսկ որք միանգամ մակացութեամբ հանճարոյ աստուծոյ յանգեալք լինին, դարձեալ շարժին։ Քանզի վախճանք նոցա այլոց են սկզբունք[3]. որպան՝ տուընջեան վախճան, գիշերոյ է սկիզբն։ Եւ զամիս և զտարի զներկացեալս։ Եւ յայտ է թէ վախճանք յոչէիցն կարծելի է։ Քանզի լինելութիւն, ապականեցելոց այլոց, և ապականութիւն՝ ծնիցելոց այլոց բացակատարի։ Ապա ուրեմն ճշմարիտն գոլ ասեցեալն զի «ապականի։ և ոչ ինչ յեղելոցս՝ բայց տրոհելով և մեկնելով՝ այլ առ այլ կերպարան. այլ ապա եցոյց»։ Եւ խնդայ բնութիւնս եւթներեկաւ. քանզի մոլորակք եւթն եղեն հակամէտք բստ նմին, իբրև զնոյն ունելով ապականութիւն. և արջգ[4] եւթն աստեղքք լրցեալ կատարին, հաստատակութեանն և միաւորութեան մարդկան, ոչ ի խառնութեան սակս միայն։ Եւ յեղմունք լուսնոյ եւթներեկաւք լինին, ախտակցակցոյնս առ երկրայինս նշանակելով. և զայս զոբբս բստ աւդոյս փոփոխմունս գործէ, յաւէտ եւթներեկին ձևաւք բացակատարէ։ Իսկ մահկանա-

1. Միւսն. —Ն։
2. Մ. Դրովք։
3. Մ. —ՀԱՆ։
4. Մ. Դ—Ն։
5. Մ. ի լ. —ՐՆ —ՊՂ Է։

ցուքս կորզեալ և ձգեալ և ծծեալ յերկնէ ածին՝ սկիզբն, ըստ եւթներեկին փրկարար շարժի։ Քանզի ՝ ոչ գիտէ զի մանկանց եւթնամեայքն բեղմնաւորք են և ծնընդականք. իսկ որք աւելի ժամանակս առընդունին, իբրու թէ ուխտ ամիսք լիեալ յորովայնին, ըստ յորով իրաց անպտուղք՝ և անծընընդականք են։ Եւ բանաւոր ասեն զմարդ ըստ առաջնում եւթներեկին, յորժամ ահա բաւական է մեկնիչ գոլ սովորականաց՝ անուանց և բայից, որք զբանականաց ունակութիւնն պարարեցին։ Իսկ ըստ երկրորդում եւթներեկին կատարելապէս յանգի, և կատարելութիւն է նմանոյն սերմանն։ Իսկ մնաւ ի չորեքտասաներորդ հասակն՝ զնմանն ծնանել կարեմք։ Երրորդ դարձեալ եւթներեկաւ՝ յանգումն է աճմանն։ Քանզի մինչ ի մի և ի քսան ամացն աճէ ի մեծութիւն մարդն, և կոչի ժամանակս այս հասակ։ Իսկ անձինն անատնական՝ եւթնմասնեայ, զգայութիւնքն հինգ, և ձայնաւոր գործիս, և որ հասանեն մինչև յամանս երիկամանցն. որ բեղնաւորարարն և ծննդագործն է։ Եւ դարձեալ մարմնոյ եւթն շարժմունք են. դարձիականք վեց. և եւթներորդ շուրջն։ Քանզի՝ փորոտիք եւթն, ախտդանք, սիրտ, փայծաղն, լեարդ, թոքք, երիկամունք երկու։ Եւ անդամք մարմնոյն նմանապէս զուգութիւն. գլուխ, պարանոց, լանջք, որովայն, և զկնի որովայնին՝ համք՝, ոտք, ձեռք։ Եւ իշխանականագոյն և առաջնագոյն կենդանւոյն դէմք, յեւթնկին՝ ծակոտեալ. երկու աչաւք, և ականջաւք զուգիւք, երկու ռնգամիք, և եւթներորդաւ բերանով, Եւ արտաքնորութիւնքն եւթն. արտասուք, խլինք, տողուկք, սերմին, և

1. Միւսն. —գ—ն—ն—ն—ն, ըստ յոյն բն. θειοτέρον.
2. Մ. գ—ն—ն Ն։
3. Մ. գ—գ—ն—գ—։
4. Յօրինակին ի լ. —ն—ն—գ—գ ն գ—։ Բայց կայ և ի յոյնն, ἕτερον.
5. Մ. յ—ն—ն—ն։

երկուք՝ աւելորդացն առուք. և որ ի բոլոր մարմնոյս քիրտս է, մանաւանդ որ ի հիւանդութեանն, և պատուականագոյն եւթներեակն. և կանանց ըստ ամենան ամենան մաքրութիւնքն մինչև յեւթներեակն յերկարեալ ձգտին։ Եւ թափանցանց եղև զաւրութիւնն սորա, և յաւգտակարագոյնս արուեստից։ Արդ ի քերականութեան՝ լաւագոյնք տառիցն, և որք աւելի զաւրութիւնն ունին՝ եւթն են թուով ձայնաւորք։ Եւ ըստ երաժշտականութեան, եւթնագի քնարն գրեթէ քան զամենայն գործիս լաւագոյն է, վասն զի ներյարմարագոյն նուագաւոր երգոցն սեռք, նազագոյն[1] և հաչակաւոր։

Արդ ըստ այսմ իմն աւրինակի յաւէտ տեսակալ լինի, և զբարբառոյ սաստկութիւնս ոլորմանցն եւթն գոլ գէպ եղև. շեշտ, բութ, պարոյկ, թաւ, սոսկ, երկար, սուղ։ Եւ այլ բազում այսպիսիք։ Եւ ես, առաջին[2] ի կատարելագունէն, ի վեցէ և ի միակէ։ Ըստ ինքեան իմն ուրոյն բանի նոյն է, ի ներքս ի տասնեկի թիւք, կամ ծնանին կամ ծնանեն զ'ներքս[3] տասնեկին՝ զնոյն։ Իսկ եւթներեակն ոչ ծնանէ զոք զներքոյց տասնեկի թուոցն, և ոչ ծնանի յումեքէ։ Ըստ որում ասելով զնա պիթագորեանքն մշանջենաւորակուսին և անմաւրն՝ միակի նմանեցուցանեն, զի ոչ ծնաւ և ոչ ծնցի։

Արդ հանգոյց յաւուրն եւթներորդում յամենայն գործոց իւրոց յորոց արար։

Եւ այս է այսպիսի. զմահկանացու սեռն հանգիստ առնու ստեղծանելով աստուած՝ յորժամ ըսկըսցի առնել զաստուածայինսն. և զեւթներեկին

1. Միւսն. է նազագոյն։
2. Մ. —ջին։
3. Մ. զի ներքոյ։

զբուն՝ ընտանիս։ Իսկ առ ի բարս բացատրութիւնն է այսպիսի։ Յորժամ զկնի եղեցի յոգւոյն՝ այն որ բան եւթներեկի սուրբ բանն է, սպառեալ լինի վեցերեակն, և որք միանգամ մնչկանացուքն առնել թուին։

Եւ աւրնեաց աստուծոյ զաւրն եւթներորդ և սրբեաց զնա։

Զբան եւթներեկիսն՝ և աստուածային ճշմարտապէս լուսոյն շարժեցեալս յեղանակս՝ քաջ համարի աստուած, և անդէն վաղվաղակի սուրբս երեւեցուցանէ։ Քանզի ազդակցաղոյնք միմեանց, քաջահամարն և սուրբն։ Վասն այսորիկ ի վերայ այնորիկ որ զմեծ ազատութն յաղաւթս եկաց առէ, զի եթէ խոտորումն ի վերայ անեկեալ յանկարծաւրէն պղծեսցէ զմիտսն, ոչ ես եղիցի սուրբ։ Այլ առաքնք առաջինք անհամարք եղիցին։ Բան վայելչականին։ Քանզի անհամարելի է որ ոչ սուրբ յեղանակն է։ Այսպէս ուրեմն քաջ ի համար անկանի սուրբն։ Արդ յիրաւի ուրեմն ասաց թէ զեւթներեակն աւրհնեաց և սրբեաց աստուած, զի ի նմա հանգոյց յորոց սկսաւն աստուած առնել պատճառս, վասն որոյ քաջահամարելին և սուրբ եղև, որ յեւթներեակն և ի կատարեալ լրյան էած զինքն։ Արդ վասն զի յայսմ բնութեան գադար առնու մնչկանացուցն բազկացութիւնս։ Քանզի այսպէս ունի, զի[2] յորժամ ծագեսցէ ներշոյ առաքինութեանն, արդարն լուսաւորագոյնն և պայծառն և աստուածային, արգելանի ներշակն բնութեանն լինելութիւն։ Եւ զնկուցաւք, զի աստուած գադարեցուցանելով, ոչ գադարէ առնելովն, այլ այլոց սկիզբն առնէ։ Իբրու զի ոչ մի-

1. Միւս. Ի-ԲՐԵԲԻՆ։
2. Մ. չունի զի։

այն արուեստաւոր է, այլ և հայր է այնոցիկ որ լինին։

Այս գիր[1] լինելոյ երկնի և երկրի յորժամ եղևն։

Այս է որ ըստ եւթներեկին եղև կատարեալ բանքն, սկիզբն լինելութեան ըստ տեսական կարգեցելոյ, յիմանալոյն այնր՝ թէ հնար գոյ ասել, զգայութեանն։ Եւ գիր ասաց զաստուծոյ զբանն, որ[2] պատահեցաւ՝ նկարիչ. և գրիլ և գծիլ՝ և այլոցն բաղկացութիւնք։ Եւ զի մի՛ ըստ որոշեցեալ՝ և ըստ սահմանեալս ժամանակաց պարագայութիւնս կարծեսցես[3] զաստուածութիւնն առնել ինչ. այլ գիտասցես անյայտս և անորոշս զմտահկանացու ազգին զարարեալս, ի վերայ բերէ զյորժամ եղևն. զերբն ըստ պարագրութեան, ոչ մեկնելով և որոշելով. այլ անպարագրաբար լինին որք լինին ի պատճառէն։ Արդ ի բաց բարձեալ է ի վեցն աւուրս եղանիլն ամենայն։

Յորում աւուր արար աստուծոյ զերկինս և զերկիր և զամենայն դալար[4] վայրի յառաջ քան զեղանիլ ի վերայ երկրի. և զամենայն խոտ վայրի յառաջ քան զբուսանիլ ինչ ի վեր. քանզի ոչ տեղաց աստուծոյ ի վերայ երկրի. և մարդ ոչ էր որ գործէր զերկիր։

Զաւրս զայս ի վեր անդ գիր ասաց։ Զի յերկոսեան երկնի և երկրի նկարէ զլինելութիւնն։ Քանզի երևելագունիւն և լուսաւորագունիւ և բացափայլագունիւ բանիւն իւրով աստուած զերկոսին առնէ, զտեսակն մնաց զոր նշանակաբար եր-

1. Միւսն. -յ- ՝ ՝։
2. Մ. -ր-վ, ըստ յունին։
3. Մ. -ր-ջ-ց-ե-ւ։
4. Մ. ն-ր-ծ-ն-ե-։
5. Մ. ր-ւ-ր-ի յ-ա-ն։

կին կոչեաց՝ և զտեսակն զգայութեան, զոր նշանակաբար[1] երկիր անուանեաց. և վայրաց նմանեցուցանէ երկուց, զտեսակ մտացն և զտեսակ ըզգայութեան[2]։ Քանզի բերէ միտքն զստուգս զիմանալին, իսկ զգայութիւնն՝ զգալին[3]։ Եւ զոր ասէն՝ այսպիսի է. զի որպէս մտանաւորականին և անհատի մտացն է իմն յառաջագոյն տեսակ, իբրու սկզբնատիպ և յարացոյց բանի. և դարձեալ զբնամտանաւորականի զգայութեանն ի ներքոյ ունել[4] որ աշա ապատուր է. այսպէս յառաջ քան զլինել զմտանաւոր իմանալին՝ էր ոգին ինքն այս սեռական իմանալին[6], որոյ կցորդութեամբ և այլքն անուանեցան։ Իսկ յառաջ քան զլինել զմտանաւոր զգալին, էր ոգին ինքն այս սեռական զգալիս, որոյ ըստ կցորդութեան և այլ ըզգալիքն եղեն։ Արդ «դալար վայրի» զիմանալին ասաց մտաց։ Քանզի ի վայրի դալարք[7] բուսանին և ծաղկին, այսպէս բոյս մտացն իմանալին է։ Արդ յառաջ քան զմտանաւոր իմանալին եղանել, զիմանալին կատարէ զսեռական, զոր և ամենայնն կոչեաց՝ ոգիարար։ Քանզի ըստ մասինն անկատար երով՝ ոչ է ամենայն. իսկ սեռականն ամենայն, իբրու զի կատարեալ է՝ և զամենայն ասէ զիստ վայրի, յառաջ քան զ'ի վեր բուսանել[8] ըստ մասինն զգալիսն[9], էր սեռական ըզգալին նախախնամութեամբ արարողին, զոր դարձեալ զամենայն ասաց։ Բայց վայելչաբար խո-

1. Միւս. նշանակաբ։
2. Մ. զգայութիւնն։
3. Մ. զգալիքն։
4. Մ. չունի զրուագ բան, այլ ասէ. յարոցոյց այսպէս. և գոյնիս։
5. Մ. [illegible]։
6. Մ. իմանալիքն։
7. Մ. գալարք։
8. Ի լա. [illegible] է յառաջ քան զի վեր բուսանել. իսկ Մ. ի լա. զգայութիւն։
9. Մ. զգալիքն։

ասոյ զզգալին նմանեցոյց։ Քանզի որպէս խոտդ անասնոյ կերակուր է, այսպէս զգալին՝ անասուն մասին հոգւոյն վիճակ հասեալ է։ Ապա եթէ՝ ոչ՝ վասն էր յառաջագոյն գալար վայրի, զկնի բերէ և զամենայն խոտ, իբրու թէ ոչ լինի խոտ գալար ամենեին. այլ վայրի գալարին արտաբոյս մըտացն, իսկ խոտն, զգալին, անասուն հոգւոյն և այս բոյս է։ Քանզի «ոչ տեղաց ասուած յերկիր, և մարդ ոչ էր որ գործէր զերկիր»։ Բնականագոյն։ Քանզի եթէ ոչ տեղասցէ ի վերայ զգայութեանցն զընդունելութիւնս ենթակայցն[2] ասուած՝ և ոչ միտքն ինչ գործեն, և իրս ինչ առնեն առ ի զգայութիւն. քանզի անգործ և առանց իրս ինչ վճարելոյ է ինքն յինքենէ, թէ ոչ իբրու տեղալով և ի վերայ ցանցանելով՝ տեսաւորութեան գոյնս, և ձայնս լսաւորութեան, և ճաշակաւորութեան համն, և այլոցն զընտանիսն պատճառի։ Եւ յորժամ՝ ասուած ոռոգել սկսցի զզգայութիւնն զգալեաւքն, յայնժամ՝ և միտքն գործաւնեայ իբրև պարարտ երկիր[3] գտանին։ Իսկ տեսակ զգալեացն՝ զոր ըստ նշանակի անձրև ասաց՝ ոչ պիտի նմա կերակուր։ Իսկ կերակուր զգայութեան՝ մասնաւոր զգալիքն, իբրու զի մարմինք են։ Արդ յառաջ քան զլինել մասնաւոր բաղդատածացն՝ ոչ տեղաց ասուած յերկիր՝ ի տեսակ զգայութեանն զոր[4] ասացն երկիր, և այս է՝ կերակուր ոչ մատոյց նմա, քանզի ոչ էր կարաւտ զգալւոյ ամենեին և ոչ մի միոյ իրիք։ Եւ մարդն ոչ էր գործել զերկիր, այսպիսի իմն է. տեսակ մտացն զտեսակ զգայութեանցն ոչ գործէր, քանզի և իմ՝ և քո միտքս գործեն զզգայութիւն, ի ձեռն զգալեացն, իսկ մտացն տեսակ՝ իբրու

1. Միան. Ադ՝ ԷՊԷ ՀԷ։
2. Մ. ԵՆԹԱԿԱՅԵՑՆ։
3. Մ. ԵՐԿԻՐ։
4. Մ. Ի ՀՈՐ։

զի ոչ է, ոչ միոյ ուրուք մասնաւորի առանձինն մարմնոյ՝ ոչ գործէ զտեսակն զգայութեան։ Քանզի եթէ գործէր՝ ի ձեռն զգալեացն արդեւք գործէր, և զգալի ի տեսակս և ոչ ինչ է։

Աղբեւր երանելի յերկրէ և ուռոգանէր զամենայն դէմս երկրի։

Արդ զմիտան ասաց երկրի աղբեւր, իսկ զգայութիւնն դէմս. զի վայր սոցա յամենայն մարմնոյս առ իւր ներգործութիւնն գիպոդագոյն և ի ճահ, այն որ ամենայնին նախահոգութիւն խնամոյ տանի բնութիւնն՝ բաշխեաց եւ զայս. և զաւրէն աղբեր ուռոգանէ զգայութիւնն միտքն, առաքելով ի վերայ իւրաքանչիւր ուրուք զճահաւոր և զ'ի դէպ յորձանսն։ Արդ տես, զիարդ զաւրէն չգիայից կենդանեացն զաւրութիւնքն զմիմեանց բուռն հարեալ ունին[1]։ Քանզի մնաց և զգայութեան և զգալոյն, երից ելոց՝ է մէջ ըզգայութիւնն, և ծայրք երկաքանչիւրքն միտքն և զգալին։ Այլ ոչ միտքն կարաւղ են գործել, այսինքն ներգործել զբան զգայութեանն, եթէ ոչ տեղասցէ և անձրևեսցէ զզգալին՝ ասասուած. և ոչ անձրևեցելոյ զգալոյն աւգուտ էր, եթէ ոչ զաւրէն աղբեր միտքն ձգտեցուցեալ զինքն մինչ ի զգայութիւնն՝ շարժեսցէ զնա, և խաղացուսցէ զդադարեալն և զիսաղաղացեալն, և ածցէ յաւընդունելութիւն ենթակային։ Այսպա ուրեմն փոխանակ տան միտքն և զգալին, և միշտ կրթին և ընդելանին. է որ իբրու նախ ենթակայ իմն զգայութեանն իբրու նիւթ. իսկ միւսն շարժելով զզգայութիւնն առ արտաքինն իբրու[2] արուեստաւոր, զի եղիցի յարձակումն։ Քանզի կենդանին ոչ կենդանեացն՝ երկուք առաջացեալ[3] և առաւե-

1. Միւսն. չունի՝ —ՆԻՆ։
2. Մ. ԻԲՐՈՒ —։
3. Մ. —ՋԵՑԵԼ։

լեալ է, երևութիւ և յարձակմամբ։ Քանզի երևութիւ[1], բաղկանայ ըստ արտաքնոյն, առ ճանապահ[2] ապաւորելով զմիտսն ի ձեռն զգայութեանն։ Իսկ յարձակումն, եղբայրն և ընկերն[3] երևութութեանն, ըստ մտացն սեռական զաւրութեան զորս ի ձեռն զգայութեանն ընդ հարկանի և բախի, և բուռն հարկանէ զենթակայէ, և առ նա երթեալ հասանէ՝ բաղձացեալ[4] հասանել և ըմբռնել զնա։

Եւ ստեղծ աստուծոյ զմարդն հող յերկրէ և փչեաց ի դէմս նորա շունչ կենաց, և եղև մարդն ի յոգի[5] կենդանի։

Երկնակ են մարդկան սեռք. քանզի է որ է երկնային մարդ, և է որ է[6] երկրային։ Արդ երկնային՝ իբրու զի ըստ կերպարանի աստուծոյ եղեալ է, ապականացուին և միանգամայն ի հողեղէն զոյացութենէն անբաժ է. իսկ երկրայինն ի սերմնացու և ի ցիր նիւթոյն զոր հող կոչեաց, կառուցաւ։ Վասն որոյ զերկնայինն ոչ ստեղծանիլ ի բանէ, բայց ըստ կերպարանի առնիլ աստուծոյ, որ էր՝ որականալ և առնիլ և ապաւորիլ ըստ կերպարանի։ Իսկ երկրային ստեղծուածն՝ այլոյ լինելութիւն գոլ արուեստաւորի, և զմարդն յերկրէն համարելի է գոլ, միտս արկեալ ի մարմինն՝ չև ևս որոշել և մեկնել։ Իսկ միտքս այս՝ հողեղէն են և ապականացու, եթէ ոչ աստուած փչեացէ ի նա զաւրութիւն զճշմարիտ կենացն։ Քանզի յայնժամ՝ լինի, ոչ ստեղծանի. ոչ դասարկ և անտպաւոր, այլ մտաւոր և կենդանի էապէս,

1. Միան. ուղղէ և գրէ ԷՒԹՈՒԹԻՒՆ։
2. Մ. ճանապարհ։
3. Մ. ՅԵՂԲԱՅՐՆ Ի ԸՆԿԵՐՆ։
4. Մ. ԲԱՂՁԱՑԵԼ։
5. Մ. հարցն հոգի։
6. Մ. չունի է։

քանզի ի հոգի կենաց եղև մարդն։ Բայց խընդրեսցէ որ թէ ընդէ՞ր արժանի համարեցաւ առաւած բնաւ ամենեին, զերկրածին և զմարմնաւէր միտն՝ աստուածային հոգւոյն, այլ ոչ զբան տեսակին եղեալ և կերպարանին իւրոյ՝։ Եւ երկրորդ՝ զի՞նչ է «փչեացն»։ Երրորդ, ընդէ՞ր ի դէմն փչէ չունչ։ Չորրորդ՝ ընդէ՞ր զհոգւոյն զանուն դիտելով՝ յորժամ ասիցէ «և հոգի աստուծոյ բերիւր ի վերայ ջրոյ» շնչոյ այժմ՝ այլ ոչ հոգւոյ յիշատակ արար։

Արդ առաջինն ասելի է, մի՝ զի պարգևատէր եղով աստուած, շնորհէ զբարիսն ամենեցուն, և ոչ կատարելոցն, կոչելով և հրաւիրելով զնոսա ի կցորդութիւն և ի նախանձ միանգամայն առաքինութեան. և զաւելի մեծութիւնն ցուցանելով զնորա, չատ և բաւական է այնոցիկ՝ որ ոչ[2] յոյժ աւգուտ կրեալ։ Իսկ զայս ի վերայ այլոցն երևելագոյնս յանդիման կացուցանէ. զի յորժամ տեղայցէ ի վերայ ծովու, և ապրեալս յանապատ վայրի բխեցուսցէ, և զթեթեւահոգն և զերէզն և զանպտղաբեր երկիրն ուռդանիցէ, և գնաս զեղուցանիցէ յարուցեալս. զի՞նչ այլ ինչ յանդիման կացուցանէ[3], բայց զառաւելութիւն բարերարութեանն՝ իւրոյ։ Այս է պատճառ, վասն որոյ անպտղաբեր[5] և ոչ մի հոգի ոչ արար բարւոյ, թէպէտ և անկար է ունելոց՝ ի վար և 'ի կիր և ի պէտս առաւելութիւնն սորա։ Եւ այլ ասելի է. զայն կամի՝ զդրիւն արդարակս ի ներքս մուծանել. քանզի նա ոչ շնչեցեալ զճշմարիտ զկեանսն, այլ անփորձ եղով յառաքինութենէն, տանչանս առ-

1. Օրինակ մեր յաւելու առաջն ի լ. ՝ի գ-գ-գ-ի և -ն. դբ-գ-գ-գ. -ոյ մ-գ-գ-գ և ՝ի՝նգ-գ-ն՝ է-գ-է-. է-ն՝ի հ-գ-ի։
2. Միւսն չունի ՝ի։
3. Մ. կ-գ-գ-գ-ն՝ի։
4. Մ. գ-գ-գ-գ-գ-ի՝-ն բ-գ-գ-գ-ն՝ն։
5. Մ. գ-ն-գ-գ-գ-ի՝ր։

տակման կրելով վասն որոյ մեղաւն՝ ասացէ[1] արդեաք իբրու թէ անիրաւ տանջանս սատակման կրեմ[2]։ Քանզի անփորձութեամբ բարւոյն յանցանել և սխալանս կրել, առ այն և պատճառէ զոչ մին ինչ չնչոցի զմոռացութիւնն նորա։ Բայց ինձ թուի և ոչ[3] մեղանչելն ասէ բնաւ ամենեին։ Զի եթէ ակամայքն և բոռ անգիտութեան, և ոչ անիրաւութեանց ունին բան՝ ասեն ամենք։ Բայց փչեացն զոյգ է այնմ՝, չնչեացն կամ՝ հոգիացոյցն զանհոգիսն. զի մի՝ այպան անտեղի յիմարութեամբ առլցեալ լիցուք, մինչ կարծել զասուած՝ բերանոյ և կամ՝ բանբղանց գործեալք վարիլ առ ի փչել։ Քանզի անորակ և անարարուած[4] է ասուած. ոչ միայն ոչ մարդակերպ է, բայց երևեցուցանէ իմն և բնականագոյն արտաբերութիւնս։ Քանզի երիս զոյ պարտ է՝ զչնչաւոն, զընդունաւղն, զայն որ չնչին։ Արդ այն որ չնչէն՝ է ասուած, իսկ ընդունաւղ՝ միտքն, և որ չնչին՝ հոգին։ Արդ զինչ յայտնեալ ժողովի. միաւորութիւն լինի երիցն, ձգտելով[5] և պրկելով ասուածոյ զիւր զաւրութիւնն ի ձեռն միջոցի հոգւոյն մինչ յենթակայ ոք։ Յաղագս ոյր. բայց զի զմոռացութիւնն զնորա ասցուք։

Իսկ զիարդ արդեաք իմացաւ հոգի զասուած, եթէ ոչ չնչեաց և ընդհարաւ և մերձեցաւ ի նա բոռ զաւրութեան։ Քանզի ոչ իշխեցեալ լինէր և համարձակեալ՝ այնքան ի վեր ընթանալ և անել մարդկային միտս, մինչ զի բուռն հարկանել և ընդունելութիւն առնուլ ասուածոյ բնութեան, եթէ ոչ ինքն ասաբուած առ ինքն ձգեալ կորզեաց զնա, որպէս զոյր հընար զմարդկային զմիտան կորզել ի վեր հանել. և աբպաւորեաց բոռ հասակաւոր իմանալի զաւրութիւնս[6]։

1. Միւսն. —ոյ։
2. Մ. ՝ի։
3. Մ. Ե ոչ Ե զ՝ինդանելն։
4. Մ. —ոնարարած։
5. Մ. ՝ի՝ոնել։
6. Մ. ՝ի՝ոնել զաւրութիւնս։

իսկ ի գէմն չնչէ բնականապէս և բարոյական-նարար։ Արդ բնականաբար՝ զի զգայութիւնն գէմն[1] առնէր. քանզի զայս[2] յաւէտ մարմնոյս մասն հոգիացուցեալ է։ Իսկ բարոյականաբար՝ այսպէս։ Քանզի որպէս մարմնոյ իշխանական առաջնորդ է գէմքն, այսպէս հոգւոյ իշխանական միտքն. ի սա միայն չնչէ աստուած, իսկ այլոց մասանցն ոչ առնէ արժանի, զգայութեանցն և ձայնին[3] և սերականին. քանզի երկրորդ է զաւրութեամբ։ Արդ յորմէ և այսոքիկ չնչեցան. յայտ է եթէ ի մտացն։ Քանզի զորոյ ընդունելութիւնն՝ էառ միտքն յաստուծոյ, զայսորիկ[4] կցորդութիւն եառ անասուն մասին հոգւոյն։ Իսկ ապա ուրեմն զմիտան յաստուծոյ հոգիանալ, և զանասունն ի մտացն. զի իբրև աստուած է անասնոյն միտքն, ըստ որում՝ և զՄովսէս ոչ դանդաղեցաւ ասել աստուած փարաւոնի։ Քանզի ի լինելոցն՝ է ինչ որ յաստուծոյ լինի, և է ինչ որ ի ձեռն նորա. և է ինչ որ յաստուծոյ՝ այլ ոչ ի ձեռն նորա։ Արդ լաւքն և յաստուծոյ լինին և ի ձեռն նորա. քանզի յառաջ անցանելով ասէ եթէ անկեաց աստուած դրախտ[5]. արդ սոցա և միտքն է. իսկ անասունն յաստուծոյ եղև, այլ ոչ ի ձեռն աստուծոյ. այլ ի ձեռն բնականին, իշխանին և թագաւորին յոգւոջ։

Բայց զի չունչ, այլ ոչ հոգին ասաց, իբրու զանազանութեան ելոյ։ Քանզի հոգին իմանի ըստ զաւրութեան և ուժեղութեան և հարստութեան. իսկ չունչն, իբրև աւդ իմն և չոգոլի փոքր փոքր և հանդարտ։ Արդ ըստ կերպարանին եղելոյ և ըստ տեսակին միտք՝ հոգւոյ հասարակութիւն ա-

1. Միւսն. է գէմն, ըստ յոյն բն՝։
2. Մ. զայս։
3. Ի լս. ՇՆՉՆ. որպէս ունի և միւսն։
4. Մ. ընդունելութեանն.
5. Մ. դրախտ։
6. Մ. դրախտն։

սացի ընդունել, քանզի զաւրութիւն ունի խորհուրդն սորա։ Իսկ որ ի թեթեւ նիւթոյն և յանեւաւորագոյն աւդոյ՝ իբրու թէ աւդահոսոյ իրիք՝ որպիսիք լինին յանուշահոտ նիւթոյն. քանզի պահեցելոցս ոչ ինչ նուազ և ոչ ծխեցելոց[1] լինի ինչ անուշահոտութիւն։

Եւ տնկեաց աստուած զդրախտն յԵդեմ յարևելս կոյս և եդ անդ զմարդն զոր և ստեղծն։

Զվերամբարձեալն և զերկնային իմաստութիւնն բազում անուամբ ի յոգնանուն. զի է զնա զեկոյց և սկիզբն և կերպարան, և տեսաւորութիւն զսա կոչեաց, իբրև սկզբնատպին նմանութիւն։ Իսկ զերկրային իմաստութիւն, այժմ յանդիման կացուցանէ, ի ձեռն դրաստին[2] տնկագործութեան։ Բայց մի՛ զգաժուցաներ զմարդկային խորհուրդս ամպարշտութեամբ, մինչ զի կարծել եթէ աստուած երկրագործ է և տնկէ դրաստ. ապ՝ եթէ ոչ՝ և յաղագս ոյր՝ անդէն վաղվաղակի ի տարակոյս վարանաց մատնեսցուք։ Քանզի ոչ որպէս զի հանգիստս դիւրավարս և հեշտութիւնս իւր պաճարեսցէ, և մի՛ ի միտս անդամ երբեք եկեսցէ ի մեր այսպիսի առասպելագործութիւնս։ Քանզի աստուծոյ և ոչ առ հասարակ ամենայն աշխարհ արժան է վայր բնակութեան շրջելոյ լինել։ Վասն զի ինքն իւր է տեղի, և ինքն ինքեամբ լի և բաւական՝ ինքն ինքեամբ աստուած, իսկ զայլսն՝ ըզկարաւոսն և զմերիսն և զանապատսն լնլով և պարունակելով. ինքն և ոչ ի միոջէ յայլ ումեքէ պարունակեալ է. իբրու զի ինքն է ամենայն։ Արդ զերկրային առաքինութիւնն սերմանէ և տնկէ մահկանացու ազգիս աստուած, նմանութիւն և կերպարան ելոյ երկնաւորին։ Քանզի ողորմեալ

1. Միան. ծխեցելոց.
2. Մ. բազում ուրեք դրէ, և մերթ դրոց։

ազգիս մերում, և տեսեալ զի յառաջ և ի բա-
զում՝ չարեաց բաղկացաւ, ուղնական հոգւոյն ախ-
տից՝ զառաքինութեան զաւրավիգն արմատս հան-
ատուութեան նեցուկ տուեալ, նմանութիւն օրէն
ասացին, երկնայնոյն և սկզբնատպին, զոր բա-
զում անուամբքն կոչէ։ Արդ գրասան[1] յեղանա-
կարար ասացեալ է առաքինութիւն. և տեղի բան
և բնաւեի գրաստին՝ Եղեմ՝ և սա է[2] փափկու-
թիւն և խրախութիւն[3]։ Եւ առաքինութեան յաբ-
մարական է խաղաղութիւն և դիւրակրթութիւն
և խնդութիւն, յոր փափկանաւն և խրախն լի-
նել ճշմարտութեամբ է։ Եւ սակայն յարեալս կոյս
է անկագործութիւն գրաստին։ Քանզի ոչ եթէ
մեռանէ և սուգանի և շիջանի, այլ միշտ բնաւորե-
ցաւ ընձուել[4] ուղիղ բանն։ Եւ օրէս կարծեմ՝
ծագեալ արեգակն զաղջամուղջ զիաւար զաւդն
լի արար լուսով[5], այսպէս և առաքինութիւն ծա-
գեալ յոգւոջ՝ զայդն իւր ծագէ, և զլոյս առաքէ,
և զբազում խաւարն ցրեալ[6] քայքայէ։

Եւ[2] եղ անդ ասէ զմարդն զոր ստեղծ։

Քանզի իբրու բարի է ասասուած, և յառաքի-
նութիւն՝ իբրու յընտանի գործ կրթեալով և վար-
ժելով զազգս մեր, զմիտն դնէ յառաքինութեանն՝
զի մի ինչ այլ ինչ ամենեքին, այլ զայս՝ զաւրէն
քաջ մշակի ասածիցէ և խնամիցէ։ Բայց խնդրեա-
ցէ զի՝ ընդէ՞ր, թէ[7] զնմանութիւն բերէ զասաու-
ծոյ գործոյն, իբրու զի է արժանաւոր և սուրբ,

1. Միւսն. սատ նախ գրեալ գրէ և ապա ուղղէ ի գրաստ։
2. Մ. է —։
3. Մ. խրախճանութիւն։
4. Ի բս. ընձուել։
5. Մ. լուսով լի տուր։
6. Մ. ցրուեալ։
7. Մ. յումի թէ։

ինձ հրաժարեցուցեալ է մեկել անեսաս առ սեղանն, և զդրախտն[1] ասասուած մեկէ։ Քանզի ասէ. «ոչ մեկեսցես քեզ անեսաս, զամենայն փայտ առ սեղանն տեսան ասասուծոյ քոյ, ոչ արասցես քեզ»։ Արդ զի՞նչ ասելի է, եթէ վայելէ ասասուծոյ չինել և մեկեալ[2] յոգւոջ զառաքինութիւնս։ Բայց ինքնասէր և անեսասուած է միտն[3] որ կարծեն[4] զոյդ գոլ ասասուծոյ և[5] առնել կարծեցեալ. իբրու ինքն ի կիրս հարցեալ լինի իսկ ասասուծոյ՝ մեկոզի և սերմնեոզի յոգւոջն զրարիս։ Իսկ որ ասէ միտքն թէ ես մեկեմ, ամպարշաւէ։ Արդ ո՞չ մեկեսցես յորժամ՝ ասասուած մեկագործէ. և եթէ տունկս յոգւոջն մեկեսցես ով խորհուրդք՝ պտղաբերս մեկեա զամենայնսն, այլ մի՛ անեսաս։ Քանզի յանասսի և ի վայրենի նիւթոյն է և ընտանի ծառք։ Իսկ չարութիւն[6] զանսերն և զանպտուղն յոգւոջն՝ ընդ ընտանւոյն և ընդ պտղաբերին մեկել առաքինութեան, բորոտութեան և պիսակութեան է, երկրուսին և խառնակին ընտանի։ Քանզի եթէ զանխառնսն և զանզանկսն ի մի վայր ածցես, մեկնեա և սրբեա և որոշեա և զատոյ ի մեքրոյն և յանբիծ բնութենէն, որ մնասուցանէրն[7] զանբիծսն և զանարատսն ասասուծոյ. և է սա սեղանն։ Քանզի սորա աւասր է ասելն գործ ինչ գոլ ոգւոյ՝ յասասուած առնելով զակնարկութիւնն և զվերաբերութիւնն, և զանպտուղսն ընդ պրղաբերսն խառնել, քանզի բիծ է այս, քանզի անբիծքն ասասուծոյ մնասուցեալ լինին։ Այլ՝ եթէ յայսցանէ ինչ յանցիցես[8], ով հոգի, քեզ ինաս

1. Միւսն. Խ՝ զդրախտ։
2. Մ. գնկել Ի ընկել։
3. Մ. միտն։
4. Մ. կարծին, համաձայն յունին։
5. չունի Ի։
6. Յոյնն՝ զչարութիւնն։
7. Մ. մնասուցանին։
8. Մ. յանցանիցես։

տանես, ոչ աստուծոյ[1]։ Վասն այսորիկ ասէ. «ոչ անկեսցես քեզ»։ քանզի աստուծոյ ոչ ինչ յարմարի, և մանաւանդ վատթարքն և անարդք. և ի վերայ բերէ գարձեալ. «ոչ արասցես քեզ»։ Եւ ասէ և յայլս. «ոչ արասջիք աստուածս արծաթեղէնս և ոսկեղէնս. ոչ արասջիք անձանց ձերոց»։

Քանզի որ որակութիւն և արարուած ինչ կարծիցէ ունել զաստուած, կամ ոչ մի գոյ, կամ ոչ անեղ, անծին և անապական, կամ ոչ անկեղծելոյ և անփոփոխ և անայլայլուկ, զանձն իւր զրկէ և զրանայ, ոչ զաստուած։ Քանզի «անձանց, ասէ, ոչ արասջիք»։ Քանզի պարտ և արժան[2] համարել զնա անարակ և անարարուած ինչ, և մի՛ և անապական և անկեղծելոյ։ Իսկ որ ոչն այսպէս ընդմիտ ածէ և խոհի, զիւր զանձն սուտ և անաստուած կարծեալք ընու։ Ո՛չ տեսանես. քանզի թէպէտ և մուծցէ զմեզ յատաքինութիւնն, և ի ներքս մուծեալ անկեսցուք անպտուղ և ոչ ինչ ոչ, բայց զամենայն փայտ պիտանացու յատել, [3]հրամայէ յապատել և մաքրել զանմաքրութիւնն նոքա. այսինքն է, ի բաց հատանել զխանչումն հրապարտութեան. քանզի պիղծ է հպարտութիւն բնութեամբ։ Իսկ զոր Էստեղծ զմարդն զնել ի դրախտին, ասէ այժմիկ միայն։ Արդ ո՞ է յորոյ վերայ ասէն յեսոյ.

Երբ սա տէր աստուած զմարդն՝ զոր արար, և եդ զնա ի դրախտին՝ գործել զնա և պահել։

Մի գուցէ թէ այլ որ է մարդ այս, որ ըստ կերպարանին և ըստ տեսակին եղեալ է. մինչև երկուս մարդս ի դրասն մուծանիլ. մին զատեղծեալն, միւսն զըստ կերպարանի եղեալն. ոչ մի-

1. Միւսն. ՝ն՝ ոչ աստուծոյ։
2. Մ. արժան է։
3. Մ. յատելու. յանդէ։

այն ի անկապարծութեան առաքինութեանցն հարցեալ լինի և կրթեալ, այլ և գործաւնեայ է նոցա և պահպան՝ · և է այս, յիշումն զոլ զորոց լուաւրն, վարժեցաւն և կրթեցաւ։ Իսկ առեղծեալն՝ և ոչ գործէ իսկ զառաքինութիւնան և անկէ. բայց միայն ի ներքս մուծանի յաւրէնան, առատութեամբ անչարակնութեան առատուծոյ, հանդերձեալ անդէն վաղվաղակի փախստական յառաքինութենէն լինել[2], վասն այսորիկ զոր միայնն գնէ ի գրաստին՝ առեղծեալ կոչէ։ Իսկ զոր գործաւնեայն և պահպանն ցուցանէ՝ ոչ առեղծեալ, այլ զոր արարն. և զսա առնու, իսկ զնա արտաքս հանէ, և զոր առնուն՝ երից արժանի առնէ՝ յորոց բաղկացաւ յայնոզակ բնութիւնն, քաջունակութեան, տեղութեան, յիշողութեան։ Արդ քաջունակութիւնն՝ դիր է ի գրաստին · իսկ տեղութիւնն՝ գործք բարեացն, և յիշողութիւնն՝ զգուշութիւն և պահպանութիւն սրբոց հոգւոցն։ Իսկ առեղծեալ միտքն ոչ յիշէ զբարին. բայց միայն դիւրահուպ է, ըստ որում՝ եղեալ ի գրաստին, սակաւ մի որպէս առացին[3] ի բաց փախչի և ի բաց ընկեցեալ լինի։

Եւ ընձիւղեաց տէր աստուծոյ յերկրէ զամենայն փայտ ազնիւ ի տեսանել և զեղեցիկ յուտել. և զփայտն կենաց ի միջոցի[4] դրաստին, և զփայտն գիտելոյ[5] գիտելի՝ բարւոյ և չարի։

Զոր անկէ յոգւոյն ծառս առաքինութեան, այժմ նկարագրէ. և են այսոքիկ ըստ մասինքն առաքինութիւնքն, և ըստ առապէն[6] ներգործու-

1. Միւսն. գանգրոն, որպէս և յետոյ։
2. Մ. լինի։
3. Յոյնն. --ի-- ի յետոյ ի բ-ոյ ի-ի-ի. μικρὸν ὕστερον.
4. Միւսն. ի մէջ դր-ի-ի։
5. Մ. ի-ի-ելոյ։
6. Մ. ը-ա --ա-ն-ն։

թիւնք և վճարմունք ուղղութեանց, և որք ա-
սին առ խմնասասէրս արժանք։ Այսոքիկ են գրբ-
բատուին առնելք։ Բայց ձեացուցանէ զոսոս ազ-
գերով, զի բարին՝ և երևիլ՝ գեղեցիկ է և վայելիլ։
Քանզի ոմանք յարուեստիցն տեսականք են, այլ
ոչ գործականք, երկրաչափութիւն, աստեղաբաշ-
խութիւն. և ոմանք գործականք են, այլ ոչ տե-
սականք՝ հիւսնական, դաբբեական, և որ միան-
գամ՝ ձեռագործք ասին։ Իսկ առաքինութիւնն՝ և
տեսական է և գործական։ Քանզի տեսութիւն
ունի յորժամ՝ և առ ի նայն ճանապահ խնասաս-
սիրութիւնՀ, ի ձեռն երից մասանցն սարա՞, բա-
նականին, բարոյականին և բնականին։ Եւ գոր-
ծոս, քանզի բոլոր կենացս է արուեստ առաքի-
նութիւն, յորում՝ և առ հասարակ ամենայն գործ-
քըն՝ այլ սակայն և տեսութիւն ունելով և գործ։
Դարձեալ յերկաբանիւրումն գերազանցէ բար-
լուին։ Վասն զի և տեսութիւն առաքինութեան
ամենագեղեցիկ է, և գործն և պէտքն ամենայն։
Վասն որոյ ասէ. «ի տեսութիւն է ազնիւ», որ
էր տեսականին նշանակ. «և բարի յուսով» որ է
պիտանացուին և գործականին նշանակ։ Իսկ փայ-
տրն կենաց, է իշխանականագոյն և առաջնագոյն
առաքինութիւն, զոր ոմանք բարութիւն կոչեն,
յորմէ բան մասնիցն առաքինութիւնք բաղկանան.
յայսր սակս և ի միջոցին կառուցեալ և հաստա-
տեալ է ի գրատուին, զչարունակական վայրն ու-
նելով յերկաբանիւրումՀ՝ զաւրէն թագաւորի բա-
զան պաշտաման ընկալցի։ Եւ ոմանք ասեն զսիր-
տրն՝ փայտ ասել կենաց, վասն զի պատճառք կե-
լոյ է, և զմիջոց վայր մարմնոյն հաստեալ ընկալաւ,
իբրև բան նոցա բանին իշխանական առաջնական
գոլով։ Այլ տոքա բժշկական կարծիս արտագրե-

1. Միան. Բարին երևիլ։
2. Մ. խնասասիրիցն։
3. Ի լա. տարոն. իսկ Մ. տար. յայն բնագիրն՝ նշաց։

լով առաւել քան բնական՝ մի՛ անգիտացեալք զանխղաց, բայց մեք, որպէս և յառաջագոյն ասացաւ, զիշխանականն զառաջնական առաքինութիւնն փայտ ասիլ[1] կենաց ասեմք. զի զայս ճառարար ասէ թէ է ի միջոցի դրախտին։ Իսկ միւսն փայտ, գիտելի զբարին և զչար, ոչ ազդեաց, ոչ եթէ ի ներքս և ոչ եթէ արտաքոյ է դրախտին, այլ ասելով այսպէս.

«Եւ փայտն գիտելոյ գիտելի բարւոյ և չարի»։ Մեղէն վաղվաղակի լռեալ դադարեաց ոչ զեկուցեալ ուր ուրեք դէպ եղև գոլ սմա. զի[2] որ բնախառնութեանն անխորհուրդն և անկցորդն և անվարժն, ընդ էակն բնախառնութեանն զարմացի[3]։ Արդ զի՞նչ պարտ է ասել. զի փայտս այս ի դրախտին է, և արտաքոյ ներս. գոյացութեամբ ի նմա, իսկ զաւրութեամբ արտաքոյ իմն. նոյնպէս[4] իշխանական առաջնականս մեր ամէնընկալ է, և նմանեցաւ մոմոյ, զամենայն դաղափարս և տիպս՝ զգեղեցիկս և զամենայն ընդունելով, ըստ որում՝ և կարթաւղն ՅԱկովբ խոստովանէ ասելով «յիս եղև այս ամենայն»։ Քանզի ի մի յէ[5] ոգին՝ անբաւ և անթիւ տիպք ամենեցուն, յայնցանէ որ յամենայնիս են, ելանեն և գրին։ Արդ յորժամ ընկալցի զկատարեալն առաքինութեան զդիծ ձևոյ՝ եղև կենաց փայտ. իսկ յորժամ չարութեանն, եղև գիտելոյն գիտելի բարւոյ և չարի։ Իսկ չարութիւնն հայածեալ արտաքս հանեալ է քան զմեծ և զպանչելի և զաստուածային պարն։ Արդ ընդունաւղն սարա, իշխանական առաջնորդականն, ի ներքս ի դրախտին է ըստ գոյացութեան, քանզի ի նմա է[6] և

1. Միւսն —էլ։
2. Յոյնն. զի զ որ։
3. Մ. զարմացա—։
4. Յոյնն. πως, որ նշանակէ և որդէ—։
5. Մ. է զ է ի։
6. Մ. է նմանէ։

առաքիութեանն ձև՝ ընտանի և բուն գոլով ի գրաստին· և զաւրութեամբ դարձեալ ոչ է ի նմա, վասն զի գաղափար չարութեանն աւտար է յառաւաժայինց արեգից[1]։ Իսկ զոր ասեմն՝ այսպիսի զբ ուսանել կարասցէ։ Այժմ ի մարմնիս իմում՝ իշխանական առաջնորդականն բան գոյացութեան է, իսկ բան զաւրութեան յիտալիա, կամ՝ ի Սիկիլիա[2], յորժամ երբեք յաղագս վայրացս այսոցիկ ընդ միտ ածեալ ինչ խոհիցի[3]· և յերկնի՝ յորժամ վասն երկնի ինչ դիցէ[4] և քննիցէ՝ բան որում՝ ի պիղծ և ի խեղ վայրս բազում՝ անգամ՝ լինին ամենք։ Իսկ բան գոյացութեան ի սուրբ տէրունական վայրս եղով, երևութանան տեսանելով զառաքինութիւնս[5]։ Եւ դարձեալ այլ աւրինակ· յաղս ի ներքինս գոլով խորհրդովքն են պիղծք և խեղք, վասն յեղյեղմունս առ ի վաթարն և տիպս ամբ առնուլ չարս։ Ապա ուրեմն ոչ ի գրաստին է սիրան և ոչ չէ. քանզի կարէ գոլ բան գոյացութեանն, բայց զաւրութեամբ ոչ կարէ։

Եւ գետ արտաքս խաղաղ յաղեկնայ ռեռգանել զդրաստն· անդուռան որոշեալ մեկնիմ[6] ի չորս առաչս· անուն միոյմն Փիսոն· սա է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ, անդ ոսկի, և ոսկի երկրին այնորիկ գեղեցիկ. և անդ է սուտակն, և ակն դահանակ։ Եւ անուն գետոյն երկրորդում Գեհոն. սա է որ պատէ զամենայն երկիրն Եթիոպացւոց[7], և գետն երրորդ Տիգրիս, սա է որ գնայ դէմ յանդիման Ասորեստանի· և գետն չորրորդ՝ Արատ։

1. Յոյնն՝ ὁ τύπος ὁ κακίας ἀλλοτρίος εστι θείων ἀνατολῶν.
2. Մ. Սիկիլիա։
3. Մ. խորհեսցի։
4. Մ. դիցէ։
5. Մ. զառաքինութիւնս։
6. Մ. մեկնի։
7. Մ. Եթիոպացւոց։

ի ձեռն սոցա կամի զբան մասին առաքինութիւնն նկարագրել. և են թուով չորք, խոհականութիւն՝ և ողջախոհութիւն, արութիւն՝ և արդարութիւն։ Արդ մեծ գեան՝ որոյ չորք վտակք եղեն, սեռական առաքինութիւնն է, զոր բարութիւն՝ անուանեն. և չորք վտակքն՝ հանդիսաբիւք առաքինութիւնք։ Արդ առնու սկզբունսն սեռական առաքինութիւնն յեղեմոյ, յաստուծոյ իմաստութենէն, ընդ որ խնդայ և զուարճանայ և խրախ լինի ի վերայ միայնոյ հաւրն իւրոյ ցնծալով և նաղելով և հրճուելով աստուծոյ։ Իսկ տեսականքն[2] չորքն, ի սեռականէն որ զաւրէն գեղոյ առոգանէ զվճարմունս ուղղութեան իւրաքանչիւր ումեք, բազում՝ և սաստիկ յորձանաւք գեղեցիկ[3] գործոցն։ Բայց տեսցուք և զբառս։

«Գետ ասէ[4] գնայր յեղեմոյ, արբուցանել զդրախտն»։

Գետ սեռական առաքինութիւնն[5] է բարութիւն։ Սա արտաքս խաղացեալ գնայ յեղեմոյ, յաստուծոյ իմաստութենէն, և է սա աստուծոյ բանն։ Քանզի ի սմանէ որակացեալ և արարուած ընկալեալ է սեռական առաքինութիւնն. և զդրախտն արբուցանէ սեռական առաքինութիւնն, այսինքն է զ՝ըստ մասին առաքինութիւնս առոգանէ. և սկզբունն[6] ոչ զտեղականսն առնու, այլ զառաջնականսն։ Քանզի իւրաքանչիւր զի յառաքինութեանցն՝ իշխանաւէտ և առաջնական և բամբիշն ճշմարտութեամբ է։ Իսկ որոշին և մեկնին, այսինքն է՝ սահմանաւք որոշացեալ և եղերացեալ է խոհականութիւնն առնելեաւքն, սահմանս նոցա դնելով.

1. Մ։ան. Բ–ր–Ի–ն։
2. Մ. Ի–ն գ–ա–ն ինն։
3. Մ. ՀԷՒՅՇՆԻ։
4. Մ. –ր–ա–ս ք–ն–ս։
5. Մ. –––ն–Ի–ն–ն։
6. Մ. –ԿԶԲ–ն–, ըստ յոյն բնագրին։

իսկ արութիւնն համբերելեաւքն, իսկ ողջախոհութիւնն՝ կամելեաւքն, և արդարութիւն բաշխելեաւքն[1]։

Աւետն միոյն փիսոն, սա է որ պատէ զամենայն երկիրն զԵւիլատ[2], անդ ոչր ոսկին է, ոսկի երկրին այնորիկ բարի. և անդ է սուտակն և ակն դահանակ։

Զորիցն[3] առաքինութեանցն մի տեսակ է խոհականութիւն, զոր փիսոն անուանեաց, առ ի խնայել և զընդաց և պահել զոգիսն յանկարութենանց։ իսկ պարարտեալ պատէ և շուրջ գայ զԵւիլատաս, այսինքն է գնաչատական և գնեզ և գնամբոյր կազմութիւն յարմարութեան մտաուցանէ գարմանս։ Քանզի զոր աւրինակ հայտն և տարածուն գոյացութեանն լաւագոյնն և փոքրագոյնն և հանոյագոյնն ոսկի է, այսպէս և հոգւոյ փոքրագոյն առաքինութիւնն խոհականութիւն եղև։ իսկ անդ ուր ոսկին է՝ ոչ է տեղական. որդան, անդ ուր է ոսկին. այլ անդ որպ տացուած է, ոսկեճաճանչն և հրաձեւն և տարաշէկն, և պատուականն խոհականութիւն, և տացուած տաուծոյ՝ գեղեցիկ սա յիրաւի խոստովանեալ է։ Իսկ ըստ տեղւոյ խոհականութենանն երկու են որակք արարուածք, խոհունն[4] և խոհաւոն. զոր[5] սուտակի և ական դահանակի նմանեցոյց։

«Եւ[2] անուն գետոյն երկրորդի Գեհոն, սա պատէ զամենայն զերկիրն Եթեոպացւոց։

Նշանակաւոր գետս այս է արութիւն։ Քանզի

1. Միսն. Լ. բաշխիչքն։
2. Մ. ղեհիլատաս։
3. Մ. է ղորիս։
4. Մ. խոհունն։
5. Մ. զոր։

մեկնեալ՝ Գեհոնդ անուն է՝ լանջք կամ եղջերց ելով, և երկաքանչիւր ոք՝ արութեան վարժիչք և խորհրդոյ վարդապետք են։ Քանզի առ լանջաւքն ուր և սիրան չրջի՝ և առ ի վրէժխնդրութիւն պատրաստեալ է։ Քանզի մեկացութիւն ի հանճարոյ է համբերելեացն, և ոչ համբերելեացն և չէզոքացն քանզի շուրջ պատէ և մնաւ անցեալ նստի, և պատերազմ՝ ասայ ընդ Եթէոպիա, որ՝ թարգմանեալ է անունն նուաստութիւն, և նուաստ է երկչոտութիւն։ Իսկ արութիւն՝ ներաստութեան և երկչոտութեան թշնամի և հակառակ է։

Եւ գետն երրորդ Տիգրիս։ սա է որ գնայ դէմ յանդիման Ասորեստանի։

Երրորդ է առաքինութիւն[1] ողջախոհութիւն, որ հակառակ կայ այնմ՝ որ ուղղեն թուի, և վարժել զմարդկային տկարութիւնս, հեշտ ցանկութիւն։ Քանզի ասորիք՝ ուղիչք հայ լեզուով ասին. և Դկղաթու անձեռներնդելի վայրենի կենդանւոյն զցանկութիւնն նմանեցոյց առ որով ողջախոհութիւնն գործեալ լինի։ Եւ պարտ և արժան է ի վարանս տարակուսի անկանել, թէ երբեմն երկրորդ զարութիւն, և երրորդ զողջախոհութիւն, և առաջին խոհականութիւն ասացեալ է, և ոչ այլ ինչ դասս առաքինութեանցս զնկոյց։

Արդ խմնալի է զի է մեր երկրմանեայ հոգիս, և ունի մասն՝ է ինչ որ բանական, և է որ սրտմտական, և է որ ցանկական։ Եւ զէպ եղև պատահել և բանականին վայր գոլ և չրջանք գընացից՝ գլուխն։ Իսկ սրտմտականին լանջք, և ցանկականին՝ ներքին համբ։ և առաքինութիւն իւրաքանչիւրում՝ մասանցն բուն և ընտանի յար-

1. Միան։ -ԲՅ։
2. Մ։ ----ԻՆ--ՐԼ--Ն։
3. Մ։ Բ--- ----ԻՆ--ՐԼ--ՆՅՆ։

մարել տալ՝ բանականին խոհականութիւն. քան-
զի խորհրդոյ և մտածութեան է մեկացութիւն
և հանճար ունել զորոց պարտ և արժան է առ-
նել ինչ՝ և յորոց ոչ և սրտմտականին արութիւն,
և ցանկականին ողջախոհութիւն. զի ողջախոհ-
թեամբ զցանկութիւնս բժշկեսցէ և ողջացուցա-
նեսցէ։ Քանզի որպէս զլուսս առաջին կենդանւոյն
և վերնագոյն մասն է, և երկրորդ լանջք, և եր-
բորդ ներքին հաւք։ Եւ զարձեալ հոգւոյ առա-
ջին՝ բանականն է, և երկրորդ սրտմտականն, և
երրորդ ցանկականն։ Այսպէս և առաքինութեանց՝
նախ առաջին որ և առաջին մասին ոգւոյն՝ որ և
բանականն է, և ի մարմնին շրջեալ յածին առ-
զլուխ, խոհականութիւն. և երկրորդ արութիւն.
զի առ երրորդում մասին ոգւոյն սրտմտութիւն,
և մարմնոյ լանջք որ ջանան, և երրորդ ողջախո-
հութիւն, զի առ ներքին համն, որ երրորդ է
մարմնոյս՝ և առ ցանկականին, որ զերրորդն հաս-
եալ ընկալաւ վայր յոգւոյն՝ իրագործի։

Եւ զկտն չորրորդ սա Այրեանի։

Պողաբերութիւն կոչի Արածանի և է նշանա-
կաբէն առաքինութիւն չորրորդ՝ արդարութիւն,
արդարն էապէս պողաբեր և ուրախ առնուզ
զմիտս։ Արդ երբ այս լինի։ Յորժամ երկուք
մասունք ոգւոյն՝ շարաձայնութիւն միաբանութեան
ունիցին. և շարաձայնութիւն միաբանութեան է
սոցա՝ լաւին իշխանութիւն և առաջնութիւն.
որպան, յորժամ երկուք՝ սրտմտականն և ցան-
կականն սանձահոծիցին[2], և վարիցին իբրև ձիք,
ի բանականէն, յայնժամ լինի արդարութիւն[3]
Քանզի արդարն իրաւացի է լաւին՝ իշխել միշտ

1. Միան. Յոյնն՝ ἐρε+. τα πρία μέρη·
2. Մ. --ՆՒ-ԼԵՆ.
3. Մ. ՆԵ+.

և ամենայն ուրկ. իսկ վատթարին՝ իշխել, և լաւ է բանականն, և վատթար ցանկականն և սրտմբռտականն։ Եւ յորժամ գարձեալ բմբռնկեալ՝ խեռեսցէ և ընդ վզեսցի սրտմտութիւնն և ցանկութիւնն, և զերասանակրնկալ՝ կառավարն, այսինքն ասեմ՝ զխորհուրդն՝ բռնութեամբ յարձակմանն ի վայր արկեալ ի գարշ արկցէ և ի բաց ելցէ ի լծոյն, և երկաքանչիւր ախան բուռն հարցէ զերասանակացն, անիրաւութիւն իշխէ և տիրէ և զաւրանայ։ Քանզի հարկ է անփորձութեամբ և վատթարութեամբ և չարութեամբ կառավարին բառ ձեռն ելեալքն՝ ի գահիցն վիժել և ի վիհս անկանել։ Որպէս հմտութիւն և տեղեկութիւն և առաքինութիւն ամբողջ ապրեցուցանել։ Եւ այսպէս ևս տեսցուք զառաջիկայս։

Փիսոն թարգմանի բերանոյ այլայլութիւն. և Եւիլատ՝ որ յերկունս է, և ի ձեռն սոցա խոհականութիւնն[2] երևի։ Քանզի բաղումք խմնասուն կարծեն զգտակն բանից խմնասակաց, և զմեկայ և բաւական մեկնել զիմացեալն։ Եւ Մոսէս բանասէր զնա գիտէ գոլ, բայց խմնասուն և ոչ միով իրաւք, քանզի այլայլութեամբ բերանոյն, այսինքն է՝ մեկնեցելոյ բանին խոհականութիւնն տեսանի. որ էր ոչ բանիւ խոհել, այլ գործովք տեսանիլ և առաքինի գործովք. և շուրջ բակ արկանել, և իբրու գործովք[3] պարիսպ խոհականութիւնն զԵւիլատաւ, զայնու՝ որ երկնեն անզգամութիւն՝ առ պաշարումն նորա և քակտումն. և անզգամութիւն իսկ և տէր անուն[4] է այնր որ երկնեն։ Զի անզգամ միոք անհասիցն ցանկալով՝

1. Միւան. ԸՆԴՀԱՆՐ։
2. Մ. յաւելու՝ Խ—Ն, գնելով ի լուսանցս։
3. Զիք ի յոյնն բառդ ՖՐՅԱՆ, թէպէտ ունին երկու օրինակք մեր։
4. Մ. ՆՇԱՆ... այնմ որ երկնեն. և յաւելու ի տողս ի ՋԻՑՆ՝ իբրու ուղղագոյն ընթերցուած. ԹՈՆԻ ՆՇԱՆՈՒՆ ԽԱ ԳԻՐՈՎԻ ՆՇԱՆ Է։

հանապազ յերկունս է. զի[1] ընդ ստացուածս է տուփեալ, և է զի ընդ փառս, և է զի ընդ հեշտ ցանկութիւնս, և է զի այլոյ խիկ. և յերկունս ելով ոչ երբեք ծնանի։ Քանզի ոչ բնաւորեցաւ ոչ ինչ պտղաւոր և սերուն կատարելաբերել վատթարին հոգի, բայց զորս գործէրն[2] ի դուրս բերել և ծնանել, վիժածք և թերածինք և անցք գըտանին[3]. ուտելով և փաղաղելով զկէս մարմնոցն սորա, զոյգ հոգեկան մահու, ըստ որում և պիտայ[4] տէրունեան բանն Ահարոն աստուածասիրին Մովսէսի, բժշկել զխոտորումն Մարիամու, զի մի եղիցի յերկունս չարեաց ոգին։ Վասն որոյ և ասէն. Մի եղիցի իբրու զոյգ մահու. իբրև վիժած որ ելանէ յարգանդէ մաւր և ուտէ զկէս մարմնոց իւրոց։

Արդ՝ «անդ, ասէ, ուր ոսկին», ոչ ասէ անդ գոլ զոսկին միայն, այլ անդ որոյ է, քանզի խոհականութիւնն, զոր նմանեցոյց աննենդ և անխոտան ոսկւոյ, և մաքրոյ և ջեռուցելոյ, և ընդ փորձ անցելոյ, և բնութեամբ պատուականի, անդ է յաստուծոյ իմաստութեանն ստացուած. այլ որոյ և ինքն իմաստութիւնն է արարչին և ստացողին աստուծոյ։ «Եւ ոսկի երկրին այնորիկ բարի է», ապա ուրեմն գոյ այլ ոսկի ոչ բարիք։ Եւ կարի քաջ։ Քանզի երկդիմի է[5] խոհականութեան տեսակ. է որ ընդհանուր, և է որ մասնաւոր։ Արդ յիս խոհականութիւնս մասնագիր ելով՝ ոչ անապական է. քանզի յապականութիւն մասնանցելոյ իմ՝, ընդ իս ապականի։ Իսկ ընդհանուր խոհականութիւնն որ բնակէն յաստուծոյ իմաստութեանն և ի տանն նորա, գեղեցիկ է և բա-

1. Միան. է զէ։
2. Մ. ՀՐԱ ՔՐԴԵՆ. յոյնն՝ ԿՐԴԷՆ։
3. Մ. ՔՐԱՆԷՆ։
4. Մ. ՊԷՏՈՅ։
5. Մ. յաւելու. Է։

բի. քանզի անապականն՝ յանապական ասն միշտ կայ մնայ։ Եւ անդ է սուտակն[1] և ակն դահանակ երկուք որակք արարուածք, խոհումն և որ խոհին այն որ կայն բան խոհականութեան՝ իսկ որ խոհին՝ բան խոհելն։ Քանզի յաղագս այսց որակաց սերմանեաց ասասած ի հողածնին խոհականութիւն և առաքինութիւն։ Քանզի զի՛նչ աւգուտ էր նոցա, թէ ոչ ընդունական խորհուրդքըն կային, որք զդաղափարս և զտիպսն սորա յինքեանս նմանաձև կերպարանէին։ Այլ ուրեմն յիրաւի վայելչաբար անդ է ուր խոհականութիւնքն՝ և խորհուրդն և խոհաւդն։ Երկուք[2] քարինքըն մի գուցէ Յուդայ է և իսաքար։ Քանզի ասասուածոյ խոհականութեանն վարժաւոր, խոստովանեալ լինի մեծաւ գոհութեամբ այնմ՝ որ զբարին առասուածեամբ պարգևեաց՝ Յուդա. և զբարիսն և զառաքինութիւնսն գործէ իսաքար։ Արդ այնր որ խոստովանէն՝ Յուդա, նշանակ՝ առ որում՝ և զտեղի առնու ծնանելով Լիա։ Իսկ այնր որ գործէ զբարիսն՝ իսաքար. քանզի եդ զուս իւր ի գործել և եղև այր մշակ. յորոյ վերայ ասէ Մովսէս, սերմանեցելոյ և անկեցելոյ յոգւոյն է վարձ, որ էր աշխատութիւնն ոչ անկատար՝ այլ պատկեալ յասասուածոյ և վարձ ընկալեալ, և զի զսոսա յիշէ, ի ձեռն այլոց ազդէ յորժամ՝ ի վերայ պճղնաւորին ասէ։

Եւ անկցես ընդ նմա անկ քառակարգեան. կարգ[3] քարանց եղիցի սարդիոն, տպազիոն, զըմրուխտ՝ և կարգն մի, Ռուբեն, Շմաւոն, Ղևի։ Կարգն երկրորդ սուտակ և շափիղայ։ Եւ շափիղայդ դահանակ ակն է և գծագրեալ է ի սուտակին Յուդա, քանզի չորրորդ։ Իսկ ի շափիղային Իսաքար։ Արդ ընդէ՞ր ոչ որպէս զքարն զդահա-

1. Միան. քերելով ուղղէ և գրէ [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։

նակն ասաց այսպէս և զբարն սուտակ։ Վասն զի Յուդա խոստովանողական յեղանակն՝ անենիւթ է և անմարմին՝ և քանզի նոյն իսկ անուանդ խոստովանողութիւնդ։ Երևեցուցանէ զարտաքոյն[2] իւր ըզխոստովանութիւն։ Քանզի յորժամ ելցեն միտքն և զինքն ի վերս տարեալ հանեալ մատուցանեն աստուծոյ, որպէս ծաղրն խաչակ[3] յայնժամ խոստովանութիւն զատ էն՝ էապէս գործէ. իսկ ցորքան ժամանակս[4] զինքն ի ներքոյ եդեալ իբրու պատճառս իրիք՝ հեռի ուրեմն մեկուսի անցեալ կայ՝ տեղի տալ աստուծոյ և խոստովանել նմա։ Քանզի նոյն իսկ ինքն այս խոստովանեալս իմանալի է. զի գործ է ոչ հոգւոյ, այլ այնոր որ երևեցուցանեն սմա աստուծոյ զդոհացողականն։ Արդ անենիւթ է խոստովանաւղն Յուդա՝ իսկ յաշխատութենէն յառաջ անցելոյ խաչարարայ՝ պէտք են և նիւթոյ մարմնականի. ապ՝ եթէ ոչ՝ զիարդ կարացէ ճանաչել և գիտել առանց աչաց որ ի վարժի կայ. և զիարդ լուիցէ յորդորական բանիցն առանց լսաւորութեան. և զիարդ կերակրոյ և ըմպելեաց ընդհարումն և բախումն գործեսցէ առանց որովայնի և առ ի այն արուեստագործութեան, վասն այսորիկ քարի նմանեցաւ։ Եւ գոյնքրն զանազանք. քանզի խոստովանողին ըմբռն և ընտանի և ի դէպ գոյն[5] սուտակին. քանզի ջերուցեալ և հրագոյն ի գոհութեան աստուծոյ, և արբեալ է զգաստ արբեցութեամբ։ Իսկ որ գեռ ևս յերկս աշխատութեան կայ, դահանակ ասան, քանզի գեղինք են որ ի վարժս[7] կան, վասն ճրնշողի և տառապեցուցչի երկոցն, և վասն երկիւ-

1. Միւսն. ՝ՆՈՒՆՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻՆՔ։
2. Մ. ՀՐԱԳՈՅՆ։
3. Մ. ԽԱՉԱԿՅ։
4. Մ. ՀՈՒՆՅՆ։
5. Մ. ՀՄԱՆԱԿ։
6. Մ. ՖՈՆ։
7. Մ. Ի ՎԱՐՍՆ։

զի՝ զի մի՛ դուցէ վրիպեսցէ ի տենչալի և յրդ-
ձալի կատարածէն։ Բայց արժան է ի փարանս
մնանել։ Ընդէ՞ր երկու գեղջն պատեն, Փիսոն
և Գեհոն, ոմն զերկիրն Եւիլատ, և միւսն զԵ-
թիոպիա, իսկ այլոցն և ոչ մի զի, այլ Տիգրիս
զէմ՝ յանդիման ասորեստանի ասի գնալ և Եւ-
փրատէս[1] և ոչ ուրուք։ Եւ սակայն ճշմարտութեամբ՝
Եւփրատ շուրջ զգաւառաւք ամամբք գնայ, և ընդ-
դէմն ունի բազումս։ Այլ ոչ է յաղագս գեղոյ
բանս, այլ յաղագս բարուց ուղղութեան։ Եւ արդ
ասելի է, զի խոհականութիւնն և արութիւն, կա-
րեն պարիսպս[2] և շրջանակս արկանել զհակառա-
կաւք չարեացն, զանզգամութեամբ և զերկիւղիւ,
և սատակել զնոսա. քանզի տկարք են և գիւրա-
ըմբռնելիք երկոքեան։ Քանզի անզգամն՝ գիւրա-
ըմբռնի յիմաստնոյն, և երկչոտն՝ սաքրեաց ընդ-
արեաւն։ Իսկ ողջախոհութիւնն ոչ կարէ շուրջ
փակել զցանկութիւն և զհեշտ ցանկութիւն, քան-
զի գժուարք հակառակորդք և գժուարպակ են։
Ո՞չ տեսանես զի արդեաւորքն և յաղթիկքն[3],
հարկաւորաւք մնհկանացուին գան ի կերակուրս
և յըմպելիս՝ յորոց որոմայնիւք[4] հեշտ ցանկու-
թիւնք բազկանան։ Արդ սիրելի է ընդդիմանալ և
մնարանչել ընդ ազգի ցանկութեան. վասն որոյ զէմ՝
յանդիման ասորեստանեայց է Դիկղաթ[5] գետն,
ողջախոհութիւն հեշտ ցանկութեան՝ իսկ արդ-
արութիւն բան որում՝ և Եւփրատէս գետ բազկա-
նայ, ոչ փակեալ պատէ և պաշարէ զոր, և ոչ ընդ-
դէմ կայ։ Վասն զի բաշխաւուր բան արժա-
նեացն է արդարութիւն, և կարգեալ է ոչ բան
ասելոյն, և ոչ բան աղերսողին՝ այլ բան գաստա-
ւորին։

1. Միւսն. Եփրատ, Եփրատէս։
2. Մ. պարիսպ։
3. Մ. յաղթիկանդ։
4. Մ. որովայնիք։
5. Մ. Դիգլաթ։

Արդ որպէս դատաւորն ոչ յաղթել ոմանց կամի և ոչ պատերազմ տալ ընդ ոմանս և ընդդիմանալ, բայց խրատս հրամանն տալ[1] առթէ զարդարութիւնն, այսպէս արդարութիւնն ոչ ուրուք ելով ոսոխ[2], բաշխէ տայ զարժանիսն ըստ իւրաքանչիւր իրի։

Եւ էառ տէր աստուծոյ զմարդն զոր արար, և եդ զնա ի դրախտին գործել զնա և պահել։

Ի ստեղծեցելոյն զանազանէ զոր արարն աստուած որպէս ասացի զմարդն՝ քանզի ստեղծեալն միտք է հոգեղէնագոյն, իսկ արարեալն անանիւթագոյն է՝ յապականացու նիւթոյն անկցորդ և ընդունակ մաքրագունի և լուսաւորագունի բաղկացութեան։

Արդ զմարդս զայս զմիտս առնու աստուած՝ ոչ տուեալ թոյլ արտաքոյ իւր գնալ. և առեալ դնէ ի ներքս յարմատացեալս և 'ի բուսեալ յառաքինութիւնսն զի գործեսցէ զնոսա և պահեսցէ։ Քանզի բազումք ի վարժ անկեալք առաքինութեան ի վախճանին փոխեցան։ Իսկ որում մատուցանէ հաստատուն հանճար մակացութեան աստուած, սքանչ տայ զերկոսեանն, գործել զառաքինութիւնն՝ և ոչ երբեք ի նոցանէ ի բաց կալ և հեռանալ, այլ միշտ համբերել և պահել զիւրաքանչիւր։ Արդ գործելն՝ փոխանակ իրացել է[3]. իսկ պահելն՝ փոխանակ յիշելոց է։

Եւ պատուիրեաց տէր աստուծոյ Ադամայ և ասէ. Յամենայն փայտէ որ է ի դրախտիդ ուտելով կերիջիր, բայց ի փայտէդ գիտելոյ զբարի և զչար՝ ոչ կերիջիք ի նմանէ. զի յորում աւուր կերիջիք ի նմանէ՝ մահու մեռանիջիք։

1. Միան. գ-ը-վ։
2. Մ. ---ի։
3. Մ. Յոյնն. ἀντὶ τοῦ πράττειν.

Որովհետև Աղամայ պատուիրէ, ո՞ է սա, փարանելի և տարակուսելի է։ Քանզի յառաջագոյն ոչ յիշէ զսա. բայց այժմ առաջին անուանեաց զսա. մի գուցէ թէ կամի քեզ զտեղծեցելոյ մարդոյն դէմ յանդիման կացուցանել զանունն, և կոչէ զնա, ասէ, երկիր. քանզի այս[1] Աղամդ թարգմանի։ Արդ յորժամ լսեա[2] ադամ, երկրային և ապականացու միտս գոլ կարծեա, քանզի ըստ պատկերին ոչ երկրային՝ այլ երկնային է։

Եւ խնդրելի է, ընդէ՞ր այլոցն ամենեցուն եղ[3] անուանս, ի վերայ իւր ոչ եդ։

Արդ զի՞նչ ասելի է։ Մինչ որ յիւրաքանչիւր ումեք ի մեզ են, այլումն ամենայնի կարէ հասանել, բայց զինքն գիտել ոչ ունի կարողութիւն։ Քանզի որպէս ակն զայլն ամենայն տեսանէ, և զինքն ոչ տեսանէ[4], այսպէս և միտք՝ զայլսն խմանայ, բայց ինքեան ոչ հասանէ։ Իսկ արդ ասասցէ զք. ո՞ զք է և որպիսի՞ հոգի, կամ աւդ, կամ հո՞ւր, կամ արի՞ւն, կամ ա՞յլ ինչ մարմին, կամ այսքան, եթէ մարմի՞ն է, կամ դարձեալ անմարմի՞ն։ Եւ ապա ո՞չ շամբուշ մոտացիք են, որ յաղագս աստուծոյ գոյացութեան ընդ միտ ածեալ խոհին։ Քանզի եթէ զիւրոյ գհոգւոյն գոյացութիւն[5] ոչ գիտեն, զիա՞րդ յաղագս բոլորեցունն[6] ոգւոյ ճըշդըրտել և ստուգել ինչ կարասցեն. քանզի բոլորեցունն հոգի աստուած է ըստ մտածութեանն։

Արդ արժանապէս Աղամ, այսինքն միտքն, զայլսն անուանելով և ի վերայ հասանելով, անձին իւրում անուն ոչ գնէ, փոսն զի ինքն ոչ գիտէ զիւր բնութիւնն, և պատուիրէ սմա և ոչ ըստ կերպարանին և ըստ տեսակին՝ եղելում։ Քանզի

1. Մ. [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Մ. չունի զբանդ. և [illegible] ոչ [illegible]։
5. Մ. [illegible]։
6. Մ. [illegible]։

նա՝ և առանց յարգանքից ունի զառաքինութիւնն ինքնուսմնաբար. իսկ սա առանց վարդապետութեան ոչ կարացէ խոհականութեանն հասանել։ Եւ զանազանեալ են երեքին այսոքիկ, հրամանն, հրաժարումն, պատուիրան և խրատաւորութիւնն։ Քանզի հրաժարումն մեզաց՝ որ լինի և առ վաղմարդ. իսկ հրամանն, զուգիր ինչ վրճարելն։ իսկ խրատաւորութիւնն առ միմիանս՝ որ ոչ առաքինի է, և ոչ վաղմար։ Քանզի ոչ մեզանչէ, իբրու թէ հրաժարեցուցանել ինչ նմա, և ոչ իբս վճարէ ըստ ուղիղ բանին հրամանի. այլ պէտք են նմա խրատաւորութեան, այնր որ արդեալ ունի վաղմարացն՝ ուսուցանել, և յարգանքն բաղձալ և ցանկալ առաքինեաց։ Արդ կատարելումն այնմ՝ որ ըստ կերպարանին՝ հրաժարել, կամ՝ հրաժարեցուցանել, կամ՝ խրատ տալ ոչ ինչ պիտոյ է։ Քանզի ոչ երկիր ի տցանէ կատարեալն կարաւտ է, իսկ վաղմարին հրամանի և հրաժարեցուցանելոյ է պէտք. իսկ տգիտութիւն, խրատաւորութեանն և վարդապետութեան. որպէս կատարելումն քրիստոնի կամ՝ երաժշտականի, ոչ ինչ պէտք են պատուիրանի յարուեստս։ իսկ այնրմ՝ որ յանցանէն և սխալին առ ի սեստուածն, իբրու տարենաց ինն հրաման հրաժարումն ունոյց։ իսկ այնմ՝ որ այժմ ուսանի՝ վարդապետութեան։ Արդ վայելչաբար հոգեղինին՝ որ ոչ վաղմարն է և ոչ առաքինի, այլ միմեանմ, զայժմուս պատուիրէ և խրատ տայ, և խրատաւորութիւնն լինի ի ձեռն երկոցունց կոչմանցն, տեառնն և տառուածոյն[2]։

Քանզի պատուիրեաց տէր աստուած, զի եթէ հաւանեացի խրատուցն՝ առաւծոյ բարեգործութեանցն արժանի լինի. ապ՝ եթէ խեռեալ տամբակեսցէ և ընդվզեսցի ի տեառնէն[3], իբրն ի

1. Միւսն. ոչ ոգիելոցն ի վարիրացն։
2. Մ. Եղիցուցեալն պէտս և առաւուծոյն։
3. Մ. ի դէն։

տեսանէ և յիշեսանէ թշնամեանցի։ Վասն որոյ և յորժամ արտաքսն հանիւր ի դրասանէն՝ զասին զայս կոչմունս ընկալաւ, քանզի ասէ. «և արտաքս եհան զնա տէր առտուած ի դրասանէն փափկութեան, գործել զերկիր, յորմէ՝ առաւն», զի ի վերայ կայցէ երբեմն տէր՝ տէրն, և երբեմն բարեբար՝ առտուածն. զի ի ձեռն երկոցունց զառաքաւորն պատժել. քանզի ի ձեռն որոց յորդորէրն զաւրութեանց, ի ձեռն սոցա ի բաց յուղարկեսցէ։ Եւ զորս խրատն ասայ՝ այսոքիկ են։ Յամենայն փայտէ դրասանին՝ ուտելով ուտել։ Յորդորէ զոգին մի ի միոջէ փայտէ, և մի ի միոջէ առաքինութենէ, այլ յամենայն առաքինութեանց ուղղել։ Քանզի ուտելն նշանակ է կերակրոյ հոգեկանի. քանզի կերակրի հոգի ընդունելութեամբ բարեացն, և գործովք ուղիղ վճարմանցն։ Ոչ միայն ասէ, կերիջիր, այլ և ուտելով, այսինքն մանր ազացեալ և ծամեալ. մի զաւրէն զեղջկի, այլ զաւրէն մարտիկ ըմբշի զկերակուրն. զի զաւրութիւն և հարատութիւն ասացի։ Քանզի և ըմբշացն մարզիչքն պատուիրեն, ոչ կուսարանել, այլ պարապով մանրել. զի յաճումին՝ զաւրութիւն ասցեն։ Քանզի այլ աւրինակ՝ ես և[2] ըմբիշն կերակրիմք. զի ես յաղագս կելոյ միայն, իսկ ըմբիշն յաղագս պարարելոյ և գիրանալոյ, և զաւրութիւն առնելոյ. ըստ որում՝ և մի իմն ի վարժականացն է մանրելն զկերակուր, ուտելովն ուտել, այսպիսի իմն է։ Եւ այլ ևս ճշդրտագոյն տպաւորեսցուք զայս. պատուէրն զծնաւղն՝ ուտելի և կերակրելի է այլ աւրինակ բարիքն, և այլ աւրինակ վատթարքն պատուեն։ Քանզի ամենք վասն սովորութեան որք ոչ ուտելով ուտեն, իսկ երբեմն ուտելով, յորժամ մերկացին և զպատճառսն քննելով դատեսցին, որոշելով կամուսր, եթէ բարւոք է այս։ Եւ

1. Միան. յ---դ։
2. Մ. Ա -ղ։

պատճառքն այսպիսիք են. ծնան զմեզ, սնուցին, խրատեցին, ամենայն բարեաց պատճառք եղեն։ Եւ դարձեալ ուտելի է զէն պատուել. բայց ուտելովն, յորժամ և հանդերձ զգլխաւորն մերկանալով և զպատճառն հատուցանելով։

Եւ ի փայտէն գիտելոյ բարի և չար ոչ կերիջիք ի նմանէ։

Այս ուրեմն ոչ է ի դրատին փայտս այս։ Քանզի եթէ յամենայնէ ուտել պատուիրէ ի դրրատողացն, և ի սմանէ ոչ ուտել, յայտ է թէ ոչ է ի դրատին բնականաբար, այլ զաւրութեամբ. և է գոյացութեամբ, և ոչ զաւրութեամբ։ Քանզի որպէս ի մեմի զաւրութեամբ են ամենայն կենդանք, իսկ կատարելութեամբ մի միայն ի ներքըս անդ տպաւորեալ է, այսպէս և յոգւոյն մեմնաձևի եղոյ, ամենայն տիպք պարունակին զաւրութեամբ՝ ոչ կատարուածով. բայց ունի և ըմբռնէ միշտ գծեալն և ձևացեալն ի նմա, մինչ ցորքան ոչ է ի բաց ջնջեալ յայլմէ, ներգործագոյն և յայտնագոյն առուել ի վերայ գծեցելոյն։

Զկնի որոյ և ընդ այն տարակուսելի է, զի յորժամ խրատ տայ յամենայն փայտէ դրատին ուտել, զմի յորդորէ. և յորժամ հրաժեշտ տայ ի կիր առնուլ զփայտն՝ ընդ բազումն խառսի։ Քանզի անդ «յամենայնէ կերիջիր», իսկ աստ «ոչ կերիջիք», և յորում՝ աւուր կերիջիք՝ ոչ կերիջիր, և մեռջիք՝ ոչ մեռջիր։

Արդ ասելի է զայս նախ առաջին, զի սակաւաւոր[1] է բարին, իսկ չարն բազմաբեղուն. փան այսորիկ խնամուն գտանել՝ մի միայն գործ է, իսկ վատթարացն բազմութիւն անթուելի։ Արդ յիրաւի ուրեմն միումն[2] պատուիրէ առաքինու-

1. Միան. -կ---ր։
2. Մ. ի---ի ի դ---ն։

թեամբք կերակրիլ՝ և բազմաց յաղագս ի խորամանգ չարագործութենէն ի բաց կալ. քանզի սովաւ բազումք վարին։ Եւ երկրորդ, յառաքինութեան ընդունելութիւն և ի վար պիտոյից՝ միոյ է[1] պէտք՝ խորհրդոյ. իսկ մարմին իբր ոչ եթէ գործակից լինի առ այս, այլ և արգել ունէր գործել։ Քանզի գրեթէ իմաստութեան է այս, աւտարանալ ի մարմնոյ և ի ցանկութենէն սորա։ Իսկ ի վայելչութիւն չարի, ոչ միայն պիտի ունել զմիտն, այլ և զդայութիւն և զբան և զմարմին։ Քանզի բան կարաւտ է այսց ամենեցուն, առ ի լրութիւն իւրոյ չարութեան։ Այ՝ եթէ ոչ՝ զիաւրդ զխորհուրդս ի վեր հանցէ և խաւսեսցի, ձայնաւոր գործի ոչ ունելով. և զիաւրդ զհեշտութիւնս ի վար արկցէ, յորովայնէ և ի զդայութեանց պակասեալ։ Արդ արժանապէս ընդ միում՝ խորհրդոյ խաւսի՝՝ յաղագս առացուածոյ առաքինութեան. քանզի միայնոյ որպէս ասացի, սորա են պէտք առ ի յընդունելութիւն սորա[2]։ Իսկ յաղագս չարութեան բազմաց, ոգւոյ. բանի, զդայութեանց[3], մարմնոյ, քանզի ի ձեռն ամենեցուն այսորիկ երևի։

Բայց սակայն ասէ եթէ «յորում՝ աւուր կերիջիք ի նմանէ մահու մեռցիք՝» և սակայն ուտելով, ոչ միայն ոչ մեռանին, այլև որդիս առնեն, և այլոց կերոյ պատճառք լինին։ Արդ զի՞նչ ասելի է։ Զի երկդիմի է մահ. է որ մարդոյ, և է որ ոգւոյ առանձինն։ Արդ մարդոյն՝ մեկնութիւն է ոգւոյ ի մարմնոյ. իսկ ոգւոյն մահ, առաքինութեան[4] է ապականութիւն, և չարութեան ընդունելութիւն. բան որում՝ և ասէն ոչ զայն՝ զմեռանելն միայն, այլև զմահուն մեռանելն. յայտնելով

1. Միան. մէջ ալ է գէտ։
2. Մ. ---ը---. Իսկ յայն բնագիրն՝ է---ը։
3. Մ. զգ---յ---ութ---ն։
4. Մ. ---ութ---ն։

ոչ զհաստատակն, այլ զառանձինն գյուտակն, և ըստ առաւելութեան մեծն, որ է հոգւոյ թմբեցելոյ յախտս և ի չարիս։ Եւ գրեսիէ այս մեծ՝ մարմնի ընդ այնմ՝ Քանզի այն մեծ՝ տրոհութիւն և զատուցումն է չարադրեցելոցն, մարմնոյ և հոգւոյ։ Իսկ սա ընդդէմ՝ ժողով միաբանութեան, երկոցուն բուն հարեալ՝ և հաստատհարեալ, վատթարի մարմնոյն և իշխեցելոյ, և հաստատհարեցելոյ վատթարի ոգւոյն։ Իսկ ուր ասիցէ մեծու մեառնէն, զոյր լեր և պաշտպանութիւնն՝ արա խրատանաց։ զի մեծ՝ զայն որ ի պատիժ պատուհասին ասնու է մէջ, ոչ որ բնութեամբն լինի, քանզի բնութեամբ է, ըստ որում մեկնեալ զասանի հոգի ի մարմնոյ, իսկ միւսն ի պատիժ պատուհասից բաղկանալ, յորժամ հոգին զառաքինութեան կեանսն մեառնիցի, իսկ զչարութեանն միայն կեցցէ։ Բայց բարւոք և Հերակլիտոս ըստ այսմ՝ Մոսխի աւրինացն զհետ անցեալ՝ քանզի ասէ՝ կեանք զնոցա մեծն, և մեառնիսք զնոցա կեանսն։ Իբրու թէ այժմ յորժամ կեանքս, մեծացելոյ հոգւոյս, և իբրու ի գերեզմանի ի մարմնիս թաղեցելոյ։ և եթէ մեռցուք՝ հոգւոյս կեցելոյ զիւր կեանսն, և ի բաց թափեցելոյ և ազատեցելոյ ի չարեաց և յերկրէն հիւանդութեանց։

Եւ ասաց տէր աստուած, ոչ գոյ բարւոք ըզմարդն միայն։ Արասցուք դմա աւգնական ըստ խնքեան։

Զնդէ՞ր զմարդն՝ յէ՞ մարդաբէ, ոչ է բարւոք զոյ միայն։ Զի բարւոք է ասէ միայնն զոյ, միայն. զի միայն ըստ ինքեան մին է, աստուած. և ոչինչ զոյ նման աստուծոյ։ Այլա ուրեմն վասն զի

1. Միան. գ-ՆՇՆ-ՐԻՆ։

2. Ի յայն բնագրին բաժանումն զոյ ասէն զրոյս, կոչելով զայն երկրորդ, ուր ի մեր ի կրկին օրինակս միայոյ կարգեալ է։

միայն դոյ՝ լինն բարուք է, քանզի շուրջ զնոսա միայն բարին է. ապա ոչ բարուք է դոյ զմարդն միայն։ Բայց միայն դոյ զաստուած, է ընդունել, այսպէս, զի և ոչ յառաջ քան զլինելութիւն էր ինչ միանգամայն ընդ աստուծոյ, և ոչ աշխարհի եղելոյ՝ շարադասի ինչ ընդ նմա։ Քանզի պէտք և ոչ միոյ իրիք ոչ են ամենեին նմա. լաւ է այս ընդունելութիւն և քննութիւն։ Աստուած է միայն և ոչ մի[1] ոչ բարդած, բնութիւն պարզ. իսկ մեր իւրաքանչիւր ոք և այլոցն որք միանգամ՝ եղեալ են, բազումք. որդան, ես բազում եմ, հոգի և մարմին, և անասուն և ասուն, դարձեալ մարմին ջերմ, ցուրտ, ծանր, թեթև, ցամաք, խոնաւ։ Իսկ աստուած ոչ բարդած և ոչ ի բազմաց բաղկացեալ, այլ անխառն։ Քանզի այլ ինչ եթէ[2] առ դատեսցի ընդ աստուծոյ, կամ՝ լաւ է քան զնա, կամ՝ նուազ, կամ՝ զոյգ։ Բայց ոչ զոյգ ինչ և ոչ լաւագոյն քան զաստուած. իսկ նուազ ինչ, և ոչ ինչ ընդ նմա առ դատի, ապ՝եթէ ոչ, և նա ինքն նուազեսցի[3]. և եթէ այս, և ապականացու եղիցի. զոր և արժան անգամ՝ ոչ է ընդ միտ ածել և խմանալ։ Արդ դատեալ և կարգեալ է աստուած ըստ միում՝ և ըստ միայնակին, ոչինա առաւել՝ միայնակն ըստ միումն աստուծոյ։ Քանզի ամենայն թիւ կրոնաւորացոյն է քան զաշխարհ։ որպէս և ժամանակ. իսկ աստուած՝ երիցագոյն է քան զաշխարհ և արարիչ։

Արդ ոչ ումեք ի մարդկանէ բարուք է դոյ միայն. քանզի երկուք են մարդկան սեռք. ըստ կերպարանին եղեալն, և առեղծեալն յերկրէ։ (Արդ ոչ ըստ կերպարանումն մարդոյ բարուք է դոյ

1. Մ. Յոյնն. ---------> է ---> է ---, ὁ Θεὸς, μόνος-εστι.
2. Միւսն. ---> ---ը ինչ է։
3. Մ. ---------ցի։
4. Մ. ասա և ի ասորև գրէ միշտ ---։

մխայնում՝[1], քանզի բաղձայ կերպարանին, քանզի կերպարան ատուածոյ սկզբնաւոր պլոց է։ Իսկ ամենայն նմանութիւն, փոփոխեցՀ[2] այնմ՝՝ ուրոյ էն նմանութիւն, և ընդ նմա դասի և ոչ բաւեցեցելումն. կարի յոյժ առաւել լաւ է զոն մի, պլ և անկար է։ Քանզի զգայութիւնք և կիրք և չարիք, բազում պլոց ընդ այս ընդ միասՀ[3] լծակցեալք և խառնեալք են և յարմարակցեալք։ Իսկ երկրորդում մարդոյն ուղնական բաղկանայ նախ առաջին եղանելին, քանզի «արասցուք նրմս, ասէ, ուղնական»։ և ապա կրեբերդոյն՝ ուղնականութիւնն կրեցելոյ։ Քանզի նախ առաջին եսատեղ զմիտան, և հանդերձեալ է ստեղծանել զուղնականն սորա։ Այլ և այսոքիկ բնականաբար պլարանին։

Քանզի զգայութիւնք և կիրք՝ հոգւոյն են ուղնակաքք, կրսերբերդոյն քան զսէ։ Եւ զիարդ ուղնին, տեսցուք։ Քանզի որպէս ըստ քաջն բժշկացն և ըստ բնականացՀ[4] թուի, յառաջ քան զրոլոր մարմինն՝ յառաջագոյն ստեղծանել սիրան զաւրէն հիման, որպէս ի նաւի զոդնափայտն[5], յորոյ վերայ չինեալ լինի պլ մարմինն։ Վասն որոյ և յետ վախճանին տակաւին ևս թեղալ և թոթռալ ասեն զսէ[6], իբրև առաջին եղեալ և յետոյ ապականեալ, այսպէս իշխանական ուղոյն, երիցագոյն բոլորին, վասն զի անասունն կրսերբերդոյն է զորոյ զնելու թիւնն՝ ոչ այժմ յայտնեաց, բայց հանդերձեալ է նկարագրել։ Բայց անասունն զգայութիւն է, և սորա ծնունդք՝ ախոր. և մանաւանդ եթէ ոչ դատաստանք և որոշմունք են մեր։ Եւ արդարև՝ կրսեր է ուղնականն. և եղանելի արժանապէս,

1. Փոփոխիւն չանակեալդ հատուած՝ չիք ի յոն օրինակս
2. Միւսն. ՝-՝-՝։
3. Մ. ՝։
4. Մ. Ե ՝-՝։
5. Մ. ՝-՝։
6. Յոյնն՝ ἀΣτην. լատին թարգմանն՝ istam կամ ipsam.

իսկ զառաւելագանցեալն տեսցուք զիարդ աւգնէ, զիարդ մեր միտքս հասանեն թէ այս սպիտակ է թէ սեաւ, թէ ոչ աւգնականիւ վարեցեալ տեսաւորութեամբք։ Եւ զիարդ ի ձեռն[1] քնարահար երգչին ձայն, և կամ՝ հակառակն արտանուագ՝ եթէ ոչ աւգնականիւ վարեցեալ լսաւորութեամբ։ Եւ զիարդ եթէ անուշահոտք կամ՝ ժանտահոտք չոգոլիք, եթէ ոչ աւգնականիւ[2] վարեցեալ հոտոտաւորութեամբ։ Եւ զիարդ փորձէ զճաշակս եթէ ոչ ի ձեռն աւգնականին ճաշակաւորութեան. և զիարդ զկակուղն և զխոշոր՝ եթէ ոչ ի ձեռն հրպաւորութեան։ Արդ է այլ տեսակ աւգնականաց որպէս ասացի, ախտք. և քանզի հեշտ ցանկութիւն աւգնէ առ ի յարութիւն տեղութեան սեռիս մերոյ. և ցանկութիւն և արտմութիւն սակայն և երկիւղ կսկծեցուցանելով զոգին դարձուցին զսէ, ոչ միում՝ իմիք պղերգաբար անհոգութիւն առնել, և արտմութիւն վրիժակաղեն[3] մեծապէս բազմաց աւգուտ արար։ Արդ զսէ և դէպ ուղիղ ասաց ըստ գոլոյն աւգնական. քանզի արդարև ընտանի և բուն է սա աւգնական մտացն, իբր եղբայր և հոմարիւն. քանզի միոյ ոգւոյ է մասունք և ծնունդք, զգայութիւնք և կիրք. և աւգնականին է երկդիմի տեսակ. է ինչ որ յախտս, և է ինչ որ ի զգայութեան։ Արդ ո՞ք արդեւք զառաջին տեսակն ծնցի։ Քանզի ասէ.

Եւ եատեղծ Եւս տէր աստուծոյ յերկրէ զամենայն գազանս վայրի, և զամենայն թռչուն երկնի և ամ զտուտս առ Ադամ զիւր կոչեսցէ զտուտս. և զամենայն զոր կոչեացն զնուտս Ադամ հոգի կենաց, այս անուն ասրա։

Տեսանես՝ ոյք են մեր աւգնականքս։ գազանք, հոգւոյս կիրք։ Քանզի ասելոյն, «արասցուք նմա

1. Յոյնն՝ ἡδεῖα, +-դոյ։
2. Մ. ՀՀՆ-Ի-Ն--։
3. Ս. Վրիժ-ինդն։

աւգնական բան ինքեան», մինչերեկ գնտեղծն գազանս իբրու գազանաց ելոց մեր աւգնականաց։ Բայց ոչ իսկ տիրապէս ասքա աւգնականք, այլ պիտարար ասին։ Արդ գտանին երբեք ճշմարտութեամբ և թշնամիք և հակառակորդք, որպէս և քաղաքացն է, յորժամ աւգնականքն մնանին և գաւիչ գտանին։ և ի բարեգործութեան սուտակասպասք չողբորթի ողբիչքն փոխանակ այլոց թշնամիք։ Իսկ զերկիր[1] և զվայր՝ փաղանումնաքար[2] կոչեաց, այլաբանելով զմիտս։ Քանզի սա իբրու վայր, որ և ելս և բոյսս ունի բազումս, և որպէս երկին՝ գարձեալ պայծառս և աստուածայինս և բարերաստեղ բ՚ութիւնս։ Բայց գազանաց և թռչնոց նմանեալ լինին ախտք։ վասն զի թափանցանց լինին ընդ միասն, անընդելիք և անընտանիք ելով։ և զի զաւրէն թռչնոց թռչին ի վերայ մնացն։ քանզի սուր և արագ է սոցա և անարգել յարձակումնն։ այլ ոչ վարկպարագի գործ առ գործով կայ առ էստեղծն ևն։ Ընդէ՞ր։ վասն զի ի վեր անդ[3] ստեղծանիլ զգազանն ասէ յաւաղ քան զմարդոյն լինել, որպէս և յայտնէ զայս ի վեցերորդում աւուրն, «և ասաց աստուած, ածցէ արտաքս երկիր զանձն կենդանի բան ազգի, ըստ չորքոտանիս և զիսոչունս և զգազանս երկրի բան ազգի»։ Արդ զինչ կրելով, այլ գազանս ստեղծանիլ այժմ, ոչ չատացեալ առաջնովքն։ Արդ ասելի է բարոյականաբար զայս։ մեծատուն է և բազմարեղուն չարութեանն ազգ յիսմնալուցն։ մինչ զի յար ծնանիլ սոքա վատթարագոյնքն։ բնականաբար զայն նախ առաջին ի վեցերորդում աւուր զսնաս ախտիցն՝ և ոչ զտեսակս գործէր[4]։ իսկ այժմ զտեսակսն ևս ստեղծանէ, վասն որոյ

1. Բոյնն՝ ինքնին։
2. Մ։ ի լա։ փոխանուանքաբ։
3. Մ։ չունի անդ։
4. Բոյնն։ տեսակսն կամ է ծնանելն։
5. Մ։ գործել։

ասէ, «եսաեղծ ես»։ և զ'ի վաղընջուցքն կաղմեալք՝ սեռք էին, երևելի է յորոց ասէն.

«Ածցէ ասասուած յերկիր անձն կենդանի»։ Ոչ ըստ տեսակի, այլ ըստ սեռի. և սակայն նոյն ինքքն յամենեսին գոտանի, քանզի յառաջ քան ըզտեսական կատարէ զսեռն, որպէս և ի վերայն՝ մարդոյն։ Քանզի յառաջագոյն ապաւորեալ ըզսեռական զմարդն՝ յորում՝ զարուն և զէգ ազգն ասէ գոլ, յետոյ զտեսական գործէ՝ զԱդամ։ Արդ զայս տեսակ՝ զաւդնականացն ասէ. իսկ զմիւսոցն ես զանց առնէ զդայութեամբն, յորժամ՝ ձեռնարկեսցէ ստեղծանել զկինն. և զայնու զանց արարեալ, յաղագս անուանցն դրոյ արուեստաբանէ։ Եւ էՀ ճառական և յեղական պատճառք՝ արժանաւորք ի զարմանալ։ Քանզի ճառականն՝ ըստ օրում՝ զդիր զանուանցն յաւել, առաջնում եղելումն աւրինադիրն։ Եւ քանզի առ ելլադացիս որք իմաստասէրքն եղեն, ասացին գոլ իմաստունքս զառաջինն որք իրաց անուանն եդին։ Իսկ Մովսէս լաւագոյն ես. քանզի նախ առաջին ոչ ոմանց յառաջագոյնց, այլ առաջնումն եղելումն. զի իբրև ինքն իմն սկիզբն այլոցն լինելութեան ստեղծաւ, այսպէս և սկիզբն ասելոյն համարեսցի։ Քանզի ոչ ելոց՝ անուանց և ոչ խաւսք էին. և ապա զի բազմաց անուանք զանազանք և խաւնք հանդերձեալ է լինել, այլոց այլազգ աւրինակ եղելոց. բայց միոյն պարտ էր դիրն՝ յարմարել ընդ իրան, և գոլ զայս նշանակ ամենեցուն նոյն դիպեցելոյն կամ՝ նշանակեցելոյն։ Իսկ բարոյական բանն այսպիսի է. ըզ'զիդ բազում՝ անգամ՝ դընեմք փոխանակ ընդէրի՝ ՝ՐԿԷՆ, զի՝ ասես. զի՝ գնաս. զի՝ խաւսիս. քանզի ամենեքին՝ այսոքիկ փոխանակ ընդէրի։

1. Միան. Ի ՔՐ—։
2. Մ. Ե— Է Ի'—։
3. Մ. Եվ ԼՐՑ։
4. Մ. —ԴՆԷ Ի—Ն։

Արդ յորժամ ասիցէ տեսանել զի՞կէն կոչեսցէ, լուր զոյգ այնմ թէ ընդէ՞ր կոչեսցէ, և առ ինքն կոչեսցէ · և ընկալցի զիւրաքանչիւր որ ի սոցանէն միտքն։ Նախ յառաջագոյն յաղագս հարկաւորի՞ն միայն, զի խառնեալ է մահկանացուն ի հարկէ ընդ ախտս և ընդ չարութիւնս։ Եւ կամ դարձեալ յաղագս անչափի՞ն և աւելոյ. և կամ վասն հոգածնի՞ն պիտոյից, և կամ վասն ընտրելոյ և որոշելոյ զլաւն և զաքանչելագոյնն. որպան, ցանկութեամբ վարիլ պէտք են ազգին · այլ սակայն վատթարն իբրև կատարելով բարեաւ վարեսցի, իսկ առաքինին իբրև հարկաւորաւ · քանզի առանց հեշտ ցանկութեան ոչ ինչ լինի ի մահկանացու՝ ազգիս։ Եւ դարձեալ՝ զընչիցն սոսացուածս. քանզի վատթարն՝ կատարելագոյն բարի համարի. իսկ առաքինին՝ հարկաւոր և պիտանացու զնա միայն։

Արդ՝ յիրաւի սոսուած տեսանել և ուսանել կամի, թէ զի՞արդ զիւրաքանչիւր որ ի սոցանէն կոչեսցէ և ընկալցի միտքն · եթէ իբրև բարիս, և կամ իբրև[2] անզանազանս, կամ իբրև չարս, բայց պիտանացուս, և այլազգ · վասն որոյ և ամենայն զոր միանգամ կոչեսցէ և ընկալցի, իբրև անձն կենդանի՝ հանդիսապատիւ զնա համարեալ անձին. անուն այս ոչ կոչեցելոյն լինէր միայն, այլ և որ կոչէրն · որկէն, թէ ընկալաւ հեշտ ցանկութիւն՝ կոչիւր հեշտացող, եթէ ցանկութիւն՝ ցանկացաւղ, եթէ անեղութիւն՝ անխուզ, և եթէ երկչոտութիւն՝ երկչոտ. և այսպէս ի վերայ այլոցն։ Քանզի որպէս ի վերայ առաքինութեանց՝ ըստ սոսայն որակ՝ կոչի խոհուն կամ ողջախոհ, կամ արդար · կամ արի, այսպիսի[3] չարեաց՝ անիրաւ և անզգամ և անարի, յորժամ զունակութիւնսն առ ինքն կոչեսցէ և ընկալցի։

1. Միան. ընդ հանդեսս։
2. Մ. չունի էբրև։
3. Մ. այսպէս է։

*Եւ էարկ աստուծոյ[1] ձիացու

անկական, բնական, ընդմտածական, այլս բազումն ըստ տեսակս և տեսս։ Քանզի ունակութիւն և անչնչիցն է, քարանց և փայտից զորոյ ունի կցորդութիւն և ի մեզս նմանեալ քառանց ոսկերաց։ Իսկ բնութիւնն ձգտի և ի տունկս, և ի մեզ նմանեալք տնկոց եղենդունք[2] և հերք։ Եւ է բնութիւնս ունակութիւն տհաս շարժեցեալ, և հոգի է բնութիւն առընկալեալ երևութիւնն և յարձակումն։ Այս հասարակ և անասնոցն է։ Ունի և մեր միտքս համեմատեալ և զուգեալ ինչ յանասնական անձնէն։

Դարձեալ ընդ մտածական զաւրութիւնն՝ առանձինն մտաց է, և բանականն հասարակ, ինձ թուի, թէ և աստուածայնոց բնութեանցն, և յաստուկ ի մահկանացու մարդոյ[3]։ Եւ է սա կըրկնակ, մին ըստ այնմ՝ ըստ որում բանականքն եմք, միտս ունիմք[4]. իսկ միւսն՝ ըստ որում խաւսիմքս։ Արդ է միւս ևս այլ զաւրութիւն յանձին, սոցա եղբայր և ընկեր, զգայականն. յաղագս որոյ է բանս[5]։ Քանզի ոչ ինչ այլ այժմ նկարագրէ, բայց լինելութիւն ըստ ներգործութեան, զգայութեան և ըստ բանի։ Քանզի յետ մտաց անդէն վաղվաղակի պարտ և արժան է առնել զգայութիւն, աւգնական նմա և զաւրավիգն։ Արդ կատարեալ գործեալ զայն, երկրորդ՝ և դասու և զաւրութեամբ ստեղծանէ արարուած, զըստ ներգործութեանն զգայութիւն, առ բովանդակութիւն կատարման բոլոր անձինն, և առ ենթակայցն ընդունելութիւն։ Արդ զի՞արդ ծնանի, որպէս ինքքն դարձեալ ասէ, յորժամ ի քուն լիցին միտքքն. քանզի արդարև էապէս ի քուն եղեալ մը-

1. Միան. ընդ Ե ի մեզ նմանեալ տարանց. հասայն ընդ յանին λίθοις։
2. Մ. եղենդունք։
3. Մ. Ե յաստուծ արդեւ ի հանիանցուս մարդս։
4. Մ. ունիլս։
5. Մ. բանն։

տացն լինի[1] զգայութիւն. և քանզի անդրէն հակառակ՝ զարթուցելոյ մտացն չիջանի. և նշանակ, յորժամ կամեսցուք ինչ ստուգապէս ճշմարտաբար իմանալ՝ յանապատ փախչիմք, և կափուցանեմք զաչս, զանկանջս խնամք, ի բաց հրաժարեմք ի ըզգայութեանց. քանզի յորժամ յարուցեալ կանգնեսցի՝ և զարթնութիւն ի վար արկցէ միտքս, ապականի զգայութիւնն։ Բայց տեսցուք և զմիւս եւան, զիարդ քնով վարին միտքս. յարուցելոյ և արթուն եղելոյ և արթարթելոյ[2] զգայութեանս. յորժամ աչքս՝ դրչաց կամ ստեղծչաց գործս ըզբարուղ կազմեալս տեսանէ, միտքն ոչ անգործ և անպտուղ են, ոչինչ իմանալ իմանալի ինչ կարացեալ։ Իսկ զի՞նչ յորժամ լաւորութիւն ի միտ գնիցէ[3] և հայիցի ի նուագաւոր ձայն. կարէ միտքն խորհել և ընդ միտ ածել ինչ յընտանեացն, և ոչ միով իւիք. և սակայն կարի յոյժ անգործ լինի յորժամ ճաշակաւորութիւնն զարթուցեալ սաստիկ յղփացեալ՝ և առ լցեալ լիցի ի յորովայնէն հեշտ ցանկութեանցն։ Վասն որոյ և Մովսէս երկուցեալ գուցէ թէ[4] միտքն ոչ միայն քունիցէ, այլ և կատարելապէս մեռանիցի, ասէ յայլսըն, ցից եղիցի քեզ ընդ գաւտեաւ քով. և եղիցի յորժամ ի բաց անցանիցես[5] փորեսցես նովաւ, և ի վերայ ածելով ծածկեսցես զանձեւութիւնն քոցից նշանակաբար ասելովզայն որ փորէ և խարխարէ բանն, զծածկեալս իրացն. և հրամայէ կրել զնա ի վերայ ախտին՝ զոր հանգուցն ամիտի առնել և հանգրիճեցուցանել[6] պարտ և արժան է, և ոչ տալ թոյլ լուծանիլ և լքանիլ։ Եւ զայս առնելի է յորժամ միտքս ի պնդութենէ և ի սատ-

1. Միւսն. լինէն։
2. Մ. արթարթելոյ։
3. Մ. գնիցէ։
4. Մ. չունի թէ։
5. Յոյնն՝ διακαθιζάνῃς, նստիցես. լատին թարգ. sederis.
6. Յոյնն՝ ἀνεζῶ δαι, լարել. cinctus esse.

կութենէ իմանալեացն ի բաց կացեալ՝ թուլացի առ ախտն, և ի բաց անցանիցէ, թոյլ տուեալ և բռնի ածեալ լինի ի մարմնական հարկաւորութենէն։ Եւ այսպէս ունի, յորժամ ի սատիկ խոհակերութենէ, շուայտութենէ խառնակութեան՝ մոռացին միտքն զինքն, ըմբռնեալ և տիրացեալ յայնցանէ որ ի հեշտ ցանկութիւնն երթան տանին՝ ծառայեալք լինիմք, և մերկ և հոլանի և առանց ծածկութի[1] ազատեղութեամբքն վարիմք. և եթէ բանն կարացէ մոքրել զախտն, ոչ ըմպելով արբենամք, և ոչ ուտելով թշնամանս առնեմք վասն յագելութեան. այլ առանց առանցանելոյ և բարբաջելոյ՝ զգաստաբար կերակրիմք։ Արդ զգայութեանցն արթնութիւն՝ քուն է մոացին. իսկ մոացն արթնութիւնն գաստարկութիւն և անգործութիւն՝ զգայութեանցն. որպէս և արեգական ծագելոյ, անհրեղիմք այլոց աստեղացն փայլմունք են, և մոեցելոյ՝ արտայայտք։ Եւ զաւրէն արեգական միտս արթուն լինելով՝ շուք և ստուեր առնէ զգայութեանցն, և ի քուն մոեալ՝ նոցա ծագել ետ։ Սոցա ասիցելոց պատկանելի է և յարմարելի զբառս։

Քանզի էարկ աստուծոյ հիացումն ի վերայ Ադամայ և ի քուն արար։

Ուղղապէս. քանզի հիացումն յեղումն մոացն՝ քուն է նորա. քանզի հիանայ՝ յորժամ գործեսցէ[2] զանկան իւր զիմանալիս. իսկ յորժամ՝ ոչ ներգործին[3] այսոքիկ՝ փորձէ, ծանիր, տես[4]։ Բայց բարւոք է ասելոյն[5] եթէ հիանայ. և այս յեղումն՝ ոչ յինքենէ, այլ յայնմանէ որ արկանէն ի վերայ

1. Միւսն. ծ-ծկ-ութ-ենն։
2. Ի լս. յորժամ՝ ոչ գործեսցէ։
3. Մ. ներգործեն։
4. Մ. լոկ գոյնէ. իսկ յոյն բնագիրն՝ գոնէ։
5. Մ. բարւոք է ասելով։

և առաքէ ի վերայ զյեղումն աստուած։ Եւ քանզի և այսպէս իսկ ունի· քանզի եթէ յինէն էր յեղուն, յորժամ կամէի վարէի սովաւ. և յորժամ կամէի անյեղյեղուկ կայի մեայի։ Իսկ արդ այժմ և փոխանակ՝ հակառակէ ընդ իս՝ յեղումն։ Քանզի բաղում՝ անգամ կամեցեալ ինչ իմանալ յարժանաւորացն և յանկից, կորզեալ հանանիմ՝ և պէզիմ՝ ըստ ոչ արժանաւորացն ի ներքս հոսանացն. և դարձեալ հակառակ ամին, մոռացութիւն իրիք առնլով ամենաթալոյ, ըմպելի և արբուն մոռացութեամբք ի բաց ծածկեցի զայն, աստուծոյ՝ իւրով շնորհաւքն քաղցր ջուր փոխանակ աղտաղակի ի վերայ հեղեալ անձինս։ Արդ ամենայն ինչ եղանելին հարկաւոր է յեղումն ընդունել։ Քանզի առանձինն ուրոյն է այս սորա, որպէս աստուծոյ անյեղն գոլ, այլ սակայն ոմանք յեղեալք, անցին մեացին մինչև յամենեին ապականութիւն։ Իսկ ոմանք այնչափ միայն, մինչ կրել զմահկանացուն. և սոքա անդէն վաղվաղակի ապրեցին։ Վասըն որոյ ասէ և Մովսէս[1], ոչ տացէ թոյլ սատակչին մտանել ի տունս ձեր հարկանել. քանզի թողու նա զսատակիչն. և սատակիչ անձին յեղումն է. զի զիւր զյատուկ անձնաւորութիւնն ցուցցէ զեղանելոյն· բայց ոչ թողցէ աստուած զտեսանողին զաւակ զիսրայէլ, այսպէս յեղուլ՝ մինչ վիրաւորիլ ի յեղմանէն· այլ անդրէն ընթանալ ելանել, և ի վեր կոյս յառել իրրև ի խորոյ յանդընդոյ, և ապրիլ բռնադատեսցէ։

Արդ էառ կող մի ի կողից Նորա։ Ի բազմաց մտացն զաւրութեանց, զմին էառ՝ զդայականն։ Իսկ էառն՝ ոչ փոխանակ հանելոյ լսելի է, այլ փոխանակ ի վարկ էառ, եհարց· որպէս յայլսն,

1. Միւսն. ը-ա ի։
2. Մ. յ-ա-կ-ն-ն-ի-ն։
3. Մ. -գրի-գի։
4. Մ. ի- Մ-վ-ի- -ի։

առ զգլուխ զարբայ։ գերութիւնն։ Արդ զի՞նչ է զոր կամի[2] դէմ յանդիման կացուցանել։ Երկրի-մի զգայութիւն ասի, է որ ըստ ունակութեան, որ և ենթեցեալոց մեր է[3]. և է որ ըստ ներգործութեան։ Արդ առաջնոյն որ ըստ ունակութեանն է, պէտք ոչ ինչ են[4]. քանզի ոչ եթէ սոսա՝ զնութակայցն առնումք զընդունելութիւն. բայց երկրորդին որ ըստ ներգործութեանն է, քանզի ի ձեռն սորա առնեմք զգալեացն[5] ընդունելութիւնսն։ Արդ ծնեալ զառաջին[6] որ ըստ ունակութեանն է զգայութիւնն, յորժամ և զմիտն ծնանէր. քանզի հանդերձ բազում զարութեամբք խաղաղացելովք զնա կազմէր, այժմ կամի զբան ներգործութեանն կատարել։ Եւ կատարի ըստ ներգործութեանս, յորժամ այն որ ըստ ունակութեան՝ շարժեցեալ և խաղացեալ՝ պրկեսցի ձգգեսցի մինչ ի մտրմին և ի զգայական ամենն։ Քանզի որպէս բնութիւն կատարի շարժեցեալ և խաղացեալ սերման, այսպէս և ներգործութիւնն շարժեցեալ ունակութեանն։ Եւ անդրէ ընդ բզմարմինն ի նմանէ. այսմիրն է առ հասարակ լընեալ զբան ունակութեանն զգայութիւն ածելով ի ներգործութիւնն. և պրկելով և ձգտելով զնա մինչ ի մտրմին և ի բոլոր մտկերևութեան[7]։ Վասն ոլոր բերէ ի վերայ, եթէ «չինեսցի կին[8]». ի ձեռն սորա յանդիման կացուցեալ՝ զի ընտանեզդն և բուն և հանդէպ ուղղագոյն անուն զգա-

1. Ցայնմ՝ [illegible], որպէս և ի գիրս Թուոց ԼԱ. 26։ Միւս օրինակն չակերտիւ նշանակեալ զբառն [illegible], ի լ. գնէ [illegible]։
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։
5. Մ. [illegible]։
6. Մ. [illegible]։
7. Մ. [illegible]։
8. Մ. [illegible]։

յութեանն՝ կին է։ Քանզի որպէս այրն ի գործելն տեսանի, իսկ ի կրելն կինն. այսպէս ի գործելն միտքն, իսկ ի կրելն՝ զաւրէն կնոջ զգայութիւնն հարցանի. և ուսանել ի ներգործութենէն դիւրագոյն է. երեքս՝ կիրս կրէ ի շարժողացն զսէ ի տեսանելեաց, ի սպիտակէն, ի սևէն և յայլոցն. լսաւորութիւն դարձեալ՝ ի ձայնից. ճաշակաւորութիւն, ի համոցն տրամադրեալ. ի հոտոյն՝ հոտոտաւորութիւն. ի խոշորէն և ի կակղոյ՝ հպաւորութիւն և հանդարտեալ և խաղաղացեալ են ամենայն զգայութիւնք և դադարեալ, մինչև եկեալ ընդարձի որ շարժեն արտաքուստ։

Եւ էաՀ զսէ առ Ադամ, և ասաց. սա այժըմ ոսկր յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ։

Զբան ներգործութեանն զգայութիւն ածէ աստուած առ միտս, դիտացեալ զի անդրէն խոնարհել և դառնալ պարտ և արժան է շարժմանն և խաղացութեանն սորա ըստ ընդունելութեան ի միտսն։ Իսկ սորա տեսեալ զոր յառաջագոյնն ունէր զաւրութիւն և ըստ ունակութեանն խաղաղացեալ դադարեալ[1], այժմ կատարած և ներգործութիւն եղեալ, և խաղացեալ և շարժեալ, զարմանայ, ասէպ ասէպ բարբառի ասելով, թէ ոչ է աւտար յինքենէ այլ յոյժ ընտանի։

Քանզի «այս է, ասէ, ոսկր յոսկերաց իմոց»։ Իբրու թէ զաւրութիւն իմոյ[2] զաւրութեանցս. քանզի ի վերայ զաւրութեան և ուժգնութեան՝ այժմ ի մէջ առեալ է ոսկրս, և կիրք իմոց ախտից։ «Մարմին ի մարմնոյ իմմէ. քանզի ամենայն ինչ որ ինչ միանգամ կերակրէ զզգայութիւնս՝ ոչ առանց մնաց անցանէ ընդ սա քան-

1. Միան. դադարել։
2. Մ. իմոյ։

զի ազրեւբ սա է սարա[1] և հիմն՝ յոր յեցեալ հաստատի։ Բայց արժան է խուզել և քննել. ընդէ՞ր «զայժմդ» յաւել. քանզի «այս է, ասէ, այժմ՝ ոսկր յոսկերաց իմոց»։ Զդայութեամբս[2] բընութեամբ այժմ՝ է, ըստ[3] ներկայ ժամանակիս բաղկացեալ միայն. քանզի միաբն ընդ երեսին հարկանին և հպին ժամանակս. և քանզի զայն որ առաջին կայ իմանայ, և զանցեալսն յիշէ, և հանդերձելոցն ակն ունի։ Իսկ զդայութիւն, ոչ հանդերձելոց ընդունակութիւն[4] առնէ, և ոչ համեմատ ինչ և հաւասար կիրս կրէ՝ յուսով կամ ակնկալութեամբ, զանցեալսն[5] յիշէ. այլ յայնմանէ որ դեռն չարժէ և յանդիմանն կայ միայն կիրս կրել բնաւորեցաւ. որպէս ակն սպիտականայ այժմ՝ ի յանդիմանակայ[6] սպիտակէն, իսկ յայն յանդիմանակացէն. ոչ ինչ կիրս կրէ։ Իսկ միաբն և ի վերայ ոչ յանդիմանակացին չարժին, և ի վերայ անցելոցն ըստ յիշատակի և ի վերայ հանդերձելոցն յուսով՝ և ակն ունելով։

Մէ կոչեսցի կին։

Իբրու թէ զդայութիւն կին կոչեսցի. վասն զի յառնէ, ի չարժողէն զսէ առեալ լինի։ Մէ ասէ. արդ ընդ՞ էր սէս առկայ. զի է այլ զդայութիւն, որ ոչ ի մտացն առեալ լինի, այլ ընդ նըմա ծնանի։ Քանզի երկու որպէս ասացի ահա զդայութիւնք. է որ ըստ ունակութեան, և է որ ըստ ներգործութեան։ Արդ այն որ ըստ ունակութեանն է, ոչ յառնէն՝ այս ինքն ի մտացն

1. Միան. սրբ։
2. Ի լ. զդայ-ութիւնքս։ Մ. զդայ-ութիւն։
3. Մ. ընդ ներկայ։
4. Մ. ընդ-ունելութիւն։
5. Մ. Ե ոչ զանցեալսն։
6. Մ. է յանդիմանակայէ։
7. Մ. յասելով։

առեալ լինի, այլ ընդ նմա բուսանի. քանզի միտ-
քըն որպէս ասացի, յորժամ ծնանիւր՝ հանդերձ
բաղում զաւրութեամբքն և ունակութեամբն ծը-
նանիւր. բանական անձամբ բնականաւ ապա ու-
բեմն և զգայականաւ։ Իսկ ըստ ներգործութեա-
նըն՝ ի մտացն. քանզի յայնմանէ որ ի միտն
ըստ ունակութեանն է զգայութիւնն, պրկեցաւ
և ձգեցաւ[1], զի եղիցի ըստ ներգործութեան. մինչ
զի ի նմանէ իսկ ի մտացն եղանիլ երկրորդումն
ըստ շարժման։ Բայց ընդունայն է որ կարծէն և
ըստ ճշմարիտ բանին, ի մտացն ինչ բնաւ ամենե-
ւին ծնանիլ, և կամ ի նմանէ։ Ո՞չ տեսանես զի
և ի վերայ կռոցն զի անցեալ նատէր զգայութիւ-
նըն, Հռաքէլ, կարծեցեալ սարա ի մտացն զշարժ-
մունսն գոլ. սատէ որ տեսանողն է. քանզի սէ
ասէ. Տուր ինձ որդիս, ապա թէ ոչ մեռանիմ
ես. և նա պատասխանի տայ. Ով սակարծաւոր,
ոչ է միոք պատճառք[2] և ոչ միոյ իրիք. այլ որ
յառաջ քան զմիտն է ասուած։ Վասն որոյ ի
վերայ բերէ։ «Մի փոխանակ աստուծոյ եմ ես որ
եհատ ի քէ՝ զպտուղ որովայնի քո»։ Եւ զի ա-
ստուած որ ծնանին է, վկայեսցէ այն որ ի վերայ
Լիայն, «և եռես աստուած զի առելի է Լիա. ե-
բաց զարգանդ սարա». զի առն ուրոյն է յա-
ուկ զարգանդն բանալ. և բնութեամբ ասի ի
մնհկանացու ազգէս առաքինութիւն. վասն որոյ
և աստուած զսէ պատուեաց, և տայ զանդրանիկ-
սըն առեցելումն։ Եւ ասէ յայլս, եթէ եղիցին
մարդոյ երկու կանայք, մի սացա սիրեցեալ, և
մի սացա առեցեալ՝, ոչ կարասցէ անդրանկա-
ցուցանել զորդին զսիրեցելոյն, անտես առնել՝
զորդի առեցելոյն զանդրանիկն։ Քանզի առաջինք
և կատարելագոյնք՝ առեցելոյ առաքինութիւնն ծը-

1. Միան. Յիոեց։
2. Մ. Դուք դոչ։
3. Մ. ....։
4. Մ. Ինչ։

նունդք. իսկ սիրեցելոյն հեշտ ցանկութեանց՝ վերջինք։

Յաղագս այսորիկ լքցէ թողցէ մարդ զհայր և զմայր և յարեսցի[1] ի կին իւր. և եղիցին երկոքին մարմին մի։

Յաղագս զգայութեան միտքն յորժամ ծառայեսցեն, լքեալ թողցէ և զհայրն բոլորեցուն զասուած. և զմայրն առհասարակ զամենեցուն զիմաստութիւնն ասուածոյ, և յարեալ մնացցի և միաւորեսցի ընդ զգայութեանն. և անդրէն լուծցի ի զգայութիւն. զի եղիցի մի մարմին և մի ախտ երկոքին։ Բայց ապասեա և զգոյշ լեր, զի ոչ կինն մնացանի ընդ առնն. այլ հակառակ անդրէն. այրն ընդ կնոջն. միտքն ընդ զգայութեանն։ Քանզի յորժամ վեհ միտքն միաւորեսցի ընդ վատթարին ընդ զգայութեանն, անդրէն եղծանի ի վատթարն մարմնոյ ազգ. զախտիցն զպատճառս զգայութիւնն։ Իսկ յորժամ վատթարն զգայութիւն զհետ երթիցէ լաւին մոռացն, ոչ ևս եղիցի մարմին, այլ երկոքին միտք։ Արդ սա այսպիսի է. զախտասիրութիւնն ընտրեալ՝ քան զասուածասիրութիւնն։ Եւ է միւս ևս այլ՝ հակառակ ընդդէմ[2] ընտրեալ, Ղևի՝ որ ասէ զհայրն և զմայրն, ոչ տեսի զքեզ. և զեղբարսն ոչ ծանեաւ, և յորդւոցն ի բաց հրաժարեաց. հայր և մայր սա՝ զմիտսն և զմարմնոյն զնիւթ, լքեալ թողու. յաղագս վիճակ ժառանգութեան ունելոյ զմին ասուած. քանզի տէր ինքն վիճակ սմա։

Արդ լինի ախտասիրին վիճակ ախտն, իսկ իմաստնոյն Ղևեայ վիճակ ասուած։ Ո՞չ տեսանես զի և ի տաճարորդում՝ աւուր ամենեանն հրամայէ երկուս քաղս մատուցանել, վիճակ մի տեառն, և վիճակ մի ի բաց առաքականին. քանզի ախտա-

1. Միւսն. յարէցէ։
2. Մ. ընդդէմ։

սիրին է էապէս ժառանգութիւն ի բաց առաքա-
կան ախտ։

Եւ էին երկոքին մերկ. Ադամ և կինն իւր, և
ոչ ամաչէին. և ասէն էր խորամանգ քան զամե-
նայն գազանս որ էին ի վերայ երկրի զոր ա-
րար տէր աստուծոյ։

Մերկ է միայն՝ որ ոչ առաքինութեամբ և ոչ չա-
րութեամբ է ծածկեալ. այլ յերկպաքանչիւրոց մեր-
կացեալ էապէս։ Որկէն. ազգայ մանկանն անձն՝
անկցորդ է և անընդունական երկպաքանչիւրոց, ի
բարւոյ և ի չարէ մերկացեալ. և հոլանեալ է ի
ծածկութիւնն. քանզի այսպիկ են զգեստք՝ ան-
ձին որովք ծածկեալն[2] լինի. և զգեցեալ առաքին-
ւոյն բարին, և վատթարին չարն։ Բայց ըստ ե-
բից աւրինակաց հոգին մերկանայ, մի անգամ՝
յորժամ՝ անյեղյեղ կայ մնայ և յամենայն չարեաց
խաղաղացեալ է. այլ՝ յամենայն ախտից մերկա-
ցեալ ի բաց ընկեց. վասն այսորիկ և Մովսէս ար-
տաքոյ բանակին հարկանէ։ զիւր զխորանն՝ հեռի
ի բանակէն, և կոչեցաւ խորանն սորա՝ խորան
վկայութեան։ Եւ այս է այսպիսի իմն, ասասա-
ծասէր անձնն՝ մերկացեալ զմարմինն և զսորա
զախորժակն, և հեռի ի բաց ի սոցանէ փա-
խուցեալ, կառուցումն և հաստատութիւն. և զե-
տեղումն ի կառաբեալսն և յառաքինիս աւրէնս
առնու. վասն որոյ և վկայեալ լինի յաստուծոյ՝
զի բարեաց ցանկայ։ Քանզի կոչեցաւ խորան վը-
կայութեան՝ ասէ, և զկոչաւղն էանց լռեաց. զի
ինքն յինքեան շարժեալ ի խորհուրդս անձնս

1. Միւսն. ընթերց։
2. Մ. ծածկեալն։
3. Օրինակս մեր ի լ. Ն։
4. Մ. հանդերձ։

յայց ելցէ, թէ ո՞ է որ վկայէ առաքինասէր խորհրդոց։ Վասն այսորիկ քահանայապետն ի սուրբ սրբոցն ոչ մոցէ պճղնաւորաւն, այլ՝ զկարծեցեալն և զերևութիցն անձին զպատմուճան ի բաց մերկացեալ, և լքեալ թողեալ այնոցիկ ոլք զարտաքոյսն սիրեն, և կարծիս յառաջ քան զճշմարտութիւն պատուեն, մերկ, ասէ, մոցէ առանց գունից և ձևոց[2] ի ներքս, նուիրել զանձնական զարիւնն, և ծխել խունկս զբոլոր միտսն փրկչին և բարեբարին աստուծոյ։ Եւ սակայն Նարադ և Աբիուդ որք հպեցանն յաստուած, և զմահկանացու կեանս թողին լքին, մերկ տեսեալք[3] լինէին ի սնոտի կարծեացն. քանզի ոչ մահկանացու պատմուճանաւք զնոսա որք հանին արտաքս բերէին, թէ ոչ մերկացեալք էին զամենայն կապ ախտի, և զմարմնական հարկին պատառելով, զի մի՛ մերկութիւնն սոցա և անմարմնութիւն՝ անաստուած մնասք[4] խորհրդոց խոտեսցի, և անգոսնեսցի։ Քանզի ոչ ամենեցուն հրաման տուեալ է և թողութիւն արարեալ՝ զաստուծոյն զանճառելին տեսանել, այլ միայն այնոցիկ որք կարենն ըզսոսա ափոփել և պահել և զգուշանալ. վասն որոյ և միսադեանքն[5] ոչ իւրեանց պատմուճանաւքն բառնան, այլ այրեցելովքն և կիզելովք, Նարադայ և Աբիուդայ։ Եւ ի բաց մերկացեալք զամենայն ինչ որ ի վերայ ծածկոյթ լինէր նոցա, զմերկութիւնքն աստուծոյ մատուցին, և զպատմուճանան միսադեանցն լքին թողին։ Եւ պատմուճանք են մասունք անասնոյս որք զբանականն ծածկեն. և Աբրահամ՝ մերկանայ[6] յորժամ լուիցէ. «ել գնա յերկ-

1. Միւսն. -ոյլ ՝ --- ՝-ՐԵՅԵ-Ն. յոյնն՝ ἀλλὰ τὸν τῆ δόξης καὶ φαντασίας.
2. Յոյնն. ἤχων, ՝-ՅՆԿ։
3. Մ. -Ի-Ի-Լ։
4. Մ. -Ի-Ի։
5. Մ. -Ի-Ի-Ն-Ն, որպէս և ի ստորև։
6. Մ. -Ի-Ն-ՅՐ։

րէ քո և յազգէ քո». և Յահակ ոչ մերկանայ, բայց միշտ մերկ է և անմարմին. քանզի հրամանն է առեալ նմա ոչ իջանել յԵգիպտոս՝ այսինքն է ի մարմին. և Յակովբ մերկութեան ցանկայ անձնականի. քանզի լերկութիւն սորա մերկութիւն է. վասն զի էր խաւ՝ այր թաւ, և Յակովբ այր լերկ. վասն որոյ և Լիայ այր է. զի մի մերկութիւն այս է, և միւս ևս է ընդդէմ, առաքինութեան ի բաց բարձումն, զ'ի խոտորման և յեղման եղելոյ, յորժամ առանցանիցէ և բարբաջիցէ՝ անձինս։

Այսու վարի՝ Նոյ, մերկացեալ յորժամ արբցէ ի գինւոյ. բայց շնորհ աստուծոյ և գոհութիւն, զի խոտորումն և յեղումն և մերկութիւն մնացն, զառաքինութենէն ի բաց բարձումն, ոչ մինչև յարտաքս հեղաւ, այլ զի եկաց մնաց ի տան. քանզի ասէ թէ «մերկացաւ ի տան իւրում»։ Քանզի թէպէտ և մեղիցէ խմնատունն, ոչ այնպէս արտաքս անկանի որպէս վատթարն. քանզի սորա հեղեալ և ցնդեալ է չարութիւնն, իսկ միւսոյն ամիսոփեալ և զուսպ. վասն որոյ և զգաստացեալ է, այս ինքն է՝ զգիանայ և ապաշաւէ, և իբր ի հիւանդութենէ կազդուրէ։ Բայց աստուգապէս զ'ի տանն լինել զմերկութիւնն տեսցուք. յորժամ անձն խոտորեալ յեղեալ՝ միայն ընդ միտ ինչ ածցէ յանտեղի յիմարութեանց՝[1], և ոչ անցցէ վրճարել՝ մինչև գործով կատարել զայս։ Յանձինն վայրի և ի տանն եղև մեղանչն. և եթէ միանգամայն առ գմենայ և չարն գոլ խոհելն[2] և վճարեսցէ մինչ ի գործել, հեղեալ և ցնդեալ է և յարտաքինն անիրաւութիւն։ Վասն որոյ և Քանան նզովեալ լինի, զի զանձինն ի խոտորումն և յեղումն՝ արտաքս հանեալ պատմեաց, այսինքն է՝ յար-

1. Միւսն. Խելք-ի-ր-ի-ն։
2. Մ. Վ-ր-ա-ն։
3. Մ. Ի-ր-հ-ն։

տաքս ձգտեաց[1] և գործով վճարեաց, յաւելեալ ի չար[2] խորհուրդն՝ չար ի ձեռն գործոցն կատարուած։ Բայց Սեմ և Յարեդ գովին, ոչ յարձակելով ի վերայ անձին, այլ զխստութիւն սարսռաւորչի ծածկելով։ Վասն այսորիկ և ազատիք և ուրշմունք անձին լուծեալ լինին, յորժամ ի սան եղիցին հաւ կամ սան։ ոչ բռնելոց և գազաբեցելոց խորհրդոցն, և ոչ յարձակեցելոց ի վերայ խստութեանն, այլ նուազեցուցանելով և փոքրոգեցուցանելով[3] զմեղանն։ քանզի յայնժամ և տէրն ամենեցուն մաքրեսցէ զսէ։ և զազաբեցս այրուց և զհաներոց առանց ի բաց բառնալոց թող։ Քանզի սրբան միանգամ յազատեցս կացցէ սակ զանձնէ իւրմէ, կայ մնայ սակ[5] յիրաւի ըստ արժանաւորութեան։ քանզի թէ մինչ յարտաքս հանեալ ընկեցեալ եղև, մինչ զի ոչ միայն խստոտել և յեղուլ, այլ և ի ձեռն կատարուածոցն մեղանչել, անբժշկելի կայ մնայ, առնի բանի ոչ հաստատ, և յաստուծոյ անուանէն զրկեալ։

Երրորդ մերկութիւն է միջինն՝ ըստ սրտամ միտքս անասուն է. ոչ զառաքինութեանն երբեք և ոչ զչարեաց կցորդութիւն ընկալեալ. յայդպս սրոյ է բանս, զորոյ և տպայն հաստատութիւն առեալ, մինչ զի սիրեցեալն, «էին երկոքին մերկ Ադամ և կինն իւր»։ Այսպիսի գոլ ոչ միայն իմանալին և ոչ զգայութիւնն զգայր։ այլ էր մինչ յիմանալոյ անապատ ամենի[6] մերկ, միւսն ի զգալոյ։ Իսկ «ոչն ամաչէին» դարձեալ տեսցուք։ Երբեք ըստ տեղւոյն են, անամաչութիւն և պատկառելն և ոչ ամաչելն։ Արդ անամաչութիւնն առանձինն ուրոյն վատթարին է. իսկ պատկառանք՝

1. Միան. ՅԽԽ-ց։
2. Մ. ՇԴ ՂՐ։
3. Մ. -ՀԼ-։
4. Մ. ԽԽԽԽԵՑ-ՑՈՆԵԼՈՎ. իսկ ի լս. ԽԽԽԽԵՑ-ՑՈՆԵԼՈՎ։
5. Մ. ԿՅ ՄՆՅ ՍԿ։
6. Մ. Ն ԴԷԼ։

առաքինություն։ Իսկ ոչ պատկառելն և ոչ ամաչելն, այնորիկ որ անհասարակ ունի, և առանց յանձին առնլոյ, յաղագս որոյ այժմ բանս է. քանզի որ չեն ևս է հասուն բարոյ ընկալեալ կամ չարի, ոչ անամաւթ լինել և ոչ պատկառել կարէ։ Արդ անամաւթութեանն յարացոյցք ամենայն խայտառականք են. արդ յորժամ մերկացէ զամաւթալին, զոր պարտ և արժան էր ծածկել, պարծելով, պանծալով և խրոխտալով ի վերայ նոցա։

Այսպէս և ի վերայ Մարիամայ յորժամ խաւսէրն զՄոփսէ, թէ «Տուրն սարա թքանելով թքեալ էր ի դէմս սարա, ոչ ակնկարեալ պատկառեցէ աւուրս եւթն»։ Քանզի այսպէս լիցի և անամաւթ և յանդգուգ՝ է զգայութիւն. անդգամանին և արհամարհեալն և խոտեալն յաստուծոյ ի հաւրէն. քանզի հաւատարիմն ի բոլորումն ի տանն նորա. որում՝ զեթէոպացին և զանցեղյեղուկ և զանփոփս և զբաւական բարս խրատու ինչն աստուած յարմարեալ պատկանելոց, իշխէ և համարձակի չարախաւսել՝ զՄոփսէ և ամբաստան լինել՝ յորոյ վերայ պարտ և արժան էր գոսութիւն կրել։ Քանզի այս մեծ գոսութիւն սորա, զի զեթէոպացին էառ, զանցեղյեղուկ և զանփոփս, և զՆեռուցեանն և զհրացեալն և զփոքր բնութիւնն. քանզի որպէս յական տեսանողն սեաւ է, այսպէս տեսականն անձինն եթէոպացի կոչեցեալ է։ Արդ ընդէր բաղմացելոց չարութեանն զոր ծոց՝ մերոյ միայնոյ յիշատակ արարեալ է, այնր որ ըստ ամաւթանացն է, ասելով եթէ ոչ ամաչէին։ Այլ ոչ՝ ոչ անիրաւէին, կամ՝ ոչ մեղանէին[2], կամ՝ ոչ աւելագործ ինչ լինէին, կայ առ պատճառս ճշմարտութիւն. երդուեալ ի ճշմարիտն միայն աստուած, ոչ ինչ այպէս ամաւթանս վարկանիմ՝ քան զկարծելն

1. Միան. չար խ---ել։
2. Մ. յաւելու. կամ՝ ոչ յանդգնէին։

եթէ իմանամ կամ եթէ զգամ՝ իմ միտքս պատճառք իմանալոյ. ուստի քանզի զինքն զիտէ որպիսի ինչ ոք է, զիարդ եղիւ։ Իսկ զգայութիւնն պատճառք զգալոյ. և զիարդ ասացի, թէ ոչ ի սմանէ և ոչ ի մեռացն ծանուցեալ լինի։ Ո՞չ տեսանես զի որ կարծէն իմանալ միտք, գասնի բազում անգամ անմիտ ի դէպ ժամու, յաբրեցութեան, յանզգայութեան. արդ ուր է իմանալն ի վերայ սորա։ Եւ զգայութիւնն դարձեալ[2] ոչ բազում անգամ ի բաց ընկենու զզգալն։ Քանզի տեսանելով է, երբեք զի ոչ տեսանեմք, և լսելով ոչ լսեմք. յորժամ միայն փոքր մի սակաւ ընդ այլ ընդ իմանալի բախեցեալ ընդ միտ ինչ ածիցէ։ Արդ մինչ մերկն են միտքն յիմանալոյն, և զգայութիւնն ի զգալոյ, ոչ ինչ ունին ամենեմեան։ Իսկ յորժամ սկսցին հասանել և զգալ, յամենեմեան և ի թըշնամանս լինին, քանզի գացին յիմարութեամբ և խաւարութեամբ բազում անգամ վարեցեալք առաւել քան առողջութեան[3] մակացութեամբ հանճարոյ, ոչ միայն ի պարսաւ և ի սրամտութեան և ի սեամտգծութեան և յանզգամտութեան, այլ և յայլում կեանսն։ Քանզի յորժամ զգայութիւնն ըմբռնէ և տիրէ, միտքն գերի վարեալ լինին, ոչ ընդ մի որ ոչ հայիլով, և ընդ միտ առնլով[4] զիմանալի ինչ։ Իսկ յորժամ միտքն ըմբռնեալ իշխեսցեն, զգայութիւնն անգործ տեսանի, ոչ միոյ՝ այլոց իբրեք զգալոյ ընդունելութիւն հասման ունելով յինքն։

Եւ[5] սէնն էր խորամանգագոյն[5] քան զամենայն գազանսն որ էին ի վերայ երկրի, զոր սարար տէր աստուծոյ։

1. Միւս. գիր դիպոս։
2. Մ. ընդ-դարձեալ։
3. Մ. առողջ-բանութեան։
4. Մ. և ի միտ առնլով։
5. Մ. խոսոպանագոյն։

երկուց յառաջագոյն եղելոց, մնաց և զգայութեան, և սոցա մերկացելոց[1], բան ապէ եղելոյ[2] աբինակիս, հարկ է երբորդ հեշտ ցանկութիւն ժողովիչ երկոցունց լինել, առ խմնաբանն և բղգալեացն ընդունելութիւն հաստատն. քանզի ոչ միայն առանց զգայութեանն կարէին հաստատել կենդանւոյ, կամ անկոյ, կամ քարի, կամ փայտի, կամ բ՚ան իսկ ամենեին մարմնոյ. և ոչ բղգայութիւն առանց միայն ստանալ զզգայն։ Արդ փան զի երկոցունց այսոցիկ ի մի վայր լինել պարտ և արժան էր, առ հաստատն ընդունելութեանն ենթակայցն. ո՚ զոսա ի մի վայր էած ժողովեաց, եթէ ոչ երբորդ կապ տուիանաց և ցանկութեան, իշխան երկոյ և հարստահարելոյ հեշտ ցանկութեան, զոր նշանակաբար աւձ անուանեաց։

Կարի բարիոք կենդանեստեղծն ասուած աբար զդաս. զմիս նախ առաջին՝ զայրն. քանզի երիցագոյն է յայնցանէ որ ի մարդ. և ապա զգայութիւն՝ զկիսն։ Եւ ապա զկնի այսոցիկ երբորդ՝ զհեշտ ցանկութիւնն. և զաբութեամբ են ի նոցանէ և հաստատ զանազանք՝ առ յիմանալ միայն, իսկ ժամանակաւ՝ ամենայնիք և զուգահաւասակք. քանզի համանգամայն ընդ ինքեան հոգին զամենայն ինչ բերէ։ Այլ են ինչ որ կատարելութեամբ, և են ինչ որ կատարեալ լինել. զի թէպէտ և չէ ևս աբենկալեալ իւրէ զկատարած, և նրմանեցաւ և կերպարան կրեաց աւձն հեշտ ցանկութեան, փան այսոցիկ բազմանման և չարագաստ և ազամեղ բազմապատիկ, որպէս աւձին չարժանն, այսպէս և հեշտ ցանկութեան։ Քանզի հինգաձն՝ նախ առաջին պատի. և բանզի ի ձեռն տեսաութեանն՝ հեշտ ցանկութիւնք բազկանան, և ի ձեռն լսաւորութեան և ճաշակաւորութեան և հրձեռն լսաւորութեան և ճաշակաւորութեան և հրձեռն

1. Միան. Դրլոց եղելոց։
2. Մ. —ոյ։
3. Մ. Հոգոյն։

պատուութեան, և լինին ուժգնագոյնք և արագք և սաստիկք առ ի կանայս մերձաւորութիւնք, ի ձեռն որոց նմանոցն լինելութիւն բնաւորեցաւ կաւաբիլ։ Եւ սակայն ոչ վասն այսորիկ միայն բազմապատիկ և զանազան ասացաք գՀեշտ ցանկութիւն. վասն զի չուրջ զամենայն անասնական մասամբք անձինն պատի. այլ զի և չուրջ առ իւրաքանչիւր մասն բազմամասն է և յոլովապատ. անդէն վաղվաղակի ի ձեռն տեսաւորութեանն՝ հեշտ ցանկութիւնքն լինին բազմապատիկքն, նկարագրականք, ամենայն տեղծականն. այլ ինչ որ միանգամ՝ ըստ արուստաց արուստականք արարածք՝ պայծառացուցանելով հեշտացուցանեն և զուարճացուցանեն զտեսաւորութիւնն[1]։ Դարձեալ անկոց բոլորոմացելոց ծաղկացելոց պտղաբերեցելոց զանազանք, կենդանեացն գեղեցկութիւն բազմաբրնակ և բազմաբաժք։ Նմանապէս զլսաւորութիւն փող հեշտացուցանէ, քնար, ամենայն գործեւոց տեսակք, անասուն կենդանեաց նուագաւոր ձայնք։ Ծիծառանց, ծիծառնիկաց, այլոցն որ քան միանգամ՝ ընութիւնս երաժշտացոյց բանականացն, զգեղեցկաձայնութիւն քնարահարաց, կատակերգութիւն, ողբերգութիւն։ զայն[2] ևս ըզնմանականն ցուցանողայն։ Բայց զինչ պարտ և արժան է յաղագս որովայնի իրաց հեշտ ցանկութեանց ի մէջ առնուլ և ասել. քանզի գրեթէ որքան միանգամ՝ ենթակայցն կամակ, համոց և ճաշակաց զանազանութիւնք են, և զզայութիւնս չարժողաց, այսքանք և հեշտ ցանկութեան՝ իսկ արդ յարմարապէս բազմապատիկ և զանազան եւլով հեշտ ցանկութիւն, բազմապատիկ և բազմաձև աւձի առարկեալ նմանեցաւ, վասն այսորիկ և խնճոյն[3] և բազմամբոխն և խառնիճաղանճ ժողով

1. Միւս. զբնաւորութիւն։
2. Մ. զայսն ևս։
3. Մ. խնջոյն։

ունելով մանն[1], է երբեք զայսոսիկ որ յԵդիպտոսն են, այսինքն է զմարմնականացն խանդմանց, ի հարատեւութեան իբրև իւրոց ցանկայ[2] և բաղձացեալ է, անկանի ի հեշտ ցանկութիւնս որ մահ ածեն ի վերայ. ոչ անչաստուն և որոշումն անձին ի մարմնոյ, այլ անձին ի չարութենէ[3] ապականութիւն։

Քանզի ասէ. «և առաքեաց տէր ի ժողովուրդն զուձան որք մահն հասուցանէին և խածանէին զժողովուրդն. և մեռանէր ժողովուրդ բազում՝ յորդւոցն Իսրայելի»։ Քանզի արդարեւ ոչ ինչ այսպէս մահ ի վերայ ածէ անձին՝ որպէս անչափութիւն հեշտ ցանկութեանց։ իսկ այն որ մեռանին՝ ոչ որ իշխանն է ի մեզ, այլ իշխեցեալքն և բազմամբոխն. և մինչև ցայս վայր մահ մարմեալ լինել՝ մինչև զապաշխարութիւն և զապաշուանս ի վար արկեալ խոստովանեսցէ զխոտորումն յեղմանն։ Քանզի եկեալք առ Մովսէս ասէին. «Մեղաք զի խաւսեցաք չար զանառնէ և զքէն. արդ աղաւթս արա առ տէր, և բարձցէ ի մէնջ զուձան»։ Բարիոք է ասելն, ոչ զի չարախաւսեցաք[4] մեղաք, այլ զի մեղաքն՝ չարախաւսեցաք։ Քանզի յորժամ՝ մեղիցէ և հպարտասցի և համբարձցի միայն զառքինութեամբ[5], բարձրանալ և բարուրս գնել զառաւաւութիւն, զիւր խոտորումն յեղմանն գնելով աստուծոյ։ Արդ զի՞նչպէս լինի բժշկութիւն ախտին. յորժամ՝ այլ ասէ կազմեցիներչական[6] լեւային ընդդէմ՝ ողջախոհութեանն բանն. քանզի հեշտ ցանկութեան ընդդէմ է ողջախոհութիւնն. ընդ բազմապատիկ ախտի՝ բազմապատիկ առաքինութիւն, և վրէժ խնդրելով

1. Միւսն ի տասրև թիւն հան։
2. Մ. ՝ցանկ ի ցանկ ի ցանկ։
3. Մ. է չարէ։
4. Մ. չար խաւսեցաք, որպէս և յետոյ։
5. Մ. զառաքինութիւնքն։
6. Մ. կազմեցեալ ընդ նմա նեղչական, լեւոն ընդդէմ։

ի հակառակորդ հեշտ ցանկութիւնէն։ Արդ զբան ողջախոհութեանն՝ զաւէն հրամայէ ասասուած Մովսէսի կազմել, ասելով. արա քեզոյն[1] աւձ, և դիր զնա ի նման։ Տեսանես զինչ ոչ[2] այլում ումեք կազմէ զայս Մովսէս զաւձս, բայց ինքեան անձին. քանզի հրամայէ ասասուած. արա քեզ քեզոյն, զի գիտասցես եթէ ոչ ամենայն ուրուք է[3] ասացուած ողջախոհութիւն, այլ միայնոյ ասասուածասիրի։ Բայց հայցելի և խնդրելի է. ընդէր Մովսէս զզրնեձի աւձ կազմէ, ոչ հրաման ասեալ նմա յաղագս որակութեան արարչութեան։ Արդ մի՛ զուցէ վասն այսորիկ. զի նախ առաջին անեւիթ են ասասուծոյ չնորհքն և անորակք. իսկ մահկանացուացն ի նիւթս տեսանին։ Երկրորդ անդամ[4], զի Մովսէս անմարմնոցն բաղձայ և ցանկացեալ է առաքինութեանց. իսկ մեր անձինքս ոչ կարացեալ մերկանալ զմարմնս, մարմնականս ցանկացեալ են առաքինութեանց։ Քանզի ուժեղագոյնքն և կարգրն և հաստատուն զգայութիւնն զբզրնձոյ նմանեալ է, ըստ ողջախոհութիւնն բանի[5]. ուժգին և հարատաւ և անկորացուցանելի երևի։ Բայց թերևս և ըստ այնմ, ըստ որում[6] ասասուածասիրի ողջախոհութիւնն պատուականագոյն է և ոսկւոյ նմանեալ. և զերկրորդ տեղի ունի յրատառասութեան խնամատարութիւն ընդունելումն։ Արդ զոր խածցէ աւձն, ամենայն որ տեսցէ զնա ապրեսցէ. կարի քաջ, ճշմարտապէս. քանզի եթէ միաբ խածեալ հեշտ ցանկութեամբ երեայի աւձիւն, զաւրացէ[8] տեսանել անձնասիրէն զողջախո-

1. Ի ըս. «եչ.իսկ Միան ուղղէ ի բնագրին, «եչ» «եչոյն»։
2. Մ. չի ոչ ոչ ---դ։
3. Մ. ---դ է։
4. Մ. -ենմ։
5. Մ. բն։
6. Մ. ըստ որում այն որոշ ---------ոյ։
7. Մ. ընդ---նելումն։
8. զ---բեսցէ, համաձայն յունին։

հութեանն զդեղեցկութիւն՝ զՄովսէսի զաւձն, և ի ձեռն սորա զնոյն ինքն զասաուած, կեցցէ, բայց միայն տեսցէ և ի միտ առցէ և խմացի։ Ոչ տեսանես զի և այր որ իշխէ խմաստութիւնն՝ Սառա ասէ, զի որքան միանգամ լուիցէր՝ խնդակից լիցի ինձ։ Բայց զի եկ բեր զոք՝ ասել թէ ծնաւ առաքինութիւն՝ զբարեբաստութիւն, զիսահակ, և անդէն վաղվաղակի զխնդակցականն զերդ[1] աւրհնութեանն աւրհնեսցէ։ Արդ որպէս այնր որ լսէրն՝ է[2] խնդակիցն լինել, այսպէս այնր որ զառողջախոհութիւնն և զասաուած տեսանէ սրտի մտաւք՝ լուսաւոր խորհրդովք ոչն մեռանել։ Բայց բազումք ժուժկալութեան և ողջախոհութեան բաղձացեալք անձինք, և անապատացեալք յախտից, զզաւրութիւնն կրեցին զասաուծոյ, և զխոտրումն և զյեղյեղումն[3] առ վատթարն ընկալան[4]։ Հաստատուն բաղացուցեալ[5] զնոյն ինքն զնա և ըղլինելութիւն զտեառն։ Վասն զի ինքն անշարժ և անյեղյեղուկ եկաց մնաց միշտ։ Իսկ զլինելութիւնն, վասն զի հակառակ և առ հակառակն միտէ։ Քանզի ասէ. «այն որ եաժն անցոյց զքեզ ընդ անապատն մեծ և ընդ ահագին, ընդ այն՝ որ աւձն հարկանելով և կարիճն, և ծարաւն՝ ուր ոչ էր ջուր, որ եհան քեզ ի կատարատաչ վիմէն աղբիւր ջրոյ։ որ ըմպեցոյց[6] քեզ մանանայ զոր ոչ գիտէին հարքն քո»։

Տեսանե՞ս զի ոչ միայն Եգիպտոսի ախտից ցանկացեալ անձն՝ մատնի ի ձեռս աւձից, այլ և յորժամ է յանապատի։ խաժանի ի հեշտ ցանկութիւնէն, ի բազմապատիկ և յաւձաձև ախտէն։ և ընտանեգոյն և մերձաւոր անուն էառ՝ զհեշտ ցան-

1. Մ. Ա՛ման։ Ա՛ զ՝ երգ։
2. Մ. լինն։
3. Մ. զ՝ երեւ։
4. Մ. ոչ ընկ՝ալ։
5. Մ. բ՝ազ՝ացուցեալ։
6. Մ. ջ՝ըմբեցոյց։ Համաձայն յոյն բն։

կութեանն զգործ։ Քանզի խաժմանս կոչէ զխը-
ղարդմունսն և զայրացմունս[1] հնչա ցանկութեանն.
այլ ոչ միայն խաժանելով յանապատին, այլ և քայ-
քայի և ցրուի։ Եւ քանզի ես բազում անգամ
լքանելով թողլով զմարդիկ, զազգակիցս և զսի-
րելիս և զդաւառս, և յանապատ վայր երթալով,
զի յարժանեացն ինչ տեսանէ հայեցեալ տեսից,
ոչ ինչ ուգտեալ[2], այլ ցրուեալ և քայքայեալ միա-
քբս կամ ախտս հարեալ՝ էանց և էգնաց ընդ-
զէմն[3]. և է յորժամ ի բազմութեան բեւր մարդ-
կան հանդարտեմ՝ և խաղաղանամ մնատ, զանձ-
նական զխուճապ խնճոյի ասասուծոյ յիշէն ի բաց
փարատեցուցեալ՝ և ուսուցեալ ինձ զի ոչ տեղ-
եաց զանազանութիւնք զբարին և զվատթարն
գործեն, այլ ասասուած բերելով և ածելով՝ ուր և
կամի զանձինն կառա[4]. սակայ՝ մնանի ի կարի-
ճբս, որ է ի ցրումն յանապատին. և ծարաւ հա-
սեալ ըմբռնէ ախտիցն, մինչ ասասուած ի կատա-
ռատաչէն[5] զխնամութեանն իւրոյ զվտակս ի վե-
րայ առաքեսցէ, և արբուսցէ զվոտարեալ անձն,
անխոտոր և անդեղդեղուկ առողջութեամբ։ Քան-
զի կատարատաչ վէմ խնամութիւնն ասասուծոյ,
զոր կատար և նախ առաջին եհատ յիւրմէ զաւ-
րութենէն։ Զկնի այսորիկ արբուցանէ զասասուա-
ծասէր անձինս. և արբուցեալք և մանանայիս առ-
լցեալք սեռականագունիս։ Եւ կոչի մանանայ զի՝ նչ-
որ ամենեցունն է սեռականագոյնն է՝ ասասուած.
և երկրորդ ասասուծոյ բան[6]. իսկ այլքն բանիս մի-
այն են, բայց կարծով թուին գոլ։ Արդ տես ըզ-
զանազանութիւնն՝ յանապատին յեղեալն և յեղ-
իպտասին. քանզի ոմն մարդացուցանող աւձիւքն

1. Միւսն. ղղրդրդմանս։
2. Մ. ոչ տեսեալ։
3. Մ. ինչ յընդդիմն։
4. Մ. զկառն։
5. Մ. է կատարատաչ վիմն։
6. Մ. բանն։

վարի, այսինքն է անցաց հեշտ ցանկութեամբք որ մահ ածին ի վերայ. իսկ որ ի վարժին կայ՝ խածանի միայն ի հեշտ ցանկութենէն և կարճի[1]. բայց ոչ մեռանի։ Եւ նա ողջախոհութեան պզրնձով աւձիւ[2] բժշկի եղելովն յիմաստնոյն Մովսէս. և սա յաստուծոյ առաքանի, գեղեցիկ բմբկելի զիմաստութիւնն, յարբերէ զոր ինքն բերեաց յինքեան խմաստութենէն։ Բայց ոչ յաստուծմարգունէն Մովսէսի ի բաց կայ աւձուս հեշտ ցանկութիւնն։ Քանզի ասի այսպէս. «Եթէ ոչ լուիցեն ձայնի խմամ, քանզի ասացին եթէ ոչ եղեցաս քեզ աստուած. զի՞նչ ասացիս առ նոսա. և ասաց տէր ցՄովսէս. զի՞նչ է այդ ի ձեռին քում, և նա ասէ գաւազան. և ասաց. ընկեա ըզդա յերկիր, և ընկէց զայն յերկիր, և եղև աւձ. և փախեաւ Մովսէս ի դիմաց նորա. և ասաց տէր ցՄովսէս. ձգեա զձեռն, և բուռն հար զարանցդ, եւ եղև գաւազան ի ձեռին նորա, զի հաւատասցեն»։

Զիարդ զ հաւատասցէ աստուծոյ, եթէ ոչ ուսցի զի այլքն ամենայն յեղուն, բայց միայն ինքքն անցեղ և անփոփոխ է։ Արդ ուսանի աստուած յիմաստնոյն, զի՞նչ է գործական ի յանձինդ քում ի վարս. քանզի ձեռն նշանակ գործոյ է։ Եւ նա պատասխանի ասայ թէ խրատ, զոր գաւազանն կոչէ. վասն որոյ և թափեալ ախտիցն ասէ Յակոբ. «գաւազանաւ իմով անցի ընդ Յորդանան ընդ այս». և Յորդանան էր թարգմանի. իսկ ասորնոյ երկրայնոյ բնութեանն է, այն որ բան տարութեան է և ախտ. և անցանէ ընդ այսոսիկ որ ի վարժին կայ միաք խրատու. քանզի նուազաս է և ի վայր ընդունել, զի գաւազան ունելով ընդ գետ անցանէր[3]։ Արդ բարեաք և աստուածասէրն Մով-

1. Միւսն. Ե է կրճէ։
2. Մ. ՝ԷԽՆՈՒԹԻՆ ԶԶՆԴՎ ԱՒՆ։
3. Մ. ՀԱՅՈՒ։

սէս տայ պատասխանի. քանզի արդարև Հապէս գործք առաքինոյն խրատք, յորս երբև ի գաւազան յեցեալ հաստատի, զչարժումն և զդրգռումն անձինն հաստատելով։ Այս գաւազան՝ ի բաց ընկեցեալ, լինի ուռ։ Վայելչաբար. քանզի անձն եթէ ի բաց ընկեցէ զխրատս, եղև ախտաւէր փոխանակ առաքինասիրի. վասն որոյ և փախչի ի սանձէն[1] Մովսէս. քանզի յախտէն և ի հեշտ ցանկութենէ ի բաց փախչի առաքինաւէրն։ Այլ սակայն աստուած զփախուստն ոչ գովէ. քանզի քեզ ով խորհուրդ, չև ևս կատարեցելոյ[2], զփախուստ և զճողոպրումն զասիոց՝ յարմարական է կրթել և վարժել. բայց Մովսէսի կատարելումն՝ կալ մնալ յատ այսոսիկ[3], և ընդդէմ կալ նոցա և մարտնչել. ապա եթէ ոչ[4] զանեղիկոսութենէ և զիշխանութենէ բուռն հարեալ[5], նոքա մինչ յոգեկան դգեակն ի վեր եկեալք զամենայն պաշարեսցէ և գերի վարեսցէ զարէն գոռոզի, զոգին։ Վասն որոյ և հրաման տայ աստուած բուռն հարկանել զարտնոյն. այսինքն է՝ ողբական և չողբարթող հեշտ ցանկութիւնն և ձեռնընդեն նոքա մի երկեցուսցէ զքեզ. այլ մնասանդ զայսմանէ բուռն հար և կալ՝ և փակիցի լեր. քանզի եղիցի գաւազանն՝ փոխանակ աւանի գաւազան. այսինքն է՝ փոխանակ հեշտ ցանկութեան եղիցի[6] խրատ. այլ եղիցի ի ձեռին, ի գործս խմաստնոյն։ որ և՝ ճշմարիտ։ Բայց բուռն հարկանել և ունել զհեշտ ցանկութենէ և բմբռնել՝ անկարութիւն է, եթէ ոչ նախ յառաջագոյն ձգեսցի ձեռնն. եթէ ոչ զգործս և զյառաջատութիւնս ամենայն խոս-

1. Միւռ. ի նմանէն։
2. Մ. կատարելոյ։
3. Մ. — այսոսիկ։
4. Մ. — ոչ եթէ ոչ։
5. Մ. հարեալ։
6. Մ. յուսի եղիցի։
7. Մ. յոր և ճշմարիտ։

տովանեսցէ անձն բան աստուծոյ գոլ, և ոչ ինչ յինքն ժողովեալ ամփոփեսցէ։ Քանզի յաւէտ յայտնեալ է ի բաց փախչել տեսանողն ծանուցեալ գիտաց. և այլ միւս ևս՝ զառողջախոհութեան բանն կազմէ, զպղնձին. քանզի խածեալն ի հեշտացանկութենէ՝ տեսանելով զառողջախոհութիւն, կեցցէ զճշմարիտ կեանսն։ Այսպիսի աւձ ըղձայ լինել Յակոբ զԴան, և ասէ. «Դան դատեսցէ զիւր ժողովուրդն իբրև զմի տոհմ զիսրայէլ, և եղիցի Դան աւձ»։ Քանզի ի Լիայ հինգերորդ որդի է ի-սպաբար, ի Յակոբայ հարազատ, ի հաչիւ և ի համար անկելոց ընդ այնոսիկ որ ի Զեղփայն էին երկուքն, եւթներորդ. և սորին Յակոբու հինգերորդ է Դան՝ ի Բալլայ ի նաժշտէն Հռաքելէ։ Իսկ զպատճառսն յայլոս ասասցուք. բայց յաղագս Դանայ այժմ ասելի է։

Երկուս ազգս կրէ անձնս. զմին աստուածային և զմիւսն ապականացու։ Արդ զմիսն ահա ծնաւ աւասիկ, և եկաց առ նմա՝ յորժամ խոստովանել աստուծոյ և տեղի տալ ամենայնի զաւրեաց անձնէն, ասացուած լաւ ոչ ևս ունէր առնուլ, վասն այսորիկ եկաց ի ծնանելոյ՝ զՅուդա, զխոստովանական զյեղանակն բերելով։ Իսկ զմահկանացու զազգն, այժմ սկսանի ստեղծանել. քանզի բազկացաւ և գոյացաւ մահկանացուն ըստ կղկղումն. քանզի զաւրէն հիմանն՝ ճաշակաւորութիւն պատճառք կենդանեացն յաւէժ տեղութեանն է. և Բալա թարգմանի կղկղումն։ Արդ յայտնեալ լինի գառաստան մեկնութեան. քանզի այս ազգ որոշեալ մեկնէ և մատուցանէ զանմահկանացուն ի մահկանացուաց։ Արդ ըղձայ և յաղաւթս կայ՝ լինել ողջախոհութեան զտարփաւղն. իսկ Յուդա՝ ոչ կացցէ յաղաւթս և ըղձասցի. քանզի ունի ահա զխոստովանելն և զհաճոյն լինել աստուծոյ.

1. Միւսն. Հ—ելէ։
2. Մ. Յ—դ—ոյ, որպէս ունի և յոյն բնագիրն։

քանզի «եղիցի, ասէ, Դան՝ աւձ ի վերայ ճանա-
պարհի»։

Ճանապարհն է անձնամերձ, որպէս ի ճանապար-
հէն Դանայ՝ վասն որոյ երևի էիցս անձանց անց-
ցաւորաց[1], անձն անասնոցս, ասնոց, առաքինեաց-
ցս, վատթարացս, ծառայից, ազատաց, ման-
կանց, ծերոց, արուաց, իգաց, աւտարաց, քա-
զաքացեաց, հիւանդաց, ողջից, յապաւելոց, ամ-
բողջից։ Այսպէս և յոգւոյն, և անանձունքն, և
անկատարքն, և հիւանդոքն, և արուքն և իգա-
կանքն, և բազում՝ այլ ինչ ազետից լիք չարժմունք
և դանդաղմունք. և զարձեալ՝ շնչաւորք, ամբողջք,
արուք, ազատք, ողջականք, ծերք, առաքինիք, հա-
բաղատք, և էապէս իմաստունք։ Արդ եղիցի ողջա-
խոհութեանն բան աւձ յանձին, որ գնայցէ[2] ընդ նա
ամենայն իրս աշխարհիս, և անցեալ նստի[3] ի վերայ
ճանապարհին։ Եւ զի՞նչ է այս. քանզի անկուռ է
առաքինութեանն ճանապարհ, քանզի սակաւք են
որ գնան ընդ նա. և կուռ և կոխ չարութեանն.
անցանել և նստել, և սպասել և դարանամուտ
լինել. խրատ տայ առ կոխեցեալսն ճանապարհի
ախտին և չարութեանն, յորս հարկանին և հա-
շին կենաւք, փախստականքն յառաքինութենէ
խորհուրդ. խածանելով զպարչապաթ ձիոյ՝ ի մուտ-
ոյ. թաթող է որ զկայսն եղելոյն և զապակա-
նացուին, չարժեալ զրդուեցուցանէ ի յետուին։
Եւ ախտք ձիոյ նմանին. քանզի քառաքեաց է և
ախտ իբր ձի. խրոխտ և յարձակող, և ինքնա-
հաճութեամբ լի և կայտառական բնութեամբ։ իսկ
առողջախոհութեանն բանն, խածանել և խոցո-
տել սիրէ, և սատակել զախտն. քանզի թաթե-
ցեալ ախտին և ընկճեցեալ անկցի հեծեալն յե-

1. Միան. անց. գրչ։
2. Մ. գնայ-ոյրոց։
3. Մ. գնա ընդ սրինայն։
4. Նոյնպէս։

տը։ կոյս։ Հեծեալ խմնալի է զայն՝ որ ի վերայ անցեալ նստի ախտիցն միտն, ցորքան ոչ անկանի յախտիցն. յորժամ զայսոսիկ խոհիցի[1] և վարեսցի և յայդմեսցին։ Բայց բարւոք յառաջ կոյս ոչ անկանի անձեն. քանզի մի՝ յառաջ անցցէ ախտիցն՝ այլ վերջացցի ի սոցանէ, և ողջախոհութիւն ստացցի։ Եւ աւրինական է զոր ասէ[2]. քանզի եթէ յարձակեալ միտն՝ զրկել և զլանալ վերջացցի, և անկցի յետս կոյս, ոչ դլացցի. ապ եթէ յանսասուն յախտն կոյս չարժեալ, ոչ ի բաց վազեալ եկցէ, այլ որ զինի անցեալ մնացցէ՝ զանախտութիւնն զդեղեցիկ հմմարեալ ընկալցցի։ Վասն որոյ և այն որ յետոյն անկածն է[3] ընդունելով ի վերայ բերէ սպասել զվերկութեանն սեաւրն. քանզի արդարն էապէս յաստուծոյ ապրի որ ի բաց անկանի յախտիցն, և վերջանայ ի ներգործութենէն նոցա։ Անկցի այսպիսի անձնս իմ անկած, և մի՝ երբեք յարուցեալ կանգնեսցի ձիական և կայսրական[4] ախտ։ զի աստուծոյ փրկութեանն սպասելով՝ բարեբաստիկ եղիցի։ Վասն այսորիկ և Մովսէս յերգն աւրէնէ զասուած, եթէ զերիմար և զհեծեալն[5] ընկէց ի ծովը. զչորս ախտսն, և զեկեալն ի սոսա զմիջատական զմիտն, յայսականութիւն գործոցն, և յանխուզ[6] խորս անդնդոց. և գրեթէ բոլոր երգոյս գլուխ այս է, առ ամենայնն ակնարկելով երթեալ երանէ, և այսպէս ունի։ Քանզի եթէ անախտութիւն ըմբռնեսցէ զանձն, կատարելապէս բարեբախտիկ լիցի[7]։

Եւ խնդրելի է, ընդէ՞ր Յակովբ ասէ. թէ անկ-

1. Միւս. խոհիցի։
2. Մ. զ -ասէ։
3. Մ. անկածն ընդունելով։
4. Մ. կայսրական։
5. Մ. զեկեալ-ը։
6. Մ. յանուսուն։
7. Մ. լինիցի։

ցի հեծեալն յետս կոյս. և Մովսէս երգէ եթէ երիսարն և հեծեալն ընկղմեցան։ Արդ ասելի է, զի այն որ ընկղմին[1] եգիպտացանն է յետուստն, որ զի[2] թէպէտ և փախիցէ ընդ ջրովն, այսինքն է ընդ բերմամբ ախտիցն փախչի։ Իսկ որ անկանին հեծեալն յետս կոյս. ոչ է յախտասիրացն. և նշանակ հաստատուն, սա է հեծեալն. իսկ նա վերելակն։ Քանզի հեծելոյ գործ է մտելն և վարժելն զձի, և զայն որ ամբրհկին՝ ամբերանել. իսկ վերելակին բերել ուր ուրեք կենդանին ածիցէ. և ի ծովս՝ նաւաստուոյն ասելն և բերել զմակոյկն և ուզիղ վարել. իսկ վերելակին կիրս կրել որ ինչ միանգամ՝ ընդ նաւն անցանէ[3]. բան որում և այն որ մտէն և վարժէն զախտս հեծեալն՝ ոչ ընկղմի. այլ ի բաց ելեալ ի նոցանէ, կայ մնայ փրկութեանն տեառն։ Բայց խրատ ասայ տէրունեան բանն ի գնասակնէն, ի սորնոյն որ գնան ի վերայ չորիցս, որ ունի կարիս վերագոյն քան զատրս, մինչ վագել նորաբ, կերակրելի[4]. յորոց է ջրելակն և գրուիճն և մարգանն, և չորրորդ՝ աւձամարտն։ Եւ յիրաւի արժանապէս. քանզի եթէ անկերակրու[5] և գնասակար իրք է աւձուտ հեշտ ցանկութիւն, կերակրոգագոյն և փրկական[6] եղիցի այն որ ընդ հեշտ ցանկութեանն մարտնի բընութիւնն. և է այս ողջախոհութիւն։ Արդ մարտիր, ով անձն, և գու խորհուրդք՝ ընդ ամենայն ախտի, և կարի յոյժ առաւել ընդ հեշտ ցանկութեանն, քանզի խորամանգագոյն է աւձ քան զամենայն գազանս որ են ի վերայ երկրի. քանզի քան զամենայն ինչ խորամանգագոյն գոյս ըզհեշտ, ցանկութիւն։ Վասն է՝ Բ. վասն զի ամենայն

1. Միւս. ընկղմեցան։
2. Մ. -ոյ զ։
3. Մ. -նցանիցէ։
4. Մ. Ե կերակրելի։
5. Մ. -ունկերակրու։
6. Մ. փրկականագոյն։

ինչ հեշտ ցանկութեանն են ծառայք. և կեանք վարուց վատթարացն՝ տէր ունին ի վերայ ըզ-հեշտ ցանկութիւնն։ Քանզի գործակքն սարա գրտանին ի ձեռն ամենայն խորամանգութեան. ոսկի, արծաթ, փառք, պատիւ, իշխանութիւնք, նիւթք զգպլեացն, և ձեռագործարուեստքն և այլ ինչ որ ինչ միանգամ կազմիւք են հեշտ ցանկութեանն, ասենապատիկք[1], և զրկեմք վասն հեշտ ցանկութեանն. իսկ զրկանքն ոչ առանց յետին խորամանգութեանն լինի։ Արդ զուձամարտու զնրատս բարուցն հակառակ կարդեա, և զգեղեցիկ հանդէս նահատակեցիր, և փութա պակիլ ի վերայ այնր՝ որ պրումն ամենայնի յաղթէ հեշտ ցանկութիւնն. զգեղեցիկ և զբարդատաճ պատն, զոր և ոչ մի ամենաժողով տանք մարդկան տանել[2] կարացին։

1. Յօր. գրեալ է ---ԷՆԵՆԴԻՔ. և ապա քերեալ՝ մեայ այդ ընթերցուած. իսկ միւսն ունի՝ բառ յունին, ---ԷՆԵՆԴԻՔ։

2. Մ. ---ՆԷԼ։

Ասէին համառօտ յիշատակարան գրչին. «Ասացողի սրա ողորմեսցի տէր աստուած, և անյարմար գրչիս»։ Իսկ միւս գրիչն այսպէս յիշատակագրէ. «Ով սրբասնեալ ընթերցողդ, որք գրիչն այսպէս յիշատակագրէ. «Ով սրբասնեալ ընթերցողդ, որք ուգտիք յայսմ աստուածատունս տաճիցս մեկնութենէ, յիշեսուգտիք ի սուրբ յաղաւթս ձեր զարբանեալ բարուն պատս մեր ըզ-ՔՈՀՆԵՆԷՍ. և զանարժան գրիչս զՎարդան, սպասաւոր բանի. և աստուած զձեզ յիշէ յիւր անձնա բ՝ը։

ՅԱՂԱԳՍ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ

Ցոհմք են ազգին երկոտասան. և մի յամենեցունց որ լաւագոյնն է՝ ընտրեցաւ քահանայել, պատիւ քաջարութեան և ստուգաժաէր առաքինութեանն զայս ընկալեալ. յորում ժամանակի գէպ եղև բազմութեանն մեզանչել, զհետ երթեալ կամաց խրատու ամենց անմտաց, որ ընդ եգիպտական յիմարութիւնն նախանձէին. և զգաւառական չրտումն հպարտութեան, զոր ունէին յանասուն կենդանիս, և մանաւանդ առ զուարակս առասպելաստեղծեն[1]։ Քանզի զառաջնորդս հպարտ յիմարութեանն զամենեսին իբր արբմամբ յիմարութեանն[2], ինքնահրամանք խոզխոզեալք, սուրբ և արժան համարեցան գործել[3], յաղագս բարեպաշտութեան մարան մարտուցեալք։ Եւ աւրէնք քահանայից են այսոքիկ. ամենակատար և ամբողջ լինել քահանային հրամայեալ է, և մի՛ ինչ մի՛ ամենևին ի մարմին բիծ ունել. ոչ ըստ նուազութեան պակասեալ, և կամ յապաւելոյ մասին. և ոչ զարձեալ ըստ աւաւելութեան միանգամայն ի ծննդեան անդաւելի գտեալ, և կամ յետոյ ի հիւանդութենէ բնաւորեալ, և ոչ գունոյ փոփոխելոյ ի պիսակութենէ[4], և կամ ոչքեան ինչ գբժընդակ, կամ մրջմնոցի[5] և կամ այլ ինչ[6] խաղաւարտաց, և արածս՝ որ ինձ թուի, այս ամենայն ինչ նշանակ առ ոգիս գոյ կատարելութեան։ Քան-

1. Միւսն. —————————։
2. Ի լս. ——————։
3. Մ. ————։
4. Մ. ————։
5. Մ. ————։
6. Մ. ——։

զի թէ որ բնութեամբ մահկանացուն է մարմին քահանային՝ այցելի է, զի մի ինչ վրիպումն վասու գոցի, կարի յոյժ ողորմն անմահից ասեն թէ արժան է տալուրել բան կերպարանաց էին։ Եւ բան է կերպարան աստուծոյ, ի ձեռն որոյ ամենայն աշխարհ արարաւ։ Իսկ յետ ապատացն ևս և պատուականաց, և ի տոհմիկ մարգկանէ, և ամենակատարութիւն հրամայէ ի մարմին զոլ և յոգիս։ Եւ յաղագս պատմուճանին զոր առնուլ պարտ է քահանային, այն որ հանդերձեալն է ի սպասու կալ տէրունական սպասուն։ և հանդերձն է պատմուճանն կատարելն, և զենչեակ է որ յամբարձոյն ծածկոյթ. որոց ոչ է արժան և աւելն առ բագինն մերկանալ. և միան փոխանակ առ սպասն երգումեան։ քանզի անհանդերձք, միայն պատմուճանաւք, պատարագս և սպանդս և նուէրս, և որ ինչ այլ միանգամ առ ի պէտս պատարագացն մատուցանել, անվհերելի արգելութեամբ կրթեալք։ Իսկ քահանայապետին առացեալ է զնմանն այսր հանդերձ զգենուլ, յորժամ ի ներքինն խունկս արկանել մատնիցէ։ վասն զի կատն ոչ յումեքէ որ մեռանին է, որպէս ասին ծնանիլ։ հրամայեալ է, և այլ միւս ևս ի պէտս առնուլ, որ կարի յոյժ պայծառ կազմուած ունի յինքեան։ իբր կերպարան իմն և նըմանութիւն աշխարհիս թուել զոլ։ և յայտնի հաւատ է կազմածն։

Յաղագս պանդուխտրին։

Նախ առաջին, զգեստ բոլորակ է, բոլոր բոլորովին. կրկին կապուտակեայ՝ պնդանուրջ պատմուճան, ուղղ նշանակ է. վասն զի ուղ և բնութեամբ սեռ է. և արինակ իմն՝ իբրու զպնդանուրն, ի վերուստ յայտնցանէ որ առ լուսովն են տեղեաց ձգտել, մինչև ի տոբինս երկրի ի բուն յարուցս։

Յաղագս լանչանոցին և երկու սականցն որ ի վերայ գլխոյ ուսոցն։

Այս անկած բանիմաստիսիլ և ի վերայ սարտ, նշանակ երկնի. քանզի երկու քարինքն ի վերայ գլխոյ ուսոցն զմիմեանն պատուականագիւտ են. մի ի միոջէ կոչմանէ, միւսն ի միոջէ. յերկոցունց կողմանց բոլորակք՝ ցոյցք են կիսապնդացն, այնց՝ որոց է որ ընդ երկրաւ է, և է որ ի վերայ երկրի։

Յաղագս որ ի վերայ լանչացն երկոտասան ա-կունքն որ բանակ կոչի[2]։

Այս առ կրծիքն[3] երկոտասան ակունքն բազմապատիկք գունով զանազանեալք, յերից կարգեալ չորեքկարգեան, առ ի ցոյցս կենդանկին[4] տարաւորեալք. քանզի և նա յերկոտասանից ի մի վայր եկեալ գոյանայ կենդանացն, զտարբոյն ժամանակս զչորսն կատարէ, երիս բաշխելով տալով ի մի իւրաքանչիւր. առ հասարակ ամենայն տեղին կոչի բանակ ճշմարտապէս. վասն զի ամենայն ինչ որ յերկնի է. բանիւք, և կշռութեամբ և համեմատութեամբ արարեալ է և կարգեալ. քանզի որ ինչ միանգամ անդ է, ամենեին չիք առանց բանի։

Յաղագս յայտնութեան և ճշմարտութեան։

Վասն զի բանակին երկգիմի անկուածս պայծառս զարդարէ, կոչելով զմին յայտնութիւն, և զմիսն ճշմարտութիւն։ Եւ առակէ ի ձեռն ճշմարտութեանն[5], եթէ յերկին բնաւ ամենեին

1. Միսն. է է վերայ սարտ։
2. Մ. բանակ կոչի։
3. Մ. կրծիքն։
4. Մ. կենդանանին։
5. Մ. չուտի. Ե — — ի յեռն ճշմարտութեանն։

սուտ ինչ երանել չէ արժան. այլ այս ամենայն առ երկրային վայրսդ հասեալ[1] ի յոգիս անբարտ մարդկան ընակեալ է։ Իսկ ի ձեռն յայսոսիկանեն, զի որք յերկինս բնութիւնքն են, իւրաքանչիւր ինչ զեկուցանեն որ առ ի մեզ իրք են, որ ինքն ըստ ինքեան առանձինն ամենայն իրաւ արդեւք էր անգիտելի։ Եւ յայտնի նշանակ քեզ իրացդ. եթէ ոչ լոյս արեգական ընծուէր, զնարդ մարմնոցն անբաւ և անճառ որակութիւնք երեւեալ լինէին. և ի՞նչ զրաղմակերա գունոց և ձեւոց և չքոց տեսիլք, զաւուրս և զգիշերս, զամիսս և զտարիս, և միանգամայն առ հասարակ ամենակ ո՞ արդեւք եցոյց. զի եթէ ոչ լուսնոյն և արեգական, և այլոց աստեղացն յարմարականքն, որ քան զամենայն բան վեհ և ի վեր են, շուրջ յածմունքն. և ո՞ զիմուց բնութիւն, եթէ ոչ ասացեալքն ըստ մասանցն ամենակի բաղադրութիւնք։ Իսկ ո՞ զայս որ ի ծովս, և յանչափ լայնութիւնս ջուրց զճանապարհս եհատ և եցոյց նաւավարաց, թէ ոչ աստեղացն շրջմունք և շրջաբերութիւնք։ Արդ խմաստուն ոք, և բաղում՝ այլ ինչ զգուշեաւ ընդ միտ ածեալք, և սպասս կալեալ գրեցին յերկնայինցն նշանակեալ անհոգմութիւնս, և չուչս բանաւորս, բերս և անբերութիւնս պտղոց. արձակ և բոցակիզագոյն ամ ամառն. ձմեռն անկարծելի և ամրացեալ, խոշակս և թաւնս, ժուժկալութիւնս կենդանեաց և մեկոց. և որ ինչ միանգամ՝ այսպիսաբար է. քանզի ամենեցուն հոչակեալ է և արձանակեալ երկրայինցս յերկնի նշանքն։

Յաղագս նռնաձևացն և զանգակացն։

Առ սուրբին կողմամբ պճղնաւորին կախէին ոսկի նռունք, զանգակք և ծաղկեալք[2], *որք են նշանակ*

1. Միւսն յաւելու. հալեալ։
2. Մ. ծաղիկք։

երկրի և ջրոյ. երկրի՝ ծաղկեայն, բան այնմ՝ բան ո-
բում՝ բուսանի և ծաղիկ ամենայն ի սմանէ. ի ջրոյ՝
ամենայն նռնաձկին ասացեալք, ասուգապէս յեռա-
լոյ և ի ծորելոյ. իսկ գյարմանութիւն և զմիաբանու-
թիւն և զհնչումն ի միասին զաշխարհիս մասանց՝
զանգակքն երևեցուցանեն։ Բայց բարւոք է և գիրն.
քանզի վերագոյն՝ յորում՝ տեղւոջ ակունքն, որ
կոչի կրծանոց, երկնի նմանութիւն ունի, վասն
զի և երկին վերագոյն է։ Իսկ զշնչաւորն ընդ
նովաւ, բոլոր ամենեին կրկին կապուստակեայ,
վասն զի և ուղ սեռ է. որոց յետ երկնի, երկրորդ
ի կարգն վիճակեցաւ ծաղկեայն, և նռնաձկքն՝ առ
վերջինն վայրաւք, վասն որոյ և երկիր, և ջուր զբա-
ղարեն ամենայնի մասն հասան. և է տէրունական
զգեստուն կազմուած նմանութիւն ամենայնի՝ բա-
քանչելագործէ տեսանիլ և խմանիլ[1]. քանզի երեսս
ունի ահագին և հիացուցանող. որպիսի ոչ ինչ
յանկեալոց առ մեզ գոյ վասն պայծառութեան՝ միան-
դամայն և բազմապատիկ զարդարանաց. և ի-
մաստութիւն յաղագս նոցունց մասանց խմաստա-
սիրութեան լինի քահանային։ Նախ առաջին, զի
զկերպարան զամենայնի ունել յինքեան երևեցու-
ցանիցէ. յարն տեսանել, արժանի մատուցանել
զիւրն բոլորեցունն[2] ընտիրեան. զի և պատարագ-
սքն մատուցանել, սպասաւորակից է ամենայն աշ-
խարհ ընդ նմա։ Քանզի վայելչագոյն է որ ի
քահանայութեան կայ աշխարհիս հաւրն, և զոր-
գի ընդ իւր ածել առ ի բժշկութիւն սպասու ծը-
նողին. և է երկրորդ տէրունի զգեստուն, զի նչա-
նակ հարկաւոր ոչ գաղարել. քանզի այլոցն քա-
հանայք՝ վաղն ընտանեաց և սիրելեաց և ազգակ-
ցան, զայս միայն սովորեալ են ազատիս և պա-
տարագս կատարել։ Իսկ քահանայիցն քահանա-
յապետ, ոչ միայն յաղագս ամենայն մարդկան ազ-

1. Միան. ՝ՈՒՆԼԻՍՈՒՆԼ և ԽՄՆԼ. յոյնն՝ ՝ՈՒՆԼԻՍ ՔՈՐ.
2. Մ. ԲՈԼՈՐԵՑՈՒՆՆ։

գի, այլ և յաղագս բնութեան մասանց, երկրի, ջրոյ, աւդոյ, հրոյ, զաղաւթս և զգոհութիւն առնէ. և զաշխարհ, որ է արգաւաբ ճշմարիտ իւր գաւառ համարեալ յաղաւթս, որոյ ազաւթիւք և խնդրուածովք սովորեաց հաշտեցուցանել զառաջնորդն ազաչելով. զի ի վայելչական և ի հաչտ բնութենէն իւրմէ տացէ եղելոյն։ Զայս յառաջագոյն ասացեալ, առ սմին աւէնսդրէ հրամայելով՝ զայն որ մերձենայ ի բագին, և հպի ի պատարագս, յորում ժամնակի կարգեալ է ըստէրունի պաշտաւնն կատարել. ոչ գինի, և ոչ այլ ինչ արբեցութիւն ընդել. յաղագս չորից հարկաւորագունացն. դանդաղութեան և մոռացման, և քնոյ և անզգայութեան. քանզի անապակ՝ զմարմնոյ զաւրութիւնն թուլացուցանէ, և դիժաւարաշարժագոյն գնաստնն առնէ, և դանդաղագոյն գործէ. և բանի ի քուն հարիէ մոռանել, և զոգւոյն պնտութիւնս թուլացուցանել, մոռացման միանգամայն և անզգայութեան պատճառ լինի։ Իսկ որ զգաստք են մասունք մարմնոյ թեթևացեալք դիւրախաղացք լինին։ և զգայութիւնք մաքրագոյնք և լուսաւորագոյն, և միտքն արագատեսիլք՝ մինչև յառաջագոյն ասել զիրս կարել, և զոս յառաջն ետես՝ յիշել։ Արդ միանգամայն ըզգինոյ պէտս՝, ամենեցուն ի կենաս վարուց անաւգուտ համարելի է, յորմէ ոգիքն ճնշին զգայութեանց ազատացելոց, և մարմին ծանրանայ։ Քանզի ազատ ինչ որ ի մեզ է և արձակ՝ ոչ թոդու, այլ իւրաքանչիւր զ՝ առ որ բնաւորեալն է՝ խափան լինի։ Իսկ ի սրբութեան և ի պատարագս մատուցանեալ վասս այս գմնդակագոյն է. այնչափ, որչափ յաստուած մեզանելի, քանզի՝ մարդ գժուար ըմբռնագոյն է։ Վասն որոյ յիրաւի համարեալ է գենուլ պատարագս ըստ որոշման և մեկ-

1. Միան. զքնոս զեռ։
2. Բոյնն ոտն է հոգի։

նութեան, սրբոցն և խեղաց, և մաքրոց և ապ-
տեղեացն, և աւրինաւորաց և անաւրինացն[1]։

Յաղագս կնոջ քահանայապետին՝ որպիսի արժան է նմա առնուլ. և զի ի պոռնիկութենէ ոչ առցէ։

Վասն զի քահանայն, նախ յառաջագոյն այր է. և առ ի խառնակութեան յարձակմունս՝ ի հարկէ պարտ է վարել. և ամուսնութիւն նմա իբրև կուսի. սուրբ և ի սուրբ ծնողաց, և հաւուց և նախնեաց ի քաջալաւութիւն և յաջաւութիւն ընտրելով, որոշեցելոց։ Քանզի ի բոզ, և ի խեղ մարմնոց և ոգւոց, և ոչ հայել անգամ թոյլ տայ. զի թէպէտ և զգործն ի բաց եղեալ և ընդ զարդարելի ձեւով ընդ պարկեշտիւ և համեստիւ մնցէ. վասն զի ի սկզբանէ բանքն պիտէր էին եղեալ նորա, մի լիցի արժանի, իսկ կինն այսպիսի՝ պատուական-նութիւն կալցի[2], փոյթ յանձին եղեալ ի պղծութենէ մաքրել զանձն. քանզի ապաշխարութիւն անիրաւութեանց գոսպելի է։ Եւ մի՛ որ յայլոց անտի առնել զնա կին արգելեալ լիցի. բայց քահանայի մի լիցի թոյլտիւն. քանզի քահանայութեանն ընտրեալ որոշեալք, արգար միաբանութիւն խնդրին. զ'ի ծնողենէն սկիզբն մինչև ի կատարած, առանց բաղդատելոյց. քանզի վասն թար է և յոյժ յիմար. որ զի եթէ վասն վիրացրն որ աբարին սպիս ի մարմինն, արգելալ զոմանս ի քահանայից և նշանակ վրիպութեան, ոչ դժուդակ բարուց է այս։ Իսկ կանայք որք ոչ ի հարկէ միայն. այլ է, զի կամաւոր բարուք վաճառեցին զիւրեանց ժամանակն[3]. և քանզի հաղիւ երբեմն ուրեմն անագան զղջացան,

1. Միան. —բրինաց և անաւրինաց.
2. Ի լ. ընկալցի, որպէս և Մ. օրինակն։
3. Յոյնն ὥραν, ցամ՞ կամ ղեխ՞ գնոց։

անդէն վաղվաղակի սիրելեաց՝ քահանայից յարմարել, ի պատրեկութենէ և ի պոռնիկացայ՝ ի տէրունի վայրն փոխել ընակեցուցանել։ Քանզի կան մեան յոգիսն ոչ գուշնաբեալ՝ զղջացելոց սրտիք և տիպք, և գիծք առաջին անիրաւութեանցն։

Յաղագս վարձուց բոզի ոչ մատուցանել աստուծոյ։

Քաջ և ամենաբարւոք յայլսն ասացեալ է, և ոչ վարձս պոռնիկի մատուցանել՝ ի տաճար աստուծոյ. և սակայն, դահեկան ինքն բան ինքեան ոչ է պարտական, այլ վասն այնր որ ընկալան. և գործոյն յորոյ վերայ տուեալն է, կարի յոյժ հեռի է մատուցանել ի հաւասարութիւն քահանայից կանայսն՝. յորոց և ասացուածքն սիրոյ են և անարգ. զի[3] թէպէտ և նիւթքն և նկարագիրքն յարգուն իցէ։

Թէ և ոչ այրի կին առցէ։

Արդ յաղագս ամուսնութեանց այսպէս ճշգրտագոյն ասացեալ է քահանայապետին. մինչ զի և ոչ զայրին՝ թոզութիւն տալ նմա յամուսնութեան, և ոչ զրջանգուցելոյ՝ առնն միայնացեալ՝ և ոչ զ'ի բացն արձակեալ՝ մինչ զեռ ևս կենդանի իցէ։ Զի նախ առաջին, յանել և յամուսնոյց և սուրբ անդ՝ տէրունական քահանայիցն սերմին անկցի, և ոչ մի ինչ խառնութիւն առնի սերմանն, առ այլ միաբանութիւն ընդունիցին։ Եւ ապա զի անչարչարելի[5] և ընդ անեղծ ոգիսն

1. Ի լա. հանդանել, որպէս ունի Միւռ. որ և սա ի լա. նշանակէ հանդանել։
2. Մ. հանդանել հանդերձիցն յանանոյն — նանոյ։
3. Մ. յունի զի։
4. Մ. նանիանելոյ։
5. Մ. ընդ չարչարելի. յայնն. անչարչարելոյն։

միաբանեալ, գիւրաւ ստեղծանիցին զրաւաւորութիւն և զկամն նոցա. քանզի գիւրաւ ձգին, և գիւրաւ ածեալ լինին առ ի յառաքինութիւն միաբ կուսին, և ի վարդապետութիւն պատարաստագոյնք։ իսկ որ զայլոյ առն փորձ առեալ է՝ ըստ դիպին, անհաւանագոյն լինին յուսումն. երբ զի ոգիքն ամբողջք և լուսաւորք ոչ են, զաւրէն կոչեցելոյ իմն մնոյ, առ ի յայտնի դիտութիւն որ գրին ի նմա կամք պատուիրանացն աստուծոյ. այլ խաչար է յայնմանէ որ յառաջագոյն գծեալ են ի նմա տիպք կերպարանացն որք գծուարաւ ջնջին, բնութիւն ընկալեալ, կամ՝ բնաւ ոչ իսկ ընդունին այլ կնիքս, և կամ՝ ընկալեալք՝ ոչ ասն թոյլ իւրեանց անհարթութեամբ և ընդդիմութեամբն։ Արդ կոյս՝ ոչ միայն ընդ որում՝ ոչ այլ խառնեցաւ. այլ զայն յորոյ վերայ ոչ այլ այր անուանեցաւ, ի ձեռն դաշանց ինչ և խոստովանութեանց, թէպէտ և սուրբ իցէ մարմնով։

Յաղագս քահանայից միաբանութեան առ կանայս։

Մանաւոր քահանայիցն՝ զայլ ամենայն յաղագս ամուսնութեանցն կարգաւ հրամայեալ է զայն ինչ, որ և այնոցիկ որ զմեծն քահանայութիւն ունին՝ թողութիւն արարեալ է ոչ միայն կոյս, այլ և այրիս. ոչ զամենայն այրիս, այլ որոց վախճանեալ են արք իւրանց, առանց երկիւղի ածել. զի ըստակառակութիւնք և գլուխութիւն ի կենաց վարուց քահանայիցն կարէի պարտաւէնք[1] ի բաց բառնալ։ Արդ առ կենդանիսն՝ լինիցին արդեաք հակառակութիւնք յախտ կենաց[2] ի նախանձաւորութիւնն։ Իսկ որք մեռանին, մեռանի ընդ նոսա և առ երկրորդ արսն թշնամութիւն և մա-

1. Միան. պարտ սարին։
2. Յոյնն՝ յախտ կենաց։

նաւանդ զի գքահանայապետն առաւելագոնի արգարացոյց ի սրբութեան և մաքրութեան, որպէս և յայլն ամենայն, և յանմեղութեան կցորդութիւն յետոյ հասանել ոչ ետ թէպէտ, բայց թէ աղջիկ ածել կոյս։ Իսկ որ յերկրորդ կարգին, թէպէտ ետ յաղագս մաքաւութեան կանանց ընդարձակութիւն առաւել. և զայնս որ զայլոց արանց փորձառեալ է՝ առնուլ կանայս։

Զի քահանային պարտ է կին առնել ի քահանայից[1]։

Զոր այսոքիւք և զազգն հաւատի զեկոյց, այնոցիկ որ հանդերձեալ էին ամուսնանալ. կանայք հրամայեալ քահանայապետին խուսել, ոչ կոյս միայն, այլ և քահանայ ի քահանայից. զի և մոլջէ առանէ, և զի աւրինակ ինն ի նմին արենէ իցեն փեսայն և հարսն, առ ի յարմարութիւն ցուցանելոյ զամենայն զկեանս վարուցն՝ խառնուած բարուց հաստատագոյն։ Բայց հրամայեցաւ և այլոցն՝ և յոչ քահանայից առնուլ զդստերս ի կընութիւն. է ուրեք, զի փոքր է սոցա մաքրութիւն, և էր զի զազգն ոչ կամեցաւ ի սոհմէ բնաւին քահանայականին անբաժ լինել, և ամենեքին ի բաց զատուցանել. վասն որոյ իբաց ոչ արգել զայլ քահանայսն խնամութիւն առնել առ այնոսիկ որք յազգէն են. զոր են երկրորդ ազգակցութիւնք։ Քանզի հորք[2] փոխանակ որդւոց են անեղբոցն. և փոխանակ հարց հորեցն, անեղբն։ Արդ յաղագս ամուսնութեան այսոքիւ են, և որ սոցին նման, փոխանակ մանկանց ծնանելոյ. վասն զի լինելութիւն՝ ծնունդեանն ապականութիւն է։ Եւ ի վախճանի, գրեաց քահանայից աւրէնս.

1. Միան. առնել քահանայ։
2. Մ. Ի զարդեալ։
3. Ի լա. ֆիլոյ էն։

հրամայելով ոչ ի վերայ ամենեցուն զանձինս իւրեանց ազատելոյ. որպէս զիարդ զբ և իցեն նոցա մերձաւորք, կամ առ բարեկամութեան, և կամ ըստ սիրոյ, և կամ ըստ ազգակցութեան ընտանացեալք. այլ միայն ի վերայ հարց և մարց, որդւոց և դստերաց, եղբարց և քեռց կուսանաց, իսկ զքահանայապետն յամենայն ախտէ ի բաց ելարձ. և մի գուցէ եթէ յիրաւի իցէ։ Քանզի զայլոց քահանայիցն զազատաւորութիւն՝ ընդ այլոց այլք ի սպասու կարեն կալ. զի եթէ զդայցեն ամենք՝ ոչ ինչ ի սովորութենէն պակասութիւն առնել սպասուցն։ Իսկ զքահանայապետին գործն ոչ ումեք գործել թողացուցեալ է. վասն որոյ իբաց՝ անբիծ և անարատ միշտ լինել հրամայէ, ոչ մերձենալ ամենեին ի մեռեալ մարմին. որպէս զի զազգին զաւրութս զպատարագս՝ պատրաստիցէ յարժանաւոր ժամու անարգելի[1] կատարիցէ. քանզի և այլպէս վիճակեալ որոշեալ աստուծոյ և տէրունական դասուն եղեալ դասապետ, պարտ է յամենեցունց հեռի և աւտար լինել որ ի ծընընդենէ են. ոչ ի ծնողաց, ոչ յորդւոց և ոչ յեղբարց մոռերմութենէ այսպէս յաղթահարիլ, որպէս զի թէ կամ անցանել, և կամ յապաղել ինչ ի հրամայեալ արժանաւորացն. զոր գործել ամենայն իւրաւք անգէն իսկ լաւագոյն է։ Եւ հրամայէ և ոչ զհանդերձ պատառել ի վերայ ընտանեաց մեռելոյ, և ոչ հատանել ինչ ի գլխոյն նշանակ քահանայութեանն. և ոչ բնաւ իսկ ամենեին ի սրբոցն պարտ է հանարել եթէ թողութիւն գոյ ըստ պատճառաց ինչ ազգ. զի և ի տեղւոյն ամաչեցեալ, և որ զիւրեն ունի զարդարանս որովք պըսակեալ է, ի վեր քան զխանդաղատանս գթոյ եղեալ անլոյծ միշտ կատարեսցէ։ Քանզի կամին զնա աւրէնքն, մեծի բնութեան մասն ընկալեալ,

1. Միւսն. յոչ դեղինալ։
2. Մ. զէ ՝Ն-ղթեալ։

ի վեր քան զմարդ՝ մերձաւորագոյն հասեալ յաստուածային միջոցամնեան. եթէ պարտ իցէ զրդճմարիտն ասել, երկոցունց. զի ի ձեռն միջնորդի ուրուն, մարդիկ հաշտեցուցանիցեն զաստուած, և աստուած զնորհն՝ մարդկան ի ձեռն սպասաւորի ուրուն կարկառիցէ, և մատուցանիցէ։ Զայս ասելով, զկնի այսորիկ ուրինագրէ։ յաղագս պատուիրանին հրամանաց նախնեացն։ Արդ եթէ որ, ասէ, ի քահանայիցն ուստաք, կամ՝ ձեռաք, կամ՝ ոտիք, կամ՝ այլով մասամբն խեղ իցէ մարմնոյն, և կամ՝ պարսաւանս ինչ ընկալցի, ի սպասուէ ի բաց կացցէ վասն եղելոյ ի նմա պատին. բայց զհասարակական քահանայիցն զպատիւ տարցի՝ զպտուղս, վասն անբարոյական զաստուածեանն։ Ապա թէ պիսակութիւն ուրուք ելցէ ի մարմնի, արգելցին. կամ՝ արութիւնք թոռեսցեն[2] ի քահանայիցն, մի՝ մերձեսցին ի տէրունական սեղանն. և ոչ որ առաջի կայ նահատակութիւնքն[3] ազգին՝ մինչ թոքթորումն արգելցի, և պիսակութիւնն փոփոխեալ՝ այլոց մարմնոյն բնութեանն գունոյ նմանեսցի։ Եւ թէ մերձեսցի զք քահանայ յոր ինչ և իցէ ի պղծոցն, և կամ՝ ի գիշերի որպէս և բազում անգամ դէպ լինի յերազի անցք անցանել, յաւուրն յայնմիկ մի՝ ինչ մատուցցէ ի պատարագացն, և լոգացեալ տունջեանն անցելոյ ի վերայ, երեկուն կատարել մի՝ արգելցի։ Պանդուխտ քահանային և վարձկանն արգելեալ լիցի յերախայրեացն. վասն զի զրացիք բազում անգամ համասեզան և համանկերակուրք լինին. քանզի երկիւղ է, մի՝ գոցէ թոյլ տացէ զք՝ զնաւիրեալն ի պատճառս այսր պիսակարար վարել յամենարշտութիւն՝ տարաժամ և վայրապար մարդասիրութեամբ։ Քանզի

1. Միւսն. — բրինդրդի։
2. Մ. Բարիբեոցին։
3. Մ. ի Նահատակութիւնն։

կցորդութիւն յայս, ոչ ամենեցուն յամենայնի արժան է տալ, այլ յարմարելոցն որք ընդունիցի. ապ՝եթէ ոչ, գեղեցկագոյնն և ազգատակարագոյնն՝ այն որ ի կեանս վարուց կարգն է, ի միջոյ բարձեալ լինի ի վաստակարագունէն, վայրապար յուրախութիւնն աւուրն վարեցեալ խառնակութեամբ։ Քանզի եթէ զոյգ ի նաւս տարցին նաւորդքն ընդ նաւամարս, և զոյգ ի պատերազմիկ նաւս, ընդ նաւապետան զեկամարք, և մարձ նաւանստականն. և ի զարու, զոյգ հեծեալքն ընդ հաղարապետան, և զինուորքն ընդ դասապետան, և դարանապետքն ընդ զաւրագլխան. և ի քաղաքի հաւասար իցեն ընդ դատաւորս և ընդ յանդիմանոյս խոշտանգն. և միանգամայն առ հասարակ ընդ իշխանս՝ գեղջուկք, խռովութիւնք և խառնակութիւնք եղիցին։ Եւ բանիւքն զուգութիւնն զայն որ ի ձեռն գործոցն, անզուգութիւնն, ծնցի. քանզի որ զպատիւն անմանիցն մասն բաշխեալ տայ, անզոյգ և անկշիռ է. իսկ անզոյգն աղբիւր է չարեաց։ Վասն որոյ զպատիւ քահանայիցն ոչ է տալի որպէս այլոցն, և ոչ պանդխտացն վասն գրացութեանն հպելով, որոց ոչ է արժան. քանզի ոչ տան՝ այլ ազգաց էր՝ պատիւն. բայց սակայն նոցնպէս և ոչ վարձկանի որ մի տացէ՝ ոչ վարձս, և ոչ յաղագս սպասաւորութեան ի հատուցումն զտէրունեան պատիւն. քանզի վարեսցէ ի պէտս որ տանուն, է երբէք ի յոր իրս ոչ է արժանաւոր. քանզի խեղ և պիղծ են ազատութեան մրցանակ և առ ի տաճարն ըստպաւք սրբութեան գործեցեալ։ Վասն որոյ իրաց և ոչ այլազգեաց բնաւ ամենեին ուրէնքն հրամայեն կցորդութիւն ինչ ընդունել ի սուրբ նուիրելոցն. զի թէպէտ և ազատ աշխարհիկ որ դէպիցէ, զի իցէ ի բնակաց գաւառին, և ի կա-

1. Բոլոր՝ ոչ գոն. այլ՝ էլ է. ἀλλὰ γένους ἐστιν.
2. Ի լ. Իշ. Միան. Իշ։

նանց և յարանց անբիծ իցէ, զի տապիւքն մի՛ պիտակասցին[1] և աւտարասցին, այլ կացցեն մընասցեն ի քահանայական կարգի հաստատուն պահեալք։ Եւ քանզի անտեղի է և խոտորնակ՝ զենլի պատարագացն և սպանդիցն, և որ այլ ևս ինչ որք միանգամ՝ բազնին են սուրբ է, ոչ ամենեցուն այլ քահանայիցն միայն հրամայեալ է. իսկ որ վասն սոցա մրցանակն, հաստատակ լինել և այնոցիկ որ դիպին. զի պարտ է բազում՝ վաստակովք և բազում՝ աշխատութեամբ և երկովք, և զտիւ և զգիշեր հոգովք ոչ վրիպեալ[2] քահանայիցն. իսկ մրցանակն հաստատակ է[3] և այնոցիկ որ դատարկ կան երևեցուցանել։ Եւ ընդոծնին, ասէ, և արծաթագնին տացէ տէր քահանայի ի կերակրոց և յըմպելեաց յերախայրեացն. նախ առաջին՝ վասն զի ծառային աւգուտ մի և շահ տէրն է. իսկ սորա այսր տեսանս՝ վիճակ, տէրունի մարդասիրութիւն, որոյ հարկ է զծառայն կերակրել։ Եւ երկրորդ, զի որ լինին, ամենայն իրաւք ի հարկէ պարտ է պատրաստագոյն առնել։ Իսկ ծառայքն զի թէպէտ և ոչ կամիմք, իբրու զի միշտ ընդ մեզ են և ընդ մեզ կեան, կերակուրս և ըմպելիս և խորտիկս տէրանցն յառաջագոյն պատրաստելով, և առ սեղանս կալով, և զնչխարան ի բաց տանելով. զի թէպէտ և ոչ յայտնապէս առցեն, այլ գոնէ գաղտուկ շոպեսցեն գողանալով՝ յաղցիցըն բանագատեալք։ Զի փոխանակ միոյ ամբաստանութեան, զի եթէ, իցէ անիրաւ այն, որ ի տէրունականացն կերակրիլ, և միւս ևս այլ կազմել գողութիւն. զի գողքն աւրինակ իմն, որք առանց պարտաւորութեանն կեան, վայելեսցեն ի սուրբ նուիրելոցն, որ է վայրագագոյն և անտեղի։ Երրորդ, և զայն պարտ է ընդ միտ ածել,

1. Միւսն. դէ-կէ-ցին։
2. Մ. վրէ-դէ։
3. Մ. հ-ա-ր-ն և ա-ն-ցին։

զի երախայրեացն, ոչ ըստ այնմ՝ որ հրամայեալ է Ծառայիցն. արհամարեցի վասն տէրունեան երկիւղին. քանզի բաւական է սա ըմբռնել զամենց զգիւրութիւն, և զյանդգնութիւն, զբերդել և ծուլալ ոչ առեալ թոյլ։ Զայս յառաջագոյն ասացեալ մարդասիրութեամբ ի աւրէնս, յետ այսորիկ գրէ. եթէ դուստր, ասէ, քահանայիս, կին եղեալ քահանայի, այր ի մեռացէ յետ մահուան, և կամ՝ մինչդեռ կենդանի իցէ այրն՝ անորդի մեռացեալ. դարձեալ ի հայրենի տունն երթեալ դարձցի, հաւատարութիւն ընկալցի յերախայրեացն, յորոց և յորժամ կոյս էր և հաւասար էր։ Քանզի աւրինակ իմն և այժմ և զաւրութեամբ կոյս, զզայնմ որ յառնէն, և յորդւոցն ամենի և անապատ է. և ոչ մի այլ ինչ իւր ունելով փախուստ ապաստանի, բայց միայն զհայրըն։ Իսկ եթէ որդիք իցեն կամ դստերք, հարկ է մուրն ընդ որդիսն կարգել զանձն. և որդիք և դստերք ծնողին տանել, և յայս ի հարկէ ձգին ի մայրն։

Յաղագս քահանայիցն։

Քահանայիցն ոչ բաշխեալ ետ զերկիր զատուցեալ՝ աւրէնքն. զի որպէս այլքն զմուտս երկրիս համարեալով ունիցին գիւրաւ զպէս հարկաւորացն, այլ առատութեամբ վարեցեալ հարկաւորացն, զաստուածատաց վիճակ ժառանգութեան գոլ նոցա, ակնարկելով ի սուրբ նուիրեալն՝ վասն երկուց իրաց։ Մին, վերագոյնն պատուոյ մեկուսացաւք, ըստ շնորհակալութեան բաշխեցելոցն՝ լինին աստուծոյ. և միւսոյն ևս, յաղագս ի մեն միայն՝ իրս առնել պարտ է զայն որ յաղագս սրբութեան և վիճակաց խնամատարս ունս-

1. Միան. ԽՃ գրչ։

նը։ Եւ զոր դնէ առաջի մրցանակ քաջութեան[1], այսոքիկ են։ Նախ առաջին անվասակ և անջան պատրաստ կերակուր. քանզի հրամայէ որ յաղագս կերակրոյ ջանան, յամենայն ճարպոյ և ի զանգուածոյ հացի ի բաց առնուլ երախայրիս, ի քահանայիցն պէտս յառաջագոյն խնամ տանելով. միանգամայն և ի բարեպաշտութիւնն հանապարհի, աւրինաւոր վարդապետութեամբ, այնոցիկ որ ի բացն զատուցանիցեն։ Քանզի ընդելեալք միշտ և ի հարկաւոր կերակրոցն երախայրիս ի բաց բառնալ, զատուածոյ յիշատակն անդադար և անսպառ լեալ տասցին, և քան զոր մեծ ինչ բարի՝ ոչ գտանել։ և բազմամարդիկ ագռիս հարկաւոր է՝ և գերախայրիսն առատութեամբ գոլ. զի և տարակուսելոց և անչափից ի քահանայից՝ յաղագս բաւականութեան կերակրոց, ոչ անքաւտս և ցակամեալս կարծել լինել։ Եւ երկրորդ, հրամայէ և յայլ ամենայն ատացուածոցն նախնիս մատուցանել, բան մոյ մոյ հնձանի՝ գինի. բան մոյ մոյ կալոյ, ցորեան և գարի. նոյնպէս և ի մրգաբերացն, ընտանի պտուղս. զի մի միայն ըզհարկաւորսն ունելով գժպահագոյն կեցին, այլ և ընդարձակ կանոս բազմաչահ եղեալք՝ պայծառագոյն և զուարթագոյն առատութեամբ կեցին, և հանդերձ արժանաւոր զարդուս։ Երրորդ է պատուս, զանգրանիկս զարուս, զամենայն ցամաքայնոցն որ միանգամ առ ի ապաս և ի պէտս մարդկան. քանզի զայս հրամայէ տալ քահանայիցն. զպտաղոց, և զոչխարաց, և զայծից զնոյն ինքն զծնունդսն. զզուարակս և զխոյս, և զնոխազս. վասն զի մաքուր[2] և առ կերակուր և առ պատարագս, և է և համարեալ է։ Իսկ փրկանսն այլոցն բերել զբնել. ձիոց և իշոց և ուղտուց, և որ զնմանութիւն նոցա բերեն. և են սոքա կարի յոյժ բազում, քանզի պանարատեաք և անասնարոյծք են առա-

1. Միան. ՀՅՈՆԱԼ Ա ԷՆԴԻՆ։
2. Մ. ՀԱՅՐ Է։

ել քան զայլս ազգին մարդիկ. այժերամակս և անդեայս և հաւոս[1], և բազում՝ այլ ֆոլիրս ի բաղմապատիկ անանոց արածելով։ Բայց ահա և առաւել ևս զանցուցանելով աւրէնքն, ոչ միայն 'ի ստացուածոց ըստ իւրաքանչիւր տեսլեան հրամայէ երախայրիս մատուցանել, այլ և յիւրեանց իսկ ոգւոցն և մարմնոցն. քանզի մատուցք բաժանեալք ի ծնողացն՝ մանկունք են. ապ'եթէ պարտ է զնշմարիսն ասել, անբաժինք են ազգակցական արեամբն, և բանիւք յառաջ քան զազգս անանուլեալք ի ծնունդս եկին հասին, սիրով գորովով միաւորական խնամոյ և ընտրեանն՝ անարձակ կապովք յարմարեալք. բայց սակայն և սոցա զանդրանիկս, զարուսն աւրինակ երախայրեաց նուիրել, հնոհակալութիւն քաջածնութեան և լաւամանկութեան որ դեռ ևս զոյր նոցա, և յուսալի էր լինել։ և միանգամայն կամեցեալ ոչ միայն անբիծս, այլ և յոյժ գովելիս զոյ ամուսնութեանց, յորոց առաջին բոյսն և կամ՝ պտուղն նուիրեալ մատչի, զոր պարտ է ընդ միտ ածել արանց և կանանց, պարկեշտութեամբ և առողջմտութեամբ[2] անաշինութեամբ և միամտութեամբ[3] զինքեանս փրկել։ աւգնական լինել միմեանց բանիւք և արդեամբք յաստուծում միաբանութեան, անշարժ ճշմարտութեամբ հաստատեալ։ իսկ անդրանիկ որդւոցն նուիրումն, զի մի՝ զծնողսն յորդւոցն, և մի՝ զորդիսն ի ծնողացն զատուցանել։ այլ գին հատանել նախ երախայրեացն արծաթ արժութեամբ հրամայեալ, զոյդն[4] բերել մատուցանել, և աղքատին և մեծատանն. ոչ առ ի պատիւ բերողացն, և ոչ յառաջդութիւն և գեղեցկութիւն ծնելոցն հայեցեալ, որչափ կարէ[5] տե-

1. Միւսն ի լս. հաւրանս։
2. Մ. յաւելու. անդամութիւամբ և գնաչինութիւամբ։
3. Մ. գիտութիւամբ։
4. Մ. զդոյն։
5. Մ. կոչէ է, որպէս և ի տարեւ։

սանել, և կարի յոյժ ցանկալին կշռեալ. քան-զի մանկանց ծնունդք մի պէս[1] երևելեացն և աներևութիցն բնաւորեցաւ դէպ լինել. զոյգ իրաւացոյց զվիսս հարկին աւրէնդրել, ընդ միտ առնելով կշռեալ որպէս ասաց. մանաւանդ որ ամենեցունն կարէ։

Յետ այսորիկ և այլ շահ աւգտի ոչ դուշնաքեայ առթէ քահանայիցն, հարիւրորդս մարց նախնիս հրամայեալ. ի ցորենոյ և ի գինւոյ և ի ձիթոյ, և ի պաճարաց ևս ծննդից՝ ըստ հաւատից և անդէտոց և այծերամանակաց, ըստ այլոց ցոլրաց. և որչափ և սոցայն է բաղմաչահութիւն, բայց ճշգրտեսցէ զի յաղդէն բաղմամարդութենէ. յորոց ամենեցունց յայտնի է՝ զի զիտգաւորաց զկորոխտալիսն զգաստիւ, արկանէ զքահանայիւքն աւրէնքն. իբր իշխանաց՝ հարկս յամենայն մասանց ստացուածոցն տալ հրամայէ։ Ցուեալ լինին հանկաւակ աւրինակաւ, քան թէ որպէս քաղաքդ՝ բռնաւորացն բերեալ մատուցանեն. քանզի քաղաքք ի հարկէ, և հաղիւ հազ ի վերայ կացուցանելով զժողովս[2] ընչիցն, իբր ընդ հասարակաց թշնամիս ընդ ակամբ հային. և բաղաղայս այլ երբեմն այլպէս պատճառելով, և զսահմանեալ ժամանակաւն անցանեն. զանկեալ հարկն բերեալ մատուցանեն։ Իսկ որք յաղդէն են, զքահանայից մասքն խնդութեամբ և ուրախութեամբ յատկանան քան զինդրաւորսն ամասարել՝ քան զժամանակն հատանելով, առնուլ՝ այլ ոչ տալ կարծեցեալ։ Բարեկամ՝ բնաւ գովութեամբ և շնորհակալութեամբ, ըստ իւրաքանչիւր տարեւոր ժամանակացն առնեն զերախայրեացն զմուտս. արք միանգամայն և կանայք, ինքնահրաման յաժարութեամբ, և պատրաստութեամբ և փութով, որ էր ի վեր քան զա-

1. Միան. Գ՝ պէս։
2. Մ. ժողովս։
3. Յոյն՝ բարեհաճութեամբ։

մենայն բան. և զայս յիւրաքանչիւր ուրուք ի սատ-
ցուածոց մասն տանին։

Բայց և այլ են զարմանալի մուտք վայելչական
քահանայիցն, այն որ ի մատուցելոց պատարա-
գացն է։ Քանզի յամենայն պատարագէ հրամայեալ
է երկուս ինչս քահանայիցն յերկուց անգամից
տալ. բաղուկ յաջոյ ձեռանէ. իսկ է լանջացն որ
ինչ պարարտ է. մին՝ զզաւրութեան և արու-
թեան, և ամենայն աւրինաւոր գործոց, տալ և առ-
նուլն, և ի գործել նշանակ. և միւսն առ ի սքբա-
մտութիւնն հաստ հեզութեանն. քանզի բնակել
նմա բան ունին ի լանջին, վասն զի վայր ընտա-
նեգոյն՝ բնութիւնն բաշխեալ ետ զգործս՝ սքբա-
մտութեան, առ ի լինելութիւն. որով իբր զենուլ՝
արգել փակեաց ի գժուար՝ առ առնուլ զամբա-
գոյն պահպանութիւն, որ կոչի լանջք. զոր ի
բազմաց և ի միմեանսայարիչ, և հզաւրագոյն ոս-
կերաց գործեաց. պէտք եալ զնա կարի քաջ ան-
հատ ջլաւք։ Եւ յայնցանէ որք արտաքոյ բազմին
զենեալ լինէին վասն միս ուտելոյ, երիս ինչ զայ-
սոսիկ հրամայեալ է տալ քահանային. երի, և
ծնաւտ, և որ խախացոյն կոչի. զերին՝ վասն այ-
նորիկ որ յառաջ սակաւ մի ասացաք՝ պատճա-
ռացն. և զծնաւտս, վասն զ՝խկզբանէն՝ մասինն
գլխոյ՝ և բանի, որ եկանէ ի գուրս՝ նախնիս.
քանզի մեզանէդ առանց սոցա չարժման, ոչ կա-
րասցէ. քանզի չարժեցեալք յորմէ և անուանե-
ցան ստուգապէս, յորժամ բախեսցին ի լեզուէն,
ամենայն ձայնի գործքն ընդ նա հնչեն։ իսկ խա-
խացոյն, եկուստ բուսոյ սրոմայնին է. և որովայն,
մնուր անասուն պաճարին ցանկութեան դէպ ե-

1. Գոյնն. τὰ στέρνα, որ է լանջ կամ գոգ։
2. Միան. ղլխոյ։
3. Մ. [illegible]։
4. Մ. ի [illegible]։
5. Մ. ոչ [illegible]։
6. Մ. չանի հնչեն։

զև գոլ. որ ի գինեխաղութենէն և ի խահակեբութենէն առոգեալ կերակրովք խահից ի միմեանց վերայ միշտ, և յըմպելեաց, ոչ ընկղմեալ հեղեղի. և զաւրէն խողի ի տղմի կելոցն՝ ընդ որոյ խնդայն, վասն որոյ և տեղի զատուցեալ տուաւ նմա, յոյժ ընտանեգոյնն այն որ աւելորդացն է, գէջ և անխուզ, և անվայելչագոյն պաճարին։ Եւ հակառակամարտ ցանկութեան է կրաւնաւորութիւն, և ատակ ժուժկալութիւն. զոր ատանալի է[1] և կըրթելի, և ջանալի և փութալի. ամենայն հնարիւք ատանալի, իբր զմեծ բարի և զկատարելագոյն. որ է առանձինն և հատարակաւորա[2]. և ցանկութիւն որ է խիզ և պիղծ և անմաքուր, և ատելի յայնկոյս քան զառաքինութեան սահմանն ի բաց վարեցեալ և փախստական արարեալ յիրաւի. իսկ կրաւնաւոր ժուժկալութիւնն՝ մաքուր և անբիծ է յառաքինութեան՝ յամենեցունց որ ինչ միանգամ՝ առ ի կերակուրս անատնարար է և յըմպելիս, և յայնց որ ի վերայ որոմայնի ցանկութեանց՝ իշխան անցեալ կայս։ Ի բագինան տէրունական հրպեսցի, և զելուստ բուսոյն որ բերեն յինքեան զորոմայնին յիշատակարան[3]. զի քամահեսցէ և արհամարհեսցէ զանյագութիւն և զորոմայնամոլութիւն. և զամենայն որ ինչ միանգամ՝ այսպիսի ցանկութիւնս բորբոքէ բոցով։ Բայց սակայն ի վերայ ամենայնի, և զայնս որ ի վերայ ողջակիզացն անբաւ և անճառ են այս ընծայք, հրամայէ սպասաւորաց քահանայից՝ ի պատարագացն առնուլ ոչ գոյզն ինչ, այլ որ մանաւանդ էր բազմաշահագոյն ընծայ. յորոց յայտնի է, զի վիճակ ոչ մի տուեալ է քահանայացելոյ կնոջն. ոչ տուեալ ըստ նմին այլոցն, որ քան զամենեցունց պանծալի էր տեղին, եւ. և սրբագոյն առ ի պատճառս երա-

1. Ի լս. -գ-ն-է։
2. Մ. հ---ր-ն օ-ա։
3. Մ. ջ-ի-գ-ն-ր-ն։

խայրեաց, այնց որ յամենայն պատարագաց տուեալ են. վասն զի մի՛ որ ի տուղացն նախատեսցէ զառաւղսն, հրամայէ զերբախայրսն յառաջագոյն ի տաճարն գալ բերել, և ապա աստուստ քահանայիցն առնուլ. քանզի վայել էր իսկ աստուծոյ, այնք որ բարին գտանէին ի նմանէ, յամենայն ի կեանս վարուցն իւրեանց շնորհակալութեան մատուցանել նախնիս. իսկ նմա՝ իբրու զի ոչ իմիք էր կարաւտ, այնոցիկ որ տաճարին էին սպասաւորք և պաշտաւնեայք, շնորհել հանդերձ պարկեշտութեամբ և ամենայն պատուով. քանզի ոչ ի մարդկանէն, այլ յամենեցունցն բարերարէ թուի առնուլ. անպատկառելի և առանց ամաւթոյ ունի զպարգևն։ Արդ իբրու զի այսպէս առաջի կան մրցանակք եթէ որ ի քահանայիցն անքաւտ և ցանկանեալ իցէ, զարդապէս և վայելչաբար. և առանց բաղդայիցն կելով, ի վերայ ձերոյ անաւրէնութեանն անցեալ կան ասելք թէպէտ և լուռ են։ Քանզի եթէ հաւանեալ լինէաք հրամայեցեալոցն, և զերբախայրիսն առնեաք որպէս հրամայեցին էր, ոչ միայն նոքա ազգաւորացն դիւրագիւտք և դիւրաշահք լինէին, այլ և յայլոցն որք միանգամ առ ընդարձակ կանոն կարաւտ էին, առլցեալ լինէին. և զի թէպէտ երբէք դարձեալ տոհմի քահանայիցն յամենայնի որ ինչ միանգամ ի կանոն վարուց աննախանձելի առաւութեամբ վարեսցի։ Մեծ ցոյց լինել այս հաւարակ արժանաւորութեան. և աւրինաւորացն հաւաստի ճշմարտութեանն հանապազորդ պահպանութիւնն. այլ ոմանց վհատութիւն։ Քանզի զամենեսին՝ ոչ է հաստատուն՝ բաղդայիւք հարկանել։ Եղև ինչ պատճառք աղքատութեան քահանայապետիցն. ապ՝ եթէ պարտ է զճշմարիտն ասել, նոցունց իսկ նոցա. քանզի անաւրինել[1] զԱստու-

1. Միւսն. հարկել
2. Մ. —ՐԻՆԵԼ՝

պատճառաւ այնոցիկ որ անաւրինեն, զի թէպէտ և առ սակաւ մի ժամանակ պատրեսցին։ Իսկ երթալ զհետ բնութեան աւրինաց, աւգտակար է. զի թէպէտ և առ ժամայնն խիստ և ծանր իցէ, և ոչ ինչ ամենեին ցուցանիցէ՝ այսչափ ըստ մարդ և շահիլց պատճառս շնորհելով քահանայիցն, և ոչ այնոցիկ որ յերբորդ[1] կարգէն քահանայս արար, և են տաճարապատեակք. ի սոցանէն ոմանք առ գուրս նստուցեալք՝ առ նոյն ինքն մուտս դնան-պանք, և ոմանք ի ներքս առ նախամուտս տաճարին, զի մի՛ աք որոց ոչ է արժան կամաւ և անկամայ մոցէ. և ոմանք շուրջ գնան յածին ի միասին վիճակ ընկալեալ, ի տուէ և ի գիշերի աւրապահակք և գիշերապահք. և այլք զընդ յարկաւն և զարտաքոյսն ուսել ածելով, զաղբաթուղին ի բաց տանին, խնամ տանելով մաքրութեան. ոորոց ամենեցունցն սոցա վարձք որոշեալ գտեցան տասանորդքն, քանզի վիճակ տաճարին աւելածուաց է այս։ Արդ ոչ յառաջագոյն թոյլ եառն աւրէնք՝ զայսոսիկ ի պէտս վարել՝ ոչք առնուն. մինչև գարձեալ այլ տասանորդս իբրև յիրեանց ստացուածոց երախայրիս հանել և տալ ոչք ի լաւագոյն կարգէն[2] են քահանայք. քանզի ապա այնուհետև թոյլ ետ վայելել, այլ յառաջ քան զայս և առնել ոչ ետ թոյլ։ Բայց բաշխեաց ետ և քաղաքս նոցա ութ, առ քառասնիւք. (և ըստ իւրաքանչիւր քաղաքի[3] գետոյս, և ապարանս ի հնազար կանգուն շուրջ զքաղաքսն յարաւտ պատարի. և զայլսն ևս որոց պէտք են քաղաքաց հարկաւոր ապատաւորութեան, և ի սոցանէ վիճակս ընկալան վեց. էր որ ի ներքս էին, և էր որ արտաքոյ Յորդանան գետոյ. յերիս, յերկոցունց կողմանց. ապատանն այնոցիկ որ ակամայ սպա-

1. Յոյնն. δεύτερα.
2. Միւսն. κρείττω.
3. Փակագծիս նշանակեալդ հատուած չկայ ի միւս Ձ։

նումն արարեալ է։ Վասն զի որպէս զիարդ և իցէ եղեալ մարդոյ կատարածի որ պատճառաք՝ ոչ էր սուրբ ի Ներքս ի վերայ յանցմանցն և մէջ անցանել. պէտս հաստատուն և զդոյշ զտաճարն արարեալ, զատացեալ քաղաքս արձան արար. տաճար երկրորդ, բաղում՝ անդերծութիւն դադարման. խաղաղութեան տեղ բնակչաց աշխարհի յառաջաբաժնի և պատուոյ՝ որք զիախտեալ ապաստանեալս ապրեցուցանել հանդերձեալ էին։ Եթէ բռնաղբաւեսցի որ ամենք զուրութեամբ, ոչ պատրաստութեամբք որ ի պատերազմունս լինին, այլ արժանաւորութեամբք, և յառաջհաս պատուով զորս յաւրինացն վասն նագելի քահանայութեանն ընկալան։ Իսկ փախստեայ ի Ներքս ի սահմանս քաղաքին յոր փախուցեալ անկաւ կոչեսցի, վասն այնոցիկ որք ի վերայ անցեալ նեղսոն վրիժակք արեանն, որք ազգի սակի են մեռելոցն, փափագմամբ սիրոյ ազգակցին. զի թէպէտ և ոչ ի կամաւորէ սպանցի, մահու սպառնան սպանողին, յաղթեալ իւրանց ախտին, հաւատի արդարոցն խորհրդոյ[1]. և եթէ արտաքս ելցէ, ի սատակումն անձին իւրոյ աներկիւղ ի դուրս եկեալ գիտասցէ զինքն։ Քանզի մուռացանք ումեք ոչ [illegible]ցին այնոցիկ որ յարենէն, յորոց անդէն թ[illegible]դաւք և որոգայթիւք որսացեալ, բարձցի ի կենդանութենէ։ Բայց սահման եղիցի բնակութեանն[2] կեանք մեծի քահանային, որոյ[3] վախճանեցելոյ, անդիշութեան արժանի եղեալ իցէ։ Զայսոսիկ և սոցունց յարանմանն աւէնաւորեալ յաղագս քահանայիցն, զկնի այսորիկ վերբստին ուսուցանէ յաղագս կենդանի անանցոյն որք ի ճահ են ի պատարագս։

1. Միան. Խորհրդ։
2. Մ. Ն.
3. Մ. Բնութիւն։
4. Մ. Եղեալ։

ՓԻԼՈՎՆԻ

ՅԱՂԱԳՍ ԲԱԳՆԻՆ ԻՐԱՑ

Հոգի, ասէ, այրեսցի ի վերայ բագնիին

հանապազորդ անչէջ

Վայելչապէս կարծեմ և արժանապէս. վասն զի աստուծոյ շնորհքն յաւէտ խոյանաց են և անապական, և անընդհատ, որոց ի տուէ և ի գիշերի մարդիկ հասանեն. և զնչանակ շնորհակալութեանն ուէրսնի՝ ի բոցի արծարծեսցի, եւ հանապազորդ անչէջ կացցէ։ Բայց թուի թէ և վասն այսորիկ կամի զհինն ընդ նոր պատարագս յարմարել և միաւորել մտանկնաւորութեամբ, և յերկարութեամբ, և մերձաւորութեամբ ի ձեռն հրոյն, որով ամենայն նուիրեալ լինէր, առ ի ցոյց թէ կատարած գոհութեամբ լինի։ Զի թէպէտ և ի բազում հիւանդութեանց, կամ պատճառաց լիցին ըստ առաւելութեան մեծութեան, և կամ՝ ըստ հակառակին կարաւտ նուազութեան, զոր մատուցանիցեն, ճառս այս, նը-շանակ իմանալեաց է, իսկ առ ի միտս՝ այլաբանութեան քանոնովք այցելի է։ Արդարև ճշմարիտ աստուծոյ՝ բագին է, որ երախտաւոր են աստուծոյ ոգիք, կառուցեալք ի կատարեալ առաքինութեանցն, յանխուզ և յանհատից. քանզի ոչ ինչ մասն առաքինութեան անպիտան։ Ի նոսա է[1], միշտ ի տաճարին լոյս այրի. միշտ պահելով անչէջ, և մնաց լոյս իմաստութիւն է. վասն զի

1 Բոյնն դնէ. ἐπὶ ταύτης·

և հակառակ խաւար ոգւոյ անզգամութիւն է։ Քանզի զոր աւրինակ զգալի լոյս առ աչս ի հաստատել և յլմբռնել մարմնոց առեալ է, նոյնպէս հանճար խորհրդոց՝ առ տեսութիւն անմարմնոցն (պատուական հոգւոյ երկրորդաբ[1])։ Քանզի որպէս պատճառք են ոգիք անտարականութեան մարմնոց, և ազք ի բաղում՝ ժամանակս գնոսա ամրոյզ պահելով, և աւրինակ իմն անմահացուցանելով. վասն որոյ զբագինս զայս կոչէ զենարան, յատուկ և զատ անուն եդեալ նմա, վասն յար պահելոյ որպէս երևի զգնիպան. և սակայն միսն ծախեալ լինի ի հրոյ. զի եղիցի հաւատագոյն յայտնի հաւատն, զի ոչ պատատարգիս զենի պատարագ, այլ զմիտս և զյաւժարութիւն ընդունի այնորիկ որ զենուն, ել, յորում՝ յարկայութիւն և հաստատութիւնն է յառաքինութենէ. և զայն ևս ի վերայ այսորիկ աւրէնագրէ հրամայելով. զանենայն զենումն, առանց խմորոյ և մեղու մատուցանել։ Ոչ զմի ի սոցանէն արժանի արարեալ հանել ի վերայ բագնին. մեղր, թերևս՝ վասն զի որ ժողովէն զնա մեղուն, ոչ մաքուր կենդանի է. ի նեխութենէ և յապականութենէ մեռելոց որպէս բանք են, յարկաւոր ծնեալ, որպէս և ձիաստացդ, ի ձիական մարմնոց. ըստ որում՝ նըշանակի, ամենայն ինչ պիղծ է և անարժան ի պատարագս ինչ հեշտութիւն ունելի, քանզի և ի գոցանէն որ զկիսանելիս քաղցրացուցանէ, և դաւն և գժուարարոյժ միւսանգամ ի վերայ հատուցանէ ցաւս. յորոց հարկ է ոգւոյն շարժել և գեղեալ, հաստատուն կալ ոչ կարացեալ, և խմոր, վասն լինելոյց համարձման և պղպջման, այն որ ի նմա-

1. Փակագծիս նշանակեալդ հատուած չկը ի յոյնն. և 'ի մերումն պակասն յաջորդ տողք. ոչ ἀεὶ τὸ φέγγος, ἐπιλάμπει μηδέποτε σβεννύμενον. Μετὰ ταῦτα φησιν, ἐπὶ παντὸς δώρου προσοίσετε ἅλας, διόν, καθάπερ καὶ πρότερον εἶπον, τὴν εἰσαπαν διαμονὴν αἰνίτε ται φυλακτήριον γὰρ οἱ ἅλες σωμάτων τελιμημενοι ψυχῆς δευτερεῖοις.

նէն։ Դարձեալ նշանակաւ, զի մի՛ զբ մերձեցեալ առ բազին և մի՛ միով իւրք մի՛ բարձրացի փրքացեալ յանպարշաւառութենէ, այլ յաստուծոյ մեծութիւնն հայելով զգայութիւն առցէ առ ի ծննդականն ամենայն տկարութեան։ և զի թէպէտ և բարեբախտութիւն բախտի քան զայլսն լաւ իցէ, զարժանաւորն արարեալ իւր խորհուրդ, զիջուսցէ զխորհրդոցն դերապանծութեան բարձրութիւն, զգաւոր կարծիսն տապալելով։

Քանզի թէ որ ամենեցունցս արարիչ և հաստիչ է, և որ ամենայնիւն է անկարաւտ՝ ծնաւ, ոչ յառուելութիւնս զաւրութեանն իւրոյ և իշխանութեան, հայեցեալ առ քո տկարութիւն, տայ քեզ կցորդութիւն ի հաչտական զաւրութենէն զկարաւտութիւնդ առնելով, որովք արժան է քեզ վարել։ զինչ արժան է գործել առ մարդիկ, առ քո ընութեան ազգակիցս, և ի նորին տարերց սերմնեալս, որ ոչ ինչ յաչխարհ, այլ և ոչ քեզոյն իսկ զքեզ բերեր մուծեր։ մերկ, ոմ զքանչելի, եկիր։ և մերկ դարձեալ երթեալ հացես ոչ յետ բազում ժամանակաց, ծննդեան և մահու։ յաստուծոյ պէտս ընկալեալ որով առնել ինչ արժան և անդ էր։ կամ հաւասարութեան և միաբանութեան և համակամութեան, զուգութեան և մարդասիրութեան, և այլումն առաքինութեանն խնամ տանել, ասաչի արկեալ զանզգոյն և զանիրաւ և զանհամբոյր չարութիւն։ որ զլինաներգոյնն ընութեամբ կենդանին զմարդ, խակ և անզգամ և անձեռնընդել և վայրենի գործէ։ Դարձեալ յերեկոբեայ մինչև յառաւաւտ հրամայէ այրել բազմակ՝ ի վերայ տէրունական աչտանակին, ի ներքոյ վարագուրին յաղագս բազում իրաց։ Միոյ, վասն զի փոխանակութեամբ տուն ինական լուսոյ լոյս լիցի ի սրբութեանն եղեալ աչաց, առանց կցորդութեան խաւարի բան նմա-

1. Միան. գ՝ բ՝ ։

նութեան աստեղացն. քանզի և սրա իբրև արե-
գակն մնասէ, զիւրանցն երևեցուցանեն փայ-
լումն, յորում կարգեցան յաշխարհս ի դասու
ոչ լքեալք։ Եւ միայոյն, զի և ի գիշերի եղբայր
սմն և ապգակից տուընչենական պատարագացն
կատարել առ հաճութիւն աստուծոյ, և ոչ ինչ ա-
մենևին ամենակ կամ ժամենակ հնոհակալութեան
բառնալ թողալ ճանապարհն և ի դէպ։ Եւ ընաւ-
ռեալ ի գիշերի գենումն պատարագացն. քանզի
զենելութիւն գնա արժան է կոչել տէրունական
փայլակմանց յայսն լուսոյ։ Իսկ երբորդ՝ և որ է
յոյժ հարկաւոր, վասն զի ոչ միայն արթնու-
թեամբ բարեկիրս գտանելք, այլ և ննջելով, ըմ-
մեծապարգևին աստուծոյ մեծ ուշնականութիւն,
որ քան մնչկանացու ազգս ետ յաւգտութիւն
մարմնոյ և ոգւոյ. մարմնոյ, զի ի տուընչենային
երկոցն գաղարեսցէ, ոգիք թեթևացեալ գնա-
ցեալ յինքն ամփոփեալ ի զգայութեանցն խուճա-
պոյ, և ի ժեռը վրդովութենէն, և կարացեալ
գտնել յայնժամ առանձնանալ և խաւսել ընդ ինքն-
եան։ Արժանապէս իրաւացոյց աւրէնքն զչնոհա-
կալութիւնն վիճակել, յաղագս հոգման ի ձեռն
օրք մատուցանին պատարագք, և յաղագս քնոյն,
և այնց որ ի նմանէն ուգտութիւնն է ի ձե-
ռքն տէրունական բազմակացն լուսանելոյ։ Արդ է
որ առ բարեպաշտութիւն աւրէնսդրեալ է ըստ
հրաման տալոյ և ի բաց հրաժարեցուցանելոյ,
այսոքիկ և որ սոցա նման են. և է օրք ըստ ի-
մաստասիրակ գրից և խրատուց ասա ասելի է։
Քանզի խնդրել, ասէ, ով միաք ի քէն աստուած՝
ոչ ինչ ծանր և բազմապատիկ և կամ գժուարա-
գործ, այլ կարի յոյժ պարզ և գիւրին. և այս
է, սիրել զնա իբրև զբարեգործ. ապ'եթէ ոչ,
երկնչել զնոնա իբր յիշխանէ և ի տեառնէ, և
ընդ ամենայն անցանել ի հաճութիւնն ճա՛նապարհ-
հաց. և պաշտելն զնա ոչ վարկպարագի և գործ առ
գործով. այլ ամենայն ուշովք լցեալ աստուածասի-

բակ բարուք. և զպատուիրանաց նորա բուն հարկանել, և զարգարն պատուել, յորոց ամենեցունց ինքնացեալ կայ մնայ ի նմին նեմնութեան՝ ոչ յեղյեղեալ, եւ զինչ է յայլոցն որք միանգամ բան աշխարհիս են և լուսին և բազմութիւն այլոց[2] ասահեղացդ, և առհասարակ ամենայն երկին. իսկ երկրի, լերինքդ ի բարձրութիւն մեծ ամբարձեալք, երկարաձիգք են. և դաշտք, որպէս յայնասարած արդակ էութիւնքն, յոյժ սաստիկ վայրընդարձակեալք. այլ ծով փոփոխի առ ըմպելական, և գետքդ նմանեալ զուգին մեծի լայնութեան ծովուդ։ Արդ փան զի ի վերայ նորուն լերանց իւրաքանչիւր որ ի նոցանէն հաստատեալ է, յորոց վերայ անդէն իսկ ի սկսմանէ յորժամ լինէրն որ ինչ կարգեցան։ Բայց լաւագոյն լիցիս դու առանց բաղբաղայից կելով, և առանց բամբասանաց. և զինչ ի սոցանէն դժուարին է, և կամ ՝ի անալով, զանանց և զանանուելոյ՝ լայնութիւն ծովուն առաջի կայ անցանել։ Եւ ի մէջ ձմերայնի մրրկաւք և բռնութեամբն հակառակ հողմոց պատեալք, ի վեր ի վայր ծովմէ, և կամ ընդ խիստ և ընդ քարուտ ընդ անկոխ հետեւել և ընդ անճանապարհ. ոչ ընդ ճանապարհ աւազակաց, և կամ գազանաց յարձակմունքս միշտ սարսեցեալք, և կամ պարսպապահ լինել արտաքոյ գիշերութեանք. ի վերայ եկեալ թշնամեաց, և վերադոյն և զանհնարին վտանգս սպանողացն. ի բաց տար։ Մի՞ ինչ ի վերայ բարեաց տացեալ լիցի՝ ի չարաց և ի ժանտիցն, բարեհամբաւ լինել և գովիչ ի վերայ այսպիսի ազատակար իրաց. յանձն առնուլ միայն պէտք են ոգւոյ, և անդէն ամենայն ինչ պատրաստ առաջի գտանի. թէ զայս ոչ գիտես, զի ատուծոյ և զգա-

1. Միւսն. [illegible]։
2. Պակասէ ՝ի միւսում. [illegible]։
3. Մ. [illegible]։

լի երկինս է և իմանալին, զոր և իսկապէս զ ասասցէ, երկին և երկնի[1]. և դարձեալ երկիր՝ և որ ինչ ի վերայ սորա, և առ հասարակ ամենայն աշխարհ տեսանելին և անտեսանելին՝ ցոյց աւրինակի է երեւելոյս։ Բայց սակայն յամենայն մարդկան ազգէ, զայնոսիկ զոր ճշմարտութեամբ են մարդիկ՝ քաջ և լաւ, յամենեցունց զատուցեալ ընտրեաց, և յառաջխնամութեան ամենայնի արժանի արար ի սպասաւորութիւն իւր կոչեցեալ, յաէտամեայց յաղբիւրն բարեաց. յորմէ և զայսն ըղխեաց առաքինութիւնս, և սփռեալ եհեղ ի վայելչութիւն աւգտակարագոյն աստուածընկալացն[2] միայնոց, թէ ոչ նուազ է անմահացուցանել ընկալեալ. և թըշուառակամք են որք ոչ զառաքինութեան փափագումն անապակ ընկալան, և թշուառականագոյնք են, որք միշտ տկարացան ոչ ճաշակեալք զբարի ինչ և զլաւ, իբրու զի առաջի կայ ուրախ լինել, և վայելել արգարութեամբ և արժանաւոր սրբութեամբ։ Այլ են անթիւատար սրտիւ ըստ որում ասեն աւրէնքն. և վասն խստութեան բարուցն ընդհակոդք[3] են, խայտալով յագդնարար և ընդվզելով, զորս աւտարս համարի, ասելով եթէ թիւատեցէք զխստասրտութիւնդ, այս ինքն է զաւելորդս որ ի վերայ բուսեալ է իշխանական առաջնորդին, զորս անչափք ախտից սերմանեցին, և աճեցին ընդ նմին յարձակմունք, և չար ոգւոցն մշակ անկեաց անդգամութիւն, փութալով վազվազակի ի բաց հատէք ընկեցէք. և պարանոց ձեր, ասէ, մի՛ խիստ լիցի, այս ինքն է, մի՛ անխնարհ և անկորանալի և անաւծու լիցի միտքն և ինքնահաճ և մէս, և մի՛ յոյժ ի ձախողակ դժնդակութենէն ընդելութիւն[4] արասցէ, և միտակարագոյնն թեակոխեսցէ անուսմութիւն. այլ որ բնութեամբ դժոխն է և դժուարա-

1. Յոյնն՝ οὐρανὸς ουρανοῦ·
2. Յոյնն՝ νέκταρ·
3. Միւսն. ընդ-հակ-դ։
4. Մ. ընդ-ՆԷ-ՐԻՆ։

բարոյ թողեալ, իբրու ի գժուարէ փոխեցի առ արժանաւոր վայելչութիւնն, հանանելով աւրինացն բնութեան։ Թէ ոչ տեսանես որ չարչ զէիւն են, առաջինք և մեծամեծք զաւրութեանցրն, են բարեգործակն և սատակիչ դատուցն. և կոչի բարեգործակն, աստուած, վասն զի ինքն ըստ ինքեան առանձինն արար և զարդարեաց զամենայն։ Իսկ միւսն ևս տէր, ըստ որում՝ գանձեալ է ամենեցունց իշխանութիւն։ «Իսկ աստուած ոչ մարդկան միայն, այլ և աստուածոց է իշխան, ոչ միայն գեղջկաց, այլ և իշխանաց. վասն զի մեծ է էութեամբ, և հզաւր և բուռն»։ բայց սակայն որ այսչափ է առաքինութեամբք և զաւրութեամբ՝ զորմութիւն և գութ խանդաղատանաց ընդունի, այնոցիկ ոչք ի կարաւտութեան են ցականերալք[1]։ Ոչ անարժան[2] համարեալ լինել դատաւոր եկաց և սրբոց, այլ և թագաւորաց և զոռոզաց, և այնոցիկ որք ի մեծ զաւրութեան են. անտես արարեալ զնուաստ և զխոնարհ ասացելոցս, արժանի առնէ առաջնահաստութեան խնամոյ եկացն։ Վասն այնորիկ քանզի լքին թողին սոքա զհայրենի և զիւրեանց գաւառին սովորութիւնն յոր սնեալն էին, որ սուտ ասեղծուածով լի էր և մրրկեալ հպարտութեամբ. և եղեալք նորին իսկ ի զդաստութեան և ճշմարտութեան մուերիմ ցանկացաւոք, փոխեցան ի բարեպաշտութիւն՝ յաղուէս և ի ապաստաւորութիւն էին եկեալք. յաղագս առաջնահաստութեան յարմարեցելոյ յիրաւի հասեալք. պատուոյ գտեալ վասն յաստուածապաստանութեան, զ'ի նմանէն ապնանականեր։ Եւ սրբոց և այրեաց, վասն զի միայն նորա ի խնամեղացն զրկեալք են. ոմանք ի ծնողաց, և ոմանք յարանց, և ապաստան և ոչ մի ինչ այսոցիկ, որք այսպէս անապատացեալ են ի մարդկանէ գոլ,

1. Միւսն. ցանկանալ։
2. Մ. արժան։

վան որոյ մեծի յուսոյ ոչ են անբաժք յաստուծոյ. վասն հեշտ և լաւ բնութեանն իւրոյ, զվերակացութիւն և զնեամ՝ ոչ դարձուցանելով յայնցանէ որք այսպէս անպիտի անապատացեալ են։ «Եղիցի, ասէ, աստուած միայն պարծանք քո և մեծ փառք». և մի՛ ի վերայ մեծութեան, և մի՛ փառաւք և մի՛ իշխանութեամբ, և մի՛ մարմնոյ գեղեցկութեամբ, և մի՛ զաւրութեամբ, և մի՛ նմանութիւք իրիք յորս սովորեալ են ունայնացեալք ի մտաց համբառնալ, և դու այսպիսիք խրոխտացիս երբէք. ընդ միտ ածելով, զի նախ առաջին, անմտան և անբաժ է սա ի բարւոյն բնութենէ, և ապա վասն զի արագ ժամանակաւ ունի զփոխումն, խամրելով՝ աւրինակ իմն յառաջ քան ըզհաստատուն ծաղկէ։ Իսկ որ հաստատունն է, և անփոփոխելի, և անշարժ բարի, զայնր զհետ երթիցուք. և զաղաչանացն նորա և զսքանաւորութենէ բուռն հարցուք, և ոչ յաղթելով ի թշնամեաց, նախանձեսցուք ընդ նոցայն, յորս՝ նորա բարեգործելն թուին՝ ամենարշտութիւն, զորդիս և զդստերս իւրեանց այրելով աստուածոց։ Քանզի ոչ զորդիս ամենայն խուժադուժ ազգաց այրել սովորութիւն է. քանզի ոչ այնպէս՝ վայրենացեալք են բնութեամբ, որպէս զոր հաղիւ զ զանհաչտ թշնամիս ի պատերազմի, զայս ընդ սիրելիս զ և ընդ ընտանիս ի խաղաղութեան առնել կարասցէ։ Այլ վասն զի զոգիս արդարև կիզուն և ապականեն այնոցիկ զորս ծնանն մինչդեռ ևս փափուկք են ի խանձարուրս, մինչ չև ձեռացեալ են ճշմարիտ կարծեաւք. յաղագս մոլոր և արդարև ճշմարտին աստուծոյ մի՛ յաղթահարեալք յորսայս լիցուք (և պատրեալք լիցուք՝) ի նոցա բա-

1. Միան Խոմրիլով։
2. Մ. յոր։
3. Մ. զդրէս։
4. Փակագծիս նշանակեալքդ պակասեն 'ի միասամ։

բերանաբեկ հանդիպումներն, իբր բարեպաշտութեան յաղթողաց։ Քանզի բազմաց ի դարանս դիպին յանկարծաբերն յայսոցութիւնքն բանի, դեղս կազմեն մահու, որք առանց բժշկութեան են չարեաց, զէպ է իբրու զի անարժանք են. զայն ինչ կարեն վճարել, զոր ոչ էր պարտ նոցա։ այլ փոխանակ՝ տրամել և ցանկանել յոյժ մեզ, զանարժանն գործելով։ Ընդեալքն յաստուածասէր քաղաքավարութեան, և մեկալք ուրինակք, որ յամենայն առաքինութիւն[1] ուժեալ մարդեն. և յառաջին հասակէ խրատեալք զրաստգոյն առ աստուածազան արս. և առ աստուածընկէցս. զոյցանէն չառնեմք փոյթ։ իսկ որք ճշմարիտն անփոյթն[2] առնելոյ արժանի են. բուռն հարկանեմք, խրատուց արժանի համարեալք։ և եթէ որ ընդ անուամբ և ընդ ձեով մարդարէութեան մնեալ զարդեսցէ. աստուածարել և ըմբռնել թուելով. ածցէ առ սովորեցելոցն ըստ քաղաքաց քաղաքաց պաշտաման[3] աստուածոցն, ոչ արժան է հայել, պատրեալք անուամբ մարգարէի։ Քանզի կախարդք, այլ ոչ մարգարէն այսպիսին, առելով բանս և ճառս, և աստուածապաշտութիւն, զորբրս հաստեաց. զի եթէ եղբայր, կամ որդի, կամ գուսան, կամ կին, կամ անպատ[4], կամ հարազատ սիրելի, և կամ այլ որ մերթիմ զոյ թուեցեալ, ի նմանս եկեալ ածցէ յորդորելով խնդալ. և յանձն առնուլ ընդ բազումս, և ի նոցն տաճարս[5], և ի նոցն ապանդս, և ի պատարագս երթեալ. աստակելի է իբրև զվիրաց և ըզհասարակաց թշնամի. սակայն ինչ փոյթ պարտեալք ընտանութեան, և զիսրատսն որ ի ձեռն նորա՝ պատմելի է ամենեցուն այնոցիկ որք ի բա-

1. Միան. յանդիմանեալ։
2. Մ. անարգն։
3. Մ. պաշտեալս։
4. Բայն գնէ. ի γυνὴ ἡ οἰκουρός. կին տնտէ։
5. Մ. ոչ ունի զ-ի նոցն տաճարս։

բնազանութենէ։ ցանկացաղդ են · քանզի անյապաղ արագութեամբ ի վերայ անարժան առն ի վրէժս պատահասից ընդմանան. սուրբ համարեալ զհակառակն զայնպիսեացն սպանմամբ զինեն։ Քանզի եղիցի մեր մի ընտանութիւն, և սիրոյ մի նշանակ՝ առ աստուած հաճութիւն։ Եւ զամենայն ասելն և գործելն՝ յաղագս բարեպաշտութեան խակ որ ի նախնեացն յարենէ՝ որք ասին ազգակցութիւնքն և տոհմք, և որք ինչ ըստ խնամութեան կամ՝ ըստ այլ ինչ համանմանակի պատճառացն ընտանութիւնքն են, ի բաց թափափեալ ընկեցին. զի եթէ ոչ առ նոսն կատարած ճեպիցին ի պատիւն աստուծոյ, որ ամենայն մտերիմ միաբարանութեան անպոյծ կապէ։ Քանզի բուռն հարեալք ընկալցին այսպիսիքն պարկեշտագոյն և պանծալի և սէրուն ազգակցութիւն. և հաստատէ զմի՝ միաբանութեան խոստումն աբէլն ասելով, եթէ որ զՀաճոյսն ընութեամբ գործեն և զբարին՝ որքան են որդիք աստուծոյ. յայտ է զի յառաջանանութեան և այցելութեան արժանիք եղիցին այնց որ իրրև ի հաւրէն իցէ։ Իսկ խնամ դարմանոյն սոցա այնչափ առաւելութեամբ անցուցէ քան զայն որ ի մարդկանէն լինի, որչափ կարծեմ՝ և որ խնամանդն է առաւելեալ է և. առ այսոքիւք ես այն որ առ իւղագրեան և առ խորհուրդն, և զամենայն զայսպիսի ինչ բարբանջմանս և բազմապատութիւնս՝ ի սէրուն անն ի բաց հանել յաւէնդրութենէ, ոչ արժանի համարեալ զայդոսիկ որք յայսպիսի քաղաքավարութեան գրբեցին զինքեանս խորհրդատուն առնել. և զառաջնական առեղծուածոյն կախեալք, անփոյթ առնել զնշմարութենէն, և զայնր որ՝ գիշերոյն

1. Միան. Բարեպաշտութեան։
2. Մ. ցնդի։
3. Մ. ի գ։
4. Մ. խնն։
5. Մ. ոչ ունի զ։

և խաւարին է մեռեալ վիճակի զհետ երթալ, ի բաց թողեալք զայն որ առնչեան և լուսոյ է արժանի։ «Այլ մի՛ ոք մի՛ խղճալիսցէ», և մի՛ խղճալիսցի ի մեծախտեան աշակերտացն» և ծանուցիցէ· քանզի երկոքին և ուսուցանեն և ուսանին խղճալիսելոյ, ոչ փոքր պիղծ անարժանադրծութիւն է։ Բայց զի թէ բարւոք է այս, ո՞ խորհրդակք, և ուղղակաբ, արդ եկեալք[2] երկամեանս ի խորին խաւարի, երբս կամ՝ չորս լոկ միայն ուղղէք· երբու զի մարթի է զամենայն մարդիկ ի հրապարակ ի մէջ զուգուսան առանի գնել, զի գարձեալ առանց երկիւղին ընկալցի· լաւ և բարւոյ կցորդ լինել կենացդ։ քանզի յայտագրեալ նախանձու յաւարնութենէ մեկուսի բնակեցուցեալ է· քանզի որ զինասակարան գործեն, ամենեցուն, և զառաջադրեալն ընձեռելով, և զերկրի ներքին այն, և ի խորին խաւարի թաքիցն ըզբաղում անաւրէնութիւնն իւրեանց ծածկելով զի մի՛ ոք տեսցէ։ Իսկ այնք որք գՀասարակաւորն գործեն, եղիցի յայտնի Հանարձակ, և ի տուէ ընդ մէջ անցցեն Հրապարակաց պատահելով բազմամարդիկ միաբանութեան ժողովրդոց, լաւաւոր և մաքաւ արեգակամէ զիւրեանց կենաւս վարուցն ծածկելով, և ի ձեռն իսկ և ամրագոյն զգայութեանցն՝ ժողովոցն՝ ուղղաւ լինելով, տեսանելով աթորձելիս միայն և աշագին երեսս, և լսելով և ուրախ լինելով յոյժ, զի բանիցն՝ որք զմիտս այնոցիկ որք ոչ յոյժ անեղաժիրսն են, սոսոր են ուրախ առնել։ Թէ՛ ոչ տեսանես, և բնութիւն զայն որ իւր երգիկքն և ամենաբարի գործքն են, ոչ ինչ թաքցոյց· այլ զաստեղս, և աշխատաբակ զամենայն երկին, յերեսաց վայելչութեան, և ի-

1. Միան ոչ գնե՛ զ խաղաղեսցի՛ Ի։
2. Բայց՝ յաւելու. ՀԱՍՏԱՏՍԿ. ՀԻՆԵԼՈՒ։
3. Մ· ՀԻՆՈՑ ԵՂԵՐ ԼԻՆԵլ։
4. Մ· Հաղորդեսցի։

մուստաֆբութեան[1] ցանկութիւն յայտնի երևեցոյց, զայնատարած ծովզ, և զարքեւրս, և զգետս, և զբազդրախտանութիւն ուղղոյ կարգեալ բաշխեաց զնա ի տարբոյն ժամանակս. անկոց և կենդանեաց, և այլ ևս պաղոց, զանբաւ և զանճառ տեսութիւն ի պէտս և ի վայելչութիւն մարդկան։ Զաղա[2] զի ոչ էր արժան և մեզ զհետ երթալ նորա կամոց. ամենայն որ ինչ միանգամ հարկաւոր և պիտանացու՝ գնել առաջի ամենեցունցն, որք արժանի են ուղղութ գտանելոյ։ Արդ այժմ զէպ լինի բաղում անգամ ի բարի մարդկանէն, ոչ ումեք խորհուրդ ասացուցանել՝, իսկ զուսապակրս, և է երբէք զի և զընկերիս, և ի կանանց որք պիղծք և գարշ և գէջք են, յորժամ արծաթ մուտուցեն այնոցիկ որ իւրազրխան առնեն, և զխորհուրդսն ասեն և ի վեր հանեն, արտաքս քան զաւհմանս ամենեքին ուրա հայածեալք լիցին ի քաղաքէ և ի քաղաքավարութենէ. յորժամ բարին և ճշմարտութիւն, վասն ինքեան պատուի։ Արդ այն որ ի յայտնի միաբանութեան և մարդասիրութեան պատմիչ է ի մեզ, առաւել քան զամենայն ինչ աւրէնքն, յերկոցունց առաքինութեանց, զարժանաւորութիւնն և զզարկիչս պարծանս յերկար պահեաց։ Ոչ ումեք այնոցիկ որք առանց բժշկութեանն էին, հրաման եւ ապաստանել ի նոսա. այլ հեռի և ի բաց ապականեալ կորոյս։ Արդ գնացեալ ի ժողովս եկեղեցեաց, ոչ սակաւս ի չարաց[3] ի ներքս ապրդեաս, և ի ձեռն այսորիկ ի ժողովեալ բազմութեանն մուտացանք և անդիտութիւնք լինել. զի մի՛ այս լիցի, յառաջագոյն ի բաց արգելեալ փակէ զամենայն անարժանս ի աւրէնեան ժողո-

1. Միսան. խ-ոսուրկան։
2. Մ. ե- զի ոչ։
3. Մ. ի-որ-որ- ոչ յ-ոչ-ոնել։
4. Մ. ի չարեաց։

վերդենէն, զակիզքն տարբեալ ի հիւանդացելոցն զիգական տխուն կանացեաց, որ զբնութեան կարգեալսն ի բաց հատանեն, ի գէջ և յանտանջելի կանանց տխուն և ի կերպարանս բանադատեն զինքեանս։ Քանզի մնալաս և ի բաց հատեալս զծննդականսն, հաստէ. և զժամն համբարելով ծաղիկ զի մի գիւրաւ թեռանեսցին։ Եւ զակզբնատեսն փոխեալ կերպարան յիգակերպ տեսիլ. և հաստէ ոչ միայն զպտուղսն, այլ և զայնոսիկ որք ի պտուղսիկն բերին յինքեանս մայրական ամուսիր. վասն զի առաջին սերմին և ծնունդն նոցա, խառնեալ անարգեալ է. և ընդ միմեանս խառնարնդարեալ է վասն բազմութեան որք գիտացան ընդ մարսն. մինչ զի ոչ կարել զեղմարիա հայրն հատատի գիտել և ի բաց որսել։ իսկ տեղիս այս, զի թէ և այլ որ այսաբանութիւն ընդունի խմատատարական տեսեսմբք լի, քանզի ամպարշատն և անարժանիցն ոչ մի են բարք. այլ բազումք և ազգի ազգիք. քանզի ամենք զանմարմին տեսիլսն, անուն ունայն, անկցորդ ի ճըշմարտութենէ իրաց ասեն զոյ. զհարկաւորագոյն բնութիւնն յէիցն ի բաց բառնարով. որ է սկզբնատիպ ամենեցունց որ միանգամ որպէս ինչ է և կամ քանակ, բան որում իւրաքանչիւր որ տեսական գործի և չափի։ Զսոսա տէրունական աբրնացն արձանքն զեկուցանեն մնալաս. քանզի որպէս մնալսն և ջախջախեալսն ի բաց բառնայ ընկենու զորակութիւնն և զտեսիլն, և ոչ այլ ինչ է, բայց իսկ տիրապէս ասել անկերպ նեմի. այսպէս որ ի բաց բառնան կամք կարծեաց զտեսիլս, զամենայն ինչ խառնարդարէ, և առ վերադոյն տարբերսն բնութիւն, զանկերպն և զանորակն զայն ածէ, քան զոր զիշ, արդեաք իցէ՝ անտեղագոյն յիմարութիւն. քանզի յայնմանէ զամենայն ինչ ծանոյց ատուած, ոչ ընդհարկանելով ինքն,

1. Միան. Եղէտ։

քանզի[1] ոչ էր արժան, յանբաւն և յանսխմեան, և որ կրէին, հպել քաջ երջանկին և երանելւոյն. այլ անմարմին զաւրութեամբքն, որոց ճշմարիտ և առուգարան անուն է տեսակք, ի վար արկ առ իւրաքանչիւր ազգ ծնողաց յարմարելի առնուլ կերպարան։ Եւ զարձեալ անդրէն անարգութիւն պատուէ և խառնակութիւն. քանզի բառնալով ի միջոց զայն, որ ի ձեռն որակութեանցն[2], բառնայ ընդ նմին և զորակութիւնսն. և այլ որպէս ի նահատակութեան չարի, յայն որ ամենաբշտութեան ընտրութիւնն է, փութան ախորժելով կամել, միանգամայն առաւելեալ տեսակաւքն, զգայութիւնն աստուծոյ ծածկելով, իբրու թէ ոչ է, ասէ թէ է փոխանակ ուզոյ մարդկան։ Եւ ոմանք երկիւղածութիւն թուեցելոցն, ամենամաւտ[3] զոլ, և զամենայն ինչ տեսանել անբուն աչաւք. հանդերձեալ պատրաստեցան արգելուլ զինքեանս յանիրաւութեանց. զոսոս աւրէնքն դէմ՝ յանդիման ի բաց հատեալս կոչէ. զամենայնն ծնողի զյաղագս նորա ի բաց խզեալ զինքեանց զկարծիս, անսէրք և անսերմանք յիմաստասիրութենէ, և կրթելով սովորութեամբ զմեծի չարութեանն զանաստուածութիւնն։ Եւ երրորդք են, որք զընդդէմպատրաստ[4] մարդիկ պատմեցին բազմութիւն աստուածոց. արուաց և իգաց, ծերոց և տղայոց, և բազում՝ իշխանութեամբ իւրանցն բանիւ զաշխարհ լցին. զի զմիոյն և զարդարև Լիւն զկարծիս՝ յամենայն մարդկան մտաց ի բաց խլեցին. ապա են[5] որք նշանակաւ «ի պատերիէ» յարբենացն կոչեալք են. քանզի զոր աւրինակ որոյ մարմինքն[6] բազ են, զճշմարիտն հայր ոչ գիտեն և

1. Միան. ՝ի։
2. Մ. յանվրա. է։
3. Մ. -ԿԻՆ ՀԱ։
4. Մ. ԸՆԴԴԷՄ ՊԱՏՐԱՍ։
5. Մ. ոչ ունի -ԱՍ ԷՆ։
6. Յոյնն. ὧν μητέρες. որոց մարդն։

ոչ գիտել կարեն, բայց[1] բաղումն, և գրեթէ զամենեսին զսիրելոն՝ որք գիտացանն, նոյն աբիւնակ որք ոչ գիտեն զմի և զճշմարիտն ասասած, բաղումն և սատանայն ստեղծանեն. յաղագս հաւատոյ գոնէ էիցն, կարացեալք են, զոր կամ միայն, և կամ յառաջագոյն անգամեն իսկ ի խանձարրոց արժան էր ուսանել։ Զանգի զինչ ուսումն գեղեցկագոյն է, քան զնանձար գիտութեան արդարև էին ասասածոյ. քանզի չորրորդս զասա և հինգերորդս[2] ի բաց վարէ, որ առ նոյն կատարած ճեղքին, այլ ոչ ի նոյն խորհրդոյ կամաց. քանզի երկրին ի նոցանէ նախանձաւորք են մեծի չարի ինքնասիրութեան, իբր հաւարակ իմն ժառանգութիւնն[3] բաշխելին զամենայն ոգի[4], ի բանաւորականէն և յանասուն մասնէն ի մի գոյացեալք. և ունէք զբանական, որ միաք են, վիճակ մասին ընկալան, և ունէք զանասնականն որ ի զգայութիւնն բաժանի։ իսկ որ մասացն վերկացու[5] ինամագոյք են, զառաչնորդութիւն և զնախնութիւնն մարդկային իբաց զնմանէն կախեն, և ասեն թէ բանական է և զանցելն յիշատակաւ ամրողջ պահել, և որ առաջին կայ քաշապէս առողջութեամբ ընդունել, և բղհանդերձեալսն վայելուչ հանգիստութեամբ մրատաց՝ յառաջագոյն երևութանալ և ընդ միտ առնել։ Այս է որ զմանձրահոգն արգաւանդ և զառաքինի երկրի զլեռնայինն և զդաշտային, սերմանեալ և տնկեալ. և զկենցաղոյս զաւգտակարագոյն մնակութիւնն կարաց գտանել։ Այս է որ նաև կազմեալ, և զցամաքինն[6] բնութիւնան ընդ միտ առելով հնարս գտեալ, որ քան զամենայն բան

1. Միւս. ոչ ունի բայց։
2. Մ. հինգերորդս։
3. Մ. ժառանգութիւն։
4. Մ. ոգի։
5. Մ. վերկացու։
6. Մ. ցամաքային։

ի վեր է, (զուգակ գործեաց զմարդ. և ճանապարհս ի ծովս, բազմահերձս և բազմահեռս, մինչեւ ի նաւահանգիստս. որք բոլոր քաղաքաց քաղաքաց և ընթացից աշխարհապոռոտաց եհատ ճանապարհ, և ծանոյց ցամաքայնոցս՝ զկղզայինս, ոչ երբէք ի մի վայր եկեալ լինէին՝ եթէ ոչ մակդիկ նաւակ առեալ էր։ Այս է որ և ձեռագիտացն և պայծառագոյն արուեստիցն ասացելոցն գտակ[1]։ Այս գիրս և երաժշտութիւն և գնեբրջանական ամենայն խրատս հանձարոյ հնարեալ խնացաւ և ասեցոյց, և էած ի կատարած։ Այս և զմեծ բարի զկնճռատասիրութիւնն ծնաւ, և ի ձեռն իւրաքանչիւրոցն մեռանց ազգաւ արար մարդկային կենացս։ Ի ձեռն բանականին՝ առ անպատմելի մեկնութիւնն և անխաբեբայ. իսկ ի ձեռն բարոյականին՝ առ ի բարուցն ուղղութիւն, իսկ ի ձեռն բնաւորականին, առ ի գիտութիւն հանճարոյ, երկնի և աշխարհի և այնոցիկ որ ի նմայն։ Եւ այլ սահման ամենարատամ՝ ասեն ներբոգեանս և գովութիւնս, ի մի վայր ժողովեն, և ընդկուզանելով որք ասեն ակնարկութիւն յաշա ասացեալս, յաղագս որոց ոչ է ժամանակ աշխատութիւն հատուցանել։ Իսկ որք զդայութեանցն են վերակացուք, զդողութիւնն ասել, կարի յոյժ պանծալի[2] ասեն, բարեխով բանիս. որք ի նոցանէն լինին պէսք։ և ասեն թէ երկու պատճառք կելոյ են, հոտառելիք և ճաշակելիք։ և երկուք բարիք կելոյ, տեսանելիք և լսելիք։ Արդ ի ձեռն ճաշակելեացն, խաղից և բնկեկաց, կերակուրք ի ներքս առաքին։ Իսկ ի ձեռն սրնդաց ուշս, զորմէ ամենայն կենդանի կախեալ կայ. կերակուրք է և ոչ՝ հանդարտ և անշատ, որ ոչ սրթմանս միայն, այլ և որք ի քուն են կերակրէ և ամրոզդ պահէ։ և բազոյդ հաւատ. քանզի եթէ և առ գոյդն մի հնե-

1. Փակագիծ. նշանակագրդ ոչ գոն 'ի յոյնն։
2. Միւսն. գանիալ։

լեացս փոքն արգելցի, բան այնմ՝ զոր բնաւ-
բեալն եմք արտաքուստ ուռգանել[1] չնչոյ՝[2] ընդհա-
տութիւն, մահ առանց հրաժարելոյ ի հարկէ ի մե-
բոյ հասանէ. իսկ այնոցիկ որ խնամասիրական
զգայութիւնք են, ի ձեռն որոց առացեալ լինի ի
մեզ բարի կեանն, տեսութիւն լուսոյ, որ լուսագոյն
է յէսն. զի եթէ և ի ձեռն լուսոյ զայլսն ամենայն,
զարեգակն, զլուսին, զաստեղս, զերկին, զերկիր,
զծովս, զանկոց և զկենդանեաց զանբաւ և զանճառ
զանազանութիւնս. և միանգամայն առ հասարակ
զամենայն մարմինս, և զձեւս, և զգորակութիւնս, և
զգոյնս և զմեծութիւնս. որոց տեսին ի խորհուրդս
մնաց գործեցան, և բազում տենչումն հան-
ճարոյ ծնաւ. մատուցանէ և առանց սոցա ուղ-
ղութիւնս, տեսութիւնս մեզ մեծամեծս, յրնատ-
նեացն և յաւտարաց, և ի սիրելեացն և ի թիշ-
նամեացն որոշումն ընտրութեան, և ի պատակա-
բացն փախուստ, և տխրժումն այնոցիկ որ յաւ-
գուտ են։ Արդ եղև և այլոցն իւրաքանչիւր որ ի
մարմնոյս մատանց յարմարելով պէտս, և յոյժ
հարկաւորս, որպէս թաթք առ ի գնալ և յրն-
թանալ, և այլքն որ ինչ միանգամ ի ձեռն ազից
գործին։ Եւ ձեռք առ ի գործել, և տալ և յաւ-
նալ, և աչք իբրու հասարակ իմն բարի, զկարել
պատճառս, և սոցա և այլոցն ամենեցուն մատու-
ցանեն, և անուտոք և լցեալ վկայքս, այլք որ ոչ
ասիւք և ձեռաք կարեն վարիլ, բան լաւին, ծրշ-
մարիտ զանմոնն ցուցանելով. զոր ոչ ի նախա-
ատանս առանել քան առ ի գալի խանդագատանաց
գնել ասեն զայն՝, որք յառաջագոյն անեկաբս ա-
նուանեցին. քանզի միանգամայն ուշացն ապակա-
նութեամբ, և մարմնոյն զարութիւնք, ոչ միայն
կարիքեալք գայիեն, այլ և ապականին։ Աբանչ-

1. Միան. —ուռ-ինն։
2. Մ. ոչ ունի չնչոյ։
3. Մ. ասն։

լազոյն և հնչումն, ի ձեռն որոյ նուագք ձայնից և չափք (և յաւագ, փոփոխմունք, յարմարմունք և ձայնակցութիւնք, և ազգաց և ժողովոցն կուտից)[1], և ամենայն որ ինչ միանգամ բան երաժշտականութեան ընթրի, (կամ՝ բանից այնոցիկ որ բան ելից ամենաբարում՝ տեսիլք են, առեղծանացն, խորհրդաւորանացն, նեբրոզականացն. և ես այնոցիկ որք ի հին պատմութենէն են, և ի խաւսս հանգիստաւորս և ի հարկաւորս, յարգաս այնոցիկ որք ի կեանս իրաց են. առ այնոսիկ որք յաւէտն[2] մերձենան։ Քանզի առ հասարակ ձայնիս մերոյ երկրիմի ունելով զաւրութիւն՝ յաւելն և յիրգելն, զերկոսին՝ ականջք ընթրեալ որոշեն յաւգուտ ոգւոց[3]. քանզի երգ և բան, առողջական և փրկական դեղք թշվութեան են. է որ զանազանն թմբեալ ողջացուցանէ. և զանյարգաբն ի մեզ յարդարմամբ[4]. և զանենուազն, նուագաւք. իսկ զանչափն չափովք ըմբերանելով. բայց դանակ գանակ է և ամենազարտիկ խրաքանչիւր որ[5] ի սացանէ, որպէս երաժշտականքն և քերթողքն վրկայեն. որք առ հարկաւոր ինն ընդունելութիւն[6] զայս արարեալք, իսկզբանն[7] արգելլով[8] և ի բաց հայտանելով զառ ի չարութիւնն յարձակմունս. և զայնոսիկ որք ահա ըմբռնեալ են անզգամութեամբք և անիրաւութեամբք ի հիւանդութիւն՝ ի վերայ արկանելով. կակղագոյն այնոցիկ որք տեղին ասն, իսկ ուժգնագոյն որք ընդվզին ըմբիկեալք[9],

1. Ընչանակեալոյ փակագծիս ոչ ունի յոյնն։
2. Միւսն. յաւէտն։
3. Եւ առաջն՝ փակագծիս նշանակեալքդ պակասեն 'ի յոյնն։
4. Մ. յարգմամբ։
5. Մ. ոչ ունի ա։
6. Մ. ընդունելութիւն։
7. Յոյնն՝ զնչ ն ծէ λόγος. խ։ բանն։
8. Մ. բաց։
9. Մ. ըմբոնիեալ։

պատճառք յինին մեծամեծն աւգտիչ, այսպիսի ընդելուզանելով որք մուտցն են աստուածապարկիչ, և որք զգայութեանցն, ոմանք գնա և ոմանք զոսոս աստուածաստեղծեն[1], յինքնասիրութենէ մուտցեալք զայն որ արդարն ճշմարիտն է աստուած։ Վասն որոյ յիրաւի զամենեսեան ի բաց հալածեաց ի տէրունական ժողովոցն, զայնոսիկ որք զտեսիլս ի միջոյ ի բաց հանէին՝ մատեալս կոչելով, և զայնոսիկ որք ամենեին անաստուածք են, որոց անուն ընտանի և ի դէպ չ'ի բաց հատանելոյ[2] եդ, և զայնոսիկ որք յընդդիմութենէն պատմիչք աստուածածնութեանց, զորս կոչեաց ի պոռնիկէ, և ի վերայ ամենեցունց զնինասէրսն. որոց ոմանք զխորհուրդսն, և ոմանք զիւրաքանչիւր որ ի զգայութեանցն աստուածացուցին. քանզի ճեպին ամենեքին առքս առ մի կատարած հատանել։ Չի թէպէտ և յայդիսազն են կամաց և ի խորհրդոց, զմին[3] զէն էապէս աստուած յանալք[4]. այլ մեք աշակերտքս և ծանաւթք մարգարէին Մովսէսի, զմին խնդիր ոչ թողցուք, զհանճար գիտութեան նորա կատարած բարեփառութեան գոլ սովորեալք, և կեանս երկարայաւէտս, քան զբաւմ և աւրէնքն ասեն այնոցիկ «որ յԱստուած յեցեալ հային», կեալ ամենեցուն ի կամն պատուիրանի, եղեալ հարկաւորս և իմաստասէրս[5]։ Քանզի արդարն որք անաստուածքն են հոգւոյ[6], մեռան, իսկ այնոցիկ որ ի կարգ[7] էին աստուծոյ կարգեցան, և անմահ կեանս կեան։

1. Միան. ------ էին ---։
2. Մ. հատեալ։
3. Մ. յանալս Լ։
4. Մ. լանալ։
5. Մ. իմաստասէր։
6. Մ. հոգւոյ։
7. Մ. է կրէն։

ՅԱՂԱԳՍ ՏԱՍՆ ԲԱՆԻՑՆ

Էր երբեմն ժամանակ յորժամ՝ խմաստասիրութեան պարապեալ էի և աշխարհս տեսութեանց, և այնոցիկ որ ի նմանէ զրարին և զփափագելին՝ զարդարեալ երանելին միտս համբարեալ՝ ստանայի, աստուածային միշտ բանիւք խոգալով և պատուիրանաւք աւրինացն, զոր անցագ և առանց լրութեան ունելով ուրախ լինէի. ոչ ինչ նուաստ և կամ զանանախանձ, և ոչ առ ի փառս կամ ի մեծութիւնս և կամ ի մարմնոյս փափկութիւնս թաւալելով. այլ ի վեր վերամբարձ թուէի միշտ նկրտիլ բան ոգւոյս իմն աստուածարելոյ, և ընդ արեգական և ընդ լուսնի չուրջ գալ, և ընդ ամենայն երկնի և աշխարհի, յայնժամ՝ յառեալ կարկառեցայ ի վերուստ յարփւոյն իրր ի բարձր գիտնոցէ անճառաց, զմտաց աչս. տեսանէի զանբաւ և զանճառ տեսութիւնս, զայնոսիկ որ յերկրի անբաւք և անճառք են, և երանի տայի անձին՝ իրրու թէ քաղաքէս կարացեալ փախչել ի մահկանացու աշխարհիս աղէսից։ Բայց անցեալ աւրնթեր նատէր ինձ չարեաց որ ինչ գմտեղաւկայսն է՝ բարառեաց նախանձն յաչսին, որ յանկարծաբէն ի վերայ անկեալ, ոչ յառաջագոյն զգաստարեաց ձգելով զիս բանութեամբ, քան զարկանել զիս ի մեծապայծութիւն ծովու, ի քաղաքավարութեան հոգս, յորում՝ բերեալ լինէի, և ոչ սակաւ մի ի վերայ զուգել[1] կարացեալ, սակայն հանգաւժէի. և զայն զոր յառաջին հասա-

1. Միան. հաւասարել։
2. Մ. զուգել։

կէն ունէի բնակեալ յոգիս զիսրատու ցանկութիւն, որ ողորմութիւն զինէն և գթութիւն մէջս ընդունելով, յարուցեալ կանգնէ և թեթևացուցանէ։ Վասն այսորիկ յորժամ զգլուխս ի վերբառնալ կարացի, և զուցս ապաք ընդ ապատս տեսանելով։ քանզի զարատեան սոցա, այլանդակ իրացն չամանդալ։ ստուերացուցեալ ծմակեցոյց։ Այլ արդ հարկապէս շուրջ զինն հայեցեալ տեսանեմ մարմնոյ և անխառն չարեաց կենաց ձգեալ բաղձացեալ։ Այ՝ նիթէ և յանկարծաբէն զոյգն ինչ լիցի յաջողութիւն և խաղաղութիւն ի խռովութեանց ծովս, յայնցանէ որ վաղ յառաջն էին, թեագիտ եղեալ, ի վերայ ոգեաց միայն սահելով, ոչ աւդաղնաց եղեալ։ Հոգմամբ հանձարոյ հնչեցեալք, որ զիս բազում անգամ հաւանեցոյց փախստական լինել ընդ նմա զաւուրս կենաց անցուցանել։ որպէս ի խիստ և ապարատաս տերանցրն, ոչ ի մարդկանէ միայն, այլ և յիրաց այլուսաս, այլոց՝ զաւրն ուխից հոսեցեալոց։ Այլ ի վերայ այսորիկ, զատաւծոյ արժան է գոհանալ։ զի թէպէտ և ընկղմեալ էի, սակայն ոչ ընկերայ ի խորս անդընդոց։ այլ և զոգւոց ապա, զոր հրացէն՝ ամենք ի բարի և ի լաւ յուսոյ, կարծեցեալ ահա կուրանալ, բանամ՝, և լուսով իմաստութեամբ լուսաւորիմ՝ ոչ զամենայն կեանս վարուց ի խաւար մնանեալ։

Արդ ահաւասիկ իշխեմ, ոչ միայն ուէրանեան աւրէնսդրին մեկնութեանց պատահել, այլ և հանճարահրաշ հայել ի մի մի իւրաքանչիւր զի ի նոցանէ, և որ ինչ մնանդամ ոչ ծանաւթ և գիտուն ի բազմից՝ զգուշութեամբ պահել և խորհել։ Արդ վասն զի յոգագս սասն բանից յամենայնէ ետ հրամանն աստուած, առանց մարգարէի

1. Ի լս. Ծովեցոյց։
2. Գոյն. Գիտ ոչ զգաքնոց եղեալ։
3. Գոյն. ἀπόγνωσει, հեռացմամբ, անյուսութիւնք։

և մեկնութեան, հինգ զառաջին գծեալսն յառաջնում պնակին, և որ ինչ միանգամ որք բան մնասանցն են, և առ այսորիկ բերեալ մնասուցանին, պարտ է յարելում ժամանակիս և զայլ ևս որ բան միւսում ևս պնակսին է, որպէս հնար է լաւապէս ընդ սմա անկանել, փոխեցեալ զարձեալ բան իւրաքանչիւր ազգացն յարմարել զանազական աւրէնս՝։ Յամենեկի շարադրութիւն թիւ, ծնանի զհինգն և զյիսունն, զանչելի յինքեան ուղեալով գեղեցկութիւն. քանզի նախ առաջին գոյացաւ ի քաւէից՝, ի կրկնակէ և յերեքկնակէ յայնցանէ որ մի բան միոջէ շարադրեցան։ Իրբու թէ որպէս. ի կրկնակէն ա. բ. դ. ը. լինին ութա հինգեաւսան։ երեքկինք, և յերեքկնէն, ա. գ. բ. իւ. որ են քառասուն, և են ութա շարադրեալով հն. զոր և Պղատոն ի Տիմէոսին լիւէ յաղագս ոգեծնութեան, ասեալ այսպէս։ Մի ի բաց երթիր յամենայնէ մնան, և որ զհետ այսորիկ։ Երկրորդ՝ հն թիւն տասնեկին է շարադրութիւն. իսկ յ ն. ձև ն, զաւրութեամբ տասնեկին է։ Քանզի եթէ իւրաքանչիւր որ ի սոցանէ, ի մեկէն՝ մինչև ի տասնեակն բազմապատիկ արարեալ շարադրեսցես՝ զարարեալ թիւն, զյոցն, զ. ձ. և հնգին. իսկ յձևն, հնին եւթնապատիկ է. երիցս հն, երեքանկիւնի է, որպէս զ ն, և որպէս նոյն ինքն տասնեակն. չորիցս եթէ թուեսցես զմին, գոցես զբան բազադրութեանն տասնեակ զհնն։ Հինգերորդ. սեռականագոյն. վեցակ՝ իմն բազմապատիկ յինքեան եղեալ, զաւրութիւն՝ որ ծնանի զերեսուն և զվեց, որոյ է

՝. Աստեղանիշդ պակասի ի յոյն բնագրին։
1. Յարինակին՝ որպէս և ի միւսն ի լս. —ՐԷՆ կամ —ՅՐԷՆ։
2. Միւսն. ի դ-ԿԷՆ։
3. Մ. յաւելու. ՓՈՂԷ։
4. Մ. —ՐԷ—Է։
5. Մ. ՀՅՐ—ԲԷՆ զոր օրինակս մեր ունի ի լս։

երկիցս չորք. որպա մնասուքն ծնեալ այսպէս. երկիցս ութուտասն, զմբ. դբ. զզ. թդ. մբ. գ. մբ. բ. երեսուն և վեցիցս մի, միանդամայն լինին մնասուքք բ թիւ յիսուն և հինգ. մակ եռանկիւնիք հինգ. որք մի բան միոջէ ծնանին գյիսուն և զհինգ. դարձեալ չորքանկիւնիք և. որք մի բան միոջէ ծնանին զի և զհինգն. իբրու թէ որպէս. գ. զ. ժ. մե. խա. լինի հե. դարձեալ չորքանկիւնիք հինգ, որք մի բան միոջէ ծնանին գյիսուն և զհինգն. որպիսի. ա. դ. թ. մզ իւ. լինի յիսուն և հինգ. իսկ յերեքանկիւնիցն, բոլորին է ծնունդ. քանզի ի զուգակոդմանցն կրկնակաց երեքանկիւնիցն, երեք տասք բաղկանան. հուբ, և փուզձ և ուիմանիսարն. քանզի է որ հրոյ ձև է, և է որ աւդոյ, և է որ ջրոյ, իսկ ի չորքանկիւնեացն՝ քուեայն է. և սա է ձև երկրի*։

Զկեանսն՝ վարուց զլսա Մովսեսի, իմաստուն արանց, զորս առաջնորդս մերոյ ազգիս և աբէնքս անգիրս ուէրուեան գիրքն ազգեն, յաւաջնում՝ բաղդասութեանն զեկուցեալ, բան կարգի մի բան միոջէ գրեցելոց աւրինացն, զանսիրս ճշգրտեցեալ. և ոչ եթէ զուն ինչ երեիցի աւրինակ այրարանութեան, զայս թողեալ վասն առ ի միտս ուսումնասէր հանճարոյ, և կամ թէ՝ յաւաջ քան զերեկլինն, սոմբութիւն է զաներեւոյթսըն ինդրել։ Իսկ առ այնոսիկ որ յանշնարսըն մնեալ են, զի՝ է զի ոչ ի քաղաքս, այլ ի խորին անապատսի զաբէնն գնէր, ասելի է. նախ առաջին՝ թէ բաղումք ի քաղաքաց, անբան չարեալք լի են, և առ յաստուածութիւնն անարժանութիւնք՝, և առ ի միմեանս անիրաւութեամբք.

1. Գոյնն սաս նոր ձաս է. վերնագիր ունիրով. Περὶ τῶν δέκα λόγων α κεφαλιά νόμων εις.
2. Գոյնն. դ գրոՒ.
3. Մ. անարժան իրաւունք։

քանզի ոչ ինչ է որ ինչ ոչ է ի սոսա նշաւակ խարդախութեամբ, ազարտեալ զհարազատ և զբուն քան զպիտակն և զաւտար, անյայտզակ ցուցանելով. և զնշմարիսն քան զնմանիսն՝ որք բնութեամբք են սուտ, հասանելի[1] իմն ի միտս արկանել երևմնոս անցից առ ի պատրանս[2] քաղաքաց. յորմէ և ամենեցուն բուսանի գայթագ[3] անպարհաւատութիւն. յորմէ ոմանք պակուցեալք, և երկիբպադանեն ունայն կարծեաց, պարկիչս և պանծալիս ունելով. ի ձեռն ոսկեղէն պատկերս և ծիրանեացս, և բազմութեան սպասաւորաց և կառաւք. յորս որք հասին[4] երկանիկք և բարեբախտիկք՝ վերամբարձ բերեալ լինին։ Յայնժամ միայն ձիս դնելով ի լուծ, յայնժամ և մարդս որ զբեռնեն ի վերայ պարանոցի ծանրութիւն բերեն՝ զնոգիսն յառաջ քան զմարմինսն վասն առաւել թշնամանացն ճնչելով, ամպահաւատութիւն՝ և բազում այլոց չարեաց գործակ է. այլանդակութեան, հպարտութեան, անարժանութեան, որք են սկզբմունք աւտարակենաց, և առնմայրն պատերազմաց. ոչ ինչ մնան, ոչ հաստատակ և ոչ յաստուկ առանձին[5]. ոչ յերկրի, ոչ ի ծովս գաղարել թոյլ տալ։

Բայց զինչ պարտ է զառ միմեանս մեզն յիշել. քանզի հպարտութեամբ և աստուածութիւնն արհամարհեալ է։ Զի թէպէտ և ընդելալ է բնութեամբ վերնագունեն հասանել պատուի. և պատիւ զինչ ինչ արդեաք իցէ յորում ոչ գոյ ճշմարտութիւն, որ և անուն և գործ ունի պատուական։ Վասն զի և աստուածութիւնն գարձեալ անդրէն ըստ նմին անարգ է բնութեամբ. իսկ արհա-

1. Միւս. հասանելի, որպէս և օրինակս մեր ի լս. համաձայն յունին։
2. Օրինակս մեր և Մ. ի լս. — է գոգրանն։
3. Մ. չունի գոգ։
4. Մ. գոյ հանին։
5. Մ. յանվին։

մարդանք աստուածային իրացն երևելի են՝ որք արագահայեաց տեսանեն. քանզի բազում որչափ միանգամ ի ձեռն նկարագրութեան և բաղադրականութեան կերպարանելով տեսիս, մեհեան և տաճարս նոցա չուրջ արկեալ փակեցին. և բազինս կազմելով պատկերաւք և դրաչիզովք. և այսպէսաւրէն պատկերաւք կուռ, պատիւս զոգ երկնային՝ բաշխեալ նոսին ամենայն անդնից։ Զորս դէպ յանդիման տեքրունեան գիրք զայնոսիկ որք ի պոռնիկ եղելոյ նմանեցուցանեն։ Քանզի որպէս սոքա զորս միանգամ զամենեսեան սեղեխս ունէք մայրն, համարին իւրեանց հարս, անգիտութեամբ բնութեամբ միոյն. այսպէս և որք ի քաղաքս ոչ գիտացեալք զիշ հապէս ճշմարիտ աստուած, բիւր բազում սուտ անուանց աստուածացուցին. ապա այլոց առ այլս պատուելոց, յազգս լաւին յայրիեալ զուրութեամբ, երկմտութիւն՝ և առ այլն ամենեսին, զանազանութիւնս ծնաւ։

Զորս նախ յառաջագոյն հայելով, արտաքոյ քաղաքի կամեցաւ աւրէնագրել. և ընդ միտ առէր և զայն երկրորդ անգամ, եթէ զայնոսիկ որ հանդերձեալն են տէրունեան սուրբ աւրէնս ընդունել, զկոգիսն հարկաւոր է ընկել և մաքրել. զի զդժոխալուսաց պաշարան զոր խառնիճաղանձն բազմութիւն յոգոդոդեալ խուճապ մարդկան ըստ քաղաքաց քաղաքաց ի նոսա չաղախեալ ապաւորեաց։ Իսկ այս անհնար է այլազգ, բայց ի բաց և արտաքս բնակեցուցանելոյ դէպ լինել. և ոչ անդէն վաղվաղակի, այլ երկայն ժամանակաւ յետոյ. մինչ և առաջնոց անաւրէնութեանց կրկնեալ ապաւէն, առ սակաւ սակաւ ազատաղեալք և ի բաց ծորեալք անեղեսցի լիցին։ Զայս աւրինակ և որք ի բժշկութեան են քաջք և առաքինիք, ապրեցուցանեն զվշտացեալս. ոչ յառաջագոյն խա-

1. Միան. ղոյ- Եբրայեցի։

հրա և ըմբռկիս արժանի առնեն մատուցանել, մինչ զ զանազանցն պատճառս ի բաց թողեալ է. քանզի մինչդեռ ի նոսայն են, անուանեալ են կերակուրք, ի վասս նեղեալ եղեալք ասեն։ Արդ յերեսաւ յայնցանէ որք ըստ քաղաքաց քաղաքաց, ի վերատակարգեալն սովորութեանց, յանապատ և յապահով տեղի տարեալ, զի թմբուք արասցէ զոգիս յանիրաւութեանց, սկսաւ մատուցանել մրատացն կերակուրս. և զինչ արդեաք իցեն սորա, եթէ ոչ աւրէնք և բանք աստուածայինք։

Եւ երրորդ պատճառք է այս. քանզի զոր աւրինակ որք երթան հեռի ճանապարհն ընդ ծով, ոչ յորժամ ի նաւն եդեալ ի նաւաշանգստեն ի գուրս գնացեալք սկիզբն առնեն կաղմել առագաստս և քերթս և զեկս. այլ մինչ դեռ ևս են յերկրի, որ ինչ միանգամ երթայ առ ի պէտս նաւավարութեան, պատրաստեն. նոյն աւրինակ արժանի արար, ոչ ընդունելով մատուցս վիճակաց և ի քաղաքս բնակելով՝ ապա խնդրել աւրէնս ուրովք վարեսցին. այլ պատրաստ առնելով զքաղաքավարութեան քառնեան. և գեղեցիկ սովորութեամբ տաժեալք, որով հանգերձեալ էին դապ վարել փրկութեամբ. այնուհետեւ ապա ևս բնակեցուցանել ի նեղս, վարանելով անդէն զարգարոցն պատրաստութիւնս, համեմատութեամբ[1] և հաստակութեամբ, և մատամբք անկից իւրաքանչիւր ուսք։

Բայց սակն ամենք և չորրորդ պատճառս, ոչ հակառակ՝ այլ հուզ ի ճշմարտութիւն. վասն զի պարտ էր հաւատի լինել ի միտս նոցա յաղագս այնոցիկ եթէ ոչ զիւրք աւրէնքն են մարդոյ, այլ աստուծոյ հրամանք յայտնեալք զոյ. հեռագոյն ի քաղաքացն ի բաց տարաւ զաղգն ի խոր անապատ յապահովագեալ. և անբեղուն, ոչ միայն ի

1. Միան. համեմատութեամբ։
2. Մ. քիւրք մարդոյ են աւրէնք։

պարոց այլ և յրմնկելի ՝ի բրոց։ Զի եթէ ի նուա-
զութեան եղիցին հարկաւորացն, և ծարաւով և
սովով ապականել։ յանկարծաւրէն անկապակոյ
զառատութիւն և զառաւելութիւն պիտոյիցն ինք-
նացեալս գտանիցեն։ Երկիր՝ յորժամ տեղայ-
ցէ կերակուրս, որ կոչի մանանայ, և խորտիկս
կերակրոց յաւոյց, լրամարդոյ բեր։ և ՝Ցուր դա-
ւրն՝ քաղցրացեալ առ ընկելին, և ի կատարասաղ
վիմէ աղբիւրս ի վեր բղխեցեալ։ ոչ ևս զարմաս-
ցին եթէ բանք ասասուծոյ դէպ եղեն գոյ աւրէն-
քին, յայտնի և լուսաւորագոյն խոյզ խնդրոյ քն-
նութեան ընկալեալք ի տուեալեցն, զոր ի տա-
ղակուսիցն ընկալան, ոչ յուսացեալք։ քանզի որ
ի կեանս առատութեան՝ եա, և զառ ի բարի կեալ
պատճառս պարգևէր։ Արդ առ կեալ՝ կերակրոց
պէտք են և ընկելեաց զոր գտանէին, ոչ յաւաղ
պատրաստեալք։ առ ի բարի կեալ՝ աւրինաց և
հրամանաց՝ որոյք լաւացուցանել զոգիսն հան-
դերձեալք էին։ Եւ այսք են վայելուչ հանգիստու-
թեան ասացեալ պատճառք յաղագս անհնար երց
տարակուսանացն։ Քանզի զճշմարտութիւնս աս-
տուած միայն գիտէ, ասացեալ որ ինչ վայել էր
յաղագս սոցա։ Ցետ այսորիկ մի ըստ միոջէ գնա-
սին իսկ ճշդրտեցից զաւրէնս զայն, ըստ հարկե-
ցելումն յաւաղագոյն զեկուցեալ։ Քանզի յաւրի-
նացն զոմանս ինքն իսկ ասասուած, ոչ ի ձեռն այ-
լոց ուրուք, ի ձեռն ինքեան միայն աւրէնսդրել
արժանի արար, և զոմանս ի ձեռն մարգարէին
Մովսէսի, զոր լաւագոյն և առաքելի յանձնեցուն
երբ ի ճահ և ի դէպ խորհրդոց յայտնութեան
ընտրեաց։ Արդ զայնոսիկ որ դէմ՝ յանդիման
աւրէնսդրեցան, նոքա միայն՝ դէպ եղև աւրէնս
գոյ, և աւրինացն մանաւորաց գլուխք։ իսկ զոր
մարգարէիս, զամենեսին զոսա՝ ի նոսա ակնար-
կելով հայել։ Եւ ասացից, որպէս կարող եմ, յա-

1. Միան. —ՈՒՆ։

զաչս երկոցունց։ Եւ նախ յառաջագոյն յաչաչս գլխաւորացն, զորոց անդէն իսկ վարվարակի արժան է զարմանալ ընդ թիւն, տասնեկաւ ամենակատարեալ յանգեցելոց. որ զամենայն թուոց զանազանութիւնս, դարից, և կոճատաց, և դարակոճատաց. դարից՝ երկուց, և կոճատաց՝ երից, և դարակոճատաց՝ հնգից. զամենայն բանից թուականաց, բազմապատիկ եղելոց, և մնացեալ և բաժիչ, յինքեան ունին զամենայն համեմատութիւնս զթուական. քանզի զուգիւ թուովն առաւելու, և առաւելանի. որպէս է[1] ի վերայ այնր ա. բ. և գ. և զերկրաչափական, բան որում՝ որպէս բանն՝ առաջինն[2] երկրորդին, այսպէս և առ երկրորդն՝ երրորդին. որպէս ունի ի միւսին. յերկուս և ի քառուսն, և ի կրկնակս, և յերեքկնակս, միանգամայն և առ հաւասարակ ի բազմապատիկսն. և դարձեալ ի կիսաբոլորսն, և ի վերեռակաց[3], և ի նմանից։ Բայց սակայն և զյարմարականն հարեալ որում՝ մէջն ծայրիցն զուգամասամբն առաւելու և առաւելանի, որպէս ունի ի վեցին, և ի չորս, և յերիս[4]. և ունի յինքեան տասնեակն, և զերեքանկիւնիցն, և զչորեքանկիւնիցն, և զայլոց բազմանկիւնիցն երեելի յառուկ առանձնաւորութիւնն. և զարաձայնութիւնացն զայն զի ձեռն[5] չորիցն. ի մակեռորդի բանիւ չորիւքն առ երիս. և զայն որ ի ձեռն հնգին, ի կիսաբոլորբին, երեք[6] առ երկուս. և զայն որ ի ձեռն ամենեցուն, ի չորեքպատկին, ութիւն առ երկուս. բան որում՝ թուին ինձ և առաջինքն զանուանս իրացն գնելով. քանզի իմաստակք էին, ի զէպ գնա կոչել որպէս վայել էր տասնեակ. իբրու զի

1. Միան դրեալ է։
2. Ի լս. — —ՉԻՆ։
3. Մ. է ՄԲ. Ի—ԼՈՅ։
4. Ի լս. Ե յեր—։
5. Մ. է ՅԵՆՆ։
6. Մ. Եբ—։

տանեակ է առ ի տանել և բաւել ամենայն զազգ-
սին թուոց և բանից, որք ըստ թուոց են և հա-
մեմատութեանց և յարմարութեանց և չարաձայ-
նութեանց։ Բայց սակայն զտասնեակն առ ասացե-
լովքս, և վասն այսորիկ որ յիրարս ևս վայելչաբար
զարմանցի, ունելով յինքեան զանգաան բնութիւն
և զզատականն։ Քանզի անգաան կարգեալ գասի
ըստ նշանի միայն. իսկ զատականն՝ ըստ երից
տեսակաց[1]. և ի վերս ի վերոյ, գծոյ և երևման
և հաստատոյ։ Քանզի որ երկուք նշանաք յան-
գեցեալ է, գիծ է. իսկ որ յերկուսն զատեալ է՝
վեր ի վերոյ երևումն ծորեալ ի լայնութիւն գծին.
իսկ որ յերիս՝ ի հաստատուն, երկայնութեանն և
լայնութեան խորութիւն առեալ, որովք զոյանայ
բնութիւնս։ Քանզի աւելի քան զերիս զատա-
թիւնս ոչ ծնաւ. և սկզբնատիպ սոցա թիւք են,
անգաան նշանին՝ մի. և գծին՝ երկուս. և վեր ի
վերոյ երևմանն՝ երեք. և հաստատունոյն՝ չորք. որոց
չարագրութիւնք միոյ և երկուց և երից և չորից՝
կատարէ զտասնեակն. երևեցուցանելով տեսակա-
նացն և այլ գեղեցկութիւնս։ Քանզի գրեթէ ան-
հնձն անբաւութիւն թուոցն, այսու չափին. ընդ-
էր. քանզի որք հաստատեալ գոյացուցին զնա
սահմանք չորք են. միոյ և երկուց, երից և չորից.
և զոյգ սահմանքն՝ հարիւրեակ ծնանի՝ ի տասնե-
կացն. քանզի ժ և ի և ղ և թ, լինի Ճ. և նոյն-
պէս և հազարեակն ի հարիւրեակացն. և բիւրեա-
կքն ի հազարեակացն. իսկ միանն, և տասնեակն,
և հարիւրեակն, և հազարեակն, չորք սահմանք,
որք տասնեակն ծնանին. որ արտաքոյ քան զառա-
ջին ասացեալսն, և այլ ևս թուոցն երևեցուցանէ
զանազանութիւնս։ զառաջինն՝ որ միակիւն միայն
չափի. որոյ յարացոյց է, գ. և. է. և չորքան-
կիւնին, զչորրորդն զուգիցն՝ զոյգն. և սակայն

1. Միան յունի ըստ երեն։
2. Մ. զոյգիցն։

և քանէն զուխն, որ է զուգ իցս. և զկատարեալն զայն որ զուգեալն լինի, իւրովք մնասմիքն, և-բիւք և չորիւք և միով։ Բայց զի պիտի հասանել զատանեկին առաքինութիւնս. որոյ անհուն և անբաւ է բազմութիւնն. վարկպարագի[2] գործ առ գործով արարեալ զմեծ գործն, որ ըստ ինքեան առանձինն զէպ եղև բաւական զոլ սատարգութիւն այնոցիկ որ յուսումնականին դեգերեալ է։ Արդ զայսն զանց առնելի է. բայց զմին ոչ վայրապար թերևս յիշելի է յաղագս ցուցանելոյ։ Քանզի այն որ ի բնութիւնն ասին ամենասատնութիւնք, ասան միայն ասեն զոլ որք զեգերեալն են յուսմունս խմատասիրութեան ուրինաց. նիւթ, որպիսութիւն, քանութիւն, առ ինչ, առնել, կրել, ունել, կալ, յորոց ոչ է անժամանակ և անտեղի։ Քանզի ոչ ինչ է ի սոցանէ առանց այսր ընդունելութեան. որպիսի, ես ունիմ նիւթ, փոխառեալ յիւրաքանչիւր ուստիքէ ի տարերց յորոց կատարեցաւ աշխարհս այս. յերկրէ և ի ջրոյ և յաւդոյ և ի հրոյ, որք առ իմ գոյութիւնս եղեն բաւականք. և սրակութեան կցորդութիւն ունիմ ըստ որում մարդս եմ։ և քաղաքութեան, կամ որչափութեան[3]. և լինիմ և առ ինչ, յորժամ իմ յաջմէ կողմանէ ոք է, կամ յահեկէ. այլ և առնեմ ինչ, չփելով և կամ այրելով ինչ. և կրեմ անցս, ատփրեալ և կամ չբփեալ յայլոց. յունել ինչ, հարցեալ քննիմ, կամ զինն արկեալ ինչ կամ զինեալ, և գրէ թէ կալով, նստելով կամ ընկողմանելով. և են ամենայն իրաք, և տեղեաւ և ժամանակաւ, յառաջ սատցելոցն ոչ միոյ ուրուք կարացելոյ առանց երկոցունց սոցա գոյանալ։

1. Միան յաւելու ղ։
2. Յօրինակին ի լս. գ-ղ-ղ-ք։
3. Յոյն. τὰ ὧν αν οὐκ εστι τι, Χρόνον καὶ τόπον. Լ ---ն գոյ ոչ ինչ է ժամանակ և տեղի։
4. Մ. գ-ով եմ գ-ք։

Արդ այս բառական ասացաւ. բայց ընդ սմա մնկանելի հարկաւոր է զկարգաւորն սոցա զասան բանն, կամ՝ զասասուծոյ հրամանս, աւրէնս և գրքմունս որք են առ ի ճշմարտութիւն. ժողովելոյ ազգին՝ արանց միանգամայն և կանանց և ժողովեալ, հայրն ամենեցուն աւրէնադրեաց։ իսկ արդեաք ձայն գոչաւ ի գուրս արձակեալ իւր. ի բաց անդր տար, և ի միտս անդամ՝ մի՝ եկեսցէ մեր. քանզի ասասուած՝ ոչ իբրև զմարդ բերանոյ և լեզուոյ և շնչարեր երակաց կարաւտացեալ է։ Այլ ինձ այսպէս թուի, բան ժամանակին այնմիկ ասասուածամայելուչ ինն հրաշագործել. հրամայեալ անտեսիկ հնչումն յաւգս այգր գործել, քան զամենայն գործուց երգոց՝ աքանչելագոյն կատարեալ յարմարմամբ պատչաճեալ. ոչ անչունչ, այլ և ի շնչոյ և ի մարմնոյ կենդանաւորէն բաղկացեալ. այլ չունչ բանական հաւատի յայտնութեամբ և ճշմարտութեամբ ստուգեալ, այն՝ որ զաւգն ձեւացոյց և պրկեաց ասասկութեամբ, և առ հուր բացաձև շրջեալ փոխեաց, որպէս չունչ ի ձեռն փոզոցայչափ ձայն պատկանաւոր և յաւգաւոր ի բաց հնչեցեալ, մինչ զի որք մնան են հաւասար նոցա որք ի հեռասասանէն կան, կարձել լսել. քանզի ձայնք մարգկան ի բացարձակ առաքեալք՝ բնաւորեալ են տկարանալ. զի քաղայայոցն այնոցիկ որք ի բացեայն կան, ոչ կարել լինել ընդունելութիւնք, հեռաւորութիւնքն առ սակաւ սակաւ նուազացեալք. վասն զի և ապականացու գործիքդ, զայս գնորա գործեալ ձայն՝ փչեցեալ ասասուծոյ զաւրութիւնն, յարոյց և արձարձեաց. և ամենայն ուրեք սփռեալ, գիտասարածն քան զսկիզբն լուսաւորագոյն երևեցոյց. այլ զլսելիս կարի լաւագոյն. քանզի ի ձեռն տկանմացն ի միրաքանչիւր՝ ոգիսն եղեալ. քանզի որ հեղգագոյն և ծանրագոյն ըզգայութիւնք են, անընդունայ կան մինչև յաւգայս

1. Միւս. [illegible]։

բախեալ ընդոստիցէ. իսկ ժամանեալ հասանէ ասուածայինն մեռաց արագութեամբ յառաջագոյն պատահեալ ասացելոցն։ Արդ ասուածայինն ձայնին[1] յայնչափ[2] եղելոց, յիրաւի զի տարակուսեալ անհնարասցի[3], եթէ յազգս այր այսչափ բազմութիւն բիւրուց ի մի ժողովելով վայր, իւրաքանչիւր ումեք նոցա աւրէնսգրելի տան պատգամացն արժանի արար, ոչ իբր առ բազումս, այլ իբրև առ մի, ոչ շնացեալս ասելով, ոչ զոգաստեալս և զայրն այսուիկ։ Արդ ասելի է. մի, զի կամի լաւագոյն ուսուցանել ուսումն զայնոսիկ որ հանգիպին տէրունական գրոց. իբրու զի թէ իւրաքանչիւր զի ի նոցանէն յորժամ բան ինքեան առանձինն է աւրինաւոր և հաւան ասուածոյ, զուգապատիւ է բոլոր բազմամարդիկ ազգին, տիրնա և առաւել ամենայն ազանց։ Ապա եթէ պարտ է յառաջագոյն մեռանելով ասել, և ամենայն աչխարհիվասն որոյ յայլս գովելով զոմն այր զարդար, ասէ. ես եմ ասուած զո. քանզի նա և աչխարհի էր ասուած. մինչ զի հաւանեալք նմա բանարարք՝ զոր նմին դասու կարգեալք են և նոյնպէս հաճոյ եղեալք դասապետին, զոյգ ընդունելութեան և պատուոյ կցորդ լինել։ Եւ երկրորդ անդամ, զի հասարակ և ընդ բազումս զի ժողովեալ, ոչ ի հարկէ խաւսի, բայց թէպեա հրաման տալով, և կամ հրաժարեցուցանելով առանձինն, որպէս միում իւրաքանչիւր ումեք բերելոցն անդէն մեղմ, խրատակի կացուել զգործելիսն։ և հասարակ ամենեցուն ի միասին եղելոցն պատուիկ։ Զի հաւանագոյն է որ զիսրատան զէմ յանդիման ընդունի. իսկ որ ընդ այլսն ժողովեալսն բազումս, խրատեալ է՝ զրգռութիւնն ապարատանութեան լիբընկէց լինելոյ ծածկելի արարեալ։ Երրորդ,

1. Յորինակիս և ի Մ. ի ս. բ-ն։
2. Մ. յայլ-ա։
3. Մ. -անհն-բ-ցի։

զի մի գուցէ թագաւոր ոք կամ գոռոզ՝ զանեւ-
ռեալքի գեղջուկ արհամարհեսցէ լցեալ ամբար-
տաւանութեամբ[1] և անզգաստաւանութեամբ[2]. այլ ի
տէրութեան աւրինաց ի գաղոց երթայ, ի վայր
արկցէ զյաւնն, ուսանելով զվնաս հպարտու-
թեան վայելչութեամբ, տիւնա առանել ճշմարիտ
խորհրդով։ Քանզի անեղն և անապականն և մշչ-
տրնջենաւորն որ ոչ խիտ է կարաւտ, և արարիչն
բոլորեցուն և բարերար, և թագաւոր թագաւո-
բաց և աստուած աստուածոց, և ոչ զնուաստա-
գոյնն և զխոնարհն անտես առնել կարաց, այլ և
զսա ուրախ առնել բանիւք և տէրութեան աւրի-
նաւք արժանի արար. իբրու միայն զնա կեցա-
կրել հանդերձեալ[3], և միայնոյ նմա զգիներբուս
պատրաստել առ ոգւոց սփոփանս, տէրութեան խոր-
հուրդն յայտնեալ. որով պարտ է մեծին իւրա-
գլուխ լինել իւրազլխութեամբ։ իսկ մահկանա-
ցուխս զի՞նչ արժան է բարձրամիտ լինել փքանալ
փունգալով առ նմանսն, որ բախտիւք անզոյգ են,
և զոյգ և նմանն ազգակցութեամբ վարին, մի
մայր գրելով իւրեանց զհաստատակ ամենայն մարդ-
կան զբնութիւն։ Արդ գիւրամատոյցս և գիւրաս-
տ պատասխել գիս մատուցից. զի թէպէտ զերկ-
բի և զծոմս զարբութիւն առից, կարատեղոյցն
և անարգաց և ընտանեաց որ յաւգնականութենէ
են անապատ յերկոցունց ի ծնողացն՝ արք և կա-
նայք. և կանայքն՝ որ այրիք են, և ծերոց, կամ՝ որոց
որդիք չեն լեալ ամենեին, և կամ՝ որոց վաղամահք
եղեն զորս ծնանն. քանզի իբրու զի մարդիկ են[4]
խանչումն և խրոխտանս ողբերգեսցս, ոչ իբրու
համարեցայց ընդունել. բայց կամ՝ մեամ՝ ի ներ-

1. Յօր և ի Մ. ի լս. հպարտութիւնքն։
2. Մ. անգաստանութիւնքն։
3. Մ. հանդերձեալ է։
4. Յոյնն. արքս. և կանայս որ այրիս են։ Մ. արս և կանայս որ այրիս են։
5. Յոյնն. ἄνθρωποι ὦν. մարդք է։

քրս բնութեանս, բան սահմանս սրա ոչ անցանելով, այլ ընդհանրացանելով զմիտս իմ՝ զմարդկակիր լինել՝ ոչ միայն վասն անհրեալի առ ընդդէմ՝ փոփոխմանց, և այնոցիկ որք բարեբախտութեամբք են յաջողեալք, և այնոցիկ որք ի վատաբախտութիւն են, այլ և վասն յարմարելոյ։ Զի թէպէտ և անցեալոյ հաստատուն կայցէ մշնայցէ բարեբախտ կեանն[1], մի՝ ուստի մոռանալ զինքն։ Վասն այնորիկ ինձ թուի զատաւաժանը բրամանն եղակի առ նոսա արարեալ, իբր առ մի աբէնադրել կամել։

Եւ ամենայն ինչ որպէս ի գէպ և փայելուչ, ըստեղեան հրաշագործութիւնք։ Ճայթմամբ որոմանց մեծամեծաց քան թէ զտանել ականոցաց, փայլատակմանց ճառագայթիւք լուսատեսաւք[2]։ անտեսել և անհրեալի փոզոյ հնչմամբ որ ի հեռաստանէ ձգեալ հասուցանէ զձայն, ի վայր իջանելոյ ամպոյ՝ կամ՝ սեան աբրնակաւ, որոյ գիրն յերկրի հաստատեալ էր։ Իսկ այլ մարմինն առ արփային բարձրութիւնն ձգտեալ։ Երկնային հրոյ բերմամբ, թանձր ծխով, զլուրջանակի փայլուն ստուերացուցեալ։ քանզի պարտ էր ասուծոյ զարութեանն անգր հասելոյ՝ ոչ ինչ յաչխարհային մնասնոյ զաղար առնուլ, այլ ամենեցուն առ հաստարակ ի սպասաւորութիւն խաղալ։ Եւ անցեալ կայր առաջի ժողովուրդն։ սրբեալ ի միտաանութեանց առ կանայս և յամենայն հնչս ցանկութեանց արտաքոյ եկեալք[3], ի հարկաւոր կերակրոց արդելեալք, լոգանաւք և չրջացանութեամբք մաքրեալ յերից աւուրց, և զգաստութեամբ ևս լուացեալ։ մանաւանդ ի մէջ այնոցիկ սպիտակահանդերձք՝ յանկիսա կալով, զանկնս ուղղեալ չահանդնեալք[4], Մովսէսի յառաջագոյն ապ-

1. Միսն. ն-ը։
2. Մ. լուսաբերաւք։
3. Ի լ. որպէս և ի Մ. եղեալ։
4. Մ. չահանդեալք։

զկնով պատրաստ լինել ի ժողով. քանզի զխաղ
եթէ լիցի նա յորժամ ինքն միայն ի վեր կո-
չեցեալ հրամանս ընդունէր, և ձայն ի միոյ որ
յերկնաւոր ծորեցաւ հրոյ ընդէր, որ հիացուցեալ
պակուցանէր, բոցոյն ի խառս յաւդեցեալոյ սոմ-
բակ լսողացն. քան զասացեալսն այսպէս լուսաւոր
յայտնապէս զոյգ ճշդութեացուցանէր նոցա, մինչ
զի տեսանել զայնոսիկ, առաւել քան լսել կարծել։
Եւ երաշխաւոր լինին բանիցս խնդոց աւրէնքն
յորում գրեալ է, «ամենայն ժողովուրդն տեսանէր
զձայնն». Երևելագոյնք են այսք, քանզի զնորդ-
կանն լսելի լինել դէպ եղև, զճշմարիտ աստուծոյն
ընդէր. քանզի որ ինչ միանգամ ասէ աստուած,
ոչ բայք են, այլ գործք, զորս աչք յառաջ քան
զականջս դասին։ Բայց սակայն ամենաբարւոք
և աստուածավայելուչ հրոյն ձայնն ասի ի դուրս
գալ, քանզի ճշդութեալ և առդի փարձեալ աստու-
ծոյ բանք զաւրէն ոսկւոյ հրով, և զեկուցանէ նը-
չանակաւ իմն այսպիսի։ Քանզի հրոյ է ինչ որ
առ լուսաւորիչ է, և է որ այրել բնաւորեալ է.
ոմանք աստուածահրամանացն արժանի արարեալք
զոլ հաստատեալք, իբրու յանծմանկ և յանսասուէր
կոյս[2] միշտ ժամանակ իւրեանց կեալ՝ զնոյն ինքն
զաւրէնս աստուծոյ ունելով յոլովջ, լուսաբեր լինե-
լով։ Իսկ որք միանգամ խեռ և ապաբասանք են,
այրելով և յանախ այրելով կատարեն ի ներքուստ
ցանկութիւնացն, որք զաւրէն բոցոյ գերեալ, աւե-
լեսոցն առ հասարակ զամենայն աստուծոյն կեա-
նքս։ Արդ որ ինչ միանգամ հարկաւոր էր յառա-
ջագոյն ազգել, այսարիկ են։ Բայց արդ ի նոյն ինքն
ի բանն[3] դառնալ է, և զամենայն՝ որ ինչ միան-
գամ ի սուտ է, քննել ի զանազանութիւն. իբրու
զի տան են, բաշխեաց ցերկուս հնդեակս, զորս

1. Միան ի լս. հրոյոյ։
2. ՁՈՅՆՆ. լս։
3. Ար. է նոյն ինն բանն դառնալ է։

յերկուս արձանս փարագրեաց. և մի հնգեակն, եբիցութեան հասաւ, իսկ միւսն երկրորդութեան արժանի եղև, եւ զեղեցիկ երկոքին և կենցաղաւորուք. բայն ճանապարհս և արքունի պղծուտայս միով կատարեաս յանդեալ, որք պատմեն առ անվթարութիւն ոգւոց, բաղձացեալք միշտ լաւագոյն գնացիցին։

Արդ որ լաւագոյն հնգեակն էր՝ այսպիսի ինչ էր։

Քաղաքս միապետութեան, որով միապետեալ լինի աշխարհս։

Քաղաքս դրաչելոց և պատկերաց, և առ հասարակ միանգամայն հաստելոց ինչ ձեռաստեղծից։

Քաղաքս ոչ առնուլ ի վերայ սնոտոց զաստուծոյ անունն։

Քաղաքս զտէրունական զեւթներեակն առնել աստուածավայելչաբար։

Քաղաքս ծնողաց պատուոյ, և առանձինն երկաքանչիւր ուժք ի նոցանէ, և երկոցունց հասարակ, զի իցեն միոյ գրոյ սկիզբն, և զաստուած, և զհայրն, և զարարիչն ամենայնի. իսկ կատարած՝ զծնաւոցս, որք նմանելով նոցա բնութեան՝ ծնանին զմանաւորսն։ Եւ միւս եան[1], զամենայն հրաժարմունն ունի յինքեան։ Ա. Շնութեանց։ Բ. Սպանման։ Գ. Գողութեանց։ Դ. Սուտ վկայութեանց։ Ե. Ցանկութեանց։ Բայց այդելի[2] է և խուզելի ամենայն ատելութեամբ բանիցն զիւրաքանչիւր որ. ոչ մի ինչ գործ առ գործով ի նոցանէն և վարկզարադի առնելով։ Սկիզբն լաւ և քաջ ամենայն էիցն աստուած է. և առաքինութեանց՝ բարեգործութիւն. յաղագս որոյ հարկաւորագոյն է յառաջագոյն անցանել բանիս. մեր ամն, ոչ փոքր զգազում մարդկան ազգ կալաւ իշխանութեամբ՝ յաղագս իրաց, որ կամ միայն, և կամ մանաւանդ առաւել էր վայելչաբար

1. Յոյն. πέντας հնբէ. իբր ե.ն։
2. Միան. —ելի։

և ի դէպ՝ անմոլար ոգւոյն՝ խրաքանչիւր ումեք ի միտս կառուցանել. քանզի ասատուածացուցին ամենեք զչորս սկզբունս, զերկիր և զջուր, և զաւդ և զհուր. և ոմանք զարեգակն և զլուսին, և զայլս զմոլորական, և զանմոլոր աստեղս. և ոմանք միայն զերկին. և ոմանք առ հասարակ զամենայն աշխարհ։ Իսկ ոմն զվերագոյն և զերիցագոյն ըզծնողն զիշխանն զմեծաքաղաքին՝ զդատարարն անյաղթ զաւրաց, զվարիչն որ մատակարարէ փրկութեամբ միշտ առ հասարակ զամենայն, ծածկեցին սուտ անուամբք կոչման ի վերայ նոցա զընելով. այլս, այլք։ Քանզի կոչեն ոմանք զերկիր. աղղիկ, Դիմետրայդդ[2]. և զծով՝ Պիսիդոնիայ. ծովային գեւս ընդ իշխանութեամբ նորա ստեղծանեն, և սպասաւորութեանն նորա ժողովս մեծամեծս, արուաց և իգաց. և աւդոյն[3] զաւդ. և զհուր՝ Հեփեստոսն. և արեգական[4], զվահագն. և լուսին զԱրտեմիս, և արուսեակ՝ զԱստղիկ. և փայլածող, զՀերմէս. և զայլոց աստեղաց զիւրաքանչիւր ուրուք զանուանեցն կոչմունս՝ առասպելագրացն ընձեռեցին. որք առ խաբեութիւն[5] պատրանաց լրսեկեաց գեղեցիկ արուեստակեալ ստեղծուածս ի միասին անկեալ թուեցան առ անուանեցն իրս, պայծառաբանք երևեալ, զերկին ի կիսագունդս երկուս բաժանեալ. է նորա որ ի վերայ երկրի է, և է որ ընդ երկրաւ, Արամազդայ մնեկունս կոչեցին, յաղագս մի զմիոյ հետաւոր կենացն նոցա արուեստաւ հնարեալք պատմութիւն։ Քանզի երկնի յանախաբար և անդադարապէս յաւէտ շուրջ հիւ գալով, հարկ է կիսագնդիցն երկաքանչիւր զբ ի նոցանէ հակառակ փոփոխութիւն ընդունել աւրըստաւրէ ի վեր և ի վայր եղեալ

1. Յոյնն. -ՆՈՐ-ԲԷՆ։
2. Յոյնն. ԴԵՄԵԹԷՐ։
3. Յոյնն. ἤραν τὸν ἄερα։
4. Յոյնն. -ԼԻՆ-ՆԷ։
5. Միւսն. — Ի ԽԱԲԵՈՒԹԻՒՆ։

որչափ թուել։ Քանզի ի վեր կամ՝ առ ի վայր, առ ճշմարտութիւն՝ ոչ մինչ է ի գնդի։ իսկ առ ի մեր ընդունելութիւնն մերձաւորութեանս, այս միայն սովորութիւն եղև ասել, որ գեր ի վերոյ գլխոյս է ի վեր և ի վայր, ընդդէմն։ Իսկ այժմ՝ որ խնամատարին առանց պիտակ տառութեան է, գիտուն և անենդ և մարթուր բարեպաշտութեան վերակացու է. գեղեցիկ և արժանագոյն պատմէ պատուիրանն, ոչ մինչ յաչխարհիս մատանց ինքնակալ ատուած կարծել զոչ։ Քանզի եղև. և ծնունդ՝ ապականութեան է սկիզբն։ զի թէպէտ և յառաջանամութեամբ աբարդին մեհանայցէ², և էր երբեմն ժամանակ յորժամ՝ ոչ էր։ իսկ ատուած յառաջագոյն ոչ էացեալ և ի ժամանակէ ուստեք եղեալ, և ոչ յաւետանալով ասել, չէ արժան. քանզի ունէք յաղագս ընտրութեան գատաստանի այսչափ հպարտութեամբ վարեցեալք են՝ մինչ զի ոչ միայն գատացեալս ատուած կարծեն, այլ և զիրաքանչիւր զի ինքեանէն մեծ և առաջին ատուած. զի էապէս ոչ գիտացեալք, անուսումն ընութեամբ, կամ՝ ոչ փութացեալք ուսանել՝ վասն յոչ մինչ արտաքոյ ըզգալեացն անտեսանելի և խնամայի պատճառ զոչ կարծել։ Համայն հաւատսի յաղագս մեծաս առաջի կայ հաւատս. քանզի հոգիս կելով մարդիկ և խորհելով, և զամենայն որ ինչ միմեանցմամ՝ ընդ մարդկային կենացս է գործելոցս և ոչ երբէք զոգիս՝ մարմնոյ ազատ տեսանել կարացին. և սակայն առատապէս պատուաէրք եղեն թենայն պատուասիրութեամբ, զի թերևս տեսանել կարիցէ ըզպատակերն գատաստաժամայելութեամբ ըստ աբրենակի փոփոխման գէպ էր ի միս առնալ զանեղն և զչանենաւորին կարծ[illegible]. որ զամենայն աչխարհս վարելով փրկութեան՝ իբրու զի ան-

2. Միան. հշդ-ռիկն։
1. Ի լ. որպէս և ի Մ. [illegible]։

տեսիլ է՝ ուղղեալ վարէ։ Արդ որպէս մեծի թագաւորին զպատիւ՝ եթէ զի հաղորդապետաց կամ սպարապետաց մատուցցէ, համարեալ եղեն ոչ միայն անզգամ և անխրատ, այլ և վտանգ զանձամբ առցէ, շնորհելով զանառնն ծառայից։ Նոյն աւրինակ եթէ զի ընդ սոսին այսոսիկ պատուիցէ զարարիչն ընդ արարեալս, գիտասցէ եթէ քան զամենայն ինչ անխորհրդականագոյն է և անիրատագոյն զոյս տալով անզգուիցս, ոչ ի պատիւ նուաստիցն, այլ ի քակտումն լաւին։ Լիեն որք առաւելեալ լինին ամենաբաստութեամբ, և ոչ ի զուգիցն անգամ մատուցանելով։ այլ և ոմանց զի զամենայն ինչ որ ինչ ի պատիւ է՝ շնորհէին, իսկ նմա և ոչ ինչ բնաւ ամենևին ոչ մատուցանեն, այլ և ոչ գյիշատակ դնասարակագոյնն։ քանզի մոռացանք են նոցա զոր միայն յիշել արժան էր, կամովին արարեալ զայս մոռացանս թշուառականքն։ և այլքն ըմբռնեալք ապականութեամբ, զոյոյս հաստատեն զոգոյն ի նոսա ամենաբաստութեան ի մէջ բերելով հայհոյել իշխեն զաստուածութիւնն, արեալք վատաթաւալ լեզուաւ, միանգամայն և արտամեցուցանել կամեցեալք զրարեպաշտսն։ յորս անպատում և առանց մխիթարութեան անդէն վարդապետի մնանէ սուգ, զրոյոր հրձիգ ատելոյ զոգիսն ի ձեռն ակնոցացն։ այն՝ որ զանարժանացն էաւ զբաղաքն։ այսինքն է, որով միայն զաստուածասէրսն ըմբերանեն, կարծեցուցանելով վասն ոչ զայրացուցանելոյ յարդեան ժամանակիս, լաւագոյն զլուսիլ Արդ զամենայն ինչ զայսպիսի բարբաջանս ի բաց մերժելով այնոցիկ որ եղբարքն են բնութեամբ, մի՝ զազգաւք երկիր, թէպէտ և մաքրագոյն և անմահագոյն բնութեան հասին։ զի թէ եղբարք միմեանց եղեալքս են, բան որում եղեն, վասն զի և հայր ամենեցունց մի, արարիչն, բոլորեցուն

1. Միան. —Նեալ։

է. այլ և մտաք և բանիւ և ամենայն գործութեամբ, անեղելոյն և մեծենաւորին, և բոլորեցան պատճառաց, յոյժ պնտութեամբ և գործութեամբ, ծղեա ի վերս ամբարձեալ յառաջ մտութեամբ. մի յորսայս լինելով, և մի՝ տեղի տալով բազմացն հաճութեան կամաց. յորոց և որք կարողն են ապրել, ապականեալք լինին։

Արդ առաջին պատուիրան, և պատուիրանացն տէրունագոյն հոչակեալ, արձանակեսցուք ի մեզ զմին զվերագոյնն համարել և պատուել զաստուած; իսկ բազմաստուած կարծիք, և ընդ ականջս մի՝ հարցի. սրբապէս և առանց նենգութեան առն սովորեցելոյ խնդրել զչմարտութիւն։ Այլ ոմանք արեգակա՞ն և լուսոյ, և առ հասարակ ամենայն երկնի և աշխարհի, և այնոցիկ որ ի նոսա բոլորովինց մնասնց, իբրու աստուծոյ սպասաւորք և պաշտաւնեայք յանցանեն։ Քանզի ի՞բր ոչ՝ զարբանեակս յառաջ քան զիշխանն նազելի և պարկեշտ համարին. բայց[2] զոյզն քան զայլսն անիրաւ են այնոքիկ որ փայտս և քարինս, և արծաթ և ոսկի, և զնման սոցա նիւթս կերպարանեն. որպէս սիրելի է իւրաքանչիւր ումեք ի նոցանէ։ Այս պատկերաց և դրաւելոց և այլոց ձեռաստեղծից, որոց ստեղծական և նկարագրական արարչութիւն, բաղում՝ ինչ ինքնակար կենաց մարդկան լցեալ աշխարհ[3]։ Քանզի զդեղեցիկ հաստատութիւն ոգւոց ի բաց հատին ընկեցին, զյաղագս մեկա կենդանւոյն աստուծոյ զարժանաւոր կարծիս, իբրու զանհաստատ և զանենցուկ նաւոյմակոյին։ շարժեալ դեղեացուցանեն այսր և անդր երերեալք յաւիտեան. և ոչ երբեք ի նաւահանգիստն անկանել, և ոչ ի ներքս դիմեալ հաստատապէս ճշմարտութեամբ կարացեալք. կու-

1. Մեան. [illegible]։
2. Մ. ոչ գոյն։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։

բացեալք յայն որ տեսանն արժանի է, առ որ միայն սրատեսիլ լինել հարկաւոր էր։ Եւ ինձ թուին քան զայնոսիկ[1] որոց երեսք մերկեալ կուրացեալք են, թշուառագոյն կեալ. քանզի նոքա տկամեալ միտեցան, կամ՝ տխտ ապաց գժուար կրեալք, և կամ՝ ի թշնամեաց դատեալք[2]։ իսկ սոքա կամաւոր բարուք՝ զաչս ոչոց ոչ միայն ընդ ազատատեսիլ արարին, այլ և ամենեին ի բաց ընկենուլ արժանի արարին. ուստի ոմանց զզարմութիւն իբրու թշուառացելոց, և ոմանց պատիւք պատուհասից իբրու չարաց գնեալ երթման յիրաւի։ որք հանդերձ այլովք և ոչ զայն որ առձեռն պատրաստագոյն ընդ միտ ածեն[3]. զոր անգամ և մնուակ ոգայ ծանեալ արդեւք։ Քանզի որ զի յարուեստագիտէն գործեցան, աբուեստագէտն լաւագոյն է և ժամանակաւք. քանզի իրիցագոյն է. և աւրինակ իմն արարիչոյն հայր և զաւրութիւն. քանզի որ առնէն, քան զայն՝ որ կրէն, փառաւորագոյն է. և պարտ էր՝ զի արդեւք եթէ[4] մեղանչէին, զնոսն ինքն զկենդանագիրսն և պատկերագործսն առաւելութեամբ պատուոյ ստուգագոյնս ցանել։ Արդ զսուտ բարձին թոցին սեներեալս, ոչ ինչ աւելիս[5] մատուցեալ։ իսկ զայնսն՝ որ ի նոցանէն գործեցան ըստեղծուածքն և կենդանագրածսն[6] ստուգագոյս հաստատեցան։ Եւ քանզի արուեստագէտքն բազմամանգամ զէպ է զի ցակամեալք և թշուառակաւք ծերացան՝ ի բազում թշուառութեան մեռեալք. իսկ որ յարուեստագիտէն գործեցան, ծիրանեալք

1. Ի լ. զայնոսիկ։
2. Մ. չուտի Լ կամ ի ընդհանուր գոնէ։
3. Մ. չիրուն։
4. Մ. թէն։
5. Մ. չուտի էրն։
6. Մ. ենկենդանագրածսն։
7. Յոր և ի Մ. ի լ. զայն։
8. Մ. կենդանագրածն։

և սակով և այլոք բազմապատիկ զանազանութեամբք, զոր մեծութիւնն մատուցանէ, նազելի պարկեշտ լինի սպասաւորութիւն. և պաշտաւն ընդունի ոչ յանազատաց[1] միայն, այլ և յազատատոհմիկ գաւառաց և ի գեղեցկամարմնոց։ Քանզի և քահանայիցն ազգ հարցափորձեալ լինի ամենայն ստուգութեամբ՝ եթէ անբասիրա է, և հասարակութիւն մարմնոյ մատանց, եթէ առ հասարակ ամենայն ամրողջ է, և չեւ ևս է այս գրժնեալ, և սակայն դժնեայ է. այլ այն ամենագժոխ է[2]։ Քանզի ահա գիտեմ զմանս յարաբոզացն ի նոցանէն եղելոց՝ և ազաւթս մատուցանեն, զենլիս պատարագս, որոց կարի յոյժ լաւ էր, երկաքանչիւր ձեռացն երկրպագութիւն մատուցանել։ Զայս թէ ոչ կամէին, յինքնաիրութենէ փառաց փախուցեալք, գոնէ ուռանց և սալից և գրոցաց, և կարակնաց, և այլոց գործեացն, ի ձեռն որոց կերպարանեցան նիւթքն։ Եւ սակայն առ այնոսիկ որ այսպէսն են, հպարտութեամբ վիսացեալք, արժան է համարձակութեամբ[3] բերելով ասել. ազաւթք լաւք դէպ եղև գոլ, ոչ քաջք. և կատարած բարեփառութեան առ յաստուածն նմանութիւն. ըղձացարուք և դուք ազաւթիւք նմանել պատկերացն, զի զվերնագոյն բարեփառութեանցն համարեսջիք պատուս, աչաւք ոչ տեսանելով, ականջաւք ոչ լսելով, ոնգամբք ոչ շնչելով և ոչ հոտոտելով. բերանով ոչ ճաշնելով և ոչ ճաշակելով, ձեռաւք ոչ առնելով և ոչ տալով. ոտիւք ոչ գնալով, և ոչ այլով իւիք մատանց գործելով. այլ իբրև յարգելան տաճարի զգուշութեամբ պահպանեցեալք ի տուէ և ի գիշերի, զայն որ ի վենեալ պատարագս միշտ ծուխս ելանէ յինքեանս կորդելով։ Քանզի մի այս միայն բարի է որ ստեղծանի ընդ պատկերսն. այլ ևս

1. Միւսն. ոչ յազատաց՝ որպէս և ի յոյն բնագրին։
2. Մ. զոր զի զինքն դժոխ է։
3. Մ. համարձակութիւն։

կարծեմ՝ զայսոսիկ լսելով, ոչ իբրև յաղուիս, այլ իբրև ի լոյս և ի նեղմանս անապատակել, և դառնալ ի բարբասանս առ վրէժխնդրութեան հակառակ ասոխ լինել[1]. որ մեծ և սոյզ նշանակ արդեաւ իցէ, վեր ի վերոյ ամենաբաւութեան մարդկան. աստուածս համարին, որոց նմանք լինել բնութեամբ ի բաց հրաժարեն. Արդ մի՝ որ զոր շունչ ունիցի, անշնչաւորի ուիկք երկիր պագցէ. քանզի կարի յոյժ յիմար անտեղեացն է, բնութեանն գործոց առ սպասաւորութիւն դառնալ ձեռաստեղծիցն, եգիպտացւոց՝ ոչ միայն հասարակ ամբաստանութեան արժանի աշխարհի ամենայնի, այլ միւս ևս զատ առանձինն ի վերայ ածէ յիրաւի։ Քանզի ի վերայ գրաւելոցն ևս և պատկերաց, և անասունն կենդանիս ևս ածեալ մուծին յաստուածոց պատիւս. ցուլս և խոյս և քաչա[2], ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի սոցանէն առասպելական իմն ստեղծուած արուեստաւ կազմեալ։ Եւ այսոքիկ թերևս ունին ինչ բան. քանզի ընտանիք և ազգատակարագոյնք են կենցաղոյս. քանզի երկրագործ եղն, ակաս պատառելով ի ժամանակի սերմնանահանութեան, և կասուլ գարձեալ, յորժամ պէտք լիցին զարմանս մանրեր[3], զաբաւորագոյն է խոյ. քաղ՝ զդեղեցիկ գծածկութիւնն գնանդերձ մատուցանել. քանզի մերկ մարմինքն դիւրաւ ապականեալ լինէին, կամ առ անչափ ջերմութեան կամ՝ ցրտութեան[4]. է երբեմն յարեգական կիզմանէ, և երբէք յաղագայն ցրտութենէ։ Իսկ արդ այժմ առաւել զանցուցանելով, և զանընտանեացն զվայրենագունաւքն, և զանձեռնընդելիքն զառաւծաք և զկոկորդիլսաիք. և ի սոցնոց զթունարեր զիմն պատուն մեհենիւք և որոշեալ բագնաւք, և զենդի պատարա-

1. Միւսն. ԷՆԴԵԼ
2. Մ. ի բնագրին ԽՈՒ. իսկ ի լ. ԽՈՒՇ։
3. Ի լ. որպէս և Մ. ի լ. Հարբեալ. այսպէս ունի և յոյնն։
4. Մ. — ՅՐՏՈՒԹԵՆ։

գաւք, և ամենաժողով տանիք, և շրջածայուցիկ[1] զոմփեթեանքք և նմանեաք։ Քանզի յերկաքանչիւր ումեքք այնոցիկ որ ի պէս տուան մարդկան յաստուծոյ, յերկրէ և ի ջրոյ, խոյզ արկանեալ զնեղեալ զայրենագոյնն. զի ոչ ի ցամաքայնոց քան զառեւծ ինչ, գազանագոյն գոյն, և ոչ քան զկոկորդիլոս ի ջրայնոց վայրենագոյն, զորս պաշտեն և պատուեն։ Բայց բազում և այլ կենդանիս, չունս, կուզ, գայլս և թռչունս՝ ի բիրդս, բազէս։ Եւ դարձեալ ի ձկանց, կամ զամենայն մարմինս, և կամ մասունս ի նոցանէ աստուածացուցին. որոց զի՞նչ ինչ այլ լիցի ծաղրագոյն, և ատաբացն որք նախ առաջին յեգիպտոս հասանեն. յառաջ մինչ չի զիբեանց զդաւառին մրրկեալ յիմարութիւն պատմեալ, մնաւք մեռանին ծաղր առնելով։ Իսկ որք յետոյիոյ խրատուէ ճաչակեցին, ընդ անպանծալի իբրն նեղարարութիւնն հիանալով գթան ողորմելով այնոցիկ որք այնու վարին. թշուառագոյնս որպէս ի գէպ է և վայել է կարծեցեալք, եղ նոցա քան զպատուեալսն, փոխելով յայն զոգիսն, իբր[2] մարդատեսիլք գազանք շուրջ գալ թուել։

Արդ ի բաց բառնալով սէրունեան աւրէնադրութեամբքն զամենայն զայսպիսի աստուածարարութիւն, ի ճշմարիտ էութիւնն աստուծոյ կոչեաց, յիւր պատուոյ ոչ կարաւոեալ։ Քանզի ոչ թէ այլում ումեք կարաւոր էր որ ինքեամբն է բառական, բայց կամեցեալ զազգս մարդկան ընդ անճանապարհս մոլորեալ յանմոլար հանել ճանապարհն. զի զհետ երթալով բնութեանն, զլաւն գտցէ ճանապարհն[3]. զհանճարգիտութիւն զկին էապէս, որ է առաջին բարին և կատարելագոյն, յորմէ զարէն աղբեր սոռոգեալ լինի աշխարհս, և որ ի սմա մնանուր բարիքն են։

1. Ամն. շրջ-ծ-ուկ։
2. Ա. իբրս։
3. Յոր. ի լ. կոտորած. իսկ Ա. ի բնագրին՝ կոտորած. և ի լ. ճանապարհ։

խաւսեցեալ և յաղագս երկրորդ խրատուն որչափ հնար և կար էր, որ յետ այսորիկ զհետ գայ, մի բան միջէ ասուգեսցուք։ Եւ է, մի՝ առնուլ զանուն ասատուծոյ ի վերայ մեռուոց։ Արդ կարդին ծանուցի այնոցիկ որ մնաւք սուրբ տեսանեն. քանզի անուն մէջտ երկրորդ սուրբագրելոյ՝ իբրեւ՝ ասուտերի նման որ զհետ երթայ մարմնոյ։ Արդ ասացեալ յառաջագոյն յաղագս գոյութեանն և պատուոյ և միջտ էին, զհետ երթեալ ի կարգի ընդերկրեալն՝ զմայելուլն և յաղագս կոչման անդէն վաղվաղակի պատուիրեաց. քանզի բազմաբինակք են և բազմատեսիլք որք առ այս մասն՝ մարդկան մեղանչն։ Արդ զեղեցիկ և կենցաղատկարաւորն և յարմարելի բանական բնութեան, աներդումին. այպէս ճշմարտախաւսել ի վերայ իւրաքանչիւր իրիք ուսեալ, մինչ զի զբանն՝ երդմունս գոլ համարել. և երկրորդ սաեն նուաւրկութիւն, արդարն երդնուլ։ Քանզի ահա որ երդնուն, յանհաւատութիւն կարծիս տայ². յաղագոյ եղեցի և հեղգ և յամր. զի թերեւս հնար լեցի պղերգութեամբ հեղգալոյ՝ ի բաց մերժել զերդումն։ Ապա եթէ հարկ ինչ բանադատեսցէ, այց առնելի է ոչ վարկպարաւի զիւրաքանչիւր զբ որ ի նմանն կայ. քանզի իրն ոչ է փարբ. զի թէպէտ և սովորութեամբ քամնի, քանզի վկայութիւն է ասատուծոյ, զի յաղագրս կաղակարծիլի³ իրաց է երդումն. և վկայ կոչել ի վերայ ասի զասատուած, անարժանագոյն պղծութիւն է։ Արդ եկ եթէ կամիս բանիւս և յառեալ հայեաց այնց որ հանդերձեալն է երդնուլ ի վերայ սոց ի միասն. քանզի տեսցես զնա ոչ խաղաղացեալ, այլ խուճապիւ և խռովութեամբ զի ամխատանեալ, և զամենայն թշնամանս և հայ-

1. Միան. ԱԲՐԳԵՐԵԼՈՅ՝ որպէս ունի և յոյնն։
2. Մ. ի լա. գրեն։
3. Յօր ի լա. ԿԱՂԱԿԱՐԾԵԼԻ։

հոգութիւնս կրեալ։ Քանզի որ իւրաքանչիւր ոգւոյ[1] ընտանութեալ և ընակիչ է յանդիմանութիւն, ոչ ինչ սովորեալ ընդունել ի պատճառաց ի բաղդից, չարատեաց և առաքինասէր միշտ վարելով ընութեամբ. ամբաստանաւոր, միանգամայն և դատաւոր ինքն է զարթուցեալ, իբրև զամբաստանաւոր պատճառս բազդատանց ի վերայ է. ուստի լինի, յամենայն առնէ։ Եւ զարթեալ իբրև զդատաւոր ուսուցանէ, միտս դնէ, խրատ տայ փոխել. քանզի եթէ զուրեացէ հաւանեցուցանել, խնդութեամբ հաշտի. և ոչ կարացեալ, անդաստանց խարազութեան և անհամբոյր լինի, պատերազմ տայ, խռովի. ոչ ի տուէ և ոչ ի գիշերի ի բաց կացեալ. այլ խթելով և խոցոտելով առանց բժշկութեան, մինչև զիշատական զնրզվեալ կեանսն[2] ի բաց հատեալ ընկեցէ։ Զինչ ասես, ասացուք առ ատերդումին. իշխեցեալս ումեք քոյց ծանութենէ ասել մերձեցեալ ով դու, զոր ոչ տեսեր և ոչ լուար, իբր զտեսեալ իբր զլուեալ, իբր զհետ երթեալ, ամենայնի այսց հատեալ, ինձ վկայեա։ Վասն զի ես ոչ կարծեմ[3]. քանզի անբոյժ մոլութեան[5] գործ է. ապա թէ ոչ որովք աչաք լուրջ և զգաստ, և քեզ թուելով գոլ յանդիմանն տեսանելով[4] զսիրելին ասասցես, վասն ընկերութեան անիրաւ գործեա, անեիրաւեա, ամենաբշտեա ընդ խ։ Քանզի յայտ է եթէ զայս լուիցէ, բազում խնդալ ասացեալ ընկերութեանն կարծեցեալում, և վատթարեալ զնրն զի իսկզբանէ իսկ ընդ այսպիսում առն սիրով միաբանեցաւ, ի բաց վաղեսցէ իբր ի գազանէ վայրենացելոյ և կատաղեցելոյ։ Ապա առ որս և զսիրելին ածել չիշխեսցես, յայն զատաւած վկայ կոչելով ոչ չիկնես, զնայրն և զիշխան առաջնորդն աչխարհի։ Իսկ արդ

1. Յօր. և ի Մ. ի լ. ոգոյ։
2. Մ. է. ոչ կրէ։
3. Մ. մարդ-հեան։
4. Մ. յանդիմն անդանելով։

արդեւք գիտել՝ թէ զամենայն տեսանէ, և ամենեցունցն լսէ, թէ զայս ոչ գիտես, զի եթէ անպէտ ես, անասուած ումն ես. և ազբեւր ամենայն անիրաւութեանց անասուածութիւն է, և առ անասուածութիւն՝ և տեղեւս զերգումն. երգնլով յայն որ ոչն հայի, իբրու թէ խնամածու է մարդկային իրաց. ապա թէ զի խնամիչ է, յայտնապէս գիտայ, զառաւելութիւն ինչ ամենարչաւութեան ոչ թողեր, ասելով. զի թէպէտ և ոչ բերանով և լեզուով, այլ գոնէ մտաց գիտութեամբ առ աստուած զուսան ինձ վկայեա, չարագործակից լեր. գիւրագործակից լեր. մի ինձ առ մարդիկ քաջ լինելոյ[2] յոյս կայ. ծածկել զքեզ զնչմարաւութիւն. յաղագս այլոյ չար լեր. յաղագս վատթարի որ լաւագոյնն է, յաղագս մարդոյ. և զայս՝ չարի և գժնեի, աստուած որ քանզ զամենայն առաքինի և լաւ է. Եւ են ոմանք որ չեն ինչ չահելոց. և սովոր չարութեամբ և անցագ, և երդմնայեզց. և առանց քննելոյ երդնուլ ի վերայ զնչ և պատահիցէն. զի ոչ ուրաք երկմտեցելոյ, և ոչ յերկբայս եղելոյ ամենեին. զի է ինչ զի գիւրանց ի բանին լնուն երդմամբք, իբրու թէ ոչ լաւ է ընդհատ հատուցն բայիցս[3]. տիրա, առաւել և անձայնութիւն կրել ամենեին. քանզի բուսանի յերդմնատիրութենէն առերդմնութիւն որ և ամենարբչաւութիւն. վասն որոյ պարտ է որ հանդերձեալն է երդնուլ՝ զամենայն ինչ խնամարար ի հարց արկանել, և յոյժ առաւելապէս զիրան. Զի եթէ կարի մեծ է, և եթէ եղև արդարն՝ և եթէ գործեցեալ՝ եհատ հատատատն ի վերայ նորա, եթէ մեքաւր է ոգւով և մարմնով՝ և լեզուով, զոմն յանաւրէնութենէ, և զոմն ի ծիութենէ[5]

1. Միան. գիտելոյ։
2. Մ. լինել։
3. Մ. [illegible]։
4. Մ. [illegible]։
5. Ի լ. [illegible], որպէս ունի Մ։

զմն ի հայհոյութիւնէ. քանզի ոչ է արժան ի ձեռն որոյ բերանոյ տէրունական անուն ի դուռս դոյ, ի ձեռն սուրա բարբառել ինչ ամենեցուն. և զնենցէ զտեղին և զժամանակ դէպ։ Քանզի ահա գիտեմ զմնաս, ի խեղ և յանմանրուր վայրս, յորս ոչ հարբ, այլ և ոչ առաքացրն ծերոց ումեք բարեաց կեցելոց արժան է յիշատակ առնել երդնելոյ՝ և զբոլոր ճառսն երդմամբ ընդելուզանելով, սասուծոյն բազմանութեամբ պիտակաւոր վարեցեալ անուամբ։ սատ՝ ուր ոչ է արժան, առ ամենարշտութիւն։ իսկ սա զառաջին ասացեալսն քանհնարաւոր ընդունելով գիտասցէ զինքն զի փիծ է և անմաքուր. զի թերեւս մեծամեծք պատիժք պատուհասից ի վերայ նորա ածին, վերակացուին և անկանուին։ մարդկային դատաստանի առանց յեղլոյ, և առանց մխիթարութեան, ի վերայ այսպէս մեծամեծ անիրաւութեանց եղելոյ. զոր զի յորժամ ոչ նոյնժամայն ի բաց խլել ընկենուլ արժանի առնէ՝ առաջի բազմաց փոխ տալ երևեցաւ զպատիժն, զի յորժամ եղիցի ժամանակ, ի վերատին հատուցանէ հանդերձ հասարակաց ուգտիւք[1]։

Չորրորդ է պատուերան վասն տէրունական եւթներեկին, զի սրբութեամբ և արժանաւորութեամբ արասցին զնա։ Քանզի ոմանք ի քաղաքաց տուեալ առնեն մի անգամ յամենան, յրատատուածն նոր բանութեան թուելով. իսկ երբայեցւոցն ազգն, յանխոտապէս՝ մինչ վեց թուելով[2]։ Եւ բան է ի գիրքս անկեալ յրատ մոմսեսանն աշխարհագործութեան, որ ունի յինքեան հարկաւոր պատճառս. քանզի ի վեց աւուրս ասէ հատատատել զաշխարհ, և յեւթներորդումն գադարել ի գործոցն զատուտած, սկսանել զեղեալն բարւոք տեսանել։ Արդ հրամայեաց և որք յայսմ կելոց են ի քաղաքա-

1. Միւսն. ֆոխ։
2. Մ. ի լս. ֆոգլով։

վարութեան, որպէս յայլսն և բան այսմ երթայ զՀետ ասասուծոյ։ ի գործ երթայ զվնցան, և գաղարել յեւթներորդումն, և խնստասէր լինելով և տեսակամբ բնութեամբ պարապեալք. և այցելութիւն առնել որ ինչ ոչ մաքրապէս յառաջինն գործեցաւ հանմարս և պարտս, որոց ասացին կամ գործեցին յինքանց առնլով ոգւոյն խորհրդարանի ժողովակից լինելով և հարցանելով՝ ընդ աւրէնս, յանաւս եղելոցն ուղղութիւն, և առ յոյ միւանդամ մեղանչել յառաջագոյն պահպանութիւն։ Այլ ասասուած միա՛ղամ վարեցաւ վեցիւքն ի պէտ՝ առ յաշխարհիս կատարելութիւն՝ երկայնութեան ժամանակի ոչ կարաւատացեալ։ Իսկ ի մարդկանէ իւրաքանչիւր որ իրրն մեղկանացու բնութեան հասեալ, և բաղում իւրաց կարաւատ է առ հարկաւորսն կենացն պէտս, ոչ է պարտ դանդաղել հնարել դասանել իւր պէտսն՝ մինչ ի կատարած կենաց, հանդչելով ի տէրութեան եւթներեակն։ Իսկ արդ ո՞չ է զեղեցիկ խրատ՝ արդեաք, և առ ամենայն առաքինութիւն բաւականագոյն յորդորել և առաւելապէս բարեպաշտութիւն. զՀետ երթ, ասէ, միւռ. ցոյց սահմանի ժամանակ եղիցի քեզ գործոյ վեցերեակն, չափ բաւականագոյն յորում զաշխարհ առնէր, և ցոյց յորում պարտ է խնստասէր լինել եւթներեակն, յորում տեսանել տալ զոր գործեացն, որպէս զի և դու տեսանիցես զբնութեանս և զքոյն, որ միանգամ երթայ առ ի բարեփառութիւն։ Արդ զայսպիսի սկզբնատիպ քաջ կենացն՝ գործականին և տեսականին՝ մի զանց արասցուք. այլ միւսն ի նա հայելով՝ յայտնի կերպարանս և տիպս՝ ի մերում տիպս

1. Միւռ. չանի Ի հարցանելով։
2. Մ. քեզ։
3. Մ. Իրաց։
4. Ի լ. գրդ. զոր միւս օրինակն ունի ի բնագրին, և ի լ. զրէ գրդ. յոյնն՝ գրդ։

գծեալ կերպարանեսցուք. նմանեսցուցանելով որպէս հնար է մահկանացու բնութեան ընդ անմահին, բան ասելն և բան գործելն՝ որպէս արժան է։ Զիարդ ասէ ի վեց աւուրս լինել զաշխարհս յաստուծոյ յայտնանէ՝ որ ոչ ժամանակաց է յառնելն կարաւտացեալ, զեկուցեալ է ի ձեռն այսպարանեցեալոցն յայլում՝ տեղիս։ Բայց սակայն յառաջահասութեանն որում՝ յէն եւթներեակն արժանի եղեալ, յայս առնեն որք յաստուծականութեան գեղերին խնամարար յոյժ, և հոգ յանձին եղեալ քննեցին զնա։ Քանզի է սա որ ի թիւն կոյս է, անմոյրն բնութիւն, որ միակին է ընտանեգոյն, և սկզբնատեսիլ մերթակացն, և ի վերայ անմոյրդ գնդին միակին. քանզի ի միակին և յեւթներեակին անմարմին երկինն՝ է ցոյց աւրինակի տեսանելոյս. և կառուցաւ երկին յանրաժանելի բնութենէն և ի բաժանելւոյ։ Քանզի անբաժանելին զառաջինն և զվերագոյն և զանմոյրս շրջաբերութիւն ընկալաւ, զոր միակն ի վերայ այցելու է, իսկ բաժանելին՝ զայն որ զաւրութեամբ և գասիւ երկրորդն, որոյ ակնածու է եւթներեակն, որ ի վեց բաժանեալ զայնս որք կոչին զեւթնամոյրակսն գործեաց. ոչ վասն զի մոյրեալ ինչ գոյ յերկնի, ասաուածայնն և երջանիկ և բարեբախտութեան բնութեան քաջութեան կցորդութիւն ընկալելոց, որոց ամենեցուն անմոյրն ընտանեգոյն է։ Արդ զայն որ Նմանութեամբ զնոյնութիւն ամրողջ պահեն, յերկարանայ յաւէտ, և ոչ մի ինչ ոչ ընդունելով յեղյեղումն և փոխարումբն. այլ թէպէտ՝ և չուրջ գոյ ընդդիմնարար, անբաժանելոյ և արտաքսագոյն գնդին, մոյրակք անուանեցան ոչ տիրարար, այլ ի վայրապար մարդկանէ, որք զիրեանց մոյրութիւնն՝ յերկնաւորացն ի վերայ համարէին. որք զաստուածային զաւրուն կարդ ոչ երբեք թողուն։ Արդ

1. Միան. տալ ի Ինդեր Ե։

վան այնորիկ աւելագոյն[1] պատուեալ է եւ մեծեալ. և ոչ ի վերայ միոյ ուրուք այսպէս նոխաբաշխութեան[2] հասաւ[3] քան զայն որ մանաւանդ արարիչն[4] հայրն բոլորեցուն[5] երևել նոսա. քանզի երբև ի ձեռն հայրենոյ ոչաւք տեսանել միաք զատաւած, և առնելով և աշխարհագործելով, բոլորեցուն այցելու լինելով.

Եւ յետ այն որ յաղագս եւթներեկին է, պատուիրէ զհինգերորդ պատուիրանն, յաղագս ծընողաց պատուոյ, դասս նմա տուեալ զմիւսասնմանն երկրորդուն հինգեկացն[6]. քանզի ի վախճանի է առաջնոյն, որում տէրունազոյնքն հրամայեալ լինին. խառն է և ընդ երկրորդն որ ունի յինքեան զառ ի մարդիկ արդարակս. և պատճառք են որպէս կարծեմ այս. ծնողացն բնութիւն, անմահի և մահկանացուի բնութեան եւ բեւեցաւ եղ միջասահման. մահկանացուի, վասն առ մարդիկ և առ այլ կենդանիս ազգակցութեան, վասն ապականութեան մարմնոյն. և անմահի վասն ծնանելոյ, և առ աստուած ծնաւղն բոլորեցուն նմանութեան: Արդ ահա ունիք միաւսմ մասինն ի վիճակի եդեալ զոսոա, կամ եղև զմիւսոյն ևս անփոյթ առնել. քանզի անապական աւլքցեալք զարբեպաշտութեան փափագումն, բաղում խնդալ ասացեալք այլոց իրացն, զամենայն զիւբեանց զկեանս նուիրեցին սպասաւորութեան աստուծոյ: Եւ ունիք ոչ ինչ արտաքոյ քան առ մարդիկ արդարակացն բարի ինչ կարծեցին գոլ, միայն զառ մարդիկ հանդիպութեան[7] ժողովոց խրն-

1. Միւսն —————ելոյթն:
2. Մ. Նոխաչխոմիթն:
3. Մ. ի լս. հարան:
4. Մ. արարչն և հայրն:
5. Մ. Բոլորեցուն այցելու լինելով: Եւ յետ այնորիկ յաղթեալ եմինեալին է:
6. Մ. հնգեկոց:
7. Մ. հանդիպոցութեան:

գութեամբ ընկալան. զբարեացն պէտս զոյգ ա-
մենեցուն մատուցանելով, վասն հասարակա-
թեան բաղձանաց, և զդժեալ ըստ կարի թե-
թեացուցանել արժանի համարեալ։ Արդ զոսա
մարդասէրս, իսկ զառաջինս ասատուածասէրս յի-
բաւի զք ասիցէ, ի կիսակատարս յառաքինու-
թենէ։ Քանզի ամրողջ են որ երկրաւորք քոյք
եղեն. իսկ որք միանգամ ոչ առ մարդիկ հար-
կանին՝ ենդացեալք հեշտութեամբ ի վերայ հա-
սարակ բարեաց՝ և գժուարեալք ի վերայ ընդ-
դիմակացն, ոչ բարեպաշտութեան և արժանաւո-
րութեան փոյթ արարեալ բուռն հարին, փոփո-
խեալ թուեսցին սրա ի գազանաց բնութիւն. որոց
զվայրենութեանն երթեալ տարցին զերիցութիւ-
նըս[2], որք զծնողսն արհամարհեցին, երկուցանց
մասանց թշնամիք են. և առ յաստուած և առ
մարդիկ։ Արդ յերկոսին ատեանս որ միայ՝ է ի
բնութեանս, մի՝ անդէաք լիցին բմբռնեալք ամ-
պարշտութեամբ. յաստուծոյն, վասն զի զրոս յոչ-
ընչէն յինչ էած, և բոռ այսմիկ նմանեալք ա-
ստուծոյ, ոչ բուռն հարեալք զհետ երթան. և մար-
դասեցութեան, որ բոռ մարդկան է. քանզի ոմ՝
այլում ումեք բարի արասցեն որք զազգակիցսն և
որք մեծամեծսն մատուցին նոցա պարգևս անար-
գեալ քամահեցին. որոց ոմանք վասն յոյժ առա-
ւելագանութեանն և ոչ հատուցումն համարին հը-
նարս ընդունել։ Քանզի զնարդ ծնեալն փոխանակ
ծնանել կարէ զսերմնաւորսն. զի վիճակ առան-
ձինն, բնութեանն հնարհելոյ առ որդիս ծնողացն՝
ի փոխանակ հատուցումն գալոյ ոչ կարացելոյ՝.
ուստի և յոյժ պարտ է անազդակել. զի եթէ ոչ
զամենայն փոխանակ հատուցանել կարացեալք, և
ոչ թեթեւագոյն կամեսցի. որոց յիրաւի ասացիս,

1. Միան. հոգոյնն։
2. Մ. գերեզ--ինն։
3. Մ. կրոցելոց. իսկ ի լս. կրոցելոյ։
4. Մ. -նուզ--նել։

գազանս ի մարդկանէ ընտանենալ պարտ է. և բազում անգամ գիտացի ընտանեցեալս առեւծս, ինձս, արջս, ոչ միայն առ կերակրարանն վասն հարկաւորացն չնորհի, այլ և առ պլսն. վասն որպէս ինձ թուի, առ նոսայն նմանութեան. քանզի բարի է միշտ զհետ բարին վարիցուն երթալ բաւ լինելով. Արդ այժմ՝ հարկեցայց զընդէմնն ասել. նմանն գազանաց ունոց մարդիկ լինել, զի աւգտակարացն փոխանակ ուշտաս առնել այնք գիտանն և խրատեալ է. չունք անպարտ պաշտպանք լինին, և յառաջագոյն ի վերայ տերանցն մեռանին. յորժամ յեղակարծս մինչ վասնզ ի վերայ հասցէ, և զոյնասիկ որ ի հաւատն են՝ յառաջագոյն մարանչելով ի վերայ պաճարացն, մինչ ի յաղթութիւն կամ ի մահ կալ մնայ վասն ողջ պահելոյ և անվնասս զհաւատերէցսն։ Արդ ոչ է ամենեցուն և գարչելի ի չնորհաց փոխանակս նուազանալ մարդոյ քան զշուն, գազանացն յանգրգնադունին ընտանեգոյնս կենդանի։ Այլ եթէ ոչ ցամաքայնովքս ուսեալք լինիմք, առ թռչուն և ուղղանաց երթիցուք ընութիւն, զոր ինչ պարտ է ի նմանէն ուսցուք։ Արագաց որ ծերունիքն են, անդէն կան մնան ի բոյնս, ոչ կարացեալք թռչել. և սոցա ձագք՝ սակաւ ինչ կարաւտ եմ ցուցանել, ի վերայ երկրի և ծոմս թռչելով, ամենայն ուստեք պաճարեն՝ չահ ծնողացն ի սպասս, և ունեալք ըստ արժանի հասակին ընտանեցուցանելով յանենանան առատութեան կեան, ամենայնիւ ուրախ լինելով. և ունեալ ի զգեստս չահիցն աչխատութիւնս թեթեւացուցանելով բարեպաչան լինել, և ակն ունել ի ծերութեան ընդեղոյս կրել ի ծնողացն հարկաւորապէս՝ փոխանակ

1. Միւսն. ի հաւատն են ասին։
2. Մ. կենդանին։
3. Յոր. ի բ. հանրին։
4. Յորինակին ուղղէ հարկաւորապէս. յոյն բնագիրն հարկաւոր պարտ։

հատուցանել ի դէպ ժամանակի. և ընդունելով զայս և փոխանակ հատուցանելոյ, յայնժամ յորժամ և ոչ մի ոք ի նոցանէն զանձինս կերակրել կարիցեն, մանկունք ի սկզբանէ ծնունդեան, և ծընողքն ի վախճանի կենաց. վասն որոյ ինքնաւարժ բնութեամբ ձագանեալք ծերարոյծք լինին խնդալով։ Արդ ո՞չ արժան է արդեւք ի վերայ այսոցիկ զմարդիկ, որք միանգամ զի ծնողացն փոյթ ոչ առնեն՝ սուգանել, և վատթարել զանձինս արհամարհելով, որոց կամ միայնից, կամ յառաջ քան այլոցն հարկաւոր էր հոգ տանել, և զայս ոչ տային առատով՝ քան թէ հատուցանէին։ Քանզի մանկանց, ոչ ինչ է առանձինն՝ որ ոչ ծնողացն է, կամ ընդուստ՝ տալով, և կամ պատճառս ընդունելութեան մատուցանելով։ իսկ բարեպաշտութիւն և արժանաւորութիւն, զառաքինութեան առաջնակս, իսկ արդ արդեւք ի ներքքս սահմանի ունիցին ոգւոցն։ Արդ ահա ըզսուտ քան զսահմանս արտաքս վարեալ հարատեսցեն, քանզի աստուծոյ սպասաւորք առ ի յորդւոց սերումն ծնաւղքն։ իսկ որ զսպասաւորն անարգէ, անարգէ՞ ընդ նմին և զառաջին իշխանն, զայնոսիկ որ կարի համարձակագոյնն է, ոչ մեծարելով զծնողացն պատիւ։ Այսն սանկք թէ ապաքէն հայր և մայր, երեւելի աստուածք են, նմանեալք անեղին ի կենդանատուութեան, այլ սակայն նա աշխարհիս է աստուած, իսկ նոքա միայն այնոցիկ զոր ծնանեն։ Բայց անհնար է բարեպաշտիկ անտեսանելոյն՝ յայնցանէ որք յերեւելիսն և ի մատաան սմբարշանն։

Այսչափ և յաղագս ծնողացն պատուոյ խնամութեամբ խաւսեցեալ, կատարած ի վերայ գնէ միւսոյ ևս՝ տէրունեագոյն հինգերեկին. և զմիւս ևս

1. Ի լա. ընդուստ դալով, որպէս ունի և Մ.։
2. Մ. փոյթն ոչ։
3. Մ. յունի ՀՆարքին։
4. Մ. Խ-- Խ-։

գրեալ սր ունի յիշեցեան հրաժարումն այնոցիկ որ առ մարդիկ է։ Ի չնութենէ սկսանի ի մեծ անբարութեանց զայս զոլ կարծեցեալ. քանզի նախ առաջին ապրեալ ունի հեշտասէր ցանկութեան, որ և զմարմինսն բեկբեկէ զառացողացն, և զոգւոցն զպնդութիւնս լուծանէ, և զմեծամեծ ժառանգութիւնս՝ ապականէ զամենայն գաւրէն անչէջ հրոյ յոր մխանգամ՝ մերձենայ հրձիգ առնելով, և ոչ ինչ ողջ թողլով որ բան մարդկային կենաց ինչ է։

Եւ ապա հաւանեցուցանէ զչունն, ոչ մեղանչել միայն, այլ և անիրաւակից լինել ևս ուսուցանէ, յանհաստակ իրս հաստակութիւն եղեալ։ Քանզի աւիւն մոլեգնութեան որ ըմբռնէ զոք, անհնար է կատարած առնուլ ի ձեռն մեոյ ուրուք բաղձութեանց, այլ պէտքն պահանջին ամենայն իրաւք երկուց հաստակագործել. ումեմն առաջնորդի, և ումեմն ծանաւթի կարգ ընկալեալ, առ ի գիջութեանց և յանժուժկալութեանց և պղծութեան՝ հաստատութիւն ամենայնի չարեաց։ Քանզի և ոչ զայս գոյ ասել, մարմնոյն միայն ապականել չընեացելոյ՝ կենալ, այլ եթէ արժան է զճշմարիտն ասել, ոգիքն յառաջ քան զմարմինսն յաւտարութիւն ընդելեալ լինի. ուսուցեալ ամենայն իրաւք ի բաց փախչել, և ատել զայրն, և զոգն ինչ արդեաք և զիմեալ՝ եթէ ատելութիւնն յայտնի ցուցեալ լինէր, զգուշանալ։ Արդ այժմ զժուարագործելի և զժուարորսալի է, խարդախ արուեստիւք ատուերացուցեալ. և զընդդէմն է, յորժամ՝ սիրելոյ կարծիս տայ առնել, կախարդութեամբք իմն և խարէութեամբք։ սակայն երիս տունս ի բաց խլէ ի մէջոյ, ցուցանել, զդատամբ-

1. Միան. պշ--ՐԻՈՆ։
2. Մ. չունի շ--ՇԵՒ։
3. Մ. չընդգիմն։
4. Մ. նախ--ՐՈՆ. ԼՈ ԵՒ խ--ՐԻՈՆ։

բրն անցանելոյ զառնն, զվերամուտութեանն՝ ապաւէս, և զհարազատ մանկանց գոյս ի բաց հատանել։ Եւ երկրորդ անգամ՝ զսեղեխին և զրգնոյն. քանզի ի սոցանէ խրաքանչիւր զի թշնամանաց և անարգութեան, և ի մեծամեծ նախատանացն առնու։ Քանզի թէպէտ և բազմամարդիկ դէպ լինի գոլ ազգակցութեանցն վասն խնամութեանցն, և վասն միմեանց՝ առ միմեանս խառնեալ, հացէ և ի քաղաքն ամենայն՝ շարՁ գալով անիրաւութեանն, բայց ամենազժոխ է և մանկանցն երկրայութիւնն։ Քանզի իբր ոչ պահէ զարբութիւն կինն, կեղտակարծելի և երկմտելի և անյայտ է ծնունդն, այր ուրուք է ՁՀմնարութեամբ հաւ. և ապա ոչ կարացեալ հասանել իրացն, շնարդիքն զհարազատ սրդւոցն կորգեալ հանեն կարգ. զընտանի՞ ազգն աւտար և պիտակ ցուցանեն, և զժառանգութիւնն՝ այնչափ որչափ թուելն հայրենի, այնք՝ որ ոչ է անկ նոցա ժառանգեսցեն։ Եւ սակայն սիղեխն թշնամանս առնելով, և հեղով յայլս զախտն, բազատանելի սերմն սերմանեալ, յորժամ լցցին ցանկութեամբ, երթեալ գնացէ, բարձեալ թողեալ ծագր արարեալ զանաւրինեցելոյն զանդիտութիւնն։ Իսկ նա իբրեւ զկայր ոչ ինչ ի գաղտնի եղելոցն գիտացեալ, իբրև զընտանիս, իբրև զհարազատ ծնունդս, զայնս որ ի թշնամեացն եղեն՝ գրգել և սնուցանել հարկեսցի. և յայտնի եթէ լիցի անիրաւութիւնն, վատաբարար եղիցին, որք ոչ ինչ մեզան թշուառական մանկունքն և ոչ ի մի ազգ խառնեալ կարացեալք, ոչ յաւանն և ոչ ի սիղեխին։ Այսպիսի ազէս գործեցելոյ անարէն խառնակութեանն, յիրաւի առելի և աստուածատելի իրք են շնութիւնք, և առաջին անիրաւութեանցն գրեցաս։

1. Միւսն. վէ ՁԷոյ ամասնոլիեանն ազանիս. յայնն՝ ոչիս։
2. Մ. վան — դիրանց։
3. Մ. ի լս. զատարք։

Երկրորդ պատուիրան՝ ոչ այրասպանել, քանզի անգութ է այս և սոսկութիւն կենդանեաց. զընտանեգոյնն և զձեռնընկալ մարդկան բնութիւնս՝ ծնեալ առ միարանութիւն և հասարակութիւն կոչեաց բան տուեալ, որ ժողովէ ի յարմարութիւն և ի խառնումն բարուց։ Իսկ որ սպանանէն զոք՝ մի անգէտ լիցի, զաւրէնս բնութեան և զգիրս[1] կարգի եղծանելով, որք բարւոք և յաւգուտ ամենեցուն գրեցան։ Բայց գիտացէ զի և մեհենագործութեան պարտաւոր է, զնուիրեալ զատուածոյ արարածոցն մերկացեալ։ Քանզի զինչ է նաղելագոյն և որբագոյն նուէր արգադիր մարդոյ։ Քանզի ոսկի և արծաթ, և ակնք պատուականք, և որ այլ միանգամ՝ պատուականագիւտ նիւթք են, զարդ չինածոց է, անչուն անշնչից. իսկ մարդ լաւ կենդանի, լաւ լաւին որ ի նմանն է հոգին՝ ազդակցագոյն է մարբրագոյն բնութեանն երկնի, որպէս բաւմոց բանքն են. և աչխարհիս հաւ, այնոցիկ որ յերկրի են ամենեցունց՝ ընտանեգոյն կերպարան, և նմանութիւն մտանջենաւորի և բարեբաստիկ տեսեանն՝ զմիտն բնկալեալ։

Եւ երրորդ է՝ երկրորդ հինգերորդին պատուիրան՝ ոչ գողանալ. քանզի որ յայլոցն կապտեալ է, հասարակ քաղաքի է թշնամի. կամիւք ամենեցուն՝ իսկ զաւրութեամբ զմանց գողացեալ, զանձաստացութիւնն յերկար ձրգուեալ, տկարութեամբ վերջացեալ, ի գոյն ինչ ամփոփեալ, և հապիւ ժամանեալ ի սակաւս։ Իսկ որք միանգամ՝ ի գողոցն զաւրութիւն ասին, ըզբոլորս մերկանան զքաղաքս, արհամարհելով ըզպատիժ պատուհասից. վասն զի փառաւորագոյնք քան զաւրէնսն կարծին գոյ. և սոքա են սակաւ-իշխանակաք, զրնութիւնսն որք գողոցեալ ցանկան. որք զմեծամեծս գործեն գողութիւնս, պարկեշտ և պանծալի անու-

1. Որինակն մեր և Մ. ի լ. գրէ։

ամիք իշխանութեան և առաջնորդութեան ծաղկելով զաւագակութիւնն զճշմարիտ գործն։ Արդ յառաջին հասակէ ուսցի որ ոչ ինչ գաղտ զատաբացն գործով, թէպէտ և գոյզն ինչ իցէ։ Վասն զի յամենով սովորութիւնն՝ քան զբնութիւն բանաւորացոյն է. և մանկունքն՝ ոչ արգելեալք՝ բուսանին աճեն առ մեծ բարձրութիւնն՝ ընդ նոսա աճեցեալ։

Եւ գոլանալ հրաժարեցուցեալ, զհետ այսորիկ սուտ վկայել ոչ հրամայէ, բոլմնց և մեծամեծաց՝ և ամենայն չարեաց զսուտ վկայսն պարտապանս գիտացեալ։ Քանզի առաջին՝ ապականեն զոգարկեալ և զոգ՝ծագի ճշմարտութիւնն, քան զոր չիք այլ ինչ յաշխարհի ստացուած սրբագոյն տէրութեան, զարբէն արեգական լոյս, յիրս աշխարհիս[2] եդեալ, զի մի՛ ինչ ի նոցանէն ստուերացեալ թաքիցէ։ Եւ երկրորդ՝ ի վերայ ստելոյն և զիրսն իւր գիշերաւ և խորին խաւարաւ զգեցուցանեն, և գործակից լինին այնոցիկ որ մեղանչենն. և ի վերայ յարձակին այնոցիկ զոր զրկենն, զոր ոչ տեսին և ոչ լուան, և ոչ գիտեն՝ հաստատութեամբ գիտել և յոյժ ի վերայ հասանել վիճին։ Եւ ի վերայ այնոցիկ գործեն երրորդ ևս անաւրէնութիւնն, որ քան զառաջինն չարագոյնն է. քանզի յորժամ նուազութիւն իցէ յայտնի ցուցից, կամ՝ բանիւք կամ գրովք, ի վկայս ապաստանին, որք գկեղակարծութիւնս ունին. որոց բանք քանուք են դատաւորացն, յաղագս որոց ենն վճիռ հասանելոց։ Քանզի միայնից սոցա ներել հարկ է, իբրև ոչ ինչ գոյ որ ի յանդգնութիւն երթայ, յորոց գէպ է զայնոսիկ զորոց սուտն վկայեն՝ ըմբռնել ի պարտութիւն՝, որ յաղթեն կարէին։ Իսկ որ միսն գնեն և հային դատաւորքն, անիրաւ և ան-

1. Յոյնն՝ τα μικρὰ. հանուն։
2. Ար. աշ-խարհ-ին։
3. Ար. ի դարդարութիւն. այս է ըմբռնել ի դարդարութիւն, յոյնն՝ ἐν-դեպ։

աւրէն գիտութիւն, փոխանակ իրաւանց և աւրինաւորացն գրել. բայց սակայն խարդախութիւն և ատենադրութիւն՝ ժամանեալ հասանէ յամենարչութիւն։ Քանզի ոչ առանց երդման դատ առնել սովորութիւն է. այլ հանդերձ սակաւի երդմամբ և ահագին զրոս յանցանեն, հանդերձ այնոքիւք զրոս խաբենեն պատրոյգ։ Վասն զի ամենեքն յանցանք ոչ կամաւոր են, իսկ ամենք հանճարով խրատու յաղթահարեն, և ի կանխագիտութենէ մեղանչեն. և զայնոսիկ որ բուն տեարքն են վարկին ընդ ինքեանս մեղանչել հաւանեցուցանեն, զոր գործեն ոչ գիտացեալք թէ ի պատիժս է այնոցիկ որք և ոչ միոյ իմիք արժանի պատուհասից են։ Արդ վասն այսոցիկ ինձ թուի սուտ վկայել հրաժարեցայց։

Եւ վասնասն՝ ցանկաբ արգելու, ստամբակերէն և դաւոյ զցանկութիւնն գիտացեալ։ Քանզի ամենայն ախտ հոգւոյ չար են, որք չարժեն և դեգեացուցանեն զնա, տարուն, և ոչինչով ոչ տարւեալք թոյլ։ Եւ գժնդակագոյն է ցանկութիւն. վասն որոյ այլոցն իւրաքանչիւր զոր արտաքուստ ի նեռքս մտեալ, և ի վերայ անկեալ արտաքուստ, ակամայ լինել թուի։ Բայց ցանկութիւն ի մէնջ առնու սկիզբն, և է կամաւոր։ Բայց զինչ է զոր ասեմն. որ ի մեզ կայ և թուի բարոյ երևութիւն տալ, զարթուցանել և ընդոստուցանել զխաղաղացեալ ոգին. և յոյժ վերամբարձեալ շրջուցանել, որպէս զաչս՝ լոյս կայծակեալ։ Եւ կոչի ախտս այս սորա, հեշտ ցանկութիւն. և ընդդէմ է բարոյն չար. որ յորժամ բռնութիւն արարեալ, հարուածս ի վերայ հասուցանէ կարևորս.

1. Միւսն. -ութեանցդ լարուիցն. իսկ յայնմ՝ -ութեանցդ-ուիցն։
2. Մ. խոքեանքն։
3. Ի. լ. որպէս և ի միւսն ասեն։
4. Մ. գոյութեամբ նոցն։
5. Մ. ի լ. գանիւ։

գժդմութեամբ, և խոժոռութեամբ անդէն զնա լի առնէ ակամայ. և անուն է ախտս այսորիկ սրբութիւն։ Իսկ յորժամ չար ոչ ևս ի ներքս բընակեալ նեղիցէ, բայց հանդերձեալ է հասանել, և պատրաստիցի վրդովումն և երկիւղ, պատմեալ հրեշտակս յառաջագոյն յարձակէ զարհուրեցուցանելով, և երկիւղ կոչի ախտն։ Իսկ յորժամ ասցէ զբ ի մտս զրարիս, և յորժամ՝ ոչ է ի միջի՝ բաղձանայցէ հասանել նմա, յերկար զոգին մարէ, և առաւել ձգտեցուցանէ, հոկել ի փափագելին տենչացեալ, և իբրև յանուի զհետ ձգի, փութալով ընթանել, և հասանել անկարացեալ. և զնոյն անցս կրեալ այնոցիկ որ զանցելոյ զհետ են, գոյն արագութեամբ և անյագթ յուժգրութեամբ։ Նման իմն և ի զգայութիւնս երևեցաւ զէպ լինել. քանզի ոչ բազում՝ անգամ տեսանելոյ իրիք յոյժ ի հեռաստանէ կացելոյ, ի հասումն գալ ճեպեալ ձգտեցուցանելով զինքեանս կարի յոյժ և առաւել քան զկարն դիմեալք, որք առաւել հոսեցան ընդ ունայն վայր, ի ստոյգ ենթակային գիտութենէ սխալեալք. և ի վերայ այսորիկ ևս երեսաց բռնաւորաւ և պնդաւ, կատարելոյ և անկատարելոյ ի նկատելոյ հանդէպ անհայեցութեան տկարացեալք նուազանան. և ըստ չիւն ինչ դարձեալ անցեալս հնչման և հեռաստանէ յորժամ գայցէ յականջս, ի վեր յարուցեալ և ուշ եղեալ, սպասէ. ճեպի և փութայ մուտ երթեալ թէ հնար է փափագմամբ հաստատագոյն յայտնի առնել ըստեղծն զհնչումն։ Իսկ նաև այլ ևս նուազութիւնն, որպէս երևի, ի վերայ անկանի, ոչ ինչ յայնոցիկ որ ի գիտութիւն՝ բացափայլագոյն՝ յաւելեալ. մինչ զի առաւել ևս անզգեցուցանելի և անմեծար, և ան ի գուրս երանելին ալի հասանել, ի բաղձական տանտարական պատիժս պատուհասից ի վերայ նորա բերեալ ցան-

1. Մեան. Բացափայլագոյն է։

կութեանն։ Քանզի նա որոց ցանկացեալն եղև քան ամենեցուն՝ յորժամ հանդերձեալ իցէ սրտել՝ վրիպէր, յորժամ ըմբռնեցաւ ցանկութեամբ ծարաւի էր միշտ այնոցիկ որ ոչն էին ի մէջի, ոչ երբեք լնու, յընդունայն թափառեալ ցանկութիւնն. զոր աւրինակ սողնական տախտիդ, եթէ ոչ յառաջագոյն հատցին արմատքն հերձով և կամ խարելով, ի վերայ ճարակելով առ հասարակ զամենայն չուրջանակի գրաւէ զմարմնոյն հասարակութիւն, ոչ ինչ մնան անախառ թողեալ։ Այսպէս եթէ ոչ բան որ բան խմաստասիրութեան է, զաւրէն քաջ բժշկի, զծարուն և զհոսելի ցանկութիւնն արգելցէ, ամենայն ի հարկէ կենաց աշխարհիս իրք չարժեալ տատանեսցին ըստ ոչ բնութեան։ Քանզի ոչ ինչ է զատեալ ի բաց, որ ճոզոպրեալ է յախտէ։ Այլ յորժամ հանճարաւորութիւն առցէ և յապահովութիւն, ճարակի և չարժի ամենայն ինչ ամենեքեանք։ Ախմարագոյն է և թերեա չամրաչ՝ երկայնաբանել յաղագս այսպէս յայտնեաց, զորս ո՞ այր կամ քաղաք ոչ գիտէ զիրաքանչիւր որ, ոչ աւր միայն, և կամ ժամ, որպէս հարկ է ասել, յանդիմանութիւն յայտնապէս մատուցանելով, սատցուածոց ցանկութիւն, կամ կնոջ, կամ փառաց, և կամ այլոյ ուրոյք այնոցիկ որ հանդգամն ցանկութիւնս գործեն։ Իսկ արդեաք փոքունս և կամ դուզնաքեայց պատճառաք լինի չարեաց։ ոչ վասն սորա ազգակցութիւնք աւտարանան, ի բնաւորաբանն մեերմութենէն ի բաց փոխեալ յարմարին յանբոյժ թշնամութիւն. և գաւառք մեծամեծք և բազմամարդիկ՝ առհասարակ հեռութեամբք աւերին, և երկիր և ծով լնու նորոգագործութեամբք միշտ աղէտից, նեամարաութեամբք և հետեակ զաւրաք։ Քանզի երկնացուցն և խուժադուժ ազգացն, առ ինքեանս և առ միմեանս, հոծեալ[2] պա-

1. Մխան. ի լս. [illegible]։
2. Մ. ի լս. հոծեալ։

տէրազմունքն, ամենեքեան ի միոյէ ազգէրէ բըղխեցին, ցանկութեամբք կամ ստացուածոց կամ փառաց կամ հէշտ ցանկութեանց։ Քանզի յայսոսիկ հոգ յիրքեան բերէ մարդկային ազգ։

Այլ գիտեմք զայսոսիկ. բայց պարտ է և ոչ զայն անգիտանալ, զի տասն բանք գլուխք աւրինացն են, տեսակաց՝ ըստ բոլոր աւրէնդրութեանն տէրունեան ի գիրսն գծեցելոց։ Առաջինն, յաղագս միայնապատութեան. և սորա են որ յայտնեն՝ զի մի է պատճառ աշխարհիս, և առաջնորդ և թագաւոր, իբրու փարելով և մատակարարելով զամենայն ինչ փրկութեամբ. իսկ սակաւապատութիւն և բազմապատութիւն որ ի վնաս քաղաքավարութեան բուսան ի մարդկանէ, զորս յաղագս չարութեան և ստամբակութեան և աւերաստացութեան հարածեաց ի բաց ի մեքրազոյն ընտիրենէն՝ երկնի։ Եւ երկրորդ՝ գլուխն է ամենեցուն որ յաղագս ձեռաստեղծից աւրինադրեալ է, որք են պատկերք և գրաչեալք, և միանգամայն կուռք։ որոց գրական նկարչութիւն և ստեղծական, վնասակար արարիչք եղեն. և կազմել ոչ տուեալ թոյլ, և ոչ որչափ միանգամ առասպելաստեղծուածք են ընդունել, աստուածամատնութիւնս և աստուածածնութիւնս[2]. և որք զհետ երթան երկոցունցն՝ անբաւք և գըժընդակ ազէտք։ Եւ երրորդաւն պատուիրէ՝ որ ոչն է երդնի զամենայն, և յորոյ վերայ երդնուլքն պարտ է, և երբ, և ուր է պարտ, և զոյս, և որպիսի գոլ ըստ մարմնոյն և ոգւոյ, և որ ինչ միանգամ ի վերայ բարի երդմանց և ընդդէմ հրաման տուաւ։ Եւ չորրորդն՝ յաղագս եւթներեկին. ոչ այլ ինչ այլ գլուխ յարմարելի է տաւնից. և կարգեալ հրամայելոց իւրաքանչիւր ոք

1. Միւսն. է բնութիւն։
2. Յոր. աստուածամատնութիւն. զոր ուղղեցաք ըստ յունին. θεογαμία καὶ θεογονία.
3. Մ. չունի եւթներեկին։

սրբականացն, շրջացանիցն, խնդրուածոց և լրսելի ազաւթից կատարեալ պատարագաց, ի ձեռն որոց սպասաւորութիւնն լինէր։ Եւ գիտենիցեսցուք ասեմ, և զայն որ հանդերձ վերակացուն ծննդականաւ, և զայն որ առանց վերակիցն որ առաջի երեսաց Նորա անկանի, միայն նմանեալ, որոց վերկոսին զտանման թուէ, զմիակին զտանս զնորամութիւնն՝ զոր փոքրիկ Նշանակեն. և պահս յորում կերակրոց և ըմպելեաց հրաժարումն ասացեալ է։ և զայն որ երբայեցիքն հայրենի լեզուան հրամայեցին անցարան կոչել, յորում զենումն ամենաժողով խրաքանչիւր որ ի նոցանէն քահանայիցն ոչ միայով քահանայութեան աւրինացն, չնորհեալ ազգին ամենայնի ի մի աւր առանձինն որոշեալ, բան ամենայն տարոյ ինքնագործութիւն զենի պատարագացն։ և զայն ևս յորում մատուցանին որայ՝ չնոհակալութեան։ ժուժոյ և արգաւանդ և բերրի լինել զաչառացն հասակաց լրութեամբ. և զայն որ ի սմանէն թուի՝ եւթն եւթներեկաւք՝ յիսներորդ աւր, յորում մատուցանելով սովորութիւնն հայ, որք կոչին նախնիք արմնեաց ստուգապէս, վասն զի են բակրդրունք՝ արմնեաց և պտղոց ընտանի կերակրոց, զոր մարդկան ընտանի կենդանւոց բաշխեալ ետ աստուած։ Եւ եւթներեկաւն՝ զաւագան և զրագիաւրեայ տանս բաշխեալ ետ, և զբան տարւոյն զուգաւորութիւնն՝, զգարնանայինն և զաշնանայինն։ Եւ երկուք են նուիրեալ՝ զիրաքանչիւր որ ի նոցանէն աւուրք եւթն, զայն որ բան գարնանայինն է, փոխանակ կատարելութեան սերմանեցելոցն։ իսկ զաշնանային, փոխանակ ժողովելոյ ամենայն պտղոց և զբոս ծառք բերեն։ Եւ եւթն աւուրք բաշխեալ տաւան յիրարի։ եւթն

1. Միան. հաստատեալ նոր։
2. Մ. ուղղութիւն է։
3. Մ. ուղիղ։
4. Մ. զանազանութիւնս. որպէս և յոյնն՝ ἰσημερία.

անմաքն այնարիւբ որք զուգաւորութեանն իւրա-
քանչիւր ումիք, զի ամիս իւրաքանչիւր առնու-
ցու պատիւ առանձինն, մի աւր տաւնուտ՝ առ
ի ինդանութիւն և ի վայելչութիւն հանգստեան։
Եւ բերեալ լինին ի սուտ և այլ աւրէնքն, կարի
յոյժ գեղեցիկք եղեալք, յընտանութիւն և ի հա-
տարակութիւն, և յանմոլորհատաճութիւն և ի
զուգութիւն յառաջագոյն կոչելով։ Եւ ի սոցանէն
ամենք են որք յաղագս ասացելոյ տարւոյն եւթ-
ներեկին, յորում և հրաման տուեալ է զամենայն
ղերկիրն դատարկ թողուլ, ոչ սերմանել և ոչ վա-
րել։ և ոչ ծառս կտուել և կամ հատանել, և կամ
որդան միանգամ՝ այլ ինչ իրք ըստ երկրագոր-
ծութեան կատարին։ Քանզի վեց տարեաւք ըզ-
գաչան և զլեռնայինն ի պտղոց ծնունդս, ի բաշ-
խումն հարկից տարեւորաց բերոյ աշխատեալ,
հանգստեան արժանի արար, զի փոխանակ հոգի
առնլոյ և ազատ կալոյ անհրաման բնութեամբ։
Եւ այլք են որք յաղագս յիսներորդի տարւ-
ոյն, յորում ասացեալքս արդի կատարին. և
հարկատորագոյն վիճակակալութեանց հաստատու-
թիւն դարձուցանելոյ յայնոսիկ որոց ի սկզբա-
նէն հասին ի տունս՝ իրք, մարդասիրութեամբ
և արդարութեամբ զի։

Եւ հինգերորդն յաղագս ծնողացն պատուոյ՝
բաղումն և հարկաւոր աւրէնս առակաւորէ, զոր
ի վերայ ծերոցն և մանկանց գրեաց. իշխանաց
և որ ընդ իշխանութեամբ են. ի վերայ բարե-
գործաց և բարի գտելոց, զորս ի վերայ ծառա-
յից և տերանց։ Քանզի ծնողք ի լաւին ասա-
ցելոցն են ի կարգի, յորում ծերք՝ իշխանք,
բարեգործք՝ տեարք։ իսկ մանկունք՝ կրսերագու-
նեն. յորում մանկունք որ ընդ իշխանութեամբ
են, բարի յառաջագոյն գտեալ ծառայք, բա-
զում և այլ ինչ հրամայեալ է մանկանց զնե-

1. Միւս. յոր ---ցի--։

զանելութիւն ծերոց, և ծերոց զինամ մանկանց. և որք ընդ իշխանութեամբ են՝ ի հաւանութիւն իշխանաց և իշխանաց, յաւգտութիւն իշխելոց· և ընդ որս բարին անցեալ ի ինքեանց հաստատումն, և որ պարգևն բաշխեցին, յոչ անգրէն որպէս ի փոխատրութեան հաստատումն, և սպասաւորացն ի պաշտաւն տիրաւէր. և տեսանց ի հեղութիւն և ի զգաւնութիւն, ի ձեռն որոյ զուգի անզոյգն։ Եւ առաջին հինգերեակն յայսոսիկ կատարեալ լինի գլխաւոր աւրինակ յինքեանս ունելով այնոցիկ որ ի տեսակի աւրինացն ոչ սակաւ թիւ է։ Եւ միւսոյն՝ առաջին է գլուխ՝ որ վասն չանց· ընդ որով դնի բազում հրամանք, այն որ վասն պղծոցն, և որ մանկատուպացն· այն որ գինութեամբ պղծութեան վարին, գիտանալով անաւրէն խառնակութեամբ, և անխուզ և անարգել և այսոքիւք վարելով։ Զորոց զտեսիցն ոչ գրեաց, ոչ վասն զեկուցանելոյ զրազմնոյցն և զրազմաւրինակն զանարգել խառնակութեան. այլ վասն այնորիկ զի որք անձն խայտառակութեամբ կեան, յայտնապէս պատկառեցուցանել, պեղելով յինքեանց ականջաւք միանգամայն ժողովեալ նախատանս ի ձեռն որոյ չիկնեսցեն։

Եւ երկրորդ գլուխ, ոչ հայրատպան լինել· հրաժարութիւնք՝ յորում են ամենայն յաղագս բանաւոր թիւամանաց, հարուածոյ, վիրաց, խեզութեան հարկաւոր աւրէնք և յոյժ հասարակագոյնք։ Եւ երրորդ յաղագս ոչ գողանալոյ· յորում հրաման ասայ, որք ի պարտահատութեան են որոշեալք, և յաւրաստ կացելոց զանազան, և անհաւասարութեան հաւասարութեամբ, և անամենի յափշտակութեամբք, և միանգամայն և ագահ աւելաստացութեամբք, յորոց հաւանին ոմանք յայտնապէս գաղտուկ զայլոցն հատանել։ Եւ չորրորդ՝ յաղագս ոչ սուտ վկայելոյ, յորում

1. Միան. զանիկն ֆրէ։

բազում՝ ինչ կայ՝ ոչ խաբել, ոչ զրպարտել, ոչ ընդ այնոսիկ որ մեզանէն գործակից լինել, ոչ առնել ծածկելի հատաս անհաւատութեան. յորս յամենեսին յիրաւի եղան։ Եւ հինգերորդ, արգելու զանիրաւութեանցն ազրեւր ցանկութեան, յորմէ վիժին անիրաւագոյն գործքն, առանձինն և հասարակ փոքունք և մեծամեծք, սուրբ նըւիրեալք, և խեղք ի մարմինս և յոգիս, և որք արտաքոյն ասին։ Քանզի ճողոպրէ և ոչ ինչ՝ որպէս և յառաջագոյնն ասացաւ, ի ցանկութենէ. այլ զաւրէն բոցոյ յանտառի ճարակի, մաշելով և ծախելով զամենայն և ապականելով. և բազում՝ որ անկանի ընդ սովաւ՝ առանձինն է կարգեալ առ ի խրատ մոգարութեան. ուղղութիւն ընդունողաց, և առ խղճին հեատութեան որք զամենայն զկեանս իւրեանց փարեցան յանտառի ցանկութեան։

Այսչափ և յաղագս երկրորդ հինգերեակին բաւական ասացեալ է, առ ի լրութիւն տասն պատգամացն[1], զոր սրբազէս վայելչաբար հրամայեաց ինքն Աստուած, քանզի էր յարմար նորա բնութեան։ Եւ գրուիք այնոցիկ որք ի սեսակի աւրինաց[2], ինչենին զէմ յանդիման երեսաւք աւրէնագրեի[3]. և աւրէնս մատնաւորս, որ ի ձեռն կապարելոցունի մարգարէին[4]. զոր ընարեալ առաքելովն մեր, և վերսին առեղծեալ աստուածային հոգւով մեկնիչ, որ զհրամանն տալոց էին որոշեաց կամեցեալ, և յետ այսորիկ ասեմք զպատճառսն. զոսն որոյ զտասն բանս կամ զաւրէնս վեցիս եհատ լակ հրամանաւք, և հրաժարութեամբք դնէ այնոցիկ որք լինելոցն են, որպէս սովորութիւն

1. Միւսն յանելու. Ա՝՝՝՝՝՝։
2. Մ՝ ի լս՝ ՝՝՝՝՝՝։
3. Մ՝ ի լս՝ ՝՝՝՝՝՝

է աբէնադրաց. ոչ ինչ որոշեալ պատիժ[1] պատուհասից ածէր, և անդէն իսկ առ նմին, և բարի և բարեաց պատճառաք միայն, և չարի և ոչ միոյ երեք։ Արդ ընտանեգոյն կարծեցեալ իբրոյ ընութեանն զիրիւութիւնն հրամայեալ, անխառն և առանց կցորդութեան պատժոց[2]. զի մի երկիւղիւ ոք անզգամ խորհրդովք[3] վարեցեալ ակամայ, այլ զգայուն խորհրդով, կամաւոր բարեաք գործիցէ զլան. հանդերձ ատակելով ոչ արժանի համարեցաւ աբէնադրեալ. ոչ անզերծութիւն որ զանիրաւութիւնն գործեն առեալ, այլ գնացեալ զաթենականին իւր իրաւունս, և որ մերդկային ակնածու իրաց է ոչ դադարեալ. որ երբու զի ընութեամբ չարատեաց, և իբրև[4] ընտակից ելն գործ, ակն ունելով զայն որ ի վերայ մեղաւորաց կան վրէժք։ Քանզի վայելուչ է սպասաւորաց և իշխանաց ատուեցոյ, որպէս պատերազմի ոք զաւրամարտ՝ դասալքից որք թողին զարդարանն զդաս, վրէժս առնուլ։ Իսկ մեծի թագաւորի որում հաստակ զգուշութիւն յանձն է, այն որ ամենայն խաղաղութեան պահապան է, և զխաղաղութեանն բարիս զամենայն ամենեցուն, ամենայն ուրեք, միշտ մեծապէս և առատաբար մատուցանելով. քանզի որ միայն ատուած, ասելի է խաղաղութեան. իսկ որ ընդ նոսա բարապատարքն են, պատերազմաց իշխան[5] են առաջնորդութեան։

1. Միան չունի դ-դ-է. և ի լս. դ-դ-ն-ն-ն-ոյ ---ոյ-ոյ էր որպէս և յոյն ընագիրն։
2. Մ. դ-դ-ն-ոյ. և ի լս. դ-դ-ն-ոյ։
3. Մ. չունի զ-ր-ն-ն-ալ ա-ր-ա, այլ զ-ն-ոյ-ն ի-ր-ր-ր-ալ։
4. Մ. ի-ր-ա։
5. Մ. ի-ն-ն-ն։

ՓԻԼՈՎՆԻ

ՅԱՂԱԳՍ ՏԱՍՆ ԲԱՆԻՑՆ

Ո՛չ չնայցես. Զի կարծեմ՝ ամենայն ուրեք յաշխարհի մեծ փաստեղա ցանկութիւն, և ոչ ինչ մնաբն ի զարութենէ սորա ճողոպրել[1] կարէ. ոչ որք յերկրի են, և ոչ որք ի ծովու, ոչ որք յաւդքանդի ցամաքայինք և թռչունք և ջրայինք, ամենայն ինչ ամենայնիւ պակուցեալ է, և դէտ երթայ, և հրամանացն նորա տեղի տայ, ի հայեցցես իմն[2] և ակնարկութիւն հայեցեալք. և եթէ ուրեք խլրտեսցէ որ յամենահաւանութենէ խընդայ, և ոչ միայն վաղվաղիցէ արագութեամբ և անդադար փութով, սպասուց արժանի ունի։ Եւ որ ըստ բնութեանն է համագամ՝ ցանկութիւն, բազում՝ անգամ պարսաւանք, յորժամ անչափ և առանց յագելոյ վարեսցի զ նովաւ, զոր աւրինակ որք ի կերակուրս են անյագք։ Զի եթէ ոչ ինչ ի հրաժարելոյն մնասուցանիցէ[3]. և կնասէլք ի խառնակութիւն մտեալք, և յոյժ գիւթութեամբք անկանիցին ընդ կանայս, ոչ ընդ աւտարն, այլ ընդ իւրեանցն։ Եւ պարսաւանքս՝ մարմնոյն են առաւել քան ոգւոյ, բազում՝ ունելով իրաց՝ որ զարկեալ կերակուրս ծախելով, դարձեալ այլ ոչ յերկար՝ խնդրել, բազում՝ ցաղ՝ որոյ հոսանուտ վիժանք ի ձեռն ծննդականին ընդարձակ լինի մարմնոյնս[4] առնելով և անդադար

1. Ցոր. ի լս. զերծանել։
2. Մ. — է հայեցուածս։
3. Մ. հաւանցանիցէ։
4. Մ. նոցա։
5. Մ. հարմնոյնս։

խաբզամունս։ Իսկ այնոցիկ որ ի կանայս այլոց, և է զի յընտանիս և ի սերելիս մոլեալք են, և ի միաս մերձաւորաց ընկենցեն, զբոլոր ազգն զրպամանարդիկ խանգարել ձեռնարկեն։ Եւ զայն որ ի վերայ ամուսնութեան ազատիցն են, այլ աւրինակ չրջեալ. և որ յաղագս որդւոց էր յոյս, անկատարս գործելով, անբոյժ հիւանդութիւն ոգւոց հիւանդացեալք, իբրու հաստարակաց թշնամս ամենայն ազգի մարդկան, ատատկելի են մեզ։ զի մի՝ կելով ժպիրհ լրբութեամբ զրգռամ՝ տունս ազատկանիցեն, և մի՝ վարդապետք լիցին այլոց որոց ընդ չարիս գործոց նախանձել փոյթ։

Արդ բարւոք և զայս յաղագս ամուսնութեան աւրէնքն հրաման ետուն։ Քանզի հրաման տայ ոչ միայն յաւտար կանանց ի բաց կալ, այլ և յայրեաց յոր ոչ է արժան մերձենալ։ ի պարսկական սովորութենէ անդէն վաղվաղակի ի բաց դարձեալ գարշելեալ հրաժարեցոյց, իբրու ի մեծ յանարժան գործոց. քանզի մարս որ յիշխանութեան են պարսիկք զիւրանցն ասնեն կանայս, և որք ի սոցանէն ծնանին՝ ազատակս համարին, և թագաւորութեան, որպէս բանք են, մեծին արժանիս ասնեն։ Որոց զինչ ինչ արդեաք լիցի ամպարշտագոյն անարժանագործութիւն, զհաւր անկողինս զհանգուցելոյ, զոր առանց ընդհարանելոյ և մուտելոյ, իբրու զանբրանի նաւբրս պարտ էր պահել, յամուսի ասնելով զվերութիւն և զմաւր պատիւ, ոչ ընդունի զնոյն նորին որդի և այր լինել, դարձեալ զնոյն կին և մայր. և զի յերիտասանց մանկունս զհաւրն եղբարս թոռունս մուրն. և մայրն՝ զոր ծնուն՝ մայր և հան, և հայրն զոր ծնուն իւր հայր, և համամայր եղբայր։ Այս գործեցաւ ի հին ամն, և յելեզացիս[2], և ի Թերէս. ի Դայիսոլ որդւոյ Ե-

1. Միան հաբէ։
2. Մ. յելեզոցիս։

զիպոդոսի, և զորձեցաւ անդիտութեամբ ոչ կամաւոր բարուք, և սակայն այնչափ արկածս չարեաց հասոյց ամենանութիւնն, մինչ զի ոչ ինչ թողաւ որ ի վերագոյն չարաբաստութիւնս տանի։ Քանզի պատերազմաց, սոհմիկ և աւտարականաց փոփոխմունք, զաւրէն ժառանգութեան որդւոց և թոռանց, ի հարց և ի հաւուց թողեալ լինէր. և աւարումն քաղաքաց այնոցիկ որ յելլագն են մեծամեծք լինէին, և ապականութիւն զաւրական զաւրութեանցն, որ յաշխարհին էին, և որք ըստ ազնականութեան անդր հասեալք լինէին իշխանաց, և այնոցիկ որ առ այլս, առաքինի քաջացն, մի ի մոյ վերայ ապականութիւնք հասանէին. և փան ունելոյ տէրութեան և իշխանութեան, ան՝հաշտ և անհամբոյր թշնամութիւնք եղբայրասպանութեան։ Փան որոյ ոչ միայն ազգակցութիւնք և գաւառք, այլ և մեծամեծ մասն ելլենականենց ամենայն ի յապականութիւն գաբձաւ առ հասարակ ատակմամբ, քանզի թափուր յորս յառաջ բազում արք էին ի քաղաքս բնակչացն, յիշատակ ելլեդացուցն ազէտից մնաց, յուառութեան տեսիլ տեսողացն։ Բայց սակայն և ոչ պարսիկք առ որ այսպիսի գործս գործի, ի նը՝մանն ինչ և ի հաւասար չարեացն անմասն են։ Քանզի մինչ զաւրու՝ և յանհնար չարիսն են սպանանելով, և նոյնպէս մեռանելով։ և է երբեք զի ի վերայ մերձաւոր գաւառաց յարձակելով, և է երբեք զայնոսիկ որ ի վերայ յարուցեալ են վրէժ խնդրելով։ Քանզի բազումք բազում՝ ուստեր ի վերայ յանեն ի խուժադուժ՝ ազգացն, ոչ բնաւորեալք գաղարել։ Արդ մինչ չեմ թողեալ է զոր առաջի արկեալ է կամ՝ այլ բուսանի, մինչ զի ոչ ինչ ի տարւոյն ի բաց հանել ժամանակ ի

1. Ցոյնն. ἐπὶ τοῦ Λαΐου παιδὸς Οἰδίποδος·
2. Մ. [illegible]։
3. Մ. [illegible]։
4. Յոր ի լս. [illegible]։

հանդարտութիւն. այլ և ամբարիշտ և ձիերանի ի տուէ և ի գիշերի զէն զգենուլ. բազում ժամանակս ի զարթս արտաքոյ բացութեանգկ տաժանելով տառապին, քան թէ ի քաղաքս բնակել վասն յոյժ նուազ խաղաղութեանն։ Թագաւոր անդրը ի բաց ասել զմտադաւորացն զմեծամեծ[2] և զգերեալսն բարեբախտութիւնս. որոց նահատակութիւն և մարտ առաջին անդէն փոգվադակի միանգամայն առ ի ձեռն առնուլ զիշխանութիւնն, մեծ պարտիք պղծութեան, եղբայրասպանութիւն է. գիտաց և քաղէիչ յառաջագոյն ասելով զայն որ եղբարց թերեա լինելոց է զաւուն, զի թերևսցին յիրարի սպանանել. որ ինձ թուի թէ ամենայն ինչ վասն այնորիկ գէպ է լինել, վասն անյարմար և անարժան որդւոցն ընդ մարան ամուսնութեան. փերակացու ակնածութիւն մարդկային իրաւանցն՝ վրէժս առնլով անարժան գործոյն սակս յամպարշտացն. և ամպարշտին ոչ որք գործեցին միայն՝ այլ և որք միանգամ գործողացն կամաւոր բարոք հաւասարեալք[3] լինին։ Այսչափ մեր ասէրեաս պահպանութիւն արարին իրաց, մինչ զի և ոչ որդւոյ յառաջագոյն եղելոյ՝ յետ հաւրն մահու՝ առնել զմարրուն կին թողացցոյ վասն հաւրն պատուոյ. և վասն զի մարբ և մարբուի անուն ազգակից են, զի թէպէտ և ոչ որդւոցն եղնաւրինակ իցէ ախան, քանզի որ յայլոց ի բաց կալ ուստ, վասն զի մարբս անուանեցաւ, կարի յոյժ ի բաց կացցէ ի բուն մարբէն. և որ որ վասն հաւրն յիշատակի պատկառէ յայնմանէ որ նորայն երբեմն եղեալ է կին, յայտ է եթէ յաղագս երկոցուն ծնողացն, ոչ՝ խորհեսցի ի մայրն մանկաբար ինչ. քանզի յոյժ

1. Միւսն բաց—ինչ։
2. Մ. զմեծ—մեծ։
3. Մ. հաւասարեալ. և ի լս. հաւասարեալ։
4. Մ. ոչ ինչ խորհեսցի։

ախմար և չամբուչ[1] կէս մասին ծնողին չնարհելով, բոլոր ազգին և ամենեին արհամարհեալ թուեցի։ Եւ յետ այսորիկ է պատուիրան, և ոչ դիպոյր առնել կին, կարի առաքինի ինչ է, և որ երթայ ի կրաւնս ժուժկալութեան արբենայ և գեղեցկազարդութեան։ Արդ ախենացւոց աբբէնայիրն Մորմն[2], զհամամայրս արգել. իսկ լակեդեմոնացւոց աբբէնայիր[3], զհակառակն. դարձեալ զմիոյ արգանդի ամուսնութիւն հրաման տուեալ, որ ի միոյ հաւրէ էին՝ արգել. իսկ եգիպտացւոցն ծագր իմն զերկոցունց զնարութիւնն արար, իբրեր կիսագործի իմն հրաման տուելոց՝ քաջարեր եղև ի գիշերութիւն առատ լինելով, գժուար առ ի բժշկութիւն չար մարմնոց և ոգւոց. անարգելութիւն և անեղկիզութիւն տուեալ ամենեցուն քորս ամնել կանայս զիբեանցն զմիւսոյ ծնողացըն զայր անուան, կամ զայնր անուան. զայրս որ յերկոցունց։ Եւ ոչ զաղջկունս միայն, այլ և զառաջարդս[4], այլ և զզուգահասակս։ Քանզի և երկուսութեակք բազում՝ անգամ՝ դէպ եղև զի ծնան, զորս բնութիւն միանգամայն ընդ լինեին կատարեաց և բաժանեաց ի միմեանց. իսկ գէջ խառնակութիւնն և ցանկասիրութիւն՝ ի գիտութիւն հաւասարութեան կոչեաց զանհասարակելին, և ի յարմարումն զանյարմարելին, զորս խոտեալ սարբրն Մոսէս, ասեալ և թշնամի անպարսաւ վարեաց, և յորդորելով և մարգելոյ[5] առ ամենայն իրս գործոց, յոյժ սատակութեամբ հրաման ետ զգքորս ոչ առնել կին, եթէ յերկոցունց իցէ, և եթէ միոյ լիցի ծնաւղ։ Քանզի զինչ պարտ է զամուսնոյ պատկառանաց զգեղեցկութիւն յամենի առնել. և զինչ է որ անամենի և առանց պատկա-

1. Յոր. ի լա. [illegible]։
2. Մ. Ս[illegible]։
3. Մ. չանի. [illegible]։
4. Յոր. ի լա. [illegible]։
5. Յոր. ի լա. [illegible]։

ռանաց առնել զկոյս, որոց ամուսել և չիկնել հարկաւոր էր. և զի՞նչ է առ այլ մարդիկ միաբանութեան և ի միասին լինելոյ արգելուլ, ի գոյն վայր՝ դիւրաքանչիւր տանէ ի բաց մերժեալս, մեծամայիլուչ գործէ ձգտել և սփռել կարացեալ, ի ցամաք[1], և ի կղզիս, և յաշխարհ ամենայն։ Քանզի առ աւտարան խնամութիւնք՝ նորոգս գործեն ազգակցութիւնս այնոցիկ որ յարեանէն են ոչ ինչ նուազեալք. յաղագս որոց բազում և այլ մերձաւորութիւնս արգել. հրաման տալով ոչ գրաստեր[2] գուստր, ոչ զորդւոյ գուստր[3], ոչ զհայր գուստր, և ոչ զծնողաց քոյր առ ի հաւրէ, կամ առ ի մաւրէ, կամ հաւր եղբաւր, կամ որդւոյ, կամ եղբաւր կին եղեալ, կին առնել, և ոչ խորթ[4], այրի և կամ կոյս, մինչ դեռ կենդանի է կինն. տիր ան ի բաց տար, այլ և ոչ յետ մեռանելոյ. քանզի զաւրութեամբ յաւրայն՝ հայր է. և պարտ է զայն որ ի կնոջէն է ի կարգ դասեր դնել։ Դարձեալ, երկուս քոյս առնել կանայս միւսմ՝ ոչ հրամայէ, ոչ ի նմին, և ոչ ի զանազանեալ ժամանակս, եթէ դէպ լիցի ումեք զայն զոր յառաջն արար կին ի բաց մերժել, մինչ դեռ ևս կենդանի իցէ տնկիցն. և եթէ վախճանեալ իցէ, եթէ այրի իցէ, և եթէ պլուսմ՝ լիցի, զքոյր ոչ արժան հանարեցաւ, ի թշուառացելոյն երթալ՝ մնանել. յառաջագոյն ուսուցանելով զիրաւունս ազգակցութեան ոչ քակել, և մի՝ երթալ ի վերայ գոյմման, այսպէսն միացելոյ բան ազգի. և ոչ զուարճանալ և ուրախ լինել՝ սփոփանս մխիթարութեան գտեալ ի թշնամեաց այնմ, և հանկակ մխիթարել զնոսա։ Քանզի յանէն յայսցանէ գժուար հեռք նախանձուց, և գժուար առ

1. Միան է ցամաք։
2. Մ. գրաստեր։
3. Մ. չունի. ոչ զորդւոյ գուստր։
4. Մ. զԽորթ։
5. Մ. չունի. երթալ։

ի միխիթարութիւն. հակառակութիւնք անբաւ, և անճառ արկածս յարուցանելով չարեաց։ Քանզի նման է իբրու թէ զմնասունս մարմնոյն յլսոտ բնութեանն յարմարութենէ անկեալ և ի հասարակութենէ, խեռիցն առ միմեանս, հիւանդութիւնս անբոյժ ամենայն իրաւք գործէ և ապականութիւնս. իսկ հեռ, զի եթէ բաժանելի մասունքք եղեն, այլ սակայն յարմարին և միաւորին միութեամբ և միով ազգակցութեամբ. իսկ նախանձակծութիւնն, ախտ գժընդակացոյն, անճարս և գժուարս, նորոգ չարիս գործէ և գժուարս առ բժշկութիւն։ Այլ և ոչ այրազգոյն ասէ միաբանութիւն ամուսնութեան յանձն առնուլ, զի մի երբէք մարտուցեալ հակառակ սովորութեամբք պարտեալ թուլացցիս. և զառ ի բարեպաշտութիւնն ճանապարհ մոռացցիս, վրիպեալ յանճանապարհ խոտորեսցիս։ Եւ թերևս կարասցես հանդարտել զու յառաջին հաստատեալ, քանզի և բարի աւանդաւք զորս ծնաւղքքն միշտ թուելով զանբանեան աւրէնսն պատմէին. և երկիւղ ոչ փոքր և յաղագս որդւոց և դստերաց թերևս պարտեցելոց՝ աւտարոտեաւք, յառաջ քան ընտանի հարազատ սովորութեամբ վտանդեսցին։ զմիոյն ստուգոյ զպատիւ մոռանալ, որ է սկիզբն և կատարած, վերագոյն ծանրագիւութեամբ։ Եթէ առէ յանուն ազատեալ կինն, ըստ օրէնի՝ իրաց և դէպ լիցի, այլում եղեալ, դարձեալ այրի լիցի կենդանեաւ, և կամ մահուամբ երկրորդին, մի՝ դարձցի անդրէն առ այրն առաջին, այլ զամենեցուն այլոցն դանաւոր առաւել քան այսմ անուան լիցի։ զառաջին ուխտին զոր մոռացաւ սէր նորոգ քան զհին ընտրեալ։ Եւ առ հաստատութիւն միաբանութեան, եթէ զի կամեսցի դիմել այր այնպիսոյ կնոջ, խնեղութիւն և անարութիւն, ի բաց հանցէ զկար-

1. Միան. գաղթեցեալոց։

ծիս. ի բաց հատեալ ոչ-ոցն զառ այնարհիս առ-գուստս չարատեաց տիսն, յորմէ և ասնց և քա-զաքաց իբր վճարեն։ Եւ երկուս իբս մեծամեծս յանիրաւութեանց քաղաքներեալ մեծամբ ճշգրիտ նը-մանեցուցեալ, զընութիւն և զանձողութիւն։ Քան-զի միասնդամ հաշտութիւնք զեկուցումն են եր-կուց մեհուց, պատիժս հատուցեալ հանդերձ կը-նաւն։ Եւ ծորումն յորժամ լիցի ըստ ամենացն՝, մի՝ հպեսցի ի կին այրն, այլ զժամանակն զայն ի միաբանութենէն արգելցի, ի բնութենէ ապրենացն պատկառեալ, և միանգամայն ուսեալ առ այսու, մի՝ անկատար սերմանս տարաժամ և պիղծ ցան-կութեան փոխանակ հեղուլ։ Քանզի նման է որ-պէս և զ երկրագործ, յաբրեցութենէ և կամ ի խեղայեղութենէ, ցորեան ի լիճս և յտխս, փոխանակ գաւտից վարիցէ. քանզի իբր գեռ ցամաք են անդք, արկանել պարտ է զսերմն ի քաջապատութիւն. և մանրէ բնութիւնն յիւրա-քանչիւր ամենան զարգանդ իբր զանչելի իմն անդ, որոյ ժամանակն զուրէն բարեաց մշակի ըս-պասելի է։ Զի մինչ գեռ հեղեղատին, արգելուլ զսերմն, զի քանցեսցին հոսմամբ ի բաց կոր-ծեալ ի գիծութենէն հնչական ոյժն. ոչ թողացու-ցեալ միայն, այլ ի համաբէն ի բաց լուծեալ։ Եւ ոչա են որք յարգանդին ի բնութենան գործա-բանի կենդանաստեղծեն, և զմասանցն զիւրաքան-չիւր զ մարմնոյն կատարելութեամբ արուեստի կատարելագործեն։ Եւ եթէ արգելցէ զբան ամ-ոցն ասաս, քաղաքերեսցի ասա բեղնաւորացն վարել զսերմն, ոչ ևս յայտականութենէ ի սեր-մանցն երկուցեալ։ Դեպասարի են և որ զիսատ և զբարուստ երկիր վարեն. և սոքա ոչք են աբ-

1. Ամեն. ընդհանրական. իսկ յայն բնագիրն փոխանակ ընդհանրական դնէ ընդհանրական, որպէս ասի և Ա։
2. Ա. ըստ -մարդոյն։
3. Ա. ի հանգոյն։
4. Ա. հարմանն։

գիւք. բայց այնք որք ընդ ամուլ կանայս խառնակին. քանզի իբր այս միայն հեշտ և անարգել ցանկութեան անյագ խառնակութիւն, զայսպիսիս սերմանս ինքնակամ կամաւք ապականեն։ Այս թէ ոչ, յաղագս այր առնն զայսպիսիսն. ոչ վասն յաւոյ մանկանց զոր գիտն ի Տարկէ անկատար լինել, այլ վասն առաւելեալ մեղկութեան, և անբոյժ և անյագ խառնակութեան։ Իսկ որք միանգամ առնեն աղկուանս՝ անգիտութեամբ, զիարդ արգելք իցեն անդէն քաջածնութեամբ և կամ հակառակաւն։ Եւ յորժամ երկայն ժամանակաւ յեսոյ յանծնողութենէն զգացեալ ամուլս զնոսա, ոչ ի բաց յղարկիցեն[2], թողութեան են արժանք, սոխրութեան բնաւորագունին[3] ի բաց յաղթահարեալք, և զսկզբանէ սէրն ի միասին երկայնակեցութեամբն[4] յոգիսն կնքեալ ի միասին լուծանել ոչ կարեն. իսկ որք յառաջագոյն փորձեալս այլոց արանց որք են անպտուղք՝ առնեն կանայս, զաբէն խոզից կամ քաղից, այնչափ որչափ վերանալ միայն, յանպարշաց արձանս գրեսցին իբր հակառակամարտք ասուածոյ. քանզի նա իբրու կենդանասէր և մարդասէր ամենայն խնամովք[5] հնարի փրկութիւն և մշանջենաւորութիւն, ի ծնունդս լինելութեան ամենեցունցն գործել։ Իսկ նոքա միանգամայն ընդարկանելով զսերմին, չիջուցանել սերմամբք արուսաւիւ հնարին, թշնամիք բնութեանս յայտնապէս խոստովանեալք են։

Եւ եռացեալք բուսաւ[6] շնայլութեամբ ի քաղաքս, այլ չար կարի յոյժ քան զոսացեալսս մեծ մանկատութիւն, որ յառաջագոյն և ասել մեծ

1. Միան. ի լ. ընդ ոչ։
2. Մ. յղարկիցեն։
3. Մ. բնաւորագունին։
4. Մ. երկայնակցութեամբն։
5. Մ. ամենանամբ։
6. Մ. բուսաւ։

նախատանք էր, իսկ այժմ է պարծանք. ոչ որք գործեցին միայն, այլ և որք կրեցին. որ զախտ իգութեան ախտանալ սովորեալք են, և ոգւովք և մարմնովք ծորեալք. ոչ ինչ կայծակն արական ազգին թողուն ընդ ազատս առկայծանալ յայտնապէս։ Այսպէս և զդլխոյն հերս հիւսուն և զարդարեն, և սպիտակաւ և անգուրաւ, և այլ ևս այսպիսի նմանութիւք զերեսան շփելով և նկարելով, և անոյշ իւղովք աւծեալք։ Քանզի անժող[1] է մանաւանդ յայսպիսիս անուշահոտն յամենեսին, որք ի գեղեցկազարդութիւն են պճնեալք, և զարական բնութիւնն հնարիւք իմն արուեստական յիգութիւն փոխել, ոչ շիկնեն. վասն որոց մանուց յարձակել ի վերայ արժան է աւրինացն հաւանեալք, որ հրամայէ զայրակինն, որ զրնութեանն աւրէնս ի բաց հատեալ անսխուրան մեռանել, ոչ մի աւր՝ այլ և ոչ մի ժամ թոյլ տալ կեալ. զի նախատանք նորա և տան և աշխարհի են, և առ հասարակ ամենայն ազգի մարդկան։ Իսկ մանկաւուխն եղիցի զնոյն դատ կրելով. վասն զի զտարարուն զհնչտ ցանկութեան զհետ էանց, և զքաղաքս որչափ նորա գալ էր, աւերակս և աւնապատս և թափուրս ցուցանէ, զրնակչացն ապականելով զծնունդս։ Եւ առ այսու ևս մեծամեծ չարեաց, անարութեանն, և սիգութեան[2] առաջնորդ և վարդապետ արժանի առնէ լինել. զմանկունս զարդարելով և պայծառացուցանելով, և զարբունց մանկութեանցն զծաղիկ խգացուցանելով, զոր առ գաւրութիւն և ուժգնութիւն մարդել յարմար և վայելուչ էր։ Եւ յետոյ զի զաւրէն չար մչակի զարդաւանդաւոնսն և զքաջարերուն անդս միշտ դերևեցուցանել, հնարեալ ի վերայ նորա անսերութիւն, և յորոց ոչ ինչ բոյս ակն ունի ամենևին. յայս վաստակէ ի տուէ և ի

1. Յոյն. -ᲜᲔᲚ προσαγωγὸν.
2. Յոյն. καὶ μαλακίας.

զիշերի. և պատճառս կարծեմ՝ այն, որ բազում խառնիճաղանճս մարդկան, անարգել խառնակութեան, ևս իգութեան մրցանակս կայ։ Արդ զի-գացեալն տեսանել միշտ, բազում մարդիկ զի զհետ ընթանան, և ի տանս պատուով յուզարկեն, և գնալիրեալս անուսիրից և պղծոց մնան տան և խորհրդոց և իւզպլխութեանց յաճախագոյն սկիզբն առնելով և Դեմետրի խորհուրդս կատարելով։ Իսկ որք ի նոցանէն զդեղեցիկ մանկութիւն յերկար ձգտելով, մինչ ի սպառ ցանկացան փոխման ի կանայս, և զսերականս ևս ի բաց հատին, ծիրանիս ևս զինքեամբք արկանելով, որպէս որք մեծամեծացն բարեաց պատճառք են գտաւառց, եղանեն ի հրապարակս սպառ կրելով ամենեցունց առ ի դարձ։ Եւ եթէ էր սպանումն որպէս առ արէնագրին ի վերայ այնոցիկ որք այսպէսն իշխեն գործել, և իբր հասարակ զդաւառացն վիրագս և դարշս առանց ամենայն թոգութեան սատակէին, բազմաց արդեաք խրատ ընդունել զէպ լինէր։ Քանզի յաճախագոյն բազմութիւնն՝ առանց կրելոց պատիժս պատուհասիցն, յապահովումն և ոչ զոյն ինչ գործեն նախանձաւորացն նման գործոցն։ Այլ ամենք զսիրաբիտացուցն, և զայն ինչ որ առ այլսն յոյժ պղծութիւնք լինէին ընդ ցանկութիւնսն նախանձեալ, նախ առաջին խաղակերութեամբք և գինեկիզութեամբք և այլովք որովայնի և որ յետ որովայնի հեշտ ցանկութիւնքն են, կրթեցան։ Ապա յաղեալք, թշնամանեցին. և թշնամանք յաղուրդ մնանել բնաւորեալ են, իբր ի խելացութենէ կատաղել և մոլել, ոչ ևս մարդկան, թէ արուաց և իգաց[2], այլ և կենդանեաց. որպէս ի Կրետէ ասեն ի հինսն, զկինն Մենոսայ թագաւորին, անուն Պասիփայէ. քանզի ի ցլու հարեալ, և ախտիւն զոսայրն[3] զակատեալ յաղագս ի մեր-

1. Միւսն. գեռնել է։
2. Մ. ի- ՝ի կիս։
3. Ցոր ի լ. գոռոյր։

ձաւրութիւնն անհնարութեան. քանզի վրիպելով՝ տարիք ցանկութեան ոչ չափաբար անեայ սատակմանն, Դեպալայ՝ որ ունէին զնա ազէպն չարեաց, պատեաց. որ էր յայնմ ժամանակի[1] առաքինի ի հիւանդ. Եւ սա կարի յոյժ բաւական էր հնարիւք արուեստիւ, զանարարին որսալ. փայտեղէն կապեալ կով, և ի մէջ կորմնեալ ի ներքս պրկել զնել զՊասիփայէ. և ցուն զիմեալ իբրև յանասուն ազգակից իւր վերանալ, և յղացեալ եղև յետոյ, ժամանակաւ ծնանել գազանախառն[2] որ կոչի Մինաւրոս։ Դէպ է և յայրս յետոյ լինել Պասիփայս թէ անասնելի թոզդն ասէր. և ոչ կանայք միայն, այլ և արանց մարեալ ի գազանս յորոց ծնանել արուեստք աւտարակերպք, այլանդակատեսիլք, գեկուցումն մարդկան առաւելեալ զզուութեան են. վասն որոյ թերեւս և անէիցն և առասպելեցելոցն անեղ բնութիւնքն, ձիացլուցն և քիմեռացն, և նոցնաւբինակացն լիցին։ Արդ այսչափ յառաջախնամութիւն ի սէրբունեան աւրէնն է, մինչ զի և ոչ մի ինչ արտաւրէն խառնակութիւն մարդկան թոզացուցանել հրաժարեցուցեալ է, և ոչ անասուն ինչ յումեքէ յայլազգոյ վերանալ. քանզի[3] ոչ որ թոզդէ հովիւ հրէայ վերանալ ի մարի. և ոչ զերոյ յայծ, և ոչ զոյալ ի ձի. ապա թէ ոչ, ասացէ դատաստանս իբրու թէ զրնութեան զաւրէնս քակելով. որով զվերադրչնան ազգս ամբոյզ պահել զդուչաւի[4] է ոչ աւտարացուցանել զանհմանս։ Ոմանք աւուել քան զամենայն զէշ յարգեն։ վասն զի մարմինն նոցա պլինդ է, և յոյժ խիստ է. և ի կոյսս և յասպասանս, էշս մեծամեծս զոբս կուտեն խարտիս բուժանեն՝ զի ի մատակս վերացցին. և մատակքն խառն իմն անասունս ծնանին

1. Միւռ. յայնմ. ... Մինաւրոս. յոյնն՝ μινώταυρος.
2. Մ. գազախառն։
3. Մ. պՏՏ։
4. Մ. հոգաւ է. զոր օրինակս մեր ունի ի լ...

էչակէս· որոյ արտաքոյ քան զբնութիւնն զծը-
նունդն տեսեալ՝ ուժգին ատստուածութեամբ հրա-
ման հրաժեշտ ետ Մովսէս միանգամայն հրամա-
նաւ՝ անմոռան ազգաց ոչ ի ներքոյ կալ և ոչ վի-
րաձալ տալ։ Արդ յառաջագոյն ընդ միտ էած
խնամով, և որպէս վայել էր և պատեհ էր և կար-
գաւոր բնութեանն՝ ի հեռաստ իբր զեմ յանդի-
մանն անձաւաց։ Համեստացեալ զմարդիկ· զի յայս-
ցանէ յառաջագոյն ուսեալ արք, միանգամայն և
կանայք, արդելցին յարտաւէն[2] խառնակու-
թեանց։ Արդ եթէ այր վերասցի ի չորքոտանի,
և կամ՝ կին գիտասցի ի չորքոտանւոյ, մեռցին,
և մարդն և չորքոտանիքն· նոքա, վասն զի ա-
ռաւել ևս քան զասիման գիշերութեան անդր ևս
անցին, գտակք եղեալ այլանդակ և ուտարոտի
ցանկութեանց, և զհեշտութիւնս գարշս և ապտե-
գիս նորոգ գործեցին, որոց և պատմութիւնք ա-
մենայնի են. և անաստուածն, վասն զի այսպիսի
նախատանաց սպասաւորք եղեն, և զի մի ինչ
ծնցի և կամ՝ ծնուցէ այլանդակատեսիլ[3] ինչ,
որպէս զէպ է յայսպիսի պղծութեանց լինել, և
մնասանդ զի կարի յոյժ սակաւ ի վայելչակա-
նէն՝ ոչ ևս վարեսցին ի պէտն զպաճարան և յոչ
մի ինչ ի կենացն սպասաւորութիւն, գարշեցեալք
և ի բաց կացեալք· որք և յերեսաց նոցա գը-
ժուարեալք, և կարծեցեալք յորս մերձեսցենն, և
այն անդէն պղծեալ։ Իսկ որ ոչ և ի մի ինչ ի պի-
տանացու աշխարհիս կեալ, զի թէպէտև անաւ-
գուտ է այլ աւելորդ բեռն, որպէս ասաց ոմն,
երկրիս։ Եւ գարձեալ բազ, բան մովսէսեանն ոչ
ընդունի քաղաքավարութիւն զարգու և ամուսի-
զածութեան, և պարկեշտութեան և համեստու-
թեան[4] և յայլ առաքինութեանց՝ լցուցանէ զա-

1. Յոյնն՝ ἀπὸ σκοπιᾶς, է գլխաւոր։
2. Մ. յարդին։
3. Մ. այլանդակ տեսիլ ինչ։
4. Մ. ի լս. գրչէ։
5. Մ. յաւելու և գեղեցկութեան։

գիս արանց, միանգամայն և կանանց[1]։ Զի որ անխուզ պղծութեամբ՝ զմտացն զանմահ գեղեցկութիւն յամենի արասցէ, և զմարմնոյն սակաւամամանակեայ գեղեցկութիւնն յարգուն համարի, բարձեալ ընկեցեալ զինքն ո և պատահեսցէ, և զոմս մանկութեան, իբրև զայն ինչ որ ի փաճառի դնեն, վաճառելով, և յորս պատահեաց խրատանչիւր ինչ ասիցէ և գործիցէ և սիրելիս մարդիցէ ընդդէմ միմեանց, ամենեցուն մտացն զինքրն առաջի եդեալ այնոցիկ որ աւելի ինչ ի ներքրս տանին իբր վնասս և ոչ հասարակ պղծութիւն, արդելեալ քակեսցի, զընտրեանս ազատեալ զնորս, զորս վայել էր քաջաւորութեամբ ևս զարդարել։

Եւ ընտիրնս, կամ՝ զվերահասեալսն[2] և զբմբրնեալսն, և կամ՝ յայտնի յանդիմանութեամբն ի հաւատ եկեալս, աստուստ պարտաւորս ցուցին աւրէնքն։ Իսկ ան որ բան կարծեացն, ոչ արդարացոյց հարցանել ի մարդկանէ, այլ ի ընտրեանս էած յատեան։ Զոմն զի մարդիկ յայտնեացն են գիտակ, իսկ աստուստ և անցայտիցն յայտնագէս տեսանուց։ Արդ ասէ կարծողի առնն ամբաստան եղեալ, և յատաջագոյն հրաւիրեալ, ի տէրունական քաղաք եկեալ մուցէ հանդերձ կընանն, և կացեալ առաջի դատաւորացն, ի բաց մերկանալ որ կայ ի քեզ կարծեացն ասա. մի՛ իբրև զրպարտողք և կամ՝ չարիս հնարելով ամենայն իրաւք յաղթող լինել. այլ իբրև ճշմարտութեան զի առցէ հարցաւոր, առանց խնամոս ինչ խմանալոյ։ Եւ կինն երկուս վասնզգ կրելով. այն որ ոգւոցն է, և զմիւսն՝ զամենեցունց, որ քան զամենայն մահ դժուարագոյն[3] հարեալս ցի զ'ի յինքեան իրան. և եթէ սուրբ իցէ քաջա-

1. Միւսն. յանի գնեցուն և կանանց։
2. Մ. զի ինչ հարցուն։
3. Մ. դժնդակագոյն։

լերութեամբ տացէ պատասխանի. ապ՝եթէ յին-
քեան մնացն գիտութենէ յանդիմանեցի, հնա-
զանդեսցի ի ծառայութիւն, ծածկոյթ մեզանացն
զպատկառանն արարեալ. քանզի մինչ ի սպառ
լրել, առաւելութիւն չարի է։ Ապա եթէ կեղտ-
կարծելի են ասացեալքն, և ոչ մի կոյմն ոչ մի-
տիցի[1], մոցեն ի տաճարն, և այրն կացեալ յան-
դիման[2] բաղնին՝ առանչի որ յայնմ աւուր քահա-
նայն իցէ յայտնեսցէ զկարծիսն։ Միանգամայն
բերեալ ալիւր գարեղէն, տեսակ իմն պատարագի
յաղագս կնոջն ի ցոյց. զի մի՝ առ զրպարտու-
թեան, այլ յաւուրս մնաց բան երկմտութեան լի-
բուսի ամբաստան առնել։ Եւ քահանայն առեալ
կարկառիցէ կնոջն, և զդլխադիրն ի բաց հան-
ցէ, զի դատեալ լիցի մերկ գլխով, զպատկառա-
նացն ի բաց զերծեալ նշանակ, որովք որք յար
առանց բաղայից են, սոմբութիւնն է վարեն. և
ոչ ձէթի և ոչ կնդրուկ, որպէս յայլ պատարագս
լիցի յայնմ՝ վասն զի ոչ յաղագս խնդութեան՝ այլ
յոյժ ցաւագին իբաց զպատարագն հանդերձեալ
կատարել։ Եւ գարեղէն է ալիւրն. թերևս վասն
զի սիրալ և երկպառակ է գարւոյն կերակուր, և
անասուն կենդանեաց, և թշուառական մարդոյ
յարմարի նշանակ. զի շնացեալ կինն, ոչ ինչ ի
գաղանացն է զանազանեալ, որոց անորոյ և ա-
ռանց ընտրութեան լինել, և առանց խմնաբոյ
վերանալ գէպ եղև։ Իսկ որ մարուրն իցէ յամ-
բաստանութեանց, ընդ ընտանեգոյն մարդկան
կեանս նախանձել. և առեալ, ասէ, քահանայն ա-
ման խեցեղէն, հեղցէ սուրբ ջուր յայրերէ բե-
բեալ, և բերցէ ի վերայ գուցէն հողոյ ի տաճա-
րին յատակէ. զորս և զնոսա կարծեն մատուցա-
նել իմն ազնականութիւն, առ ի խնդիր ճշմար-
տութեան նշանակաւ, ասան խեցեղէն առ չնա-

1. Մ՝եան. գնեցեր
3. Մ. գեմ յանդիման։

լբն՝ վասն զի ելբարեկն լինելոյ. քանզի մահ հատեալ դատաստանի ի վերայ չանց. իսկ հողն և ջուրբն՝ առ ի մաքուր գոլ ի պատճառաց՝ ամբաստանութեան. վասն զի ոգա երկոցունց են ծրնունդք լինելութեան, և ածեցմունք և կատարելութիւնք ամենեցուն. ուստի զերբարանչիր որ ոչ վայրապար և անուտմիք զարդարեաց։ Զջուրբն պարտ է առնուլ մաքուր և կենդանի՝ վասն զի անբաղրագոյ կինն մաքուր գոլ վարուք և կեալ պարտ է. և զհողն ոչ ի դուզնաքուց՝ այլ ի տաճարին յատակէ, որ հարկաւորՀ առաքինութեանց, որպէս և զկինն պարկեշտ. և սոցա պատրաստելոյ՝ կինն անծածուկ գլխով՝ զդարեղէն պիսին բերեալ որպէս ասացաւ, ի մէջ անցցէ. և քահանայն զէմ յանդիման զամանն խեցեղէն՝ յորում ջուրն է և հողն, կացեալ ի վերայ՝ ասասցէ զայս զի եթէ զանմտութեան դաշամիք ոչ անցեր, և ոչ այլ այր խառնակեցաւ ընդ քեզ, ի բաց բարձեալ զ'ի յաբիրեանցն որ ինչ միանգամ էր իրաւունք, առանց բաղայց և անբիծ երթի զնա. ապ՝ եթէ արհամարհեցեր անհոգացեալ զառնէն, և անուտ ցանկութեան նախանձաւոր եղեր, կամ հարեալ յումեքէ և կամ տափեալ մատնեցեր ըզհարկաւորագոյնն և զսիրելագոյնն ի ձեռս արեալ և աւտարտի արարեալ, մի անգէտ լինիր, ամենայն նզովիչ պարտաւոր եղեալ, որոց ցոյցք երևեալ ի մարմնիդ։ Արդ եկ և արբ ըմպելի յանդիմանութեան, որ զծածկեալսն այժմ և զանյայտսն՝ հոյանեացի և ի բաց մերկացէ։ Զայս գրեալ ի քարտիսի, և ինքեալ ջրոմն որ յանմեին է, կարկառեացէ կնոջն. և նա առեալ արբեալ և ի բաց թափեցի վճարեալ. ակնկալեալ կամ պարկեշտութեան մրցանակ, և կամ զիրութեան վերագոյնՀ պատուհասն։ Եւ եթէ զրպարտեալ է,

1. Միւս. ֆալ պատճառաց։
2. Մ. ոչ է հարկաւոր։
3. Մ. զիրաբոյն։

զաւակ և ծնանդ ազգաց յուսացի ընդունել, զամբութիւն և զանգաւակութեան երկիւղ և զնոգրս ի միտ ոչ առնելով։ Ապա եթէ պարտաւոր, գիտացէ, ի վերայ նոտեղոց է սրովայնի, խանչումն այուցեալ և պարպատեալ, և արգանդին անհնարին չարչարանք. զոր սարբ ոչ արար արժանի ամրողջ պահել առնն, որ ըստ գաւառին աւրինաց արար զնա կին։ Եւ այսպէս ունի այցելութիւն աւրէնքն. ոչ ինչ ամենեին ի վերայ ամուսնութեան մանկարար գործել. զի և որք ի միաբանութիւն հաւասարութեան գան արք և կանայք ըստ խնամութեան դաշանց, յորժամ յանկողնէ ի բաց յարիցեն, ոչ յառաջագոյն թոյլ տայ մերձենալ յինչ յառաջ քան լուացիք և շրջացանութեամբք[1] մոքրել, հեռի ուրեմն ի հնութենէ արգելլով, և որ ի վերայ հնութեան ամբաստանութիւնք լինին։ Եւ եթէ զի զայրի զառնն մեռելոյ և կամ ի բաց քակեցելոյ այլազգ բռնադատեալ ծանակեսցէ, թեթևագոյն քան զհնութիւն մեղս գործեալ, զրէ թէ կէս քան զայնր ի մահուանէ պատուհասից թողցի. բռնութեան, և թշնամանաց, և անխուսափ պղծութեանց, և յանդգնութեան, որ զծանկանան իբրև զլաւ[2] ինչ ընկալեալ ամբաստանեսցի. և զինչ է պարտ կրել կամ հատուցանել պատուհաս՝ հատցէ ատեանն ի վերայ նորա։

1. Միսն ի լ ողմաք։
2. Ար. զլաւ։

ՑԱՆԿ

Գաղափար վարուց կենաց տեսականի 5
Կեանքը խմասանց 33
Աստուածային ուրինացն այլաբանութեան 105
Գաղափար քահանայիցն և երկուսասան ականց . . 178
Գաղափար բազմին իրաց 201
Գաղափար տասն բանիցն 220
Գաղափար թէ ոչ շնայցես 268

Ի վերջ կայս մատենիս հարկ համարիք յաւելուլ զհամառօտս զայս ծանօթութիւն, զի բազում ամաք յառաջագոյն ընծայեալ մեր ի լոյս լատինական թարգմանութեամբ Աւգերեան Հ. Մկրտիչ վարդապետի մերոյ Ուխտիս, զմատենագրութիւնս Փիլոնի հեբրայեցւոյ պղատոնական իմաստասիրի որոց բնագիր անհետացեալք՝ թարգմանութեամբ հինգերորդի դարուն պահէին ի մերումս մատենագրութեան՝, ընծայեալք արդ ի վայելս հասարակաց և զայլս ի մատենագրութեանց մեծի տանն՝ որոց զեռ ևս կան մընան յոյն բնագիրք, և թարգմանեալ եղեն ի մերս ի նոցունց անտի երանաշնորհ թարգմանչաց։ Յարդոր եղև մեզ ի սոյն վաստակ, առատամիտ տրաքն օժանդակելով ի ծախքս տպագրութեանն, ուսմասէր և պատուական հայագէտ այրն Փր. Կ. Կոնիբիր անգղիացի, սիրով և հեռատես մերուսն գոյութեան, որ բաց յայլոց ընտիր գրուտր վաստակաց, որովք արժանապէս մեծարեալն է, ամաք յառաջ ձեռնտու եղև մեզ ի հրատարակութիւն Օրինաց գրոցն Պըզատանի՝ թարգմանելոյ ի մերոց նոխենաց, և վաստակ մի ընտիր և բազմահմուտ ի վերայ արիստոտելեան գրոցն և հայերէն թարգմանութեանն ի լոյս ընծայեաց յ'Ամստերդամ. ուր ի մեծի համալսարանի քաղաքին վարդապետ է արևելեան ուսմանց։

Յօժարամիտ ձեռն արկեալ մեր ի սոյն վաստակ, համեմատեցաք ընդ յունին, ի սոսրեաս մերոյ տպագրին նշանակելով զտարբերութիւնս։ Բայց կամ է մեզ ասէն և զայն

* Փիլոնի հեբրայեցւոյ բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք. Ա և Բ Յաղագս Նախախնամութեան, Գ Յաղագս կենդանեաց։ 1822։ — Մեսարդք ի Հայս, Մեկն. Ցննեղոց և Եղիս. Հոգք ի Սամփսոն Ֆէ Յոմեան, և յերիս Մանկունս կամ ի Հրեշտակս, 1826։

յուշ առնել ընթերցանելեաց զի ուսումնասէր ոմն անդրա-
ցի, ի վաստակեցաց և ի բարեկամաց Կոնիբրիի, անդէտ
մեբուսն լեզուի և գրագրութեան, հանդերձեալ ի նորոգ տը-
պագրութիւն յոյն ընագրին Փիլոնի, ցանկացաւ ազնական
իւր ունել զմտերիմն և զուսումնակից հայագէտ ի հմմեմա-
տել զայն ընդ մեբուսն Թարգմանութեան որ Հռոմէական
և հաւատարիմ գրագիտութեամբ և օրինակացն ընտրու-
թեամբ՝ պատուականացոյն և նախամեծար համարեալ է
քան զայլսն, ուր մինչ Թարգմանութիւնք կրտսերք են ժա-
մանակաւ և ի վերոյ ազատաղ ընագրաց, որով և հասցէ
նմա սպաս մեծ ծառայութեան հարկանել հմտիցն Եւրոպայ։
Կրկին գրչագիրք են առ մեզ Թարգմանութեանս, ընտ-
իրք և պատուականք հնութեամբն և գրչութեամբ, զորոց
և լիուլի ծանօթս տուեալ է մեր ի յառաջաբանի տպա-
գրացն զորս յիշատակեցաք։ Եւ է առաջին բոլորգիր մա-
քուր մագաղաթեայ գրեալ ի ԶԽե (1296) թուականիս ի
վաստ. ուսեմնի արքաունական զգրէ վասն Հեթմայ Բ արք-
քայի Հայոց ի Ռաբբինեան տոհմէ, հանդերձ յիշատակա-
բանաք յորս զգրչին և գիրսոցն լինին բանք և զթագաւոր-
ին Հայոց և զանցից այնր ժամանակի, և յաւարտ գրչ-
բոցն կարդեալ զնէ յիշատակարան երկար և պատուական,
մի ըստ միոջէ պատմելով թէ որպէս Հեթմայ արքայի տա-
համարեալ զմտերմին և որ ինչ նորա են պարապմունք, և
տենչանաք ցանկացեալ զտանել զերկնաւորն Թագաւորու-
թիւն, հաւանեցուցանէ զանձնեսան ի Թագաւորեցուցանել
զմի յեղբարցն իւրոց, զՍմբատ՝ որպէս ասէ զվայելչագեղն
և զիմաստուն, որ ունէր զերբրբրն զաս ըստ կարգի եղ-
բարցն, և Թագաւորեալ զոլ և Թագաւորացուն իշխանաք
և միանգամայն աշխարհաժողով բազմութեամբ գայր հա-
սանէր ի հոյակապ մայրաքաղաքն Սիս, ուր ի տանի մեծի
սրբոյ աստուածայայտնութեան՝ սրբազարդ կաթողիկոսն Հա-
յոց Գրիգոր ամենայն եպիսկոպոսաք և համագումար ժո-
ղովով և բոլոր օրտիս եկեղեցւոյն ասանդէր գաշտիանն և զո-

ծուն թագաւորութեան, որում և տիրասէր գրիչն մաղթէ անվրդով և երկար կենդանութեամբ գնալ ի զօրութենէ ի զօրութիւն։ Այս ամենայն յիշատակարանք, որպէս կանխեցաք ասացաք, յեռեալք են ի մեր տպագիրս, նաև յայսմ իսկ ուր կարդ բանիցն բերէր։

Իսկ երկրորդի գրչագրին՝ զոր ունէաք, առաջին մասն բոլորգիր է ընտիր ի վերայ թղթոյ, գրեալ՝ յերեքսասան դարս և պակասաւոր ի սկզբան. որ բաց յայլոց՝ ունի և համառօտ յիշատակարան ի վերջ ճառիցն որ Յաղագս աստուածային բանիցն այլաբանութեան (յէջ 177 տպագրիս մերոյ) ուր յիշատակի գրիչն Վարդան, և սրբասնեալ բարեսիրտն Յոհաննէս, որ Երզնկայեցին է, որամ և ժամանակ գրչութեանն գուշակի։ Յայտնագոյն եւս նշանակի այս ի վերջ ճառին որ Յաղագս վարուց տեսականի, դնելով այսպիսի յիշատակագիր. «Փառք Եռակի դիմացն և եզակի բնութեանն յաւիտեանս յաւիտենից ամէն։ Մախթանս աղաչանաց մատուցանեմք վերլուծողաց այսր մատենի մեծ իմաստնոյն Փիլոնի, որք առ ի սմանէ առաւութիւնս ինչ գտանէք. Թողութիւն յանցանաց հայցեցէք յաստուծոյ. յոյնիմաստ հանատրին որ կոչի Յոհաննէս բարանի, և մանաւանդ եղնկաեցի և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Եւ իմոյ յանցանացն այլ հայցեցէք թողութիւն անարժան գծողիս, պիտականուն քահանայ Վարդան ապաստաւոր բանի. և ծնողացն մերոց և ուսուցչացն. և աստուած զձեզ յիշեսցէ յիւր անճառ բարիսն ամէն»։ Այլ երկրորդ մասն գրոցս յետին և աննշան գրչութեամբ է և նոստարացի տաւիթք, առանց նշանակութեան տեղւոյ և ժամանակի։

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՐՔ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՎԱՆԴԱՐԻՆ